



«Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոն

«Zoravar Sepouh» historical-political analytical center

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
ԹԻՎ 3(8)

HISTORY AND POLITICS
ACADEMIC JOURNAL
№3(8)

ԵՐԵՎԱՆ 2020

**Հանդեսը տպագրվում է «Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական
վերլուծական կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ**

Գլխավոր խմբագիր՝ ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Խմբագրական խորհուրդ

Աշոտ Ենգոյան, Արմեն Ճուղուրյան, Արմեն Սահակյան, Բագրատ
Էսդուգյան (Թուրքիա, Իստամբուլ),
Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյան, Էդիկ Մինասյան,
Ժիրայր Լիպարիտյան (ԱՄՆ, Բոստոն), Համլետ Գևորգյան, Հովսեփ
Աղաջանյան, Մարտին Գիլավյան,
Վալերի Միրզոյան, Վալերի Թունյան,
Ռաֆիկ Նահապետյան

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Արտաշես Ղազարյան

Պատասխանատու քարտուղար՝ Թամարա Մարգարյան

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՆԴՈՆԻ ԵՎ ԼՈԶԱՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ (Քննական վերլուծություն)

ԱՇՈՏ ՆԵՐՄԻՍՅԱՆ

Քանալի բառեր – Հայկական հարց, Լոնդոնի խորհրդածողով, Լոզանի խորհրդածողով, Հայկական պատվիրակություններ, Դաշնակիցներ, Սևրի պայմանագիր, Պողոս Նուբար, Ավետիս Ահարոնյան, Անգլիա, Թուրքիա, Ռուսաստան, Արևմտյան Հայաստան, Հայկական օջախ, Կիլիկիա:

Ա. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՆԴՈՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՈՒՄ

Լոնդոնի և Լոզանի խորհրդածողովներում Հայկական հարցի ընթացքի քննական վերլուծությունը կարևորվում է նրանով, որ դրանցում դիվանագիտական պարտություն կրեց հայ քաղաքական միտքը և այդ հարցը թաղվեց մինչև Խորհրդային Միության անկումը:

Լոնդոնի խորհրդածողովը բացվում է 1921թ. փետրվարի 21-ին և շարունակվում մինչև մարտի 16-ը: Փաստորեն այն տեղի էր ունենում այն նույն օրերին, երբ Մոսկվայում ընթանում էր ռուս-թուրքական կոնֆերանսը, որը Թուրքիային առավել համարձակ գործելու հնարավորություն էր տալիս: Այս կոնֆերանսի հրավիրման հիմնական դրդապատճառը խորհրդա-թուրքական մերձեցումն էր, որը լրջորեն անհանգստացնում էր Դաշնակիցներին: Այնտեղ հրավիրված էին թուրքական երկու կառավարությունների սուլթանական Կ. Պոլսի և քեմալական Անկարայի կառավարությունների ներկայացուցիչները: Միանգամայն ճիշտ է Ալ. Խատիսյանը, երբ գրում է. «Լոնտոնի խորհրդածողովը արդիւնք էր այն դիմադրութեան, զոր Թուրքիա ցույց տուաւ Սեւրի դաշնագրի պայմաններուն ենթարկուելու դէմ»¹: Հասկանալի է, որ այդ դիմադրությունը սակավարդյունք կվերջանար, եթե չլիներ Ռուսաստանի աջակցությունը:

Խորհրդածողովում Անգլիան հույսեր ուներ, որ Թուրքիային կստիպի ճանաչելու Սևրի պայմանագրի գոնե հիմնական դրույթները, իսկ Ֆրանսիան և Իտալիան՝ պարտադրել ընդունելու կապիտուլյացիաները և

¹ Ալ. Խատիսյան, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բէյրութ, 1968, էջ 337:

ստանալ նոր կոնցեսիաներ, իհարկե դրա դիմաց փոխզիջումներ անելով: Դրանով նրանք քեմալականներին փորձում էին ներքաշել հակախորհրդային կոալիցիայի մեջ, որում չկարողացան հասնել հաջողության:

Լոնդոնի խորհրդածովից պատվիրակությունների ակնկալիքները արդեն չէին իրականանալու, քանզի դաշնակիցներն արդեն միակամ չէին և նրանց համար առաջնակարգ խնդիրը Խորհրդային Ռուսաստանի դեմ պատվար ստեղծելն էր, որը նոր քաղաքական կուրսի մշակում էր նախատեսում քեմալական Թուրքիայի հետ: Եվ ահա Լոնդոնի խորհրդածովից Դաշնակիցները սկսեցին Արևմտյան Հայաստանի խնդրի կամ Սևրի պայմանագրի թաղման պրոցեսը, որն ավարտվեց Լոզանի խորհրդածովով: Իսկ մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրով Հայկական հարցի թաղելու առումով Դաշնակիցներին արդեն կանխեց Ռուսաստանը:

Լոնդոնի խորհրդածովում Կ. Պոլսի և Անկարայի կառավարությունների ներկայացուցիչներն էրն Օսման Նիզամի փաշան և Բեքիր Սամի բեյը: Լոնդոն են ժամանում Ավ. Ահարոնյանը, գոր. Ն. Բագրատունին, Մ. Վարանդյանը, Գ. Փաստրմաճյանը, Ս. Արարատյանը, Ն. Մասեհյանը և, բնականաբար, Պողոս Նուբար փաշան: Ինչպես համոզվում ենք՝ ՀՀ անկումից հետո արևմտահայ և արևելահայ քաղաքական մտքի ներկայացուցիչները միավորվել էին և նրանց նպատակների հիմքում արդեն ընկած էր Արևմտյան Հայաստանի խնդիրը, քանզի ՀՀ-ն արդեն խորհրդայնացված էր: Խորհրդածովը նախագահում էր Լոյդ Ջորջը: Ավելացնենք նաև, որ այս խորհրդածովի գումարման կարևորագույն պատճառներից հանդիսացավ Անկարայի կառավարության ներկայացուցիչ Բեքիր Սամի բեյի դեռևս փետրվարի 2-ի պահանջը՝ «վերականգնել Երոպայի մեջ 1914թ. Թուրքիոյ սահմանները, վերադարձնել Իզմիրը, Կիլիկիան, իսկ Հայաստանի եւ Քիւրտիստանի վերաբերմամբ արտայայտուեցաւ որոշ կերպով հետևեալ խօսքերով.

«Մենք կը գտնենք, որ հողային խնդիրներու ուշադիր ուսումնասիրութիւնը, մասնաւորապէս Հայաստանի եւ Քիւրտիստանի վերաբերմամբ, հնարաւորութիւն կու տայ արդարացի լուծում գտնելու էական կէտերու մէջ»¹:

Որպեսզի պարզ լինի, որ հայ ներկայացուցիչները այնքան էլ ճիշտ չէին պատկերացնում ստեղծված իրավիճակը, փորձենք վերլուծել փետրվարի 26-ի նիստի ընթացքը, որին մասնակցում էին Ավ. Ահարոնյանը, Պողոս Նուբարը, գոր. Ն. Բագրատունին (1917թ.-ից Ազգային պատվիրակության անդամ) և Լոնդոնում ՀՀ գործերի նախկին հավատարմատար, հայագրի Մալքոլմը: Նիստը նախագահում էր Քերզոնը, որը հետևյալն է հայտարարում. «Գերագույն խորհուրդը տեղեկացվել է, որ հայկական պատվիրա-

¹ Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 339:

կությունը ցանկանում է Սևրի պայմանագրի վերաբերյալ այժմ վարվող բանակցությունների կապակցությամբ շարադրել իր հայեցակետը: Բոլորին էլ հայտնի են այն դժբախտ իրադարձությունները, որոնք փոփոխեցին իրադրությունը Սան-Ռեմոյի կոնֆերանսից հետո: Ներկա նիստը հրավիրված է, որպեսզի հայկական պատվիրակությանը հնարավորություն ընձեռվի շարադրելու իր տեսակետը ներկա իրադրության վերաբերյալ: Կոնֆերանսը կունկնդրի պատվիրակությանը և կզեկուցի Գերագույն խորհրդին: Մակայն կոնֆերանսն առաջին հերթին պետք է իմանա երկու բան՝ ո՞վ է հայերի անունից խոսողը և հանուն ում է նա դիմում կոնֆերանսին»¹:

Քերզոնը գիտեր, թե ինչ էր ասում. ՀՀ-ն անկում էր ապրել, որով Ավ. Ահարոնյանի պատվիրակությունը կորցնում էր իր իրավական ուժը: Խորհրդադաժողվների մասնակցում են պետությունների ներկայացուցիչները, իսկ Պողոս Նուբարը պետություն չէր ներկայացնում:

Պողոս Նուբարը պատասխանում է, որ ինքը պատերազմի սկզբից ի վեր ներկայացրել է Թուրքիայի հայերին, իսկ ՀՀ ստեղծումից հետո ձևավորված Ավ. Ահարոնյանի պատվիրակության հետ ինքը գործել է համատեղ՝ «հուսալով ապահովել թուրքական և ռուսական Հայաստանի միավորումը: Անկասկած, վերջին իրադարձությունները բարդացրել են կացությունը, բայց դա չի արգելում երկու պատվիրակություններին՝ համատեղելու և շարունակելու իրենց միասնական ջանքերը»²:

Նա և Ավ. Ահարոնյանը խոսելու էին իրենց պատվիրակությունների անունից, բայց որպես նախագահ հանդես էր գալու Պողոս Նուբարը:

Հետաքրքիրն այն է, որ Պողոս Նուբարն իր խոսքում փորձում է այն համոզմունքն առաջ բերել, որ Հայաստանում խորհրդային կարգերի պարտադրումը չպետք է տերություններին ետ պահի թուրքական չորս վիլայեթներն ազատագրելուց:

«Այն փաստը, - շարունակում է նա, - որ Հայաստանին սովետական կարգեր են պարտադրվել, չպետք է ետ պահի տերություններին երկրի մյուս մասերը, այն է՝ թուրքական չորս վիլայեթները ազատագրելուց: Պետք է հիշել անկասկած, որ հայկական հարցը ծագեց Թուրքիայում. Թուրքիայում հայկական ջարդերն էին, որոնք դրդեցին տերություններին ջանալու հայերի ազատագրության համար: Պարտված Թուրքիայի հետ էր և ոչ թե նախկին դաշնակից Ռուսաստանի, որ տերությունները կնքեցին Սևրի պայմանագիրը: Ռուսական Հայաստանը մտցվեց հայկական պետության մեջ այն պատճառով, որ նա դեպքերի բերումով անկախ

¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 697 - 698:

² Նույն տեղում, էջ 698:

հռչակվեց: Ճիշտ է, անշուշտ, որ չորս վիլայեթներն օկուպացված են քեմալական զորքերի կողմից, բայց դաշնակիցները ճնշում են գործ դնելու տարբեր միջոցներ ունեն, որոնք կարող են օգտագործել էվակուացումն ապահովելու համար: Պարտադրելիք սանկցիաների թվում ամենից հեշտ կիրառելին այն տերիտորիաների օկուպացումը շարունակելն է, որոնք այժմ գտնվում են դաշնակիցների ռազմական հսկողության ներքո, բայց որոնք, եթե Թուրքիան իրագործի իր հանձնառությունները, վերջին հաշվով կարող են էվակուացվել»¹:

Անհրաժեշտ է նշել, որ Պողոս Նուբարը այս անգամ ստեղծված պայմանների ազդեցության տակ Ճիշտ էր արտահայտվում, երբ առանձնացնում էր Արևմտյան Հայաստանի հարցը արդեն խորհրդայնացված ՀՀ-ից և գտնելով, որ Սևրի պայմանագիրը Դաշնակիցներն են ստորագրել Թուրքիայի հետ և ոչ թե Ռուսաստանը: Նա Ճիշտ էր նաև՝ գտնելով, որ Հայկական հարցը ծագել էր Թուրքիայում: Բայց նրա այդ հիմնավորումները բավարար չէին՝ նրանց ստիպելու՝ գրավել չորս վիլայեթները: Նա նաև անտեսում էր այն հանգամանքը, որ քեմալականներն այդ վիլայեթները գրավել էին Ռուսաստանի օգնությամբ, որի հետ նրա նախկին դաշնակիցներն ամենևին ցանկություն չունեին ընդհարվելու: Նրանք ավելի շատ ցանկանում էին քեմալականներին իրենց կողմը գրավել և ապա՝ տրամադրել ընդդեմ Ռուսաստանի:

Այնուհետև Պողոս Նուբարը Կիլիկիայում գտնվող ավելի քան 150 000 հայերի անունից խնդրում է Ֆրանսիային, որի ազդեցության գոտում էր Կիլիկիան, «որպեսզի նա չլքի հայ ազգաբնակչությանը, այլ Կիլիկիայի համար ձեռք բերի վարչական ինքնավարության ռեժիմ՝ խառը ժանդարմերիայով»²:

Ավ. Ահարոնյանը նույնպես իր խոսքում պնդում է Սևրի պայմանագրի իրականացման անհրաժեշտության վրա, որով ճանաչվել էր Հայաստանի անկախությունը և որը խորհրդայնացումից շատ չանցած վերականգնվել էր Փետրվարյան ապստամբության շնորհիվ: Ավ. Ահարոնյանը չի սխալվել, ասելով հետևյալը՝ «...Քեմալականների ներխուժումը Հայաստան իրականում ուղղված էր Սևրի պայմանագրի և դաշնակիցների դեմ: Դա ապացուցվում է պարտությունից հետո Հայաստանին պարտադրված առաջին իսկ պայմաններով, որպեսզի Հայաստանի կառավարությունը հրաժարվի Սևրի պայմանագրից: Կային մարդիկ, ովքեր ասում էին, թե քանի որ Ռուսահայաստանը բոլշևիկացել է, այլևս կարիք չկա հայկական պետություն ստեղծել: Նրանք մոռանում են, սակայն, որ Թուրքիայի ոչ բոլոր հայերն են բնաջնջվել: Նրանցից մոտ 300 000-ը ապաստան են գտել Կովկասում և սպասում են այն պահին, երբ կկարողանան վերադառնալ

¹ Նույն տեղում, էջ 699:

² Նույն տեղում, էջ 700:

իրենց տները: Պետք է հիշել, սակայն, որ Վանի, Բիթլիսի և Էրզրումի երեք վիլայեթներում, համաձայն վերին տեղեկությունների, միայն 96 000 մահմեդականներ են մնում»¹:

Այսպիսով, Ավ. Ահարոնյանն արդեն Պողոս Նուբարի նման դաշնակիցների առջև դնում էր միայն արևմտահայերին առնչվող խնդրի լուծման անհրաժեշտությունը:

Լորդ Քերզոնը ներկայացրած պահանջների լուծման առումով մատնանշում է երեք դժվարություններ՝ ա. բոլշևիզմի հաղթանակը Ռուսաստանում, բ. Մուստաֆա Քեմալի կողմից հայկական տարածքների մեծագույն մասի գրավումը, գ. տերությունների անգոր լինելը՝ մեծ ուժեր ուղարկելու՝ Հայաստանին օգնության համար²:

Սա հաստատում է նաև Ալ. Խատիսյանը, որը գրում է. «Լորտ Քըրզոնը մատնանշեց այն դժուարին կացութիւնը, որուն մէջ կը գտնուէր խորհրդածողովը Հայաստանի վերաբերմամբ - թուրքերը փաստօրէն գրաւած են բոլոր վիլայեթները, որոնք պէտք է անցնէին Հայաստանին, եւ նոյնիսկ Ռուսահայաստանի մէկ մասը. եւրոպական պետութիւնները չեն կրնար այնտեղ ուղարկել զորքեր, իսկ ռուսական Հայաստանը թէեւ ազատուած խորհրդային լուծէն, կը գտնուի նոր յարձակմանց սպառնալիքին տակ»³:

Հիշյալ նիստի արձանագրությունից մի հետաքրքիր հանգամանք է պարզվում. փաստորեն Լոնդոն գնացած Նուբար փաշան և Ավ. Ահարոնյանը տեղյակ չէին Վիլսոնի գծած սահմաններից: Դրանում համոզվելու համար բավական է մեջբերել Քերզոնի, դժվարությունները մատնանշելուց հետո, հայկական պատվիրակությանն արված հարցադրումները:

«Այսպիսով, շարունակում է նա, - օգտակար կլինի իմանալ, թե հայկական պատվիրակությունը որո՞նք է համարում Հայաստանի էական տերիտորիալ սահմանները: Նրանք պէտք է հիշեն, որ Սան-Ռեմոյի կոնֆերանսը Հայաստանի սահմանների որոշման հարցը վերապահեց պրեզիդենտ Վիլսոնին: Պրեզիդենտ Վիլսոնը գծեց մի սահման, որն ընդգրկում էր մի շարք թուրքական հողամասեր, ինչպես նաև Տրապիզոնի նավահանգիստը: Պարզ է, որ գործնականում խիստ դժվար կլինի նման սահմանագծի հաստատումը: Ուստի լորդ Քերզոնը կամենում է երկու որոշակի հարցեր տալ պատվիրակություններին, այն է՝

1. Որո՞նք են Հայաստանի անհրաժեշտ սահմանները, որոնք խնդրում են երկու պատվիրակությունները:

¹ Նույն տեղում, էջ 700 – 701:

² Նույն տեղում, էջ 702:

³ Ալ. Խատիսեան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, էջ 340:

2. Որո՞նք են մարդկային և դրամական այն աղբյուրները, որոնք կկարողանա տրամադրել Հայաստանը՝ իր անկախությունը ձեռք բերելու համար»¹:

Եթե զերծ մնանք զգացմունքայնությունից և հեռու այն կաղապարված մոտեցումներից, որ մեծ տերությունները զոհաբերել են Հայկական հարցը հանուն իրենց քաղաքական շահերի, ապա՝ պետք է ընդունենք, որ այս իրավիճակում այդ հարցը զոհաբերելն ամեննիս իրենց շահերից չէր բխում: Եվ Քերզոնի այս հարցադրումներն ամբողջությամբ տրամաբանության մեջ էին: Հայ և մասնավորապես արևմտահայ քաղաքական միտքը դարձյալ ընթանում էր սխալ ուղով, լուրջ հաշվեկշռի չենթարկելով այն խնդիրը, թե ինչու՞ պետք է դաշնակիցները կռվեին քեմալականների հետ՝ հանուն հայ ժողովրդի: Եվ այն դեպքում, երբ նրանց ներկայացնող գործիչները չգիտեին, թե ինչ սահմաններ էին ուզում: Բնականաբար՝ Սևրի պայմանագրով նախատեսված: Բայց չէ՞ որ Սևրով ոչ թե սահմաններ էին մատնանշված, այլ՝ իրավական հիմք էր տրվում ԱՄՆ նախագահին՝ գծելու սահմանները՝ հայտնի վիլայեթներով: Իսկ որ նրա նշած սահմաններից, մասնավորապես Տրապիզոնով, ամեննիս տեղյակ չէին հայ պատվիրակները, երևում է Պողոս Նուբարի պատասխանից, ըստ որի՝ «պրեզիդենտ Վիլսոնի որոշման մասին հայկական պատվիրակությունը չի տեղեկացվել»:

Այնուհետև Պողոս Նուբարը հայտնում է, որ իրենք երբեք Տրապիզոնի նահանգը չեն պահանջել, քանի որ այնտեղ հայերը մեծամասնություն չեն կազմել, այլ միայն նրա վրայով դեպի ծով ելք, ինչպես նաև պատրաստակամություն է հայտնում հայերի հարմարվելու մասին Վիլսոնի սահմանագծին²:

Փաստորեն, ստացվում է, որ Վիլսոնն իսկապես նախագահի պոստը լքելուց առաջ սեթևեթել է՝ ցույց տալով իր հայասիրությունը և՛ գծելով այնպիսի սահմաններ, որից հայկական պատվիրակություններն անգամ տեղյակ չէին, անտեսելով 1920թ. Լոնդոնի խորհրդաժողովում սահմանային հանձնաժողովի այն տեսակետը, որ «Տրապիզոնը չպետք է ընդգրկվի հայկական տերիտորիայում», որին համաձայնվել են հայկական երկու պատվիրակությունները³:

Իսկ ինչ վերաբերվում է Կիլիկիայի խնդրին, ապա Ֆրանսիայի ներկայացուցիչ Բերտելոն հայտնում է. «Ֆրանսիական կառավարությունը չի կարծում, որ հնարավոր կլինի Կիլիկիայի համար հատուկ ռեժիմ պահանջել: Երբևէ ոչ մի նման ռեժիմ չի ենթադրվել Սևրի պայմանագրով»:

¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 702:

² Նույն տեղում, էջ 702 – 703:

³ Նույն տեղում, էջ 702:

Նա նույն իսկ վիճարկում է Կիլիկիայում քրիստոնյաների մեծամասնությունն կազմելու հարցը՝ հակադրվելով Պողոս Նուբարին¹:

Այսպիսով, փաստորեն Դաշնակիցները ստեղծված նոր քաղաքական իրավիճակում հասկացնում էին, որ չեն պնդելու Սևրի պայմանագրի իրականացման վրա: Իսկ հայ քաղաքական ներկայացուցիչները չէին կամենում հասկանալ, որ նրանց օգնությունն հուսալով ապրելն այլևս անօգուտ ժամանց է, իսկ Սևրի պայմանագրի գործադրությունը Հայաստանի համար՝ քաղաքական ռոմանտիզմ:

Հիշյալ ժողովածվում մի հետաքրքիր փաստաթուղթ է զետեղված, որը ցանկանում ենք վերլուծել: Այն անգլիական դիվանագետներ Օսթրոնի և Նիքոլսոնի դեռևս Լոնդոնի կոնֆերանսից առաջ, 1921թ. փետրվարի 17-ին, կազմած հուշագիրն է՝ կազմված Անգլիայի արտաքին գործերի մինիստրությունում: Այնտեղ ներկայացված են «խնդիրներ, որոնց առնչությամբ պայմանագրում կարելի կլիներ փոփոխություններ մտցնել», որոնց ներքո, Հայաստանին վերաբերվող բաժնում կարդում ենք.

«Հրաժարվել Վիլսոնի սահմաններից և փոխարինել հետևյալ հոդվածներով.

(ա) «Թուրքիան ճանաչում է Երևանի հայկական հանրապետության անկախությունը նախապատերազմյան ռուսական սահմաններում և հրաժարվում է Կարսի, Ալեքսանդրապոլի և Արդահանի շրջանների նկատմամբ բոլոր պահանջներից ի ճանաչումն այն բանի, որ Հայաստանը հրաժարվում է պահանջներից թուրքական վիլայեթների նկատմամբ»:

(բ) «Թուրքիան ճանաչում է թուրքական տերիտորիայում հայերի ինքնավարության իրավունքը և պարտավորվում է Ազգերի լիգային զիջելու սուվերեն իրավունքները և իրավունք Կիլիկիայում բավարար տերիտորիայի վրա ամփոփելու երկրում գտնվող թուրքահայերին աջակցելու հայ փախստականներին վերադարձին դրսից: Այս տերիտորիան, որը կառավարվելու է հայերի կողմից Լիգայի գերակայության ներքո, տարածվելու է մոտավորապես Մերսին–Տարսուս–Ադանա–Օսմանիե սահմանագիծ մինչև Հաճըն–Ձեյթուն–Մարաշ սահմանագիծը, այն շրջանակներում, որը որոշվելու է Ազգերի Լիգայի նշանակված հանձնաժողովի կողմից և ներառելու է Թուրքիայի և Հայաստանի ներկայացուցիչներին»:

(գ) «Թուրքիան պարտավորվում է դյուրացնել Թուրքիայի մյուս մասերից բոլոր հայերի տեղափոխումն այս տերիտորիան, ովքեր կցանկանան գնալ այնտեղ, ինչպես նաև օգնել բոլոր թուրքերին, ովքեր կկամենան հեռանալ այս տերիտորիայից և հաստատվել Թուրքիայի այլ վայրերում»²:

¹ Նույն տեղում, էջ 703 – 704:

² Նույն տեղում, էջ 696:

Այսպիսով, այս նախագծով, որը կյանքի չկոչվեց, Անգլիան նախատեսում էր Թուրքիային պարտադրել 1914թ. սահմանները, որի դիմաց Հայաստանը պետք է հրաժարվեր Սևրի պայմանագրով նախատեսված վիլայեթների պահանջից և փաստորեն նախատեսվում էր ստեղծել այն օջախը, որը հետո մերժվեց Լոզանի խորհրդաժողովում: Իսկ արևմտահայության քաղաքական պահանջները ներկայացնողները շարունակում էին Սևրի նախատեսած սահմաններով Արևմտյան Հայաստան՝ Դաշնակիցների օգնությամբ, վերջիններիս այդ պայմանագրից փաստացի հրաժարվելու գործընթացի պայմաններում:

Դաշնակիցներին կաշկանդում էր Մոսկվայի խորհրդաժողովը, որն ավարտվեց հայտնի ռուս-թուրքական պայմանագրով, որով փաստորեն Ռուսաստանի համար չպահպանվեցին 1914թ. սահմանները: Իսկ խորհրդա-թուրքական մերձեցումը, որը Քեմալին իրենց կողմը գրավելու ձգտումներ էր առաջացնում Դաշնակիցների մոտ, անտեսվում էր հայ քաղաքական գործիչների կողմից: Մարտի 16-ի պայմանագրով Թուրքիային էին անցնում Կարսի նահանգը և Սուրմալուի գավառը, Նախիջևանը տրվում էր Ադրբեջանին, իսկ Բաթումը՝ Վրաստանին¹:

Ի վերջո, Մոսկվայի պայմանագրով էր պայմանավորված դաշնակիցների զիջումները Թուրքիային, որի ներկայացուցիչները պահանջում էին

«1. Եվրոպական մասում 1913թ. սեպտեմբերի 16-ի թուրք-բուլղարական պայմանագրով գծված սահմանի վերականգնում, այսինքն՝ Արևելյան Թրակիայի վերադարձը Թուրքիային:

2. Հարավում Կիլիկիայի և նրանից արևելք ընկած շրջանների /Ուրֆա և այլն/ վերադարձը Թուրքիային:

3. Արևելքում Ալեքսանդրապոլի պայմանագրով գծված սահմանի պահպանում:

4. Արևմուտքում Իզմիրի մարզի վերադարձը Թուրքիային և այլն»²:

Այս բոլոր հարցերում էլ Թուրքիան հասավ հաջողության: Լոնդոնի խորհրդաժողովը չավարտվեց պայմանագրով, բայց այն փաստորեն նշանակում էր հրաժարում Սևրի պայմանագրից, որով Թուրքիան ճանաչել էր Հայաստանի անկախությունը: Խորհրդաժողովն ընդունեց 10 կետերից

¹ Այս պայմանագրի մասին տե՛ս *Документи внешней политики СССР*, том 3, Москва, 1958, ст. 597 – 604, Հայկ Ղազարյան, Մոսկվայի և Կարսի 1921թվականի պայմանագրերն ու նրանց ողբերգական դերը հայ ժողովրդի ճակատագրում, Երևան, 2010, էջ 267 – 335, Արարատ Հակոբյան, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010, էջ 145 – 316, Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, Երևան, 2007, Սալանյան Ս., Մոսկվայի և Կարսի պայմանագրերի համեմատական վերլուծության փորձ, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 1, Երևան, 2005 և այլն:

² Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 775:

բաղկացած որոշում, որից 9 –րդը վերաբերվում էր Հայաստանին: Այն ուներ հետևյալ բովանդակությունը.

«9. Հայաստան. – Ինչ կը վերաբերի Հայաստանին, ներկայ պարտաւորութիւնները կրնան յարմարցուիլ, պայմանով որ Թուրքիան ճանչնայ Թուրքահայերու իրավունքները Ազգային Օճախի մը համար Ասիական Թուրքիոյ արեւելեան սահմաններու մէջ եւ համաձայնի ընդունիլ այն յանձնաժողովի որոշումը, որ կը նշանակուի Ազգերու Լիկայի Խորհուրդէն՝ նպատակ ունենալով տեղոյն վրայ ուսումնասիրել այն հողամասերու խնդիրը, որոնք արդարացի պիտի ըլլար այդ նպատակի համար փոխանցել Հայաստանին»¹:

Այսպիսով, Վիլսոնյան սահմաններն անցնում էին պատմության գիրկը, պետություն բառին փոխարինում էր «Ազգային օջախ» եզրույթը, այն էլ՝ ոչ հստակ սահմաններով, որը դարձյալ չընդունեցին թուրքերը:

Ճշմարիտ է նկատել Հովհ. Քաջազունին. «Լոնդոնի կոնֆերանսում առաջին անգամ պաշտոնապէս արտասանվեց ու արձանագրվեց Home բառը: Մերի դաշնագիրը մոռացվել էր հիմնովին: Այլևս խոսքը անկախ հայ պետականության մասին չէր, ոչ իսկ ինքնավար նահանգների, այլ ինչ որ ազգային Home-ի մի կասկածելի օջախի ուրիշի տան մեջ»²:

Այս ամենի պատճառը, ինչպէս պարզ դարձավ Դաշնակիցների անմիաբանությունն էր: Լլոյդ Ջորջը գրում է. «Այդ ողբալի իրադարձությունների ընթացքում որոշ դաշնակից տերություններ բացահայտ դավաճանական դեր կատարեցին: Իտալացիները Մուստաֆա Քեմալին հույների դեմ կռվելու համար զենք էին վաճառում գնումների դիմաց վճարվում էին Մոսկվայից տրվող փողերով: Ֆրանսիական կառավարությունը Անգլիայի թիկունքում բանակցություններ էր վարում Քեմալի հետ գաղտնի պայմանագրի մասին»³:

Իսկապէս, ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Բրիանը գաղտնի կերպով բանակցությունների մէջ մտավ քեմալականների հետ և դեռևս Լոնդոնի խորհրդածոյովի ավարտից առաջ, մարտի 9–ին, կնքեց գաղտնի համաձայնագիր Բեքիր Սամի բեյի հետ, որով Ֆրանսիան կրճատում էր իր ազդեցության շրջանակները Սիրիայում հօգոտ Թուրքիայի,

¹ Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 341:

² **Հովհաննես Քաջազունի**, Հայ Յեղափոխական Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Վիեննա, 1923, էջ 52:

³ **Լլոյդ Ջորջ**, Правда о мирных договорах, том 2, Москва, 1957, ст. 460.

դրա փոխարեն ստանալով մի շարք արտոնություններ Կիլիկիայում, Դիարբեքիում և Սեբաստիայում¹:

Մարտի 12-ին Իտալիայի արտաքին գործերի նախարարն էլ իր հերթին առանձին համաձայնություն է ստորագրում Բեքիր Մամիի հետ, որով Իտալիան պարտավորվում էր վերջնական հաշտություն կնքելու ժամանակ պաշտպանել թուրքերի շահերը²:

Իսկ Անգլիան բոլորովին ուրիշ քայլ կատարեց: Նա մարտի 16-ին ստորագրեց համաձայնագիր Խորհրդային Ռուսաստանի հետ, որով վերջինս պարտավորվում էր հրաժարվել նրա դեմ քարոզչությունից գաղութներում, իսկ Անգլիան՝ չճանաչել այն նորանկախ երկրները, որոնք կազմվել էին նախկինում ցարական Ռուսաստանի մեջ մտնող տարածքներում:

Միանգամայն ճիշտ է ասված, որ Լոնդոնի կոնֆերանսը թեև ձախողվեց, բայց «դրական նշանակություն ունեցավ քեմալականների համար, քանի որ Անտանտի տերությունները դե-ֆակտո ճանաչեցին Անկարայի կառավարությանը»³:

Մնում է միայն ներկայացնել այն դրդապատճառները, որոնք նպաստեցին Դաշնակիցների պառակտմանը և քեմալականների հաղթանակին: Լիովին կարելի է համաձայնվել Ալ. Խատիայանի մատուցած դրդապատճառների հետ.

1. Եվրոպայի ժողովուրդները հոգնել էին պատերազմից և ծարավ էին խաղաղության:

2. Ռուս-թուրքական զինակցությունը և նրանց դավադրական գործունեությունը Եվրոպական երկրներ ասիական և աֆրիկյան գաղութներում:

3. Ներքին, քաղաքացիական կռիվների ավարտը Ռուսաստանում, որը ուժեղացնում էր նրա դիրքերը Կովկասում և Արևելքում՝ ավելի զգույշ գործելակերպի մղելով նրանց կովկասյան հանրապետությունների նկատմամբ:

4. Հունաստանի պարտությունը Թուրքիայից, որով կորչում էր Սևրի պայմանագրի ուժը Իզմիրի վերաբերյալ⁴:

1921թ. ամռանը, հուլյների՝ Քեմալից կրած պարտությունից հետո, Ֆրանսիան և Իտալիան հանդես եկան Սևրի պայմանագիրը վերանայելու օգտին: 1921թ. հոկտեմբերի 21-ի պայմանագրով Ֆրանսիան ճանաչեց քեմալական Թուրքիան և իր գորքերը քաշեց Կիլիկիայից: Արդեն հաջորդ

¹ Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 342 - 343, Գալուստ Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1918 - 1923թթ., էջ 436 - 437, նաև՝ տե՛ս Саакян Р. Г., Франко - турецкие отношения и Киликия в 1917 - 1923гг, Ереван, 1986.

² Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 343:

³ Մ. Ա. Հասրաթյան, Ս. Ֆ. Օրեշկովա, Յու. Ա. Պետրոսյան, Թուրքիայի պատմության ուրվագծեր, էջ 241:

⁴ Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 338:

տարի, 1922թ. թուրքերը հույներից գրավեցին ամբողջ Անատոլիան, իսկ հոկտեմբերին Մուդանյա քաղաքում կնքված դաշնակիցների հետ զինադադարով թուրքերին անցավ Արևելյան Թրակիան, որով ավարտվեցին ռազմական գործողությունները: Փաստորեն, Քեմալը վերամիավորեց Թուրքիան, նոյեմբերի 1-ին վերացնելով նաև սուլթանական կառավարությունը¹:

Վերջնական հաշտության համար շուտով նոր խորհրդաժողով հրավիրվեց Լոզանում: Մինչև դրանում արևմտահայ քաղաքական մտքի վերջին դեգերումների վերլուծությանն անցնելը, վերոշարադրյալի վերաբերյալ ցանկանում ենք հետևյալ ընդհանրացումները կատարել.

Առաջին. Լոզանի խորհրդաժողովը գումարվեց այնպիսի աշխարհաքաղաքական գործընթացների պայմաններում, որ արդեն խիստ կասկածելի էր Սևրի պայմանագրի իրականացումը:

Երկրորդ. բուլղարիկյան Ռուսաստանի օգնությամբ հզորացած քեմալական շարժումը հասնում էր հաջող ելքի, իսկ դաշնակիցներն այլևս անկարող էին խոչընդոտել այն:

Երրորդ. Դեռևս Լոնդոնի խորհրդաժողովից առաջ արդեն նրանք ցանկանում էին վերանայել Սևրի պայմանագիրը, ցանկանալով իրենց կողմը գրավել Քեմալին, սակայն վերջինիս ներկայացուցիչներն արդեն իրենց ուժեղ զգալով՝ չհամաձայնեցին մագաչափ զիջում անել նրանց, այդ թվում Արևմտյան Հայաստանի հետ կապված:

Չորրորդ. Լոնդոնի խորհրդաժողովում արևմտահայ քաղաքական միտքը դարձյալ ձախողում ապրեց, քանզի նրա ներկայացուցիչները, ինչպես նաև Ավ. Ահարոնյանը, որին ստեղծված իրավիճակում մնում էր պաշտպանել արևմտահայերի շահերը, դարձյալ չխորանալով նոր աշխարհաքաղաքական գործընթացների մեջ՝ շարունակում էին պնդել Սևրի պայմանագրով Արևմտյան Հայաստանին նախատեսված տարածքներում հայկական պետություն ստեղծելու վրա, այն դեպքում, երբ Դաշնակիցները Սան-Ռեմոյի խորհրդաժողովում էին դեռևս հասկացնում, որ չեն օգնելու Հայաստանին՝ չորս վիլայեթները գրավելու համար, այն դեպքում, երբ այժմ չկար ՀՀ-ն, իսկ այն խորհրդայնացրած Ռուսաստանը Թուրքիայի դաշնակիցն էր:

Հինգերորդ. Լոնդոնի խորհրդաժողովը անպտուղ վերջացավ, չավարտվեց պայմանագրով և նրա ընթացքում ձևավորվեցին ֆրանս-թուրքական, իտալո-թուրքական, անգլո-ռուսական համաձայնագրերը, որոնք Սևրի պայմանագիրը և Հայկական հարցը թեքեցին դեպի մայրամուտ:

¹ Նույն տեղում:

Վեցերորդ. Ազատ և Միացյալ Հայաստանի փոխարեն Լոնդոնում ծնվեց «Ազգային օջախ» եզրույթը, կարծես թե երևույթները փրկելու համար, առանց հստակ սահմանների, որը նույնպես չընդունվեց թուրքերի կողմից:

Ցավոք, այս ամենից հետո էլ արևմտահայ և արևելահայ քաղաքական գործիչները սկսեցին թյուր հույսեր փայփայել այդ օջախի ստեղծման համար, որոնք վերջնականապես խորտակվեցին Լոզանում:

Բ. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ ԼՈԶԱՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՈՒԾ

Լոնդոնի խորհրդածոդովից հետո արևմտահայության խնդրի շուրջ միավորված հայկական պատվիրակությունները դարձյալ փորձեցին կյանքի կոչել «Ազգային օջախի» մասին սին գաղափարը, որն աստիճանաբար դուրս մղվեց օրակարգից: Ալ. Խատիսյանը, որն արդեն հայկական պատվիրակությունների գործունեության ոչ միայն ականատեսն էր, այլև՝ մասնակիցը, ճիշտ է ներկայացրել այն հոգեբանական պահը, որն առաջացել էր Դաշնակիցների մոտ: Ըստ նրա՝ ՀՀ Պատվիրակության անդամները պահպանում էին Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի գաղափարի անձեռնմխելիությունը, բայց գործնականում հանդիպում էին դժվարությունների: Իսկ այդ դժվարությունը կայանում էր հետևյալում՝ նման Հայաստանի պահանջն ուրիշ բան չէր նշանակում, քան «Խորհրդային Միության մեկ անդամին սահմաններուն ընդարձակման պահանջը»¹:

Պատահական չէ, որ երբ նրանք դնում էին Միացյալ Հայաստանի պահանջը, հետևյալ հարցն էր տրվում՝ «Բայց դուք կուզեք, որ Խորհրդային Հայաստանը ընդարձակուի, այսինքն՝ նոր հողամասեր անցնին բոլշևիկներու իշխանութեան տակ»²:

Բայց սա դեռևս հարցի մի կողմն էր: Իսկ իրենք պատկերացնում էին արդյո՞ք, թե ո՞վ պետք է հայությանը տար Միացյալ Հայաստանը: Այս հարցի պատասխանի որոնման ճանապարհին արդեն պետք է պարզ լինեն, որ սայթաքումներն անխուսափելի էին: Մանավանդ ֆրանս-թուրքական համաձայնագրից և հույների խորտակումից հետո: Հայերը ունեին առաջարկների երեք տարբերակ՝ ա. դեմ լինելով բոլշևիկներին, կողմ էին խորհրդային Հայաստանի սահմանների ընդարձակմանը, բ. եթե հայկական ինչ որ հողամասեր տրվեին, պետք է նրանց համար ստեղծվեր նոր վարչաձև՝ Ազգերի Լիգայի հսկողությսան տակ, գ. այդ հողամասերը պետք է մնային թուրքական տարածքներ:

Բնականաբար այս վերջինն իրականացավ, որովհետև արդեն տարածքներ տրամադրելը Դաշնակիցներից չէր կախված, այլ՝ ռուսներից և թուրքերից:

¹ Ալ. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 347:

² Նույն տեղում, էջ 347 – 348:

Այս պարզ ճշմարտությունը կարծես թե ընկալելի չէր: Հակառակ դեպքում դժվար է պատկերացնել, թե ինչ շարժառիթներով են դիմումներ գրվել Լոզանի խորհրդատողովի նախագահությանը: Դրանցից մեկում, որի տակ ստորագրել են Շ. վրդ. Գասպարյանը, Դոկտ. Օովիկյանը, դոկտ. Թաշճյանը, Ռ. Դարբինյանը և Ե.Մեսիայանը, ուր մասնավորապես կարդում ենք. «Մենք ներկայացուցիչներս 20000 հայերու, որոնք թրքական վայրագութիւններու երեսէն՝ ապաստանած են Պոսթըն, Քէմպրիճ, Տորչեսթըր, Ուօթըրթաուն, Չըլսի, Լին եւ շրջակաները, ձեզի կը դիմենք յանուն խաղաղութեան ու արդարութեան, որպէսզի՝ մեզի եւ մեր ութ հարիւր հազար տարագիր դժբախտ ազգակիցներուն համար, յատկացնէք՝ մեր պատմական հայրենիքին մէջ անկիւն մը՝ ազատ թրքական անտանելի բռնապետութենէն, ուր կարենանաք վերադառնալ, եւ սկսիլ վերաշինութեան եւ անարգել առաջադիմութեան մեր գործը»:

1922թ. Փարիզում գումարված խորհրդատողովում արդեն հայեր չէին հրավիրված: Այդ խորհրդատողովը շարունակեց գնալ զիջումների առաջարկի՝ հօգուտ թուրքերի: Նրանց վերադարձվելու էր Կ. Պոլիսը, արևելյան Թրակիայի մի մասը, Միջերկրական և Սև ծովերի միջև գտնվող բոլոր տարածքները՝ մինչև Անդրկովկասի, Պարսկաստանի և Միջագետքի սահմանները: Իսկ Լոնդոնում հայերին խոստացած «Ազգային օջախ» պետք է ստեղծվեր Թուրքիայի արևելյան սահմանների մէջ, կոնկրետ որտեղ, հայտնի չէր¹:

Հայաստանին վերաբերվող որոշման մէջ մասնավորապես կարդում ենք. «Հայերի պահանջները պարփակվում են ընդհանուր ձգտման մէջ՝ պահպանել իրենց համար մի ազգային օջախ Փոքր Ասիայի կամ այն շրջանում, որտեղ նրանք ցարդ հաստատված են նշանակալից թվով: Ընտրությունն այդ շրջանի, ուր այդ օջախը կարելի կլինի առավել լավ ապահովել, կախված է քաղաքական, տնտեսական և սոցիալական այն պայմաններից, որոնք ներկա պահին հնարավոր չէ ճշգրիտ որոշել: Այնուհանդերձ, տերությունները մասնավորապես Ազգերի լիգային կառաջարկեն, հաշտություն կնքելուց անմիջապես հետո, բանակցությունների մէջ մտնել օսմանյան կառավարության հետ հայերի համար նման մի ազգային օջախ ստեղծելու հարցի շուրջ և կջանան սահմանել այն պայմանները, որոնցում կարելի է իրականացնել նրա գոյության համար անհրաժեշտ երաշխիքները»² :

¹ Նույն տեղում, էջ 350:

² Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 732 – 733:

Այսպիսով պարզ է, որ դեռևս չճշտված շրջանում «ազգային օջախ» ստեղծելու խնդիրը թողնվում էր հաշտությունից հետո, որը նշանակում է, որ հաջողությունը խիստ կասկածելի էր:

Ճիշտ է նկատել Ալ. Խատիսյանը, որ Փարիզի խորհրդաժողովի թերևս միակ դրական կետը «Ազդերու Լիգային ուղղված հրավերն էր՝ միջամտելու Հայկական Հարցին: Իսկ ինչ կը վերաբերի մեծ տերութիւններուն. անոնք ակներեւ կերպով կը խոստովանէին իրենց անզօրութիւնը»¹:

Իսկ Ազգերի Լիգայի հրավերն ուներ հետևյալ բովանդակությունը՝ «Ասամբլեան հրավիրում է Խորհրդին, իսկույն նեթ դաշնակիցների Գերագույն խորհրդին հարկադրել ընդունելու պայմանագրում այնպիսի պայմաններ դնելու անհրաժեշտությունը, որոնք կապահովեն Հայաստանի ապագան և, ապա, հայերի համար ապահովել ազգային օջախ ամբողջովին անկախ թուրքական կառավարումից»²:

Այսպիսով, ստացվում է, որ Ազգերի Լիգան պետք է հարկադրեր Թուրքիային ստեղծելու ազգային օջախ՝ նրա կառավարումից դուրս: Բայց արդյո՞ք դա հնարավոր էր: Այդքան քաղաքական թռիչքով անցած հայ քաղաքական ղեկավարները արդեն պետք է հասկանային, որ՝ ոչ: Նույն Ազգերի Լիգան իր սեպտեմբերի 22-ի նիստի մեջ ընդունած բանաձևում արդեն շրջանցում էր «անկախ թուրքական կառավարումից» ձևակերպումը և արձանագրում, որ «Թուրքիոյ հետ խաղաղութեան բանակցութիւններու միջոցին անուշադիր չթողնուի նաեւ Հայերուն համար Ազգային Օճախ մը հաստատելու անհրաժեշտությունը»³:

Իսկ Լոզանի խորհրդաժողովում (20 նոյեմբեր, 1922–24 հուլիս 1923) առհասարակ դուրս մղվեց օջախի գաղափարը ևս:

Մինչև հայկական պատվիրակությունների Լոզանում ունեցած գործունեությանն անդրադառնալը, նշենք, որ արդեն երկու պատվիրակությունները դարձյալ հանդես էին գալիս միացյալ, որը նշանակում է, որ արևմտահայ և արևելահայ քաղաքական միտքը միաձուլված էր: ՀՀ Պատվիրակության կողմից Միացյալ պատվիրակությունը ներկայացնում էին Ավ. Ահարոնյանը և Ալ. Խատիսյանը, Իսկ Ազգային Պատվիրակության՝ Գ. Նորատունկյանը և Լ. Բաշալյանը: Պատվիրակության նիստերին մասնակցում էին նաև Արմեն Գարոն, Ա. Մանդելշտամը և ուրիշներ:

Հայկական միացյալ պատվիրակությունը գործում էր երկու ուղղություններով՝ ա) միջազգային հայասեր և մարդասեր անձանց տրամադրել հօգուտ Հայկական հարցի լուծման, որոնք իրենց դիմումնագրե-

¹ Ալ. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 351:

² Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 734:

³ Ալ. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 353:

րով պետք է նպաստեին խորհրդաժողովում այդ հարցի քննարկմանը, ք) կոնֆերանսին ներկայացնել իրենց պահանջները, որոնք բնականաբար նահանջ էին կատարել Սևրի պայմանագրից: Փաստորեն նրանք գործում էին այն նոր հնարավորությունների սահմաններում, որոնք ներկայացրել էին Դաշնակիցները: Պատվիրակությանը չթույլատրվեց մասնակցել կոնֆերանսին, քանի որ այն չէր ներկայացնում Խորհրդային Հայաստանը: Ուստի և այն Խորհրդաժողովին է ներկայացնում մի հուշագիր, որով առաջարկում էր ա) Ազգային օջախի ստեղծում այն տարածքների վրա, որոնք սահմանագծել էր Վիլսոնը, ք) Խորհրդային Հայաստանի տարածքների ընդլայնում Արևմտյան Հայաստանի նրան մասերի կցումով, այնպես, որ ապահովվի ելք դեպի ծով, զ՝ այս երկուսի չիրականացման դեպքում՝ Ազգայի օջախի ստեղծում Կիլիկիայում կամ Փոքր Հայքում¹:

Այս պահանջները ներկայացնելով հաշվի չէր առնվում, որ վիլսոնյան սահմաններից դեռևս Լոզանից առաջ փաստորեն Դաշնակիցները հրաժարվել էին, Խորհրդային Հայաստանի սահմանների ընդարձակում Թուրքիայի հաշվին արդեն անհնար էր, քանզի կնքվել էր 1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրը, որը նույնությամբ հաստատվել էր հոկտեմբերի 23-ի Կարսի պայմանագրով և վերջապես այն, որ եթե Դաշնակիցները լքել էին Կիլիկիան, ապա՝ ինչու՞ պետք է Թուրքիան համաձայնվեր այնտեղ հայկական օջախ ստեղծելու գաղափարին:

Հայկական պատվիրակությունը հրավիրվում է մասնակցելու 1922թ. դեկտեմբերի 22-ին կայացած ենթահանձնաժողովի նիստին: Այստեղ Ավ. Ահարոնյանը «գծեց քարտեզի վրայ սահմանագիծ մը, որ անցնելով Ռիզկեն ու Հասան Կալայեն՝ դուրս թողլով Էրզրումը, կը հասներ մինչեւ Մուշ եւ Մէջը առնելով Վանայ ծովը՝ կը միանար Պարսկաստանի սահմաններուն»²:

Իսկ Գ. Նորատունկյանի պատկերացմամբ՝ «Օճախը կը գծուի Ճի-հունի, Սուրիոյ սահմաններու եւ Եփրատի միջեւ ու կերկարի դէպի հիւսիս՝ առնելով իր մէջ Սիսը և Մարաշը»³:

Ինչպես համոզվում ենք՝ նրանց համար վերջնականապես ճշտված չէր, թե ինչ սահմաններ էր ընդգրկելու Հայկական օջախը: Ճշմարտությունը պահանջում է նշել, որ դա պարզ չէր նաև Դաշնակիցների համար, որոնք Թուրքիայի առջև խեղճացածի կարգավիճակում էին հայտնվել: Հայկական հարցին անդրադառնալը նրանց համար արդեն կրում էր սոսկ մարդասիրական բնույթ, որը չէին հասկանում հայ քաղաքական գործիչները, կամ եթե հասկանում էլ էին, չէին պատկերացնում որ մարդասիրական կոչերը խեղդվում են քաղաքական սառը հաշվարկների մեջ: Այսպես,

¹ Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 373 – 374:

² Նույն տեղում, էջ 382:

³ Նույն տեղում, էջ 385:

1923թ. հունվարի 6-ի նիստում, որը վերջնականապես պետք է բանաձև ընդուներ հայկական օջախի մասին, իտալացի դիվանագետ Մոնտանան «ճառով մը դիմեց Թուրքերուն՝ խնդրելով յատկացնել «վայր» մը Հայերը կեդրոնացնելու համար», որի սահմանները և վարչաձևը պետք է ընտրեր Ազգերի Լիգան /նույն իմաստով խոսեցին անգլիացի Ռումբոլդը և ֆրանսիացի Լա Քրուան/: Իզգեթ փաշայից հետո Թուրքիայի երկրորդ պատվիրակ Ռիզա Նուր բեյը հայտարարում է, որ ինքը չի մասնակցի այնպիսի նիստին, ուր քննարկվելու է Հայկական հարցը, քանի որ հենց իրենք են կորստյան մատնել հայերին՝ գրգռելով թուրքերի դեմ և դուռն ուժգին խփելով՝ իր խորհրդականների հետ հեռանում է¹:

Դրանից հետո, 1923թ. հունվարի 9-ին տեղի ունեցած ռազմա-տերիտորիալ հանձնաժողովի նիստում Քերզոնը հայտնում է, թե հայերի հարցը դրված չէ քաղաքական հողի վրա և ինքը հույս ունի, «որ թուրքական պատվիրակությունը կհավատա իրեն, եթե բոլոր պատվիրակությունների հավանությամբ ինքը հայտարարի, որ այդ հարցում Տերությունները չեն հետապնդում քաղաքական որևէ նպատակ: Ինչպես ասաց պ-րն Բարրե-րը, իրենց նպատակն ունի զուտ մարդասիրական բնույթ»²:

Քերզոնն այնուհետև հայտնում է, որ օջախ ստեղծելով իրենք ամեն-ևին նպատակ չունեն խախտելու Թուրքիայի սուվերենությունը և այդ պետության մեջ ստեղծելու «ինքնավար տերիտորիա»: Այնուամենայնիվ, Իսմեթ փաշան մերժում է հայերի հետ կապված ցանկացած առաջարկ: Հուլիսի 24-ին ստորագրված Լոզանի պայմանագրի մեջ հայ անունն անգամ չկա: Այնտեղ խոսք է գնում միայն ոչ մահմեդական փաքրամասնությունների իրավունքների մասին, որոնք իբրև թե հավասարվում էին մահմեդականների իրավունքներին³:

Այսպիսով, Հայկական հարցը դուրս մղվեց օրակարգից: Մի վերջին անգամ այն շոշափվեց հուլիսի 17-ի նիստում՝ վերածվելով հայ գաղթականության հարցի⁴:

Իսկ ինչի՞ համար Անգլիան այդքան զիջող էր դարձել Թուրքիայի նկատմամբ: Վերոնշյալների հետ հիմնական պատճառ էր նաև այն, որ նա կարողացավ Լոզանում հասնել նեղուցների խնդրում իր տարբերակի ընդունմանը: Համաձայն դրա՝ ցանկացած դրոշակի ներքո նավերի անցում էր պահանջվում նեղուցներով ոչ միայն խաղաղ, այլև պատերազմի ժա-

¹ Նույն տեղում, էջ 401:

² Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 756:

³ **Գաբրիել Լազեան**, Հայաստան եւ Հայ դատը, Երևան, 1991, էջ 304 – 305:

⁴ Հայկական Հարց, հանրագիտարան, Երևան, 1996, էջ 162: Լոզանի Կոնֆերանսի մասին նաև տե՛ս *Армянский вопрос на Лозанской конференции, Тифлис, 1926, ст. 3 – 36.*

մանակ, եթե պատերազմում Թուրքիան չեզոքություն էր պահպանում: Պատերազմում Թուրքիայի մասնակցության դեպքում նեղուցներով օգտվում են միայն չեզոք երկրների ռազմանավերը: Նեղուցները ենթակա էին ապառազմականացման և նրանց նկատմամբ պետք է սահմանվեր ինչպես սևծովյան, այնպես էլ մի քանի երկրների միջազգային հանձնաժողովի հսկողության: Սրանով Անգլիան հնարավորություն էր ստանում իր ռազմածովային ներկայությունն ապահովել սևծովյան ավերում, այսինքն ԽՍՀՄ նկատմամբ:

Լոզանի խորհրդաժողովում Թուրքիայի հետ կնքված պայմանագրով փաստորեն չեղյալ հայտարարվեց Սևրի պայմանագիրը և այն դարձավ սուվերեն պետություն՝ միջազգայնորեն ճանաչված սահմաններով:

Միանգամայն ճիշտ է Ռ.Դարբինյանը, գրելով, որ Լոզանի կոնֆերանսը «Մեծ խաչ մը դրաւ ոչ թէ հայկական դատին վրայ, այլ այն միամիտ ու ցնորամիտ ազգային մուրացկան քաղաքականութեան վրայ, որուն սկիզբդրուեցար Պերլինի վեհաժողովի ատենէւ որ իր այնքան տխուր ու, յուսով ենք, վերջնական վախճանին յանգեցաւ Լոզանի մէջ»¹:

Հայ խաբված քաղաքական գործիչները թեն շարունակեցին միաժամանակ էլ ծեծել տերությունների դռները, բայց նրանց համար Հայկական հարցը այլևս թաղված էր:

Վերջնական եզրակացություններն են.

Առաջին. Լոզանի խորհրդաժողովում հայ քաղաքական միտքը առաջնորդվում էր «Ազգային օջախի» գաղափարը կյանքի կոչելու ուղղությամբ, որը ներմուծված էր հենց Դաշնակիցների կողմից:

Երկրորդ. Այդ գաղափարը հնարավոր չէր իրականացնել, քանզի Դաշնակիցները սիրախաղ էին սկսել Թուրքիայի հետ և ամենևին նպատակ չունեին հայերի համար պայքարի մեջ մտնել թուրքերի դեմ:

Երրորդ. Լոզանի պայմանագրով չեղյալ հայտարարվեց Սևրի պայմանագիրը, որն հայության համար այդպես էլ իրական չդարձավ, բայց որի համար մեծ տերություններին դատապարտելուց ավելի շատ անհրաժեշտ է պատճառներ տեսնել արևմտահայ և առհասարակ հայ քաղաքական մտքի ուղղվածությունների մեջ, որոնք սխալ նպատակակետ էին ընտրել և չէին բխում այն ռեալ իրավիճակից, որում գտնվում էր Հայաստանը 1918թ. հետո:

Ашот Нерсисян, Армянский вопрос на конференциях в Лондоне и Лозанне (анализ) - Анализ процесса армянского вопроса на конференциях в Лондоне (21 февраля 1921 года) и в Лозанне (20 ноября 1922 года - 24 июля

¹ Հայ քաղաքական մտքի դեգերումները, գրեց՝ Ռ.Դարբինեան, տես «Հայրենիք» ամսագիր, թիվ 6, Ապրիլ, 1923, էջ 3:

1923 года) важен, поскольку уже изменились геополитические процессы. С появлением новой Турции союзники не смогли навязать требования Севрского договора. Они были более склонны к союзу с Кемалем в ущерб России. В этих условиях они отодвинули армянский вопрос на задний план, который превращается в вопрос о предоставлении «армянского дома» и который уже вытесняется на лондонской конференции. Армянская политическая мысль потерпела поражение.

Ashot Nersisyan, Armenian issue at the London-Lausanne conferences (analysis) – The analysis of the Armenian issue process at the conferences in London (21 February 1921) and in Lausanne (20 November 1922 - 24 July 1923) is important because there have been already changed geopolitical processes. With the emergence of a new Turkey, the Allies were unable to impose the demands of the Treaty of Sevres. They were more inclined to ally with Kemal to the detriment of Russia. Under these conditions, they relegated the Armenian issue to the background, which is turning into the issue of providing an “Armenian home” and which is already being supplanted at the London conference. Armenian political thought has been defeated.

АНТИТЕЗИСЫ ГЕНОЦИДА АРМЯН

ВАЛЕРИЙ ТУНЯН

Ключевые слова - отрицание Геноцида армян, пять антитез, пантуркизм, механизм геноцида, отрицательная позиция Турции, осуждение Геноцида союзниками Турции по Первой Мировой войне.

В обширном антиармянском мифотворчестве вокруг проблем Геноцида армян в Османской империи и Турции представлены ангажированные историки разных стран. Среди них определенное место занимают американские историки, создающие фейкстерную историю Армянской Гольгофы,¹ которые свои профессиональные навыки сочетают с официальными видами режимов Турции.²

Американский военный историк Э.Эриксон в работе “Турки и Армяне. Исследование борьбы с повстанцами” в мифотворческой форме пытается обосновать отличие собственного отрицания Геноцида армян со стороны “множества других объяснений”. Для этого на суд общественности выносятся пять антитез против собственных аргументов.

Первая антитеза гласит о проведении младотурками “Этнической гомогенизация Анатолии” под воздействием идеолога Зия Гёкальпа. Более того отмечается “Такая идея была включена в тайные политические платформы младотурок еще в 1909 г”.³ Причем не показывается сущность платформы идеи и её применение к Аданским событиям 1909 г., хотя молчание знак согласия, а отмечается её применение в виде разных проектов и переселения мусульман с Балканского полуострова в ходе балканских войн 1912 -1913 гг. в Анатолию.

Не говорится, что “идея” неординарна, не сводится к переселению мохаджиров с Балкан и выселении христианского населения из родных мест в Анатолии. Здесь идет речь о программе действий по тюркизации не только Анатолии, но и целых континентов, где должны погибнуть местные цивилизации во имя торжества тюркизма. Составные идеи пантуркизма у идеолога Зия Гёкальпа и его последователей следующие: 1) тюркизация

¹ **Тунян В. Г.** Фейк-ньюс пропаганды Турции и Азербайджана. - История и Культура. 2019, N 2, с. 137.

² **Тунян В. Г.** Леви. Армянский вопрос в Османской империи: мифы и реальность. - Вопросы арменоведения. 2017, N3, с.172-185; 100-летие Геноцида армян: истоки, мифы и последствия. Акунк, 2015, N 2 (12). с. 8-10.

³ Там же, с. 305.

Турции - упразднение нетурецких этносов, очищение турецкого языка от различных “примесей” слов других народов и приближение к тюркским корням; 2) огузанизм - объединение тюрков Турции, Азербайджана Ирана и Азербайджана Закавказья в единую державу под названием Огузистан как программы минимум; 3) создание туранской федерации из тюркских народов, потомков алтайских и среднеазиатских тюрков как программа максимум.¹

Таблица N 1

Положения о Геноциде армян	Оценка причин
1. Антитеза N 1. Этническая гомогенизация Анатолии.	1. “Соответствующие доказательства убедительны”. ²
2. Антитеза N 2. Намерение уничтожить армян	2. “Нет практических доказательств”.
3. Антитеза N 3. “Кумулятивная радикализация”.	3. “Процесс радикализации османской политики”. ³
4. Антитеза N 4. “Ответные меры и их правомочность”.	4. Террор армян и ответный удар мусульман.
5. Антитеза N5. Государственная безопасность и повстанчество.	5. Армянские “масштабные мятежи” 1915 г. ⁴

Логическая ошибка создаваемая Эриксоном заключается в том, что всю вину за Геноцид армян он возлагает на одну идейную личность. В то время как её приняли на Салоникском конгрессе в октябре 1910 г. представители партии младотурок “Иттихад”. Цель - создание однородной Анатолии с использованием государственных ресурсов.⁵ Между тем, “плодовитым” пропагандистом создания “однородной Анатолии” Эриксон признает исследователя Танер Акчам. Приводится также мнение турецких историков Угура Умита Унгёра (профессор Утрехтского университета Нидерланды) и Фуата Дюндата (профессор университета И. В. Гете во Франкфурте, Германия), которые “также поддерживают эту точку зрения”.

Эриксон соглашается признать обоснованность этого подхода, поскольку деваться некуда из-за исчезновения основной части османских армян, но с оговоркой: “По моему мнению, соответствующие

¹ **Зареванд.** Турция и Пантуранизм, Париж, 1930, с. 12, 92.

² **Эриксон Э.** Турки и Армяне. Исследование борьбы с повстанцами М., 2018, с.305.

³ Там же, с. 308.

⁴ Там же, с. 306, 307.

⁵ **Тунян В. Г.** Младотурки и Армянский вопрос. Ереван, 2004, ч.1, с.269, 270.

доказательства достаточно убедительны и обладают некоторой аутентичностью, но не объясняют, почему процесс переселения прекратился зимой 1915-1916 гг.”¹

В данном тезисе Эриксон выступает как фэйкстер. В качестве фэйкового гангстера он вырезает отдельные явления и события, соединяет их в единое целое для прикрытия реального процесса геноцида армян. Дело в том, что он повторяет самого Акчама в вопросе создание этнически гомогенного общества со стороны младотурок. Акчам пишет: “Тюркизация Анатолии стала стержнем политики правительства особенно после Балканских войн”.²

Но саму программу Геноцида армян Акчам отводит к 1914 г. Он пишет: “Эту программа была разработана на тайных совещаниях младотурецкого правительства в мае-августе 1914 г.”³ Реальное воплощение отводится к весне 1915 г., когда войска Антанты приступили к проведению операции на Дарданел-льском полуострове по захвату Стамбула.

Локализация Геноцида армян программой 1914 г. и воплощения 1915 г. позволяет Акчаму снять ответственность с младотурок и правительства Османской империи, возложить ее осуществление на необходимость безопасности военного времени. Отсюда следует техчир (переселение) армян в Сирийские пустыни и отказ Акчам признать сатисфакцию, территориальные и финансовые требования со стороны потомков жертв геноцида армян.⁴ Только материальные потери армянского народа в ходе геноцида на Парижской мирной конференции 1919 г. были оценены в 19 млрд. франков, которые по курсу 2018 г. оценивались уже в 3,6 триллиона долларов США. Игнорируется проблема ликвидаций последствий Геноцида, как для безопасности, так и развития сохранившихся частей армянского народа.⁵

Аналогичная позиция находится у Эриксона, только в более жесткой форме, как отрицание “Геноцида армян”. На этой же платформе строится миф “общей боли” руководства Турции во главе с президентом Р. Эрдоганом об одинаковой ответственности за обоюдные жертвы армян и мусульман. Более того Конституционный суд Турции отверг требования

¹ Эриксон Э. Турки и Армяне..., с. 305.

² Танер Акчам. Турецкое национальное “Я” и Армянский вопрос. - Литературная Армения. 1005, N 4-6, с. 91.

³ Там же, с. 94.

⁴ Танер Акчам. Турецкий ученый с антиармянской позицией признал, что туркам есть, что вернуть армянам. - <http://novostink.ru/mir/35829>

⁵ В повестке - возмещение материального урона. - <http://www.golosarmenii.am/article/64007>

католи- коса Великого дома Киликии Арама I, располагающегося в Анти-ласе (Ливан) о возвращение духовной исторической резиденции в г. Сисе. Это заставило обратиться с иском в Европейский Совет, поскольку юридический вопрос о возвращение собственности сразу переводится в политический и возвращения материальных потерь.¹

Между тем Акчам вопрос возмещения сводит к “потере памяти“ в Турции, чтобы избежать горьких чувств от “печальных событий прошлого”.² Он находит возможным признание Геноцида армян современной Турции, что позволит строить демократическое общество: “Если Турция примет свою историческую ошибку, то сможет установить в стране демократию, сформировать общественность, в которой уважают права человека и построить лучшее будущее для них”.

Иной путь Турции несет смертельную угрозу от неё для народов Ближнего Востока: “До тех пор, пока Турция будет отвергать Геноцид армян, это будет означать, что опасность не миновала: Турция может все повторить. То же самое в случае турок и арабов. Таким образом, если ты продолжаешь отрицать историческую несправедливость, то создаешь потенциальный образ страны, готовой на повторение того же самого преступления”.³

Причем упомянутый Эриксоном профессор Угура Умит считает недостаточным формального извинения Турции, - “сегодня есть осознание того, что просто признание Геноцида армян Турцией не есть конечная цель, нужно нечто большее”,- и ставит вопрос об индивидуальной компенсации за Геноцид армян в той или иной форме как возвращение собственности предков либо получения денежного возмещения. Территориальная компенсация, при наличие значительного количества курдов на территориях Севрского договора 1920 г. для армянского государства, приведет к острому конфликту.⁴

Такой подход с армянской стороны получил отвержение в виде нового формата решения Армянского вопроса: 1) создания западноармянской государственности на небольшой территории,

¹ **Степанян Д.** Признание Геноцида армян без возмещения ущерба не стоит и ломанного гроша. - <http://noev-kovcheg.ru/mag/2014-11/4567.html>

² **Танер Акчам.** Турецкое национальное “Я”..., с.106.

³ **Танер Акчам.** Непризнание Геноцида армян создаст для Турции очень большие проблемы. - <https://www.aravot-ru.am/2017/05/11/241766>

⁴ Массовая индивидуальная компенсация - работающий вариант. - <http://golosarmenii.am/article/54587>

примыкающей к Республике Армения; 2) включения в неё гору Арарат – священный символ Армении и обеспечить выход к Черному морю и т.д.¹

Антитеза N 2 гласит о намерение турок уничтожить армян Османской империи. По этому утверждению Эриксон указывает на отсутствие практических доказательств. 23/13 мая 1915 г. страны Антанты - Англии, Франции и России приняли “Заявление” относительно подхода Турции к Армянскому вопросу, осуждающее политику “резни армян”. Мотивацией демарша указывались факты истребления армян в первой половине апреля (новым стилем) в Эрзеруме, Дергане, Эгине, Битлисе, Муше, Сасуне, Зейтуне и Киликии. Руководство Османской Турции предупреждалось о “личной ответственности за эти преступления всех членов правительства, а также тех местных представителей, которые окажутся причастными к подобной резне”.² Существуют материалы стамбульских судебных процессов 1921-1922 гг., представляющих вину властей предержавших.³ Также Европейский парламент принимал резолюции о Геноциде армян в Османской империи в 1907, 2000, 2002, 2005 и 2015 г.⁴

Есть разные документы относительно реальности Геноцида армян. 25 марта 1919 г. газета “Турецкий Стамбул” опубликовала письмо центрального комитета партии “Иттихад” под заголовком “Письмо с поручением Особому комитету”. В нем излагались 10 инструкций, которые обуславливали содержание истребительной политики в ходе депортации армянского населения: закрыть армянские общественные организации, а лидеров выселить на окраины; отобрать у армян оружие; предпринять провокации для использования войск якобы против погромов и воздействия на мусульманскую общественность, сохранить жизнь женщин и детей для исламизации, уволить государственных служащих по обвинению в измене, ликвидировать армянских мужчин в армии.⁵

Имеется постановление правительства Османской империи от 30 мая 1915 г., где говорится о цели депортации армян: “полностью уничтожить и

¹ **Амшенци Л.** Западная и Восточная Армения: Тактические соображения не должны подменять стратегические цели. - <http://www.yerkramas.org/article/145918/>

² Русские источники о геноциде армян в Османской империи 1915-1916. Сост. **Абрамян Г. А., Севан-Хачатрян Т. Г.** Ереван, 1995. Вып. 1, N 26, с.21.

³ **Мелкоян Л.** Историк Танер Акчам:еще один документ о Геноциде армян. - <https://www.armmuseum.ru/news-blog/2017/6/11/-33635>

⁴ Доклад Европарламента призвал страны ЕС признать Геноцид армян. - <http://www.Yerkramas.org/article/88469/>

⁵ В 1919 году турецкая газета опубликовала план депортации армян из 10 пунктов. - <http://russia-armenia.info/node/14799>

ликвидировать“.¹ Есть местное предписание о депортации армян Османского правительства, опубликованное миссионеркой Элеанор Франклин в филадельфийской газете “Saturday Evening Post” за 5 февраля 1916 г., которое конкретизирует ранее принятые документы.²

Антитеза N 3 гласит о накопление “кумулятивной радикализации”, ведущей к процессу “радикализации османской политики”, проявляющейся в форме насилия. Все проблемы Геноцида армян сводятся к противодействию истребительной политике османской властей за что они были и наказаны: “Ограниченные региональные меры, обусловленные требованиями военного времени, привели к процессу радикализации османской политики в отношении армян”. С другой стороны вина Геноцида возлагается на страны Антанты, которым якобы помогли армяне: “Кроме того, армян подталкивали к жестокости и восстаниям союзники, которые поставили их на путь сопротивления османскому правительству”. Из всего этого мифо-творчества делается поразительный садомазохистских вывод: “Фактически армяне частично и были организаторами собственного уничтожения”.³

Подход направлен против армянских исследователей диаспоры Вагана Дадряна и Раймонда Кеворкяна⁴, которые последовательно показывают идеологические, экономические и политические мотивы истребления армян в Османской Турции.

Между тем, такой подход позволяет дать типология видов геноцида. В частности исследователем В. Дадряном выделены: запрет национальной культуры - дискриминация без насилия; депортация - массовые изгнания, распыление этноса; лишение средств самозащиты; репрессивный - действие против меньшинства; утилитарный - массовые убийства людей одного региона, пола, возраста или религии; тоталитарный - неограниченное истребление”.⁵ Отсюда вытекает депортационный вид как смягченный вариант “стыдливого признания”.

Во всяком случае, для организации системного уничтожения в военное время необходимо использование разновидностей всех силовых структур - от фронта до тыла. К этому же прибавилась “Особая

¹ Сафрастян Р. Решение Османского правительства о депортации армян (1915 мая 30). Приложение N 1, с. 14, 15. Вопросы арменоведения. 2014, N 1.

² Из истории Геноцида армян. Гл. ред. Гарибджанян Г. Ереван, 1991, с. 35, 36.- На арм. яз.

³ Эрикссон Э. Турки и Армяне..., с.306.

⁴ Дадрян В. Геноцид армян: содержание претупления.- Ереван, 2014, с.7-9. Кеворкян Р. Геноцид армян. Полная история. М., 2015, с.9.

⁵ Барсегов Ю. Державы, причастные к Геноциду армян, должны искупить свою вину. - <http://armenianhouse.org/barsegov/articles-ru/guilt.html>

организация” (Тешкилят-и-махсусе) под руководством Бехаэдина Шакира, исполнительная тройка во главе с министром внутренних дел Талаатом, ставшего затем и великим визирем, взаимодействие силовых структур и армии.¹

Комплексный подход позволяет представить Геноцид армян как системное, историческое и эволюционное явление.

Таблица N 2

Армянский геноцид 1894 - 1923 гг

Режимы Турции	Этапы	Число жертв	Место
Султан Абдул – Гамида (ехерн)	1894-1896	300000	Западная Армения
Новые и старые турки	1909	40000	Аданский вилайет
Младотурки (Мец ехерн)	1915-1917	1,5млн.	Османская Турция и арабские пустыни
Власти Турции	1918-1919	500000	Восточная Армения, Азербайджан
Кемалисты	1920-1923	300000	Республика Армения, Киликия и пр. ²

Армянский народ оказавшийся пленником в составе турецкой и мусульманской среды на всем протяжении указанного времени Геноцида подвергался разным видам истребления. Если при Абдул-Гамиде ударной силой стала политика обезземеливания армян, затем иррегулярных частей курдов-гамидие и военных сил, с частичным использованием войск, то младотуркизм запустил механизм государственного уничтожения.³ Цементирующей основой стала идеология туркизма.

¹ Тунян В. Г. ” Особая организация” и Геноцид армян 1915 г. - Вопросы истории и историографии геноцида армян, 2002, N 6, с. 35-40.

² Тунян В. Г. Армянский вопрос в Русской печати 1900-1917. Ереван, 2010, с. 213.

³ Тунян В. Г. “Особая организация и Геноцид армян 1915 г.”- Вопросы истории и историографии геноцида армян, 2003, N 7, с.37,38,41: Младотурки: причины Геноцида армян и способ осуществления (1918-1915). // Там же, 2003, N 8, с. 29-38.

По сведениям на 3 февраля 1916 г. в пустынях Месопотамии оказалось 486 000 армян, которые находились: Дамаск и его окрестности – 100 000, Дейр Зор и окружные деревни – 300 000, Расуль-Айн и окрестности – 20 000, Ракке и его окрестности – 10 000, Ама и окрестности – 12 000, Оме и окрестности – 12 000. Всего 486000. В пути находилось еще около 100 000 человек. Все вместе составляли около 600 000 армян.¹ В сентября 1916 г. из них останется 25 тыс.² По данным Талаата, в 1915 г. в Анатолии жили 1 250 000 армян, а в конце 1916 г. осталось 284 157 армян. Разница в 972 тыс. армян означает их “исчезновение”.³

Антитеза N 4 представляет якобы насилия армян над тысячами невинных “сельских мусульман”, которые обусловили “ответные меры и их правомочность”. Причем сам же Эриксон отвечает на поставленный им тезис: “Это происходило одновременно с перселениями, обусловленными государственной безопасностью и военной необходимостью”.⁴ Сторонниками этого подхода указаны исключительно турецкие историки как Энвер Конукчу и Тюркай Атаов.

Между тем приведенный текст высказывания Эриксона говорит лишь о том, что речь идет о самообороне выселяемых армян, имущество которых, честь и достоинство попирались со стороны мусульман. Из армянского населения Турции в 2,5 млн, по данным Б. Бербероглу, 80% проживало в сельской местности.⁵ При задействовании режимом войсковых, полицейских и жандармских частей, а также мусульманского населения массовых расправ со стороны депортируемых армян невозможно представить. В силу чего Эриксон и не приводит никаких данных, ссылаясь просто на турецких авторов, чтобы не ставить себе в неудобное положение.

Тем не менее начинка этого тезиса полностью представлена в анти-тезе N 5 о государственной безопасности, обосновываемая “масштабностью” армянских мятежей 1915 г. Без приведения мест их расположения, хотя подразумевается Ванская самооборона весной 1915 г. и армян Муса Дага,⁶ Эриксон утверждает: “Армяне Османской империи, подстрекаемые армянскими революционными комитетами... и

¹ Английская Синяя книга. - Кавказское Слово. 1916, 2 марта.

² **Тунян В. Г.** Младотурки и Армянский вопрос..., ч. 3, с. 240, 241.

³ Документ Талаата – потрясающее открытие. - <http://forum.33bru.com/printTopic186338660.html>

⁴ **Эриксон Э.** Указ. соч. с. 307.

⁵ **Бербероглу Б.** Национализм и этническое соперничество... - <http://novarm.narod.ru/arch112006/berber.htm>

⁶ Сообщения австро-венгерских дипломатов о Геноциде армян (1915-1918гг.). Сост. **А. Оганджян.** Ереван, 2004, N 69, с.111. - На арм. яз.

махинацией великих держав, направленных на разрушение империи, восстали с целью создания независимой Армении”.

После чего оговаривается, что это не его точка зрения, а “современной официальной турецкой версии”: ”Двадцать лет тому назад я полагал такое объяснение наиболее обоснованным. Тем не менее я уверен, что данный аргумент несостоятелен”. Причиной перемены мнения указано участия лишь малой части армян Османской империи в повстанческих действиях, а большинство армян являлись “пассивными наблюдателями, либо лояльными гражданами”.¹ Вывод обосновывается также личным опытом участия Эриксона в американских антиповстанческих войнах первого десятилетия XXI в. на Ближнем Востоке, т.е. в Ираке и Сирии.

В связи с этим отметим, что основа четвертого и пятого антитезиса, представляющего армян одним из ”врагов турецкого государств”, получила распространение с 1980 г., когда в канун государственного переворота в Турции ген. Кенана Эврена появился доклад для высшего командного состава о национальных меньшинств. В нем Эврен утверждал: “В начале Первой Мировой войны Османская империя оказалась в довольно тяжелом положении. Причина - предательство армян и их непрерывная преступная деятельность. По этой причине депортация армян из зоны военных действий была крайне необходимой. Произошедшее было оправдано и законно, осуществлено в соответствии с условиями того времени. Учтем также и то обстоятельство, что все это происходило на османских территориях, при- надлежащих туркам “.

Заявлено о спорности количества жертв турецких армян и значительности среди мусульман: “Утверждения о 1.5 млн жертв лживы. Реальное число жертв среди армян – от 50 до 100 тысяч. Потери турецкой стороны были гораздо страшнее”.² Доклад был призван обосновать необходимость государственного переворота, а его начинка “Армяне - враги Турции” используется до сих пор.

Нежелание Эриксона говорить о надуманности претензий турок относительно армянских мятежей и уничтожение армян, несмотря на отдельные отмазки, связаны с необходимым для турецкой пропаганды заключением: “Переселения армян в 1915 г. не носили характер геноцида... - они представляли собой борьбу с мятежами “.³

В расстановке понятия антитезисов по Геноциду армян к реалиям современной политики важную роль играет отношения бывших союзников

¹ Эриксон Э. Турки..., с. 307.

² Армяне – враги Турции: рассекреченный документ. - <http://ru.lin.am/33315.html>

³ Эриксон Э. Турки и Армяне..., с. 312.

Османской империи к Армянской Гольгофе: 21 апреля 2015 г. парламент Австрия признал массовые погромы армян в Османской империи 1915 г. геноцидом за которые она несет “моральную ответственность”;¹ 24 апреля 2015 г. Народной собрания Болгарии осудило “массовые истребления Армян в Османской империи с 1915 по 1922 гг.”;² 2 июня 2016 г. бундестаг Германия принял резолюцию, осуждающую “действия младотурецкого правительства, которые привели к почти полному уничтожению армян в Османской империи. Признана “историческая ответственность” Германии за Völkermord (геноциды) XX в.”³

Вне “демократической культуры” осталась лишь Турция. Премьер-министр Бинали Йылдырым назвал “обычным явлением” Геноцид армян. В заявлении, по поводу предстоящего принятия бундестагом резолюции по Армянской трагедии, им было сказано: “В 1915 году, во время Первой мировой войны, с армянами случилось обычное явление, которое может произойти в любой стране”.⁴ В этом контексте становится понятным интерес Турции к ангажированным историком для освещения Геноцида армян с заинтересованным уклоном, поскольку оказалась в историко-политическом загоне.⁵

Վալերի Թունյան, Հայոց ցեղասպանության հակաթեզեր - Ամերիկյան պատմաբան Էդվարդ Էրիկսոնը իր աշխատանքում «Թուրքերը և Հայերը. Ապստամբների հետ պայքարի հետազոտումը» փորցելը հիմնավորել իր կողմից Հայոց ցեղասպանության մերժումը: Հակադրվելով եղաց բազում բացառություններին, նա առաջ է բերել հինգ հակաթեզեր սեփական դիրքորոշման վերաբերյալ:

Նրա կարգիքով չկա իրական փաստարկներ հայերի ոչնչացման վերաբերյալ, Հայկական արմատականության առաջացումը արթնացրելը օսմանյան արմատականացման գործընթացը. Հայկական ահաբեկչությունը առաջացրելը մահմեդականների հակահարվացը. Պետական անվտանգության միջոցները թելադրվացեն եղել իփր 1915 թ. Հայկական խոռ-

¹ Австрия признала Геноцид армян. - <https://mediamax.am/ru/news/foreignpolicy/13929>

² Болгария признала «массовое истребление» армян в Османской империи - <https://regnum.ru/news/1919093.html>

³ Меркель прокомментировала принятую Бундестагом резолюцию о Геноциде армян. - <http://news.am/rus/news/330279.html>

⁴ Премьер-министр Турции назвал “обычным явлением” Геноцид армян. – <http://news.am/rus/news/330099.html>

⁵ **Баранчик Ю.** Гибель гиганта: Эрдоган в ловушке его собственного изготовления. - <http://regnum.ru/news/polit/2140450.html>

վություններով. Հայկական կոմիտեները եղել են փոկրատիվ, իսկ նրանց առաջացրաց աղմուկը գերազանցելը նրանց հնրավորությունները: Միատառ Անաստոլիայի ստեղ ցումը վերագրվումը միայն 1915 թ.: Ներկայացվաց է Էդվարդ Էրիկսոնի դիրքորոշման սնանկությունը:

Valery Tunyan, Antithesis of the Armenian Genocide - The American military historian Edward Erickson in his book *Ottomans and Armenians: A Study in Counterinsurgency* makes an attempt to justify his desirability of the Armenian Genocide denial. Despite the presence of many other explanations of the Armenian Genocide, he presented five antitheses. Their framework includes the following: there is a lack of evidence of the Armenians annihilation; Armenian radicalism led to the Ottoman process of radicalism as a response; Armenian terror detonated Muslims' terror; security measures of the Ottoman Empire were conditioned by the Armenians' rebellions in 1915; Armenian revolutionary committees were few in number, their effect being significant; the program of creating homogeneous Anatolia was attributed only to 1915. The position of E. Erickson is presented as untenable.

1921Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՊԵՍ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
ՊԱՅՔԱՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

ԽԱՉԱՏՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Բանալի քառեր - Հայաստան, խորհրդայնացում, անկախություն, բոլշևիկներ, բռնաճնշումներ, հալածանքներ, Փետրվարյան ապստամբություն:

1918 թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի անկախությունը: Սակայն թե Հայաստանին, թե անդրկովկասյան մյուս երկու անկախ հանրապետություններին երկար կյանք չէր վիճակված: Ռուսաստանի բոլշևիկյան իշխանությունները, հաղթելով ներքին քաղաքացիական կռիվներում, սկսեցին նախկին ռուսական կայսրության տարածքներին տիրանալու արտաքին ագրեսիվ քաղաքականություն վարել:

Այս տեսակետից Ռուսաստանի ծրագրերում առանցքային տեղ ուներ Անդրկովկասը: Դա պայմանավորված էր ոչ միայն նախկին ցարական կայսերապաշտական ցանկություններով, այլև Բաքվի նավթին տիրելու մղումով: 1920 թ. ապրիլի վերջին Կարմիր բանակի աջակցությամբ Ադրբեջանը խորհրդայնացվեց: 1920 թ. աշնանը Քեմալական Թուրքիան հարձակվեց Հայաստանի վրա:

Չնայած որ Ռուսաստանը օգոստոսին արդեն պայմանավորվել էր Հայաստանի հետ, շատ ոգևորվեց թուրքերի հարձակումից: Եվ որոշեց արագացնել Հայաստանի խորհրդայնացումը: Փաստացի, Հայաստանը խորհրդայնացնելու գործում Խորհրդային Ռուսաստանը սկսեց դաշնակցել քեմալական Թուրքիայի հետ: Ռուսաստանը և Թուրքիան պայմանավորվել էին հարձակվել Հայաստանի վրա: Ըստ պայմանավորվածության՝ թուրքերը պետք է հասնեին մինչև Մարիդամիշ¹: Հետո էր, որ նրանք, խախտելով նախնական համաձայնությունը, ավելի առաջ խորացան: Քեմալականները կարողացել էին համոզել Մոսկվայի բոլշևիկներին, որ իրենց օգնությամբ հեշտությամբ կարելի է բոլշևիկյան հեղափոխություն իրականացնել Արևելքի երկրներում և «յենուելով Արևելքի բազմամիլիոն մահմեդական զանգուածների վրայ, խորտակել Անգլիայի աշխարհակալությունը՝ Հնդկաստանում եւ այլուր»²:

¹ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 144, ց. 2, գ. 25, թ. 94:

² **Տերտրյան Հ.**, Հայաստանի Հանրապետության եւ Խորհրդային Ռուսաստանի բանակցությունները. Լեւոն Շանթի պատուիրակությունը, «Հայրենիք», 1954, մայիս, էջ 10:

Քեմալական և բոլշևիկյան զորքերի՝ Հայաստանի վրա կազմակերպված միաժամանակյա հարձակման արդյունքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը հարկադրված էր հրաժարական տալ, վայր դնել իր լիազորությունները և իշխանությունը հանձնել չարյաց փոքրագույնին՝ Խորհրդային Ռուսաստանին:

1920 թ. դեկտեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետության կառավարության, Խորհրդարանի դաշնակցական ֆրակցիայի և ՀՅԴ Բյուրոյի համատեղ նիստում (կառավարության առաջարկությամբ) որոշվեց իշխանությունը բոլշևիկներին փոխանցելու համար լիազորել ՀՀ կառավարության անդամներ Դրաստամատ Կանայանին և Համբարձում Տերտերյանին բանակցություններ վարել ՌՄՖԽՀ լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանի հետ¹: Բանակցություններն էլ վարվեցին Հայաստանի անկախությունը երաշխավորելու սկզբունքով²:

1920 թ. դեկտեմբերի 2-ին մի կողմից Բ. Լեգրանի և մյուս կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչներ Դրոյի և Հ. Տերտերյանի միջև ստորագրվեց Երևանի համաձայնագիրը: Այն նախատեսում էր իշխանության խաղաղ անցումը բոլշևիկներին: Սահմանվում էին իշխանության փոխանցման հիմնական սկզբունքները. Հայաստանում մինչև խորհուրդների համագումարի հրավիրումը իշխանությունը ժամանակավորապես տրվում է ռազմահեղափոխական կոմիտեին, որի մեջ մտնում էին 5 կոմունիստներ և 2 ձախ-դաշնակցականներ, Դաշնակցություն և մյուս ոչ բոլշևիկյան սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչները հալածանքի չէին ենթարկվելու Կոմունիստական կուսակցության դեմ նախկինում տարած պայքարի համար, Խորհրդային Ռուսաստանը երաշխավորում էր Խորհրդային Հայաստանի **անկախությունը**³: Հայաստանի անկախությունը ճանաչելու, թուրքերի հետ հաշտություն կնքելու, քաղաքացիական կռիվ թույլ չտալու, ինչպես նաև նոր կառավարության մեջ ներկայացուցիչ ունենալու վերաբերյալ Դաշնակցության դիրքորոշումն ընդունվել էր նախօրեին՝ դեկտեմբերի 1-ին, տեղի ունեցած կուսակցության Բյուրոյի, խորհրդարանական ֆրակցիայի և կառավարության վերոնշյալ համատեղ նիստում⁴:

1920 թ. դեկտեմբերի 2-ին կարմիր բանակի հրամանատար է նշանակվում Դրոն: Խորհրդային իշխանությունների կողմից Դրոյին կարմիր

¹ Նույն տեղում, ֆ. 119, ց. 1, գ. 248, թ. 1, 2:

² **Հովհաննիսյան Ա.**, Համագային կրիզիսը, Երևան, 1926, էջ 26:

³ **Խատիսեան Ա.**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, «Հայրենիք», Բոստոն, 1926թ., հոկտեմբեր, էջ 101, 102:

⁴ ՀԱԱ, ֆ. 119, ց. 1, գ. 248, թ. 1:

բանակի հրամանատար նշանակելու հանգամանքը պայմանավորված էր սպայության մեջ նրա ունեցած ազդեցությամբ:

1920 թ. դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագիրը Ս. Կասյանի ղեկավարած Հայհեղկոմի սրտով չէր: Վերջինս ոչ միայն դեմ էր անադմուկ, անարյուն հեղափոխությանը, այլև ձգտում էր ստվերում չմնալ և Հայաստանի խորհրդայնացման դափնիներն ամբողջովին վերագրել իրեն:

Խորհրդահայ պատմագրությունը Երևանի համաձայնագիրը որակել է որպես դաշնակցական կառավարության կապիտուլյացիա¹: Իսկ հետխորհրդային շրջանում կարևորվում է համաձայնագրի նշանակությունն արտաքին քաղաքական տեսակետից, քանի որ դեկտեմբերի 2-ի համաձայնագրով Խորհրդային Ռուսաստանը և Հայաստանը դառնում էին դաշնակիցներ²:

Այստեղ, փորձելով ամփոփել Հայաստանում իշխանությունը բռլշնիկներին հանձնելու իրողությունը, ընդհանրացնենք հետևյալը.

- Երկիրը բռլշնիկների կառավարմանը փոխանցելով, դաշնակցական ղեկավարներն ակնկալել են Խորհրդային Ռուսաստանի աջակցությամբ ապահովել հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգությունը թուրքական նոր կոտորածներից, ինչն արդեն սկսվել էր,

- Հայաստանի խորհրդայնացումով դաշնակցական կառավարության անդամներն ակնկալում էին նաև Խորհրդային Ռուսաստանի աջակցությունը Հայաստանի տնտեսության վերականգնման, հարևանների հետ ունեցած տարածքային խնդիրների խելամիտ լուծման առումներով,

- Հայաստանի խաղաղ խորհրդայնացման կարևոր պայմաններից մեկն էլ Հայաստանի անկախության պահպանումն էր,

- Հայաստանի խորհրդայնացման խնդրում որոշ չափով նպաստել է նաև հայ ժողովրդի մոտ նախընթաց դարերում ձևավորված ռուսական կողմնորոշումը:

Հայաստանի խորհրդայնացումից կարճ ժամանակ անց բռլշնիկյան իշխանությունն ակտիվ պայքար ձեռնարկեց նախկին իշխանության ներկայացուցիչների և համախոհների դեմ:

1920 թ. դեկտեմբերի 6-ին «հակայեղափոխական շահադէտութեան (սպեկուլյացիայի) և ի պաշտօնէ յանցագործութեան դէմ մաքառելու համար» Հայհեղկոմի ղեկըտով ստեղծվում է արտակարգ ասանձնաժողով (- ՉԵԿԱ - ռուսերեն)³: Չնայած 1920 թ. դեկտեմբերի 12-ին ստեղծվում է ժո-

¹ Ալիխանյան Ս., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Երևան, 1966, էջ 197:

² Խաչատրյան Գ., նշվ. աշխ., էջ 50:

³ «Կոմունիստ», Երևան, 1920, 9 դեկտեմբերի:

դովրդական կոմիսարների խորհուրդ, վերջինս շարունակում էր գործել Հայիեղկոմի անմիջական ղեկավարությամբ և ցուցումներով¹:

1920 թ. դեկտեմբերի 3-ին՝ Թիֆլիսի ճանապարհին ձերբակալվեցին ՀՀ նախկին կառավարության մի շարք անդամներ (Համո Օհանջանյան, Ռուբեն Դարբինյան, Կորյուն Ղազարյան, Հովհաննես Քաջագունի և ուրիշներ): Ավելի ուշ ձերբակալվեցին հայկական բանակի մոտ 600 սպաներ, որոնց Բաքվի վրայով աքսորեցին Ռուսաստան: Անխնա հալածվում էր հայ մտավորականությունը, կողոպտվում հայ գյուղացիությունը: Ազգայնացվում էին բանկերը, բանկային գործը համարվում էր պետական մենաշնորհ²:

Հայաստանի անկախությունը ոտնահարվում էր գրեթե բոլոր բնագավառներում: Հատուկ ղեկրետով պարտադիր շրջանառության մեջ դրվեցին ՌՄՖՄՀ դրամանիշները, իսկ դրանք չընդունողները պատժվելու էին հեղափոխական ժամանակների օրենքներով³:

Հայիեղկոմի դեկտեմբերի 20-ի ղեկրետով Խորհրդային Հայաստանի տարածքում վերանում է «Ռուսական կայսրության Հավաք Օրինացը» այն բոլոր փոփոխություններով, որ մտցրել էին ժամանակավոր կառավարությունը, Անդրկովկասյան սեյմը, Հայաստանի խորհուրդը, Խորհրդարանը և կառավարությունը: Փոխարենը ՀՄՖՄՀ-ի սահմաններում գործող օրենքներ են համարվում ՌՄՖՄՀ օրենքները՝ այն փոփոխություններով ու լրացումներով, որոնք կմտցնեն Հայիեղկոմը և այլ իրավասու իշխանություններ⁴: Հայիեղկոմի ընդունած ղեկրետները և հրամանները նպատակ ունեին ամրացնելու Հայաստանում պրոլետարական դիկտատուրան եւ միաժամանակ՝ լայնացնելու ու խորացնելու համաշխարհային մեծ հեղափոխությունը:

Եթե նորահռչակ Խորհրդային Ռուսաստանում պետական իշխանության մարմինները բանվորների, զինվորների և գյուղացիների ընտրովի խորհուրդներն էին, ապա Հայաստանում այդպիսիք չլինելու պատճառով իշխանության մարմիններ դարձան բոլշևիկյան կուսակցության կողմից ստեղծված ոչ ընտրովի հեղկոմները⁵: 1921 թ. հունվարի 15-ին ստեղծվում է գերագույն հեղափոխական տրիբունալ: Տրիբունալի որոշումները վերջնական էին և ի կատար էին ածվում 48 ժամվա ընթացքում, բացի մա-

¹ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 17, թ. 3:

² Դեկրետների եւ հրամանների ժողովածու, պրակ I, Էջմիածին, 1921, էջ 9, 10:

³ «Կոմունիստ», 1920, 22 դեկտեմբերի:

⁴ «Կոմունիստ», 1920, 23 դեկտեմբերի:

⁵ **Հակոբյան Ա.**, Ռուսաստանի ու Հայաստանի խորհրդայնացման գործընթացների և միակուսակցական վարչակարգի հաստատման պատմական մի քանի զուգահեռներ, «Պատմա-բանասիրական հանդես», 2014, թիվ 1, էջ 49:

հապատիժ նախատեսող դատավճիռներից, որոնք ենթակա էին Հայհեղկոմի հաստատմանը:

Նոր իշխանությունների վարած անխոհեմ քաղաքականության հետևանքով ժողովրդի համբերության բաժակը լցվեց, և 1921 թ. փետրվարին ապստամբություն սկսվեց նրանց դեմ: Փետրվարի 18-ին ապստամբ ուժերը մտան Երևան: Խորհրդային իշխանության ներկայացուցիչները և բանակը դուրս վռնդվեցին մայրաքաղաքից¹:

Երևանի գրավումից հետո Սիմոն Վրացյանի գլխավորությամբ ստեղծվեց Հայրենիքի փրկության կոմիտե, որը պետք է ղեկավարեր երկիրը մինչև կառավարության ձևավորումը: Կոմիտեն փետրվարի 18-ին ժողովրդին ուղղած իր առաջին ուղերձում կոչ էր անում պաշտպանել կարգ ու կանոնը, խստիվ կատարել Կոմիտեի բոլոր կարգադրությունները²: Հայաստանի տարածքի մի մասի վրա վերականգնվեց անկախությունը, որը տևեց մեկ ու կես ամիս:

Փետրվարյան ապստամբության հիմնական պատճառները հետևյալներն էին.

- Առաջին հերթին հիասթափեցնող եղավ բոլշևիկների կողմից դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով նախատեսված պայմանների ոտնահարումը: «Հակահեղափոխական»-ի հորջորջումով անհարկի գանգվածային ձերբակալությունները և բռնությունները՝ հատկապես մտավորականների և զինվորականների հանդեպ, համաժողովրդական դժգոհության այլք բարձրացրեցին:

- Բացասական է գնահատվում նաև բոլշևիկների վարած «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը, ինչն ուղեկցվեց ոչ միայն ծայրահեղ բռնություններով ու անիշխանության դրսևորումներով, այլև առավել ծանրացրեց առանց այդ էլ թշվառության եզրին հասած ժողովրդի սոցիալական վիճակը:

- Համաժողովրդական ապստամբության գլխավոր պատճառներից էր նաև արևմտահայության խնդիրների անտեսումն ու Հայաստանի անկախության գաղափարի նսեմացումը:

- Պակաս կարևոր չէր նաև օրակարգային համարվող հարևանների հետ ունեցած տարածքային խնդիրները կարգավորելու հայ բոլշևիկների անկարողությունը:

Ինչպես նշեցինք, Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելուց հետո առաջին իսկ դժգոհությունների պատճառը բոլշևիկների կողմից 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրի սկզբունքները

¹ **Hovhannisian R.**, Simon Vratzian and Armenian Nationalism, “The Armenian Review”, 1970, Vol. 23, N 1, pp. 30.

² ՀԱՍ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 5, 5 շքջ., հմմտ. «Ազատ Հայաստան», Երևան, 1921, 19 փետրուարի:

չհարգելն էր: «Համաձայնագրի և ոչ մի կետ չիրագործեց: Երկրի **անկախությունը ջնջեց** (ընդգծումը մերն է – Խ. Ս.): Ամբողջ երկիրը առնեց Չեկայի հսկողության տակ», - գրում է ՀՅԴ պաշտոնաթերթ «Դրօշակ»-ը¹: Երևանի համաձայնագրով ստանձնած պարտավորությունները ոչ մի արժեք չունեին հայ բոլշևիկների համար: Մինչդեռ համաձայնագիրը, որով իշխանությունը հանձնվեց բոլշևիկներին, հույս է ներշնչել դաշնակցականներին, որ Հայաստանը կկարողանա շարունակել ազատ և ժողովրդավար զարգացումը: Իսկ բոլշևիկյան իշխանությունների ձեռնարկած առաջին իսկ քայլերը հիասթափություն են առաջացրել:

Վերագնահատելով փետրվարյան ապստամբության 10 տարին «Դրօշակ» պարբերականը գրում է. «Բոլշևիկները խոստացել էին յարգել հայ ժողովրդի ինքնորոշման իրաւունքը, ճանաչել էին Հայաստանի անկախությունը: Բայց չանցաւ մի քանի շաբաթ, եւ երեւաց, որ Հայաստանի Յեղկումը, Կասեանի գլխաւորութեամբ, իրաւագուրկ ու ողորմելի խրճիկ է ստակ, եւ Հայաստանի իսկական իշխանութիւնը Երեւան-Բագու ուղիղ հեռագրաթելն է, որով հրահանգներ ու հրամաններ էր ուղարկում 11-րդ բանակի հրամանատարութիւնը՝ Կովկասի փոխարքայ Օրջոնիկիձէի գլխաւորութեամբ: Հայաստանը դարձել էր նւաճւած երկիր, ռուսական մի աննշան գաւառ: Հայ ժողովուրդը տեսաւ ու ըմբռնեց, որ բոլշևիկների անկախութեան խոստումը խաբէութիւն էր լոկ»²:

Ինքնուրույն, անկախ քաղաքականության բացակայության դրսևորում էր բռնագրավումների քաղաքականությունը: Հայաստանի կոմունիստները, չունենալով երկրի զարգացման սեփական ծրագիր, կրկնում էին Խորհրդային Ռուսաստանի փորձը, որի ամենավառ օրինակը «ռազմական կոմունիզմի» քաղաքականության կիրառումն էր:

Զավեշտն այն էր, որ Հայաստանում «ռազմական կոմունիզմը» սկսեցին կիրառել այն ժամանակ, երբ Ռուսաստանում արդեն հրաժարվում էին դրանից³: Չնայած այն հանգամանքին, որ «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը Ռուսաստանում իրեն չէր արդարացրել, Հայաստանի նորընծա բոլշևիկ ղեկավարությունը որոշեց գործադրել այն նաև տեղում: Պարենավորման ժողկոմիսարիատի, տեղական հեղկոմների, բանակի անմիջական մասնակցությամբ սկսվեցին բռնագրավումները գյուղերում, որոնք տեղի էին ունենում կարմիր բանակին օգնելու և այլ պատճառաբանություններով: Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեն կոչ էր անում հայ գյուղացիներին սե-

¹ «Դրօշակ», 1926, թիւ 2, էջ 38:

² Նույն տեղում, 1931, թիւ 1-2, էջ 2:

³ **Ղազարխեցյան Վ.**, Չեկայի գործունեության առաջին տարին Հայաստանում, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2011, թիվ 1, էջ 48:

փակյան փոխադրամիջոցներով հաց հասցնել կարմիր բանակին¹: Փաստորեն Փետրվարյան ապստամբության պատճառների շարքում, առանձնանաում են խորհրդային իշխանության բազմաթիվ կամայական գործողություններ, որոնք իրականացվում էին «պետական և հեղափոխական կարիքների համար» տեղի ունեցող բռնագրավումների ժամանակ: Իրականում անկախությունից զուրկ էին և ուզում էին դուր գալ Մոսկվային:

Փետրվարյան ապստամբության պատճառներից էին նաև անհարկի ձերբակալությունները և գործադրված բռնությունները, որոնք կիրառվեցին բոլշևիկյան իշխանությունների կողմից: Ինքնուրույնությունից զուրկ հայ բոլշևիկները ձերբակալություններն անհրաժեշտ էին համարում «հակայեղափոխութիւնը» արմատախիլ անելու եւ բոլոր վնասակար տարրերը չեզոքացնելու նպատակով²: Այս «հիմնավորումը» ևս դժգոհություն առաջ բերեց ժողովրդի մեջ: Ձերբակալությունների հարցում հիմնական դերակատարը ՉԵԿԱ-ն էր, որն ըստ էության ենթարկվում էր Մոսկվային:

Շատերը դժգոհություն էին հայտնում հատկապես նախկին կառավարության անդամների և պետական մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների ձերբակալության կապակցությամբ: Հ. Օհանջանյանի, Հ. Տեր-Դավթյանի, Ռ. Դարբինյանի, Կ. Ղազարյանի, Վ. Նավասարդյանի, Վ. Բաբայանի, Ա. Աստվածատրյանի, Հ. Մելիքյանի, Գ. Վարշամյանի և ուրիշների ձերբակալության մասին են բողոքում գրեթե բոլոր ժամանակակիցները³: Առավել նվաստացուցիչ էր ձերբակալվածների մի մասին բեռնատար մեքենաներով, իսկ մյուսին ոտքով Երևան բերելը⁴: Անկախության պայմաններում, ոչ մեկ իշխանություն այդ կերպ չէր փորձի նվաստացնել իր նախորդներին:

Առաջին հանրապետության վերջին վարչապետ Ս. Վրացյանը գրում է, որ առաջին իսկ օրերից Չեկայում խոսում էին գնդակահարությունների անհրաժեշտության մասին: Նույնիսկ հնչեցվել են գնդակահարության ենթակա թեկնածուների անուններ՝ Ռուբեն Դարբինյան, Սերգեյ Մելիք-Յուլյան, Համազասպ, Բախշի Իշխանյան և ուրիշներ⁵: Դատելով Ս. Վրացյանի գրությունից՝ կարելի է ենթադրել, որ բոլշևիկները ծրագրել էին սպանել ձերբակալվածներին: Նախկին կառավարության անդամներին ձերբակալելն իսկ արդեն խոսում է բոլշևիկյան իշխանությունների իրական մտադրությունների մասին, հատկապես, որ ձերբակալվածները հեռանում էին Հայաստանից և իշխանության համար որևէ վտանգ չէին

¹ «Կոմունիստ», 1920, 14 դեկտեմբերի:

² «Հայրենիք», 1931, 19 փետրուարի:

³ **Աստուածատրեան Ա.**, Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», 1968, թիւ 2, էջ 39:

⁴ **Վրացեան Ս.**, Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», 1923, դեկտեմբեր, էջ 69:

⁵ **Վրացեան Ս.**, նույն տեղում, 1923, նոյեմբեր, էջ 63-73, դեկտեմբեր, էջ 70:

ներկայացնում: Ձերբակալությունները, ձերբակալվածների հանդեպ անմարդկային վերաբերմունքը վկայում էին բռնությունների վտանգավոր աստիճանի հասնելու միտումի մասին:

1920 թ. դեկտեմբերի 20-ին ՀՍԽՀ Հեղկոմի որոշմամբ Սուլեյման Նուրին որպես մուսուլման ընդգրկվում է հեղկոմի կազմի մեջ¹: Ս. Նուրին մեծ մասնակցություն է ունեցել բանտերում տեղի ունեցող սպանդին: Ռ. Դարբինյանն իր հուշերում նշում է, որ բռնակցությունները բանտարկյալներին սպանելու համար փետրվարի 13-ին հայ և ռուս պահակներին փոխարինեցին թուրքերով, ովքեր բռնակցությունների համար ավելի վստահելի էին բանտարկյալներին կոտորելու գործում²: Ի դեպ, նույնը վկայում է նաև երևանյան բանտում հայտնված անգլիացի զինվորական Օլիվեր Բուրդուինը³:

Ս. Նուրինն ժողովրդական կոմիսար նշանակելը, մինչ այդ նաև Հեղկոմի կազմի մեջ մտնելը բռնակցության իշխանությունների առաջին օրերի մեծագույն սխալներից էր: Որքան էլ իրենց այդ քայլով նրանք փորձեին Ռուսաստանի բռնակցի դեկավարներին ցույց տալ, թե Հայաստանում իշխանության մեջ ընդգրկված են նաև մահմեդականների ներկայացուցիչները, նրանք պետք է հաշվի առնեին երկու կարևոր հանգամանք: Հայ ժողովուրդը բազմաթիվ զրկանքներ էր կրել թուրքերից, և անկախ այն հանգամանքից, թե ինչ կուսակցության էր պատկանում Ս. Նուրին, նրա նշանակումն ազգային պատկանելության պատճառով սվիններով պետք է ընդունվեր հասարակ ժողովրդի կողմից: Բացի այդ, պետք էր ըմբռնել այն պարզ ճշմարտությունը, որ, անկախ կուսակցական պատկանելությունից, թուրք պաշտոնյան հակված էր չարագործություններ կատարել հայ քաղաքացիների հանդեպ: Հենց այս վերջին հանգամանքի գիտակցումով են շատ դեպքերում իշխանություններին ընդդիմացողներին պատժելը վստահել Ս. Նուրին: Փաստորեն Խորհրդային Ռուսաստանի իշխանություններին իրենց գաղափարական նվիրվածությունն ապացուցելու համար հայ բռնակցությունը պատասխանատու պաշտոններ էին վստահում անգամ հայ ժողովրդի թշնամիներին:

1921 թ. հունվարին ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի որոշմամբ Հայաստան է ժամանում Կովկասյան ռազմաճակատում Խորհրդային Ռուսաստանի արտակարգ հանձնաժողովի լիազոր Գևորգ Աթաբեկյանը: Վերջինս մինչև Հայաստան գալը բռնակցության տեռոր էր գործադրել Հյուսիսային Կովկասում և դաժան «հեղափոխական-հարվածայինի» ա-

¹ ՀԱԱ, ֆ. 116, գ. 2, թ. 31:

² Դարբինյան Ռ., Երկեր, Ա հատոր, Կեանքիս գրքեն, Պէրյութ, 1972, էջ 563:

³ Պոլտուին Օ., Վեց բանտ եւ երկու յեղափոխութիւն: Արկածախնդրութիւններ Անդրկովկասի ու Անատոլիի մէջ, 1920-1921, Աղեքսանդրիա, 1933, էջ 128:

նուն էր վաստակել¹: Նա իր ռուսաստանյան «հեղափոխականի փորձը» ամեն կերպ ձգտում էր կիրառել Հայաստանում: Ռուսաստանից ընդօրինակումը հասել էր այն աստիճանի, որ արտակարգ հանձնաժողովը որոշումներ էր ընդունում համակենտրոնացման ճամբարներում մարդկանց դատապարտելու մասին այն դեպքում, երբ այդպիսիք Հայաստանում չկային, բայց կային Ռուսաստանում²:

Կարծում ենք՝ Գ. Աթաբեկյանին Հայաստան գործուղելը նպատակ ուներ խստացնելու բռնությունները: Խորհրդային Ռուսաստանի բոլշևիկ դեկավարները փորձում էին նաև սարսափի միջոցով հաստատել իրենց կուսակցության իշխանությունը: Բոլշևիկյան բռնությունների մեջ ամենազարհուրելին թերևս մտավորականների ձերբակալությունն էր: Հայ մտավորականությանը չձերբակալելու խելամիտ որոշ հայ բոլշևիկների մոտեցումն ու պայքարը Գ. Աթաբեկյանը համարում էր սխալաստիկ բանավեճ³:

Անկախության փաստացի ոտնահարում էր նաև բոլշևիկյան իշխանությունների վերաբերմունքը դեպի հայ գործն ու սպայությունը: Հայաստանում վերցնելով իշխանությունը՝ բոլշևիկները որոշում են հայ սպաներին հեռացնել Հայաստանից և քայքայել հայկական բանակը: Հայ սպաներին Ռուսաստան արքայազնի գաղափարն առաջ էր քաշել Լև Տրոցկին՝ առաջարկելով, որ նրանց փոխարինեն ռուսները⁴: Ռեզոլուցիան գործերի ժողովում Ավիա Նուրիջանյանը հայ սպաների արքայը հիմնավորում է Ռուսաստանի փորձով⁵: Հայ սպաների բանտարկությունն ու արքայը տեղի է ունենում Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո: Նախաձեռնությունը Խորհրդային Ռուսաստանի կենտրոնական իշխանությանն էր և իրականացվել է 11-րդ կարմիր բանակի հրամանատարության կողմից, Հայաստանի իշխանությունների մասնակցությամբ⁶:

Հայկական բանակի հանդեպ իրենց հալածանքն ավելի լայնածավալ իրականացնելու նպատակով բոլշևիկները նախկին կառավարության անդամ, բանակի հրամանատար Դրոյին արքայեցին Ռուսաստան, ինչն առանձնակի կասկածով համակեց ժողովրդին:

¹ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Եփիմով Կ., Բարսեղյան - один из зачинщиков красного террора, «Вопросы истории», Москва, 2000, № 6, стр. 130-136:

² **Ղազարյան Վ.**, Չեկայի գործունեության առաջին տարին Հայաստանում, էջ 50:

³ ՀՍՍՀ, ֆ. 1438, ց. 1, գ. 10, թ. 13:

⁴ Геноцид армян: ответственность Турции и обязательство мирового сообщества. Документы и комментарии (Сост., отв. Редактор, автор предисловия и комментария профессор Ю. Г. Барсегов), т. 2, ч. 2, Москва, 2003, с. 337.

⁵ «Կոմունիստ», 1921, 29 յունուարի:

⁶ **Ղազարյան Վ.**, Հայ սպաների արքայը 1920-1921 թթ., «Բանբեր Հայաստանի արխիվների», 2003, թիվ 2, էջ 32:

1921 թ. հունվարի 24-ին հայ սպայությանն արքայազնին Հայաստանից¹: Ազգային բանակի, հայրենիքի համար իրենց կյանքը զոհաբերելու պատրաստ զինվորականության հանդեպ հայ բոլշևիկների անմարդկային վերաբերմունքը ժողովուրդը չհանդուրժեց: Բանվորագյուղացիական հեղափոխությունը խորացնելու մոլագար գաղափարաբանությամբ տարված՝ հայ բոլշևիկները ժողովրդին կանգնեցրին ապստամբության դիմելու փաստի առջև:

Հայաստանի նորահայտ բոլշևիկյան իշխանությունները այս քայլերին զուգահեռ նաև ծաղրում էին Հայաստանի անկախության գաղափարն ընդհանրապես: Հայ ժողովրդի ամենանվիրական զգացումները դարձել էին հեզանքի առարկա²:

Անկախությունից զատ ոտնահարվում էին նաև ազգային այլ արժեքներ՝ դրանք որակվելով որպես բուրժուական ստեղծագործություններ: Հայկական եռագոյնը ու «Մեր Հայրենիք»ը, իբրև հակահեղափոխական սիմվոլներ, վերացվել էին ասպարեզից: Նրանց փոխարինել էին բոլշևիկեան կարմիրն ու պրոլետարական «ինտերնացիոնալ»ը³:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանում Խորհրդային Ռուսաստանի օգնությամբ իշխանության եկած բոլշևիկների քաղաքականությունը հայ ժողովրդին դրդեց զինված ապստամբության, ինչը անկախ ապրելու համար նույնիսկ հզոր Ռուսաստանի դեմ զենք վերցնելու կամքի բացահայտ դրսևորում էր:

Ճիշտ է, ապստամբությունը պարտությամբ ավարտվեց, Խորհրդային Ռուսաստանի ռազմական աջակցությամբ բոլշևիկները ապրիլի 2-ին գրավեցին Երևանը, սակայն նրանք սկսեցին մեղմ քաղաքականություն վարել ժողովրդի և մտավորականության հանդեպ:

1921 թ. փետրվարյան ապստամբությունը հայ ժողովրդի հերոսական էջերից է, և այն իրավամբ պետք է համարել անկախության համար մղված պատերազմի դրսևորում:

Хачатур Степанян, Февральское восстание 1921г. Как манифестация борьбы за независимость - Цель статьи - показать, что в Февральское восстание 1921 г. было не только гневом народа против большевистских репрессий, но и отчаянным шагом к восстановлению утраченной

¹ Հայ սպաներին արքայել են նաև Վրաստանից և Ադրբեջանից: Մասնավորապես Վրաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո 219 հայ սպաներ արքայվել են Ռյազան (տե՛ս Մանուկյան Ա., Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., Երևան, 2002, էջ 19):

² «Դրօշակ», 1926, թիւ 2, էջ 39:

³ **Քաջագունի Յ.**, Յետ մահու, Պատմուածքներ, յուշեր, յօդուածներ, նամակներ, Պէրյուօ, 1968, էջ 62:

независимости. Наша задача - выявить обстоятельства, которые убедительно утверждают, что восстание считается борьбой за независимость.

В ходе исследования использовался историко-сравнительный метод. Мы также использовали другие общие научные методы (описание, анализ, объяснение).

В результате исследования было сформировано следующее заключение: Февральское восстание 1921 г. было уникальным проявлением борьбы за независимость Армении. Большевики, пришедшие к власти в стране, очень негативно относились к независимости Армении. Они не только высмеивали символы независимости, идею самой независимости, но и применяли разные практические шаги для подчинения Советской России. Восстание людей, недовольных политикой большевиков, было борьбой не только за то, чтобы избавиться от преследований, положить конец насилию, но и восстановить утраченную независимость.

Khachatur Stepanyan, February rebellion as a manifestation of struggle for independence - The purpose of the article is to show that the February rebellion in 1921 was not only a public outcry against the Bolshevik repression but also a desperate step to recovering the lost independence. Our task is to expose the circumstances which make convincing the rebels the motives for qualifying the rebellion as a struggle for independence.

In the course of the research, the historical-comparative method was used. We have also used other common scientific methods (description, analysis, explanation).

As a result of the study, the following conclusion was formed: 1921 The February rebellion was a unique manifestation of the struggle for independence of Armenia. The Bolsheviks who came to power in the country had a very negative attitude towards Armenia's independence. They not only mocked the symbols of independence, the idea of independence itself, but also resorted to different practical steps to subordinate Soviet Russia. The uprising of the people who were dissatisfied with the Bolshevik policy was actually a struggle not only to get rid of the persecution, to end the violence, but also to restore the lost independence.

ԱՍԻԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՉԺՀ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ (XX-ԸՂ ԴԱՐԻ ՎԵՐՁ)

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր - Չինաստան, Կենտրոնական Ասիա, Սին-Շիանգ Ույղուրական ինքնավար մարզ, ույղուրներ, անջատողականություն, ՉԺՀ արտաքին քաղաքականություն, էթնիկ փոքրամասնություններ

20-րդ դարի երկրորդ կեսին Չինաստանը բարիդրացիական հարաբերություններ էր վարում ԽՍՀՄ-ի հետ՝ որի մասն էին կազմում նաև Կենտրոնական Ասիայի մի շարք երկրներ: Այդ ժամանակաշրջանում երկու պետություններն էլ գտնվում էին նույնատիպ իրավիճակում և նրանց հետաքրքրությունները «Կենտրոնական Ասիա» տարածաշրջանում համընկնում էին: Երկու պետություններն էլ քաջ գիտակցում էին այդ տարածքների ռազմավարական նշանակությունը և համատեղ ուժերով փորձում էին նվազեցնել անջատողական տրամադրությունները ներկայիս Ղազախստանի, Ղրղզստանի, Աֆղանստանի, Տաջիկստանի և Սին-Շիանգ Ույղուրական ինքնավար մարզի(ՍՈՒԻՄ) տարածքներում ապրող բնիկ մուսուլմանական ժողովուրդների շրջանում: Առավել ակտիվ էին ույղուրները, որոնք դժգոհ մնալով նահանգում՝ ույղուր բնակչության թվի կրճատման քաղաքականությունից և զուրկ մնալով անկախ պետություն ստեղծելու հնարավորությունից՝ փորձում էին տարբեր առիթներ օգտագործելով ապակայունացնել ներքին իրավիճակը: Այդ տարիներին մեծ էին արտաքին ուժերի հետաքրքրությունները՝ մասնավորապես Թուրքիայում և Աֆղանստանում մուսուլման ծայրահեղականների գործողությունները, որոնց հիմնական նպատակը սեփական ազդեցությունը տարածելու, պանթուրքիզմի գաղափարախոսությունը տարածելու և ույղուրներին էքստրեմիստական գործունեության մեջ ներքաշելն էր:¹

¹ For Them, Afghanistan Is Safer Than China. HaiYun Ma, I-Wei Jennifer Chang. <https://foreignpolicy.com/2018/11/01/for-them-afghanistan-is-safer-than-china/>

Ներկայումս Չինաստանի Ժողովրդական հանրապետությունը փորձում է վարել հավասարակշռված արտաքին քաղաքականություն, որի կարևորագույն նպատակներից մեկն է տնտեսական էքսպանսիան: ՉԺՇ որդեգրած քաղաքականության հիմքում ընկած են չինական երեք սկզբունքները՝ մուլին, անլին, ֆուլին, այսինքն՝ բարեկամական, ավտանգ և բարեկեցիկ հարաբերություններ հարևանների հետ:¹ Նշված սկզբունքների կիրառման արդյունքում՝ Չինաստանը հաղթահարելով ծայրահեղ աղքատությունն ու տնտեսական անկայունությունը, դառնում է 21-րդ դարի առաջատար պետություններից մեկը: Կենտրոնական Ասիայի երկրները բացառություն չէին կազմում և այդ տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացները ուղղակիորեն ազդում էին Պեկինի վարած քաղաքականության վրա: Չինաստանի համար Կենտրոնական Ասիան համարվում է կարևոր ռազմավարական հանգույց՝ պայմանավարված երկու հիմնական պատճառներով: Առաջին հերթին Չինաստանը կախման մեջ է այդ երկրներում տեղի ունեցող փոփոխություններից, քանի որ դրանք ուղղակիորեն ազդում են Չինաստանի «աքիլեյան գարշապարում»²՝ Մին-Շիանգ Ույղուրական ինքնավար մարզում տեղի ունեցող գործընթացների վրա: Երկրորդ պատճառը հիմնավորվում է Պեկինի կողմից որդեգրած տնտեսական հաջողություններ գրանցող քաղաքականությամբ և «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագրի իրականացմամբ: Առանց Կենտրոնական Ասիայի երկրների ներգարվվածության՝ չինական ապրանքներ արտահանել, Չինաստանը կապել այլ երկրների, հատկապես՝ եվրոպական շուկան ահաեռվող շրջանների հետ, անհնար կլիներ իրագործել: Ուստի կարելի է գալ այն եզրահանգմանը, որ չնայած տարածքային, էթնիկ, կրոնական խնդիրների առկայությանը՝ թե Չինաստանը, և թե Կենտրոնական Ասիայի երկրները ունեն ընդհանուր շահեր, հետաքրքրություններ և փոխադարձ հարաբերությունների զարգացման մեծ պոտենցիալ:

Կենտրոնական Ասիան աշխարհագրորեն միայն սահմանակցում է Չինաստանի Մին-Շիանգ Ույղուրական ինքնավար մարզի հետ, որից ավելի քան 1700 կմ բաժին է ընկնում Ղազախստանին³, 1100կմ՝ Ղրղզստանին⁴ և 500 կմ՝ Տաջիկստանին:¹ Խորն են նաև մարզի և այդ երկրների միջև

¹ Background guide: China's foreign policy / Foreign policy association 2014 Edition / [https://www.fpa.org/ckfinder/userfiles/files/china_background\(1\).pdf](https://www.fpa.org/ckfinder/userfiles/files/china_background(1).pdf)

² Константин Сыроежкин. Газета «Общественный рейтинг»: «...главная стратегическая цель Китая – превращение страны в глобальную торговую державу». <http://www.pr.kg/gazeta/number553/1927/>

³ История границы Казахстана. Arman Suleymenov, Qazaqstan Tarihy - <https://e-history.kz/ru/publications/view/3791>

⁴ East Asia/South East Asia: China. The World Factbook / The US Central Intelligence Agency. <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/ch.html>

պատմական, մշակութային, կրոնական և էթնիկ կապերը: Պեկինը հետա-
մուտ է լինում մեծացնել իր ազդեցությունը Ղազախստանում, Ղրղզստա-
նում և Տաջիկստանում՝ նպատակ ունենալով նվազեցնել անջատողական
տրամադրությունները տարածաշրջանում: Չինաստանի ղեկավարությու-
նը առաջնորդվում է տնտեսական կապերի խորացման սկզբունքով, որը
ժամանակի ընթացքում կծառայի որպես «անվտանգության բարձիկ»՝
ՍՈՒԻՄ-ում տեղի ունեցող իրադարձությունների համար: Ըստ Պեկինի՝
Չինաստանի և Կենտրոնական Ասիայի երկրների միջև հարաբերություն-
ների զարգացումը ուղիղ համեմատական է Սին-Շիանգ Ուլդուրական
ինքնավար մարզի և սահմանամերձ հատվածներում բնակվող ժողո-
վուրդների քաղաքական, կրոնական և էթնիկ հենքի վրա կատարվող
անհնազանդությունների նվազմանը: Այստեղից կարելի է պնդել, որ Սին-
ձիանում և Կենտրոնական Ասիայի երկրներում շարունակական բնույթ
կրող չինական ներդրումներն ու նոր ծրագրերի նախաձեռնումը կատա-
րում են կանխարգելիչ և զսպողական գործիքի դերակատար: Այդ կոն-
տեքստում կարևոր է նշել Չինաստանի իշանությունների կողմից մեծ ու-
շադրության արժանացած «Շանհայ հինգ» խմբի աշխատանքները: Մ-
տեղծվելով 1996 թվականին, այն համախմբեց Չինաստանի Ժողովրդա-
կան հանրապետությանը, Ռուսաստանի Դաշնությանը, Ղազախստանի,
Ղրղզստանի և Տաջիկստանի հանրապետություններին: Պաշտոնական
հանդիպումների հիմնական ուղղությունն էր պայքարը՝ ընդդեմ տարա-
ծաշրջանում ահաբեկչության, անջատողականության և ծայրահեղակա-
նության (էքստրեմիզմ): Պեկինի վարած դիվանագիտության և ջանքերի
շնորհիվ, 2001 թվականի հունիսին՝ «Շանհայ հինգ» հարթակը վերափոխ-
վեց միջազգային՝ Շանհայի համագործակցության կազմակերպության:²
Այն հնարավորություն տվեց ՉՏՀ-ին բարձրացնել ՍՈՒԻՄ-ում տիրող ի-
րավիճակի և ուլդուրներին վերաբերող՝ ներառյալ տարածաշրջանային
անվտանգությանը սպառնացող, մի շարք հարցեր: Չինաստանի համար
կարևոր ձեռքբերումներից էր՝ կազմակերպության անդամ և գործընկեր
պետությունների հետ ուլդուր «ահաբեկիչներին» արտահանվելու վերա-
բերյալ համաձայնություն գալը³:

Կենտրոնական Ասիայի երկրների ներքին ենթակառուցվածքային
մակարդակում Չինաստանը ընդգրկված է որպես ճանապարհաշինութ-

¹ **З. М. Курбонова.** СТАНОВЛЕНИЕ ГОСУДАРСТВЕННОЙ ГРАНИЦЫ. «Азия и Африка сегодня», М., 2009, № 4, с. 42-44.

² **Ризоев Б.М., Юсупов М. Ю.,** Путь к образованию Шанхайской организации сотрудничества как межправительственной международной организации. Вестник Таджикского государственного университета права, бизнеса и политики. No.3, 2009, 97-98 сс

³ Declaration of Heads of Member States of SCO, China Daily, http://www.chinadaily.com.cn/china/2006-06/12/content_6020345.htm

յունը, երկաթգծերի կառուցումը, ավիացիոն համակարգը և հեռահաղորդակցության ոլորտի զարգացումը սատարող սուբյեկտ: Մինձիանը կարևորվում է Պեկինի կողմից աշխատակազմը իր զբաղեցրած դիրքի և պատմության ընթացքում վճռորոշ դեր խաղալու պատճառով: Դրանցից անհրաժեշտ է առանձնացնել «Մեծ Մետաքսի ճանապարհը», որը պատմության ընթացքում Չինաստանին ելք է ապահովել դեպի Կենտրոնական Ասիայի և Եվրոպայի շուկաներ: Ներկայումս այն կարևորվում է ոչ միայն ապրանքների և ծառայությունների ազատ տեղաշարժման, այլև էներգետիկ ռեսուրսների կառավարման տեսանկյունից: Մին-Օինագ Ույդուրական ինքնավար մարզը գտնվելով Չինաստանի արևելյան հատվածում՝ հարուստ է էներգետիկ պաշարներով, մասնավորապես՝ գազով և նավթով: ՍՈՒԻՄ մարզկենտրոն Ուրումչին համարվում է նավթարդյունաբերության, նավթամշակման հզոր կենտրոն, որը մատակարարում է նավթ և գազ ոչ միայն Չինաստանի այլ հատվածներին, այլև արտահանվում է դեպի Կենտրոնական Ասիայի երկրներ: ՉԺՀ-ում հայտնաբերված բոլոր բնական ռեսուրսների 86% գտնվում է Մինձիան տարածաշրջանում: Ավելին, ՍՈՒԻՄ-ի տարածքում է գտնվում ամբողջ Չինաստանի գազի և նավթի պաշարների 35%-ը, այսինքն ավելի քան 20 միլիարդ տոննա, իսկ ածուխի՝ 40%-ը, որը կազմում է մոտավորապես 27 միլիարդ տոննա:¹ Այս տեսանկյունից ՉԺՀ-ը ձգտում է մինիմալիզացնել Մին-Օինագ Ույդուրական ինքնավար մարզում հնարավոր անհնազանդության դրսևորումները, ահաբեկչական և անջատողական մտադրությունները:

Չինաստանը և տարածաշրջանում բոլոր պետությունները տնտեսական հարաբերություններն ու միջազգային հարաբերությունների ռազմավարության պլանավորումը կատարում են՝ հենվելով միմիայն խաղաղության սկզբունքի վրա: Խաղաղության սկզբունքը չինական իշխանությունների պատկերացմամբ՝ տարածաշրջանում տնտեսության զարգացման բնականոն աճ ապահովելն է: Դրանով է պայմանավորված ՉԺՀ հռչակումից ի վեր մշակվող՝ ազգային փոքրամասնությունների և նրանց բնակելի տարածքներ համարվող գոտիների ինտեգրման քաղաքականությունը: Էթնիկ փոքրամասնությունների բնակության վայր հանդիսացող տարածքներում խնդիր է դրվում տնտեսական առաջընթաց արձանագրել՝ միանալով համապետական չինական տնտեսական գիգանտ դառնալու մարտահրավերին: Դրա վառ ապացույցն է 2014 թվականի սեպտեմբերի 28-ից 29-ը՝ Պեկինում, թվով վեցերորդ անգամ անցկացվող Ազգային փոքրամասնությունների և զարգացման պետական խորհրդի

¹ Н. Г. Очирова, Е. В. Бембеев. Современное демографическое и социально-экономическое положение ойратов Синьцзян-Уйгурского автономного района КНР. Вестник Калмыцкого института гуманитарных исследований РАН. № 4 2012. 157 С.

կոնֆերանսը¹: Հանդիպման ընթացքում քննարկվում են էթնիկ փոքրամասնությունների հետ զարգացման հիմնական ուղղությունները, ստեղծված խնդիրներն ու հետագա ռազմավարությունը: Տնտեսական աճ և տարածաշրջանային համաչափ զարգացում ապահովելու նպատակով կոնֆերանսին մասնակցող Չինաստանի բարձաստիճան պաշտոնյաները առանձնացրեցին մի շարք խնդիրներ: Դրանցից հիմնաքարային են՝

1. բնակչության զբաղվածության և կրթության մակարդակի բարձրացումը,

2. բնական ռեսուրսների ճիշտ կառավարումը՝ ուշադրություն դարձնելով էկոլոգիական խնդիրներին

3. Չինաստանի արևելքում գտնվող սահմանամերձ շրջանների ինտեգրացումը՝ առևտրին նպաստող ենթակառուցվածքների արդիականացման հաշվին²

Չինաստանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի որդեգրած ժամանակակից քաղաքականության ուսումնասիրությունից կարելի է գալ այն եզրահանգմանը, որ էթնիկ փոքրամասնությունների հարցը տնտեսության առջև ծառայած կարևորագույն խնդիրներից է: Դա պայմանավորված է Չինաստանի տնտեսական և ֆինանսական առաջընթացի նոր շրջանով, որի շնորհիվ Պեկինը նպատակ է դնում իր առջև վերջնականապես հաղթահարել աղքատությունն ու բարձրացնել բնակչության միջին եկամուտ ունեցողների քանակը:

Չինաստանի Ժողովրդական հանրապետության արտաքին քաղաքականության մեջ Կենտրոնական Ասիայի դերն ու նշանակությունը պայմանավորված է մի քանի գործոններով: Միջազգային հարաբերություններում ընդունված է օգտագործել երկրների կամ տարածաշրջանի «բրիֆ-վերլուծություն» կատարելու գործիքը և հակիրճ ներկայացնել այս կամ այն օբյեկտի նշանակությունը: Այսպես, եթե Կենտրոնական Ասիա տարածաշրջանը դիտարկենք, որպես ՉԺՀ արտաքին քաղաքականության անբաժան մաս և բրիֆ-անալիզի օբյեկտ, ապա կարելի է ընդգծել և ներկայացնել արդյունքները ըստ ոլորտների: Առաջնայինը դա տնտեսական ոլորտն է, որի միջոցով Չինաստանի Ժողովրդական հանրապետությունը փորձում է ամրապնդվել տարածաշրջանում: Տվյալ տարածաշրջանը ռամզավարական նշանակություն ունի չինական ապրանքների և ծառայությունների համար՝ ազատ տեղաշարժման և իրացման տեսանկյունից: Կենտրոնական Ասիան Չինաստանի համար ավելի շատ տարանցիկ

¹ 中央民族工作会议暨国务院第六次全国民族团结进步表彰大会在北京举行. News of Communist Party of China. 2014年09月30. <http://cpc.people.com.cn/n/2014/0930/c64094-25763749.html>

² 中央民族工作会议暨国务院第六次全国民族团结进步表彰大会在京举行 / September 29, 2014, XinhuaNet news agency. http://www.xinhuanet.com/politics/2014-09/29/c_1112683008.htm

երկիր կարելի է համարել, քան ապրանքների իրացման շուկա: Հատկանշական է, որ Չինաստանը այն բացառիկ պետություններից և միջազգային իրավունքի սուբյեկտներից է, որը բացառապես կարևորում է խաղաղությունը և անդորրը աշխարհի ցանկացած անկյունում:

Վերլուծության հաջորդ բաղադրիչը դա քաղաքական ոլորտն է: Այստեղ Չինաստանը զարգացնում է իր բազմակողմանի հարաբերությունները Կենտրոնական Ասիայի բոլոր պետությունների հետ: Տարածաշրջանում ՉԺՀ ներգրավվածությունը պայմանավորված է նաև միջազգային հզոր ակտորներից ԱՄՆ-ի և Ռուսաստանի Դաշնության գեոքաղաքական հետաքրքրություններով: Կենտրոնական Ասիայի երկրներից Ղազախստանը և Ղրղզստանը Եվրասիական Տնտեսական միության անդամ են, որի միջոցով Չինաստանը կարող է համագործակցության նոր ուղղիներ գտնել: Քաղաքական ոլորտը անհնարին է ամբողջական համարել առանց ռազմական բաղադրիչների: Այստեղ անհրաժեշտ է անդրադառնալ ոչ միայն Չինաստանի նախաձեռնությամբ ստեղծված՝ Շանհայի համագործակցության կազմակերպությանը, այլև Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը: 2002 թվականի մայիսի 14-ին Հավաքական անվտանգության խորհուրդը փոխարինվեց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունով, իսկ ավելի ուշ ընդունվեց կազմակերպության կանոնադրությունը:¹ Տվյալ կազմակերպությունը ռազմական միավորում է, որում ընդգրկված են Ռուսաստանի Դաշնությունը, Հայաստանի հանրապետությունը, Ղազախստանի հանրապետությունը, Ղրղզստանի հանրապետությունը և Տաջիկստանի հանրապետությունը: Եթե Ռուսաստանի հարավ-կենտրոնական հատվածը չհամարենք Կենտրոնական Ասիայի մաս, ապա Կենտրոնական Ասիայից առնվազն երեք ՀԱՊԿ անդամ-պետություններ ռազմական դաշինքի անդամ են: Դա նշանակում է, որ Չինաստանին անհրաժեշտ է վարել հավասարակշռված արտաքին քաղաքականություն թե ՀԱՊԿ, և թե ՇՀԿ շրջանակներում: Պեկինը մշտապես ուշադրության տակ պահելով տարածաշրջանում տիրող իրավիճակը, հարևան պետությունների շահերն ու հետաքրքրությունները՝ կարողանում է ճկուն դիվանագիտության շնորհիվ ամրապնդել դիրքներն ու մեծացնել իր ազդեցությունը Կենտրոնական Ասիայում: Չինաստանի Ժողովրդական հանրապետության հիմնական նպատակն է չեզոքացնել, կանխել կամ թույլ չտալ Չինաստանի դեմ որևիցե քաղաքական կամ ռազմական միավորի առաջացումը: Դրա վառ ապացույցն է Չինաստանի կողմից իրականացվող հանրային դիվանագիտության և տնտեսական ներդրումների քաղաքականությունը: ՉԺՀ կառավարության վարած արտաքին քաղաքականության շնորհիվ տնտեսա-

¹ From the Treaty to the Organization/Official website of CSTO. <https://en.odkb-csto.org/25years/>

կան հարաբերությունները, տնտեսական խոշոր և միջին չափի ներդրումները հանգեցնում են քաղաքական լծակների առաջացմանը և խորացմանը: Ներդրումները իրականացվում են Կենտրոնական Ասիայի երկրների տնտեսությունների համար առանցքային ճյուղերում: Քաղաքական գործոնի ազդեցությունը խորացնում են մասնավորապես՝ նավթի, գազի, հանքարդյունաբերության, հեռահաղորդակցության, ճանապարհատրանսպորտային ոլորտներում կատարված ներդրումները:¹ Այսպիսով, բրիֆ-անալիզի քաղաքականը գործոնը զուգակցվելով տնտեսական և ռազմական բնույթի բազմաշերտ տարրերով, հնարավորություն է տալիս Չինաստանին օգտագործել իր ողջ պոտենցիալը՝ Կենտրոնական Ասիայում ամբողջապես ներգրավված լինելու համար:

Վերլուծության օբյեկտ հանդիսացող Կենտրոնական Ասիայի տարածաշրջանը և իր նշանակությունը ՉԺՀ արտաքին քաղաքականության ոլորտում ընգրկում է իր մեջ տարածաշրջանային անվտանգության հարցեր: Տվյալ կոնտեքստում անհրաժեշտ է դիտարկել ահաբեկչությունը (տեռորիզմ), որպես ՉԺՀ և տարածաշրջանային մարտահրավեր:

Կենտրոնական Ասիայի երկրներում և Չինաստանում ահաբեկչությունը բնորոշվում է իր իսկ դասական իմաստով: Այն է՝ բռնության հաշվարկված օգտագործումը բնակչության մեջ վախի ընդհանուր մթնոլորտ ստեղծելու և դրանով իսկ՝ որոշակի քաղաքական նպատակների հասնելու համար:² Կենտրոնական Ասիան հարուստ է եղել քաղաքական կազմակերպություններով, ազգայնական, կրոնական խմբավորումներով, իսկ Չինաստանը՝ անջատողական նկրտումներ ունեցող միավորումներով: Չինաստանը՝ բացի ներքին ազգայնական, ահաբեկչական գործունեությունը կանխելու քաղաքականություն վարելուց, ներգրավված է նաև տարածաշրջանային անվտանգության հարցերի լուծման և աշխարհաքաղաքական խաղաղություն ապահովելու գործընթացի մեջ:

Նախևառաջ հարկավոր է պարզել, թե ինչով են պայմանավորված ահաբեկչական ակտերը, անջատողական տրամադրությունների նոր ալիքը և ընդգծել դրանց հիմնական պատճառները: Պատմական տարբեր փուլերում աշխարհի բոլոր պետությունները՝ այդ թվում նաև Չինաստանը, անմասն է մնացել ահաբեկչական դրսևորումներից: Դրանք հիմնականում ուղղված են եղել իշխանության, իշխանական համակարգի, սոցալական անհավասարությունների, տնտեսական անկայունության և այլ խնդիրների դեմ, որոնք բնակչությունը կամ հասարակության որոշ խմբեր

¹ **Sebastien Peyrouse.** Economic Aspects of the Chinese-Central Asia Rapprochement. Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program, September 2007, 38-44, 47-49pp

² **John Philip Jenkins.** Terrorism. Encyclopedia Britannica/ <https://www.britannica.com/topic/terrorism>

չեն կարողացել բարձրաձայնել կամ հասնել իրենց նպատակին: Ահաբեկչական գործողությունների մեծ բաժինը ընկնում է ոչ թե վերոնշյալ տարբերակումներին, այլ կրոնական և քաղաքական հենքի վրա կատարվող գործողություններին: Չնայած 2006 թվականի սեպտեմբերի 8-ին ՄԱԿ-ի Գլխավոր Սասնաբլեայի կողմից ընդունված «ՄԱԿ-ի համաշխարհային հակաահաբեկչական ռազմավարության» A/RES/60/288 ընդունած բանաձևի¹ ահաբեկչական գործողությունները շարունակվում են մինչև օրս: Բացառություն չէ նաև Չինաստանը և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանը:

Ահաբեկչություն եզրույթը Չինաստանի վերաբերյալ օգտագործելիս՝ ասոցացվում է անջատողական հայացքներ ունեցող կրոնական և էթնիկ փոքրամասնությունների հետ, որոնք ապրում են Սին-Շիանգ Ույղուրական ինքնավար մարզում: Ույղուրները՝ գրեթե ութից-տաս միլիոն բնակչություն ունեցող ժողովուրդ են, որոնք էականորեն տարբերվում են չինացիներից՝ հաներից: Տարբերությունների հիմքում ընկած են մշակութային, կրոնական, կենցաղային, լեզվային, սովորության և պատմական գործոնները: Երկու կողմերի միջև պատմական կապը մեծ դեր ու նշանակություն է ունեցել և մինչև օրս համարվում է քննարկման մեծ առարկա:² Պեկինը այս հարցում վարում է «քնած վիշապի» քաղաքականություն: Այն իրենից ներկայացնում է Դեն Սյաո Պինի հանգստության և չինական վիշապի կոշտ արձագանքելու արվեստի ներդաշնակությունը: Սինձիան տարածաշրջանում Պեկինը օգտագործում է ժամանակի գործիքը, որն իրենից ենթադրում է ույղուրների հայացքների վերափոխում՝ տնտեսական, մշակութային, սոցիալական բարեփոխումներ իրականացնելու միջոցով: Մյուս կողմից Չինաստանի կառավարությունը խուսափում է ներքին խնդիրների շղթայական ռեակցիայից, այն է՝ Տիբեթական, Հոնգ Կոնգյան, Թայվանական հարցերի նոր հնարավոր զարգացումներից:

1949 թվականին Չինաստանի Ժողովրդական հանրապետության հռչակումից հետո, Կոմունիստական կուսակցությունը սահմանում և ընդունում է էթնիկ փոքրամասնությունների վերաբերյալ հստակ սկզբունքներ: Դրանք են՝

1. ոչ մի տարածք չի կարող անջատվել, դուրս գալ ՉՇՀ կազմից
2. կհակադրվի և «հաների շովինիզմը», և «տեղական ազգայնականությունը»

¹ 60/288. The United Nations Global Counter-Terrorism Strategy. the UN, GA. Sixtieth session Agenda items 46 and 120. <https://undocs.org/en/A/RES/60/288>

² Alexis Pierce. Cultural Conflict between the Uyghurs and Han Chinese in Xinjiang: Uyghur Ethno-Nationalism as a Reaction to Chinese Policies, 2015. https://www.academia.edu/21509823/Cultural_Conflict_Between_the_Uyghurs_and_Han_Chinese_in_Xinjiang_Uyghur_Ethno-Nationalism_as_a_Reaction_to_Chinese_Policies

3. կատեղծվեն իշխանության տեղական կառավարման ինքնավար մարմիններ՝ առավելապես էթնիկ փոքրամասնություններով բնակեցված տարածքներում

4. կերաշխավորվի ազգերի, ազգությունների միջև հավասարությունը, կրոնի և դավանանքի ազատությունը և փոքրամասնությունների լեզուների, սովորույթների պահպանումն ու զարգացումը

5. կենտրոնական իշխանությունը պարտավորվում է աջակցել էթնիկ փոքրամասնությունների բնակության շրջանների զարգացմանը:¹

Այստեղից հանգում ենք այն եզրակացությանը, որ Չինաստանի կառավարությունը պարտավորվում է ապահովել էթնիկ փոքրամասնություններով բնակեցված տարածքների զարգացումը, լուծել առկա ներքին խնդիրները և հնարավորություն տալ էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչներին մասնակցել իշխանության ղեկավարման գործընթացներում՝ տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով: Այս պարագայում, ցանկացած պետություն և միջազգային իրավունքի սուբյեկտ օժտված է «անձեռնմխելիությամբ» և հենվում է տարածքային ամբողջականության սկզբունքի վրա:

Կենտրոնական Ասիայում և հարակից շրջաններում անջատողական հայացքների և տենդենցների մի նոր փուլ սկսվեց 20-րդ դարի վերջերին: Այն դարձավ աշխարհաքաղականության(geopolitics) գործիքներից, իսկ որոշ պետությունների համար՝ լծակի և «զենքի» տարատեսակներից մեկը: Էթնիկ հենքի վրա հիմնված այս անջատողականության ենթատեսակը օժտված չէ միայն ներքին կամ տարածաշրջանային անկայունություն ստեղծելու հատկությամբ: Որպես կանոն, դրանք մշտապես լինում են միջազգային հանրության և միջազգային իրավունքի ակտորների ուշադրության կենտրոնում: Դառնալով աշխարհաքաղական գործիք՝ այն կարող է օգտագործվել տարբեր պետությունների քաղաքական, տնտեսական, ֆինանսական հետաքրքրություններն ու ազդեցությունը ընդլայնելու համար: Ուլդուրների անջատողականության հարցը լոկալ ներքին հարց չէ և լուրջ վտանգ ու սպառնալիք է ներակայացում տարածաշրջանային անվտանգության պահպանմանը:

20-րդ դարի վերջին Կենտրոնական Ասիայում տեղի ունեցող փոփոխություններն ու քաղաքական իրավիճակի սրումը կապված էին Խորհրդային միության թուլացման, իսկ ավելի ուշ՝ փլուզման հետ: Ընդհանրապես, 20-րդ դարի երկրորդ կեսը լի է եղել աշխարհի վերաբաժանման, ազատագրական պայքարի, ժողովուրդների ինքնորոշման և աշխարհի

¹ **Michael Clarke.** China, Xinjiang and the Internationalisation of the Uyghur Issue./Global Change Peace & Security, 2010, 9-11. https://www.researchgate.net/publication/233117249_China_Xinjiang_and_the_internationalisation_of_the_Uyghur_issue

քարտեզի վրա նոր պետությունների ի հայտ գալու իրադարձություններով: Խորհրդային միության փլուզումը անսպասելի էր ոչ միայն ԽՍՀՄ անդամ պետությունների, այլև ամբողջ միջազգային հանրության համար: Պեկինը քաջ գիտակցում էր, որ տարածաշրջանում տեղի ունեցող փոփոխությունները անիմիջականորեն ազդելու են Չինաստանի թե ներքին, և թե արտաքին քաղաքականության վրա: Աշխարհաքաղաքական տեսանկյունից՝ ԽՍՀՄ փլուզումը հնարավորություն տվեց Չինաստանի Ժողովրդական հանրապետությանը մեծացնել և տարածել իր ազդեցությունը Կենտրոնական Ասիայում:

ՉԺՀ համար տարածաշրջանում դերակատարների փոփոխությունները առաջ քաշեցին նախկինում սառեցված վիճակում գտնվող մի շարք հարցեր: Դրանց թվում էր «ուլդուրական հարցը», որը ՉԺՀ և ԽՍՀՄ միջև փոխշահավետ համաձայնությունների արդյունքում՝ մղվել էր երկրորդական պլան: Անհրաժեշտ է նշել, որ Սին-Օիանգ Ուլդուրական ինքնավար մարզում տեղի ունեցող գործընթացները չէին վերաբերում միայն ուլդուրներին՝ որպես առանձին էթնոս, այլև՝ բնակչության մաս կազմող այլ ժողովուրդներին և էթնիկ փոքրամասնություններին: Երկու պետությունների միջև նմանությունները բավականին մեծ էին՝ տնտեսական համակարգը, կառավարման մոդելը, գաղափարախոսությունը և քաղաքական հայացքները: Նախքան Դեն Սիաոպինյան ռեֆորմները Չինաստանը խորը ճգնաժամ էր ապրում, որը զուգորդվում էր բնակչության թվի կրճատմամբ, սոցալական խնդիրների առաջացմամբ և իշխանությունների հանդեպ ունեցած դժգոհություններով:

20-րդ դարի վեջին՝ Կենտրոնական Ասիայի երկրներում ռեգիոնալ փոփոխություններն ու սրված իրավիճակը չէին կարող միանշանակ ընդունվել ՉԺՀ կողմից: Սահմանակցելով Սին-Օիանգ Ուլդուրական ինքնավար մարզի հետ, ունենալով փոխկապակցված մշակույթ, սովորույթներ, կրոն և լեզու՝ Կենտրոնական Ասիայում կատարվող զարգացումները անմիջականորեն «պրոյեկտվում» էին ՉԺՀ մաս կազմող Սին-Օիանգ Ուլդուրական ինքնավար մարզի վրա: ԽՍՀՄ երկրների շրջանում ակտիվացող անջատողական տրամադրությունները, շարժումները, համաշխարհային նոր տենդենցները իրենց հետքը թողեցին Չինաստանի թե ներքին, և թե արտաքին քաղաքականության վրա: Այդ պրոցեսները առավել ակտիվ փուլ թևակոխեցին 1990-ական թվականներին: Դա պայմանավորված էր ԽՍՀՄ փլուզման արդյունքում նոր անկախ պետությունների ի հայտ գալով, որը խնդրի առաջ կանգնեցրեց չինական իշխանություններին՝ կապված էթնիկ փոքրամասնությունների շրջանում անջատողական տրամադրությունների բարձացմամբ:

Նախկին Խորհրդային միության նոր անկախ ստեղծված պետությունների հաջողության փորձը ահազանգ էր Պեկինի համար, քանի որ Չինաստանը իր սահմաններում միավորում է ավելի քան հինգ տասնյակ պաշտոնապես ճանաչված ազգություններ:¹ Դրանով էր պայմանավորված 20-րդ դարի վերջին՝ ուլդուր ժողովրդի շրջանում անջատողական, անկախացման գաղափարների տարածումն ու ազատագրական պայքարի հերթական փորձը, որում մեծ դեր խաղացին Կենտրոնական Ասիայի երկրներում ու դրնացում տեղակայված խմբավորումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Alexis Pierce. Cultural Conflict between the Uyghurs and Han Chinese in Xinjiang: Uyghur Ethno-Nationalism as a Reaction to Chinese Policies, 2015. https://www.academia.edu/21509823/Cultural_Conflict_Between_the_Uyghurs_and_Han_Chinese_in_Xinjiang_Uyghur_Ethno-Nationalism_as_a_Reaction_to_Chinese_Policies
2. Background guide: China's foreign policy/Foreign policy association 2014 Edition [https://www.fpa.org/ckfinder/userfiles/files/china_background\(1\).pdf](https://www.fpa.org/ckfinder/userfiles/files/china_background(1).pdf)
3. Declaration of Heads of Member States of SCO, China Daily, http://www.chinadaily.com.cn/china/2006-06/12/content_6020345.htm
4. East Asia/South East Asia: China. The World Factbook / The US Central Intelligence Agency. <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/ch.html>
5. For Them, Afghanistan Is Safer Than China. HaiYun Ma, I-Wei Jennifer Chang. <https://foreignpolicy.com/2018/11/01/for-them-afghanistan-is-safer-than-china/>
6. From the Treaty to the Organization/ Official website of CSTO. <https://en.odkb-csto.org/25years/>
7. John Philip Jenkins. Terrorism. Encyclopedia Britannica/ <https://www.britannica.com/topic/terrorism>
8. Michael Clarke. China, Xinjiang and the Internationalisation of the Uyghur Issue./ Global Change Peace & Security, 2010, 9-11. https://www.researchgate.net/publication/233117249_China_Xinjiang_and_the_internationalisation_of_the_Uyghur_issue
9. Sebastien Peyrouse. Economic Aspects of the Chinese-Central Asia Rapprochement. Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program, September 2007, 38-44, 47-49pp

¹ I. A United Multi-Ethnic Country. Govt. White Papers - China.org.cn / <http://www.china.org.cn/e-white/4/4.1.htm>

10. I. A United Multi-Ethnic Country. Govt. White Papers - China.org.cn / <http://www.china.org.cn/e-white/4/4.1.htm>

11. 60/288. The United Nations Global Counter-Terrorism Strategy. the UN, GA. Sixtieth session Agenda items 46 and 120. <https://undocs.org/en/A/RES/60/288>

12. История границы Казахстана. Arman Suleymenov, Qazaqstan Tarihy - <https://e-history.kz/ru/publications/view/3791>

13. Константин Сыроежкин. Газета «Общественный рейтинг»: «...главная стратегическая цель Китая – превращение страны в глобальную торговую державу». <http://www.pr.kg/gazeta/number553/1927/>

14. Курбонова З.М.. СТАНОВЛЕНИЕ ГОСУДАРСТВЕННОЙ ГРАНИЦЫ. «Азия и Африка сегодня», М., 2009, № 4, с. 42-44.

15. Очирова Н. Г., Бембеев Е. В., Современное демографическое и социально-экономическое положение ойратов Синьцзян-Уйгурского автономного района КНР. Вестник Калмыцкого института гуманитарных исследований РАН. № 4 2012. 157 С.

16. Ризоев Б.М., Юсупов М. Ю., Путь к образованию Шанхайской организации сотрудничества как межправительственной международной организации. Вестник Таджикского государственного университета права, бизнеса и политики. No.3, 2009, 97-98 сс

17. 中央民族工作会议暨国务院第六次全国民族团结进步表彰大会在北京举行. News of Communist Party of China. 2014年09月30. <http://cpc.people.com.cn/n/2014/0930/c64094-25763749.html>

18. 中央民族工作会议暨国务院第六次全国民族团结进步表彰大会在京举行 / September 29, 2014, XinhuaNet news agency. http://www.xinhuanet.com/politics/2014-09/29/c_1112683008.htm

Александр Хачатрян, Роль и значение Центральной Азии в региональной политике Китая (конец 20-го века) - Китайская Народная Республика является одним из важнейших акторов современной системы международных отношений. Западная часть КНР граничит со многими государствами Центральной Азии, с которыми Китай осуществляет сбалансированную внешнюю политику. Развитие отношений между Китаем и странами Центральной Азии вступило в новую фазу после распада Советского Союза и роста сепаратистских настроений в Синьцзян-Уйгурском автономном районе. Таким образом, политические процессы в Синьцзян-Уйгурском автономном районе Китая в конце 20-го века стали прямым отражением изменений в Центральной Азии.

Aleksandr Khachatryan, The Role and Importance of Central Asia in China's Regional Policy (end of 20th century) - The People's Republic of China is one of the most important actors in the modern system of International relations. The western part of the PRC borders with many Central Asian states with which China has a balanced foreign policy. The development of relations between China and the countries of Central Asia entered a new phase after the collapse of the Soviet Union and the growth of separatist movements in the Xinjiang Uygur Autonomous Region. Thus, the political processes in the Xinjiang Uygur Autonomous Region of China at the end of the 20th century were a direct reflection of the changes in Central Asia.

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՂՈՒԿԱՍ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԱՆԱՀԱՅ ԹԵՄԵՐԻ ՀԵՏ

ԱՐՄԱՆ ԱՆԴՐԻԿՅԱՆ

Բանալի բառեր - Ղուկաս Կարնեցի, Մայր Աթոռ, Իրանահայ թեմեր, Թավրիզ, Խոյ, Նոր Ջուղա, կոնդակ, նվիրակ:

XVIIIդ. իրանահայ թեմերի համար ծանրագույն շրջան էր: Դեռևս XVIIդ. վերջին Սեֆյան հարստության շահերի վերաբերմունքը դեպի իրանահայությունը կտրուկ փոխվեց: Հարկային բեռի կտրուկ բարձրացումը և ազգային-կրոնական փոքրամասնությունների նկատմամբ բացահայտ հալածանքները ծանր հարված հասցրեցին Իրանի հայկական երբեմնի ծաղկուն գաղթօջախներին: Հալածանքներից անմասն չմնացին իրանահայ հոգևոր թեմերը: Հայ առաքելական եկեղեցու բոլոր վանքերն ու եկեղեցիները, որոնք Շահ Աբաս I-ի ժամանակներից սկսած ազատված էին պետական հարկերից ու տուրքերից՝ դարձան հարկատու, ինչը անասելի դժվարություններ ստեղծեց այդ հոգևոր կառույցների համար: Առանձնապես տուժեցին Իրանի տարածքում գտնվող հնագույն հայկական թեմերը՝ Սբ. Թադեոսի վանքի, Թավրիզի և Խոյ-Սալմաստի, ինչպես նաև Նոր-Ջուղայի կամ Սյահանի թեմը, որի հավատավոր հոտը ամենամեծ կորուստները կրեց:

Սեֆյան արքայատոհմի թուլացման և հատկապես աֆղանական ցեղերի հարձակման պայմաններում, իրանահայությունը, և ի մասնավորի Նոր Ջուղայի բնակչությունը, մնաց դեմ-հանդիման այս նոր արհավիրքի: XVIIIդ. սկզբի միջցեղային կոիվների արդյունքում քայքայված ու թուլացած Սեֆյան տերությունը իր ողջ բնակչությամբ հանդերձ դարձավ հեշտ գրավելի աֆղանների համար: Սեֆյան շահ Հոսեյնի (1694-1722) խորհրդականները հուշեցին իրենց տիրոջը աֆղաններին որպես փրկագին հանձնել հարուստ ու շքեղ Նոր Ջուղան:¹ Նորջուղայեցիները ստիպված դիմեցին ինքնապաշտպանության, սակայն ուժերն անհավասար էին և երբ վեցամյա պաշարումից հետո աֆղանները գրավեցին Սեֆյանների

¹ **Հ. Մարտիրոսյան**, Իրանահայ գաղութի պատմություն, «Ջանգալ-97» հրատ., Երևան, 2007, էջ 143:

մայրաքաղաք Սպահանը՝ ընկավ նաև Նոր Ջուղան: Շահ Հոսեյնի գահից հրաժարվելուց հետո գահ բարձրացած աֆղան ցեղապետ Միր Մամուդը ծանր փրկագին՝ մոտ 120 հազար թուման, պահանջեց Նոր Ջուղայի հայերից, ինչպես նաև Քաբուլ տարան ջուղայեցի և սպահանցի շուրջ 260 արհեստավորական ընտանիքներ: Օգտվելով ներքին խժոժություններից և աֆղանների հարձակումներից, Նոր Ջուղայի և շրջակա հայկական բնակավայրերը սկսեցին ասպատակել լեռնաբնակ լոռերի և բախտիարների ավարառու ցեղերը: Ստեղծված անտանելի պայմանները ստիպեցին Նոր Ջուղայի բնակչության մի ստվար հատվածին հեռանալ դեպի Հնդկաստան, Եվրոպա և Ռուսաստան: Թուրքալեզու աֆշարիների և քրդական ծագմամբ զանդերի միջև երկարատև ներքին կռիվներից հետո Պարսկաստանում դրությունը քիչ թե շատ կայունացավ Քերիմ խան Ջանդի (1760-1779) օրոք, երբ իրանահայերը արհեստների և առևտրի բնագավառում ձեռք բերեցին նախկին իրավունքներն ու դիրքը: Այս հանգամանքը ուղղակիորեն անդրադարձավ նաև իրանահայ հոգևոր թեմերի վերաշինման և թեմական կյանքի աշխուժացման վրա, ինչի մասին վկայում են հիշյալ թեմերի առաջնորդների և Սբ. Էջմիածնի նվիրակների նամակագրությունը Ամենայն Հայոց հայրապետ Սիմեոն Ա Երևանցու (1763-1780) հետ:

Իրանում տիրող խառնաշփոթն ու միջցեղային կռիվները շարունակվեցին մինչև Ղաջարական դինաստիայի հաստատումը 1796թ., երբ շահ հռչակվեց Աղա Մոհամմադ խանը, ով Քերիմ խան Ջանդի մահից հետո սկսել էր արյամբ ու սրով միավորել մասնատված երկիրը: Այս տարիները համընկան Հայոց Ղուկաս Ա Կաթողիկոսի (1780-1799) գահակալության շրջանի հետ: Նորընտրյալ կաթողիկոսի առաջին օրհնության գրերը և կոնդակները որոնք թվագրվում են 1780թ. օգոստոս ամսով՝ ուղղված էին Իրանահայ թեմերին:² Ղուկաս կաթողիկոսի հիշյալ գրությունները ուղղված Թավրիզի և Խոյի հայ հոգևոր հոտին պետք է տեղ հասցնել Ահարոն վարդապետը, սակայն վերջինս մեծ դժվարությամբ հասել էր Խոյ-Սալմաստ թողել էր դրանք Խոյում՝ Մարգար ավագ քահանային ի պահ, ով զլացել էր կաթողիկոսական գրությունները առաքել Թավրիզ: Քաղաքի բնակչությունը չստանալով նոր Վեհապետից գրություններ, սրտնեղել էր և նամակով դիմել էր նրան. «Իսկ Թարվիզու ժողովուրդքն, գրում է Ղուկաս կաթողիկոսը, - անտեղեակ գովով այսմ, տրտնջացեալ էին, թե զիա ըդ զկոնդակ ոչ գրէ առ մեզ նորոգ սրբազան Վեհն, այժմ զարոյ ա-

¹ Դիվան Հայոց պատմության, Նոր շարք, հ.Ա., աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի, ԳԱ հրատ., Երևան, 1984, էջ 88-89:

² Ղուկաս Կարնեցին կաթողիկոս է ընտրվել 1780թ. օգոստոսի 2-ին և արդեն նույն ամսվա 7-ին Ահարոն վարդապետը կաթողիկոսական անդրանիկ օրհնության կոնդակով ճանապարհ է ընկել դեպի Խոյ և Թավրիզ:

նուն հիշիեմք և այլն: Ջոր լուեալ սրբագան Վեհիս մերոյ յատկապէս զմի կոնդակ գրեաց ի վերայ Թարվիզու և շրջակա վճակացն նորա, և ընդ նմա զքանի մի թողթս ևս առ ումանս գրեաց, գորոց զդիտմունսս ահա նշանակեմք ի ստորևս»: Թավրիզի և շրջակա վիճակների աջակցության կարիքը շատ ուներ Ղուկաս կաթողիկոսը, քանի որ նրա ընտրության հանգամանքը և հատկապէս դրա շուտափութությունը հոգևոր և աշխարհիկ որոշակի շրջանակների մոտ հարցեր էին առաջացրել և կար նաև խուլ կամ բացահայտ ընդդիմություն դրանց հանդէպ: Չնայած Իրանում հաստատված անիշախանությանն ու քառսին, երկրի հյուսիսային թեմերն ու վիճակները չէին կորցրել իրենց դերն ու նշանակությունը, որոնք հատկապէս նշանակալի էին կաթողիկոսական ընտրությունների արդյունքները ճանաչելու, նոր Վեհապետին ընդունելու և Մայր Աթոռին կաթողիկոսական նվիրակների միջոցով դրամական և այլ նյութեղէն պարագաներով ապահովելու գործում: Քաջ գիտակցելով այս իրողությունների նշանակությունը, Ղուկաս կաթողիկոսը շտապում է հանգստացնել թեմերի հավատացյալներին և 1781թ. հունվարին մի ընդարձակ կոնդակով իր հայրապետական օրհնությունն է բերում նրանց: Կոնդակում, որում հիշատակվում են Թավրիզն ու շրջակա հայաշատ բնակավայրերը (Մարաղա, Դուխուր, Ուրմի, Սլտուզ, Սոմա Ուշնի, Մուժամպար, Ուղումչի) Ղուկաս կաթողիկոսը համառոտակի ներկայացնում է իր նախորդ Սիմեոն Երևանցու «ի Տէր ննջումն քարի մահուամբ» և իր ընտրության պատճառներն ու պարագաները:¹

Հետաքրքիրն այն է, որ օրհնության այս կոնդակում նույնիսկ հիշատակություն կա 1771թ. Թավրիզին և շրջակա բնակավայրերին պատուհասած ավերիչ երկրաշարժի ժամանակ մեծ ավերածությունների և մարդկային զոհերի մասին. «Նաև ի ՌՄԻ (1771) թուղջն մերում ի կողմունսն Թարվիզու և մանաւանդ ի Թարվեզ ահագին շարժ էր եղեալ և զոլով տանցն և ապարանից և այլ շինութեանց աւերութիւնս էր արարեալ... որով և եկեղեցին մերագնէիցն ևս փլեալ էր: Այլն ի յահագին գետնաշարժութենէն յայնմանէ յոլով անձինք ի քաղաքէն գետնասոյգ էին եղեալ»:² Երկրում տիրող քառսային վիճակը և միջոցների անբավարարությունը հնարավորություն չէին ընձեռում թավրիզցիներին վերաշինելու երկրաշարժից խոնարհված եկեղեցին և այս հարցում նրանց իր հայրապետական հորդորն ու աջակցությունն է բերում Ղուկաս կաթողիկոսը: 1783թ. հունվարի 20-ին Թավրիզի հայությանն ուղղած կոնդակով Ղուկաս հայրապետը գրում է, թէ շատ ուրախ է, որ խոնարհված եկեղեցին վերականգնվել է մինչ կամարները, սակայն իրեն տխրեցնում է այն հանգա-

¹ Դիվան Հայոց պատմության, Նոր շարք, հ.Ա, աշխատասիրությամբ Վ.Գրիգորյանի, ԳԱ հրատ., Երևան, 1984, էջ 178:

² Նույն տեղում:

մանքը, որ շատերն իրենց հեռու են պահում եկեղեցու նորոգության գործից. «...և թողեալ էք զծանրութիւն հոգաբարձութեանն միայն ի վերայ սիրելի որդւոյն մերոյ և հարազատ զաւակին սրբոյ Աթոռոյս՝ Տեր Յովսէփ ավագ քահանային ձերոյ, և ոչ օգնէք նմա, և ոչ ձեռն տայք ի շինութիւն սրբոյ եկեղեցւոյն: Արդ, սիրելիք մեր, միթե՞ տէր Յովսէփ վասն ի՞ր շինէ գեկեղեցին... Ձոր այժմ դուք էք վայելելոց և որդիք և թոռունք ձեր և զկնի հետագայք նոցին»: Այնուհետև Ղուկաս կաթողիկոսը հորդորում է յուրաքանչյուրն ըստ կարողության օժանդակել Տեր Հովսէփ քահանային «որպէս զի Սուրբ Տունդ հոգւոց ձերոց ի յառաջիկայ գարնանս յաջողմամբ Աստուծոյ նորոգեալ աւարտեսցի ի հոգևոր մխիթարութիւն և ի պարծանս ձեզ և ի յուրախութիւն սրտից մերոց»: ¹ Մինչ այդ՝ 1782թ. սեպտեմբերի 20-ին, նույն հարցի կապակցությամբ նա նամակ էր ուղարկել նաև Թավրիզի քահանաներին և իշխաններին: ²

Իրանահայ թեմերում տիրող վիճակը կաթողիկոս ընտրվելու առաջին իսկ ամիսներից եղել է Ղուկաս Կարնեցու ուշադրության կենտրոնում: Հայ եկեղեցու այլ թեմերի առաջնորդներին, նվիրակներին կամ էլ մեծատուններին գրած մի շարք նամակներում կաթողիկոսը տեղեկություններ է փոխանցում պարսկահայոց թեմերի մասին: Այսպես. 1780 թ. դեկտեմբերին Ղուկաս Հայրապետը Կ.Պոլսի հայ մեծատուններին գրած նամակում խոսում է Պարսկաստանում տեղի ունեցած դեպքերի մասին՝ հատուկ կանգ առնելով Ղարաբաղի արյունալի խան Իբրահիմի ավազակային ասպատակության հանգամանքի վրա, որի ժամանակ հսկայական վնասներ կրեցին Խոյը, Թավրիզն ու Գիլանը և հատկապես այդ երկրամասերի հայ բնակչությունը. «Լուեալ էք ի հարկէ, թէ յասմ ամի զի՞նչ էանց ընդ Թարվէզ և ընդ Խօյ ի Շուշու խանէն, որքա՞ն աւերութիւն և գերութիւն եղև, և դեռ ևս գոյ նոյն խռովութիւնն. և ի գարնանս կամին բաղխիլ ընդ միմիանս և աւերել: Նոյնպէս և զերկիրն Գիլանու աւերեցին նոյն Շուշու խանի զօրքն՝ ընդ այլոց ևս զօրաց, փախուցանելով յերկրէ զիշխողն նորին և կրելով անտի զբազմաբեղուն հարստութիւնս այնմ երկրի, մերկացուցանելով և զսակաւաւոր ժողովուրդսն մեր, որք անդ»: ³ Այնուհետև Հայոց հայրապետը խորը կսկիծով է խոսում ծաղկուն Նոր Ջուղայի թալանի և հատկապես հոչակավոր Սբ. Ամենափրկիչ վանքին Ալի Մուրադ խանի էլուզակների հասցրած ծանր վնասների մասին. «Զի՞նչ ապա և վասն Նորոյն Ջուղայու ասացից, թերևս լուեալ իցէք և զայն: Զի զկնի մահուան տիրողին մեծի, յայսմ ամի մի ոմն անիծեալ յազգէ մեռանողին, ապստամբեալ յայլոցն, որք ի Շիրազ, նստեր ի Մպահան: Յանկարծակի յարուցեալ

¹ Դիվան հայոց պատմության, հ.Ա, էջ 346-347:

² Նույն տեղում, էջ 337-338:

³ Դիվան հայոց պատմության, նոր շարք, հ.Ա, էջ 161:

սրբոյ Ամենափրկչի վանիցն, և գառաջնորդն և զմիաբանսնս արկեալ ի սաստիկ հարուածս, զամենայն ինչս նոցին առեալ է յաւարի: Թողում և զաւերութիւն ժողովրդից մերոց որք անդ»:¹ Նոր Ջուղայի առաջնորդին և թեմի մեծավորներին ուղղված իր մխիթարության խոսքում Ղուկաս կաթողիկոսը գրում է. «Ո՛հ դառնութեան աւուրցս և ժամանակացս, որոց դիպեցաք, բոլոր Արևելեան տունս քանի տարի է ահա, որ այսպէս երերեալ կայ և ոչ ումեք հանգստութիւն: Այժմ թող զհասարակ փորձութիւնսն, այդ մեծ ցաւդ ևս դիպեալ Ջուղայու վանիցն և ժողովրդոցն, որոց Աստուած այց արասցէ»:² Հարություն Տեր-Հովհանյանցն իր աշխատության Նոր Ջուղայի թեմակալ առաջնորդ Մկրտիչ Եպիսկոպոսին վերաբերող հատվածում, հղում անելով Տեր Ստեփաննոս պատմիչին, այս իրադարձությունների մասին գրում է. «Ալիմուրատխանն ուներ զծառայս յազգէ վրաց, որք ուրացեալ էին ի հաւատոց քրիստոնէութեան և բնակելք էին ի մեջ ջողայեցոց, և տեսանէին զպայծառութիւն սրբոյ Աթոռոյ մերոյ Ամենափրկչի, և ոմանք ի նոցանէ տեղեակ էին որպիսութիւն նորա: Երիտասարդ մի ազգական ուրացելոցն աշակերտ էր ի վանին... գնացեալ նորա առ ուրացեալ ընտանիս իւր՝ չարախօս եղև, թէ այսքան անօթ ոսկվոյ և արծաթոյ կան մթերեալ ի վանին ի պահեստի: Յայտնեցին զայն Ալիմուրատխանին, որ առաքեաց զքսան ծառայս զի կալցեն զառաջնորդ վանացն և զմիաբանսն և չարչարեացն զնոսա մինչև յայտնեցեն զտեղի թաքստարանն»: Այլ Մուրադ խանի հրոսակները զանաձեձ են անում Մկրտիչ Եպիսկոպոսին և նրա տեղապահ Հակոբ վարդապետին ստիպելով նրանց հանձնել վանքի գանձերը. «...առին զամենայն ինչ կայր ի նմա՝ զխաչ, զսկիհ, զբուրվառ, զքշոց, զաշտանակ, զմմակալս, զտապանակս և զայլ եկեղեցական զարդս»:³ Բնական էր, որ հիշյալ դեպքերի մասին նորջողայեցիները տեղյակ են պահում Ղուկաս կաթողիկոսին և նա ցավով կիսվում է դրանց մասին պոլսեցիների հետ: Հայոց կաթողիկոսը Նոր Ջուղային պատուհասած աղետի մասին ավարտում է բազմիմաստ մի արտահայտությամբ. «Ձայս կամիմ ասել սիրեցեալդ, թէ մեք, որ զնեղութիւնս և զցաւս երկրիս յիշեմք ի թուղթ մեր, ի հարկէ ծաղր երևի ոմանց, որք առ ոչինչ համարելով զայստսիկ, զհին կանօնս ընթեռնուն»:⁴ Բանն այն է, որ Սիմեոն Երևանցի հայրապետի պնդմամբ, նրա մահից հետո կաթողիկոս օծված Ղուկաս Կարնեցու ընտրությունը չընդունեց Կ.Պոլսի Ջաքարիա պատրիարքը, ով արգելեց իր հոգևոր իշխանության տակ գտնվող եկեղեցիներում հիշատակել Ղուկա-

¹ Նույն տեղում:

² Նուն տեղում, էջ 169:

³ Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, աշխատասիրեալ ի պ.Յարութիւն Տեր-Յովհաննէանց, հ. երկրորդ, Նոր Ջուղա, 1881, էջ 64-65:

⁴ Դիվան հայոց պատմության, հ.Ա, էջ 161:

սի անունը և նույնիսկ հրամայեց չեղյալ համարել Միմեոն Երևանցու հաստատած Նոր Տոնացույցը և վերահրատարակել է տալիս Հին Տոնացույցը:¹ Հին կանոն ընթերցող ասելով Ղուկաս կաթողիկոսը անուղղակիորեն մատնացույց էր անում Չաքարիա պատրիարքին:

Մեկ ուրիշ նամակից տեղեկանում ենք, որ 1771թ. Գիլանում ծագած մեծ հրդեհի ժամանակ հրո ճարակ էր դարձել նաև հայկական եկեղեցին, որի վերաշինությանն օգնելու համար Ղուկաս Հայրապետը կարգադրում է տեղում թողնել Մայր Աթոռի համար նվիրակի հավաքած գումարները. «...տալ գնուիրական արդիւնս ի պետս շինութեան եկեղեցւոյն...օգնել դոցա այդու և ունիլ յիշատակ իմն սրբոյ Աթոռոյս ի մէջ դոցա»:²

Ղուկաս հայրապետի գահակալության տարիներին Մայր Աթոռի և թեմերի միջև կապի պահպանման գործում անգնահատելի էր նվիրակների դերը: Նրանք ոչ միայն ապահովում էին Սր.Էջմիածնի Տերունի թեմերից դրամական և նյութական միջոցների հավաքագրումն ու առաքումը Մայր Աթոռ, այլև կատարում էին յուրատեսակ դեսպանի դեր: Մաղաքիա արք. Օրմանյանը բարձր էր գնահատում Ղուկաս Կարնեցու քաղաքականությունը նվիրակների ընտրության և պատվիրակման հարցում. « Մենք կը պնդենք ևս թէ կարողագոյն միաբանները նուիրակութեան յղելը իմաստուն կարգադրութիւն եղած է, որ գացած տեղերնին ժողովուրդին հովութեան ալ հոգ տանին, և ոչ թէ ապիկար հարկահաններ ըլլան, և ոչ ալ ժողովուրդէն մարմնաւորը կթեն՝ առանց հոգևորը ընձեռելու»:³ Ղուկաս Կարնեցու գահակալության տարիներին իրանահայ երկու խոշոր Տերունի թեմերի կենտրոններից զատ նվիրակներ էին պատվիրակվում նաև այդ թեմերի իշխանության ներքո գտնվող հոգևոր վիճակներում. օր. Խոյը, Գիլանը՝ Ատրպատականի, կամ էլ Ղազվին, Ռեյ, Բասրա՝ Նոր Ջուղայի թեմերում, ինչի մասին վկայում են կաթողիկոսական դիվանի նյութերը: Նվիրակների շնորհիվ Հայոց կաթողիկոսը քաջատեղյակ էր թեմերի ներքին կյանքին ու խնդիրներին և հաճախ նրանց միջոցով էր փորձում հարթել տարաձայնությունները հոգևոր դասի ներկայացուցիչների կամ էլ աշխարհական ծխականների միջև: Ղուկաս կաթողիկոսը նախանձախնդիր էր Մայր Աթոռի սեփականության իրավունքի պաշտպանության խնդրում՝ հատկապես երբ այն վերաբերվում էր Տերունի թեմերին: Կաթողիկոսական դիվանում պահպանվել են արժեքավոր բազմաթիվ փաստաթղթեր, որոնք արձանագրում են վերոհիշյալ իրավական նորմերը: 1782թ. Ղուկաս կաթողիկոսը նամակ է ստանում Ռեշտ քաղաքում Մայր Աթոռի նվիրակ, գործակալ Ալեքսանից, որ թեմի անվանի նվիրատուներ-

¹ Մ.արք. Օրմանյան, Ազգապատում, հ Բ, մասն Բ, էջ 964 / 2151/:

² Դիվան հայոց պատմության, հ.Ս, էջ 192:

³ Մ.արք.Օրմանյան, Ազգապատում,հ.Բ, մասն Բ, էջ 1022 /2214/:

րից ուն Ավետ, ով անժառանգ էր, վախճանվել է և նրա ունեցվածքին տիրացել են Հովհաննես և Նավասարդ անվամբ մարդիկ: Վերջինները պնդում էին, որ հանգուցյալը իրենց պարտք էր և դրա դիմաց են խլել նրա գույքը և դրամական միջոցները: Կաթողիկոսը նամակ-հորդոր է ուղարկում հիշյալ մարդկանց. «Եւ ընդ սիրոյ և օրհնութեան գրոյս, ծանուցումն լիցի սիրեցեալոց մերոց... Զի գիտեք լաւապէս, որ ի բնէ անտի կարգ և սովորութիւն է յազգի մերում, զի ուր ուրեք որ անյիշատակ ոք մեռանիցի, նորին գոյքն իւր հովուօղ Աթոռն կամ վանքն և նորին միաբանն վայելեալ զգոյսն նորա, աղոթեսցեն առ Աստուած վասն փրկութեան հոգւոյ նորին: Արդ, սիրելիք մեր, ահա այդ երկիրդ Տերունի վիճակ է սրբոյ Աթոռոյս, և յայդր զետեղեալ օրհնեալ ժողովուրդդ ի սրբոյ Աթոռոյս և ի սորին հայրապետացն հովուիք հոգևորապէս, վասն որոյ յայդ երկրոջդ ևս մինչ անյիշատակ ոք մեռանիցի, նորա գոյքն պարտին սրբոյ Աթոռոյս հասանիլ...»:¹

Ղուկաս Կարնեցին որոշ դեպքերում հանդես էր գալիս որպէս վճռարար դատավոր թեմերի, վիճակների, հոգևորականների միջև ծագած վեճերում: Սբ. Թադեոսի վանքի առաջնորդ² Եսայի վարդապետի մահվանից հետո միաբանների շրջանում պառակտում առաջացավ նոր առաջնորդի թեկնածության հարցում: Նրանց մի մասը Բայազետի մեծատունների հովանավորությամբ փորձեցին իրենց թեկնածուին նստեցնել առաջնորդական աթոռին, իսկ մի մասն էլ դիմեց Խոյի հասարակությանը: Խոյեցիները փորձեցին այս գործին խառնել տեղի խանին և խնդրագիր ուղարկեցին Ղուկաս կաթողիկոսին, ով իմանալով, որ հայ եկեղեցու ներքին խնդիրների կարող են խառնվել օտար իշխանավորները, շտապեց խաղաղեցնելու հակառակորդ կողմերին: Կաթողիկոսը նամակ-հորդորով դիմեց բայազետցիներին չթեժացնել պայքարը, սաստող գրություն ուղարկեց խռովարար միաբաններին և վերջապէս իր կոնդակով առաջնորդ նշանակեց Սահակ Փառակեցուն, շտապելով իր որոշման մասին հայտնել բայազետցիներին և խոյեցիներին:³

Ղուկաս կաթողիկոսը պատեհ առիթի դեպքում Բրանահայ թեմերի բնակիչներին տեղեկություններ էր հաղորդում Մայր հայրենիքում կամ ինչպէս ինքն էր ասում Արարատյան երկրում և Սբ. Էջմիածնի շուրջ տեղի ունեցած իրադարձությունների մասին: Այսպէս օրինակ. 1786թ. ամռանը պատասխանելով Գիլանի նահանգի Էնզելիի վիճակի բնակչության մահսագրին (խնդրագրին) իրենց նոր առաջնորդ և նվիրակ նշանակելու մա-

¹ Դիվան հայոց պատմության, հ.Ա, էջ 338-339:

² Սբ. Թադեոսի վանքը ժամանակին հոգևոր թեմի կարգավիճակ ուներ և նրա առաջնորդը յուրաքանչյուր նոր կաթողիկոսի ընտրության ժամանակ վճռական ձայնի իրավունք ուներ, սակայն XVII-XVIIIդդ. Վանքի նախկին հռչակն ու փայլը խամրել էր:

³ Դիվան հայոց պատմության, հ.Ա, էջ 356-357:

սին, կաթողիկոսը համառոտ պատմում է, թե ինչ արհավիրքներ պատուհասեցին Արարատյան երկրին և հարևան Վրաստանին լեռնականլեզգիների արշավանքները և դրանով է բացատրում նշանակման ուշացումը:¹

Ղուկաս Կարնեցին որպես ճշմարիտ հոգևոր պետ շատ դեպքերում կարողանում էր պաշտպանել տեղական մահմեդական տիրակալների պատժիչ գործողություններից զանցանք գործած անձանց: Մբ.Թադեոսի վանքի առաջնորդի շուրջ ստեղծված իրադրությունում Խոյեցի մեծատուններից մեկն անցնում է բայազետցիների կողմը փաստորեն հակադրվելով տեղի խանին և իր համայնքին: Վախենալով խանի ցասումից այս Սահակը Բայազետից ուխտի է գնում Մբ.Էջմիածին և ընդունելություն ստանալով կաթողիկոսից, խնդրում է նրան միջնորդել Խոյի խանի մոտ և ներում ստանալ նրանից: Կաթողիկոսը, որ բավական սերտ կապեր էր պահպանում Խոյի խանի հետ և վայելում էր նրա հարգանքը, մի գրություն է ուղարկում խանին խնդրելով չպատժել ըմբոստ Սահակին: Խոյեցիների կաթողիկոսին ուղղված նամակից պարզ է դառնում, որ խանը հարգել էր Ղուկաս Կարնեցու խնդրանքը:²

Ամփոփելով կարող են արձանագրել, որ Ղուկաս Կարնեցուն հաջողվել էր սերտ և ջերմ հարաբերություններ հաստատել Իրանահայ թեմերի հետ՝ պահպանելով Մայր Աթոռի հոգևոր-իրավական առաջնայնությունը, միևնույն ժամանակ չտոնահարելով թեմերի ինքնիշխանությունը:

Арман Андриян, Отношения католикоса Гукаса I с армянскими епархиями Ирана - В статье сделана попытка изучить отношения Католикоса Всех армян Гукаса Карнеци с армянскими епархиями Ирана на основе документов из архива Католикосата. С первых дней восшествия на Патриарший престол католикосу Гукасу удалось наладить тесные и деловые отношения с двумя армянскими епархиями Ирана-Атрпатакана и Новой Джуги. Переписка с архиереями, посланцами католикоса, местной знатью, Кондаки (официальное послание Католикоса) содержат богатый материал для изучения духовной жизни армянских епархий Ирана.

Arman Andrikyan, Ghukas I catholicos with the Iranian-Armenia dioceses - In this article, an attempt has been made to study the relations between Ghukas I, the Armenian Patriarch and the Iranian-Armenians, based on the Catholicos' documents. From the very first days of his election as Catholicos, Father Ghukas managed to establish close relations with two major Armenian Apostolic Churches, Atrpatakan or Northern Iran and New Julfa or the Iranian-Indian

¹ Դիվան հայոց պատմության, նոր շարք, հ.Բ, աշխատասիրությամբ Վ.Գրիգորյանի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2003, էջ 175-176:

² Դիվան հայոց պատմության, հ.Ա., էջ 356:

Dioceses. Correspondence with diocesan leaders, Catholicos of All Armenians legate, prominent Iranian-Armenian figures and others, Catholicos' condolences, various papers contain rich material on various spheres of the spiritual life of Iranian-Armenian dioceses. A number of articles in the article allow us to re-examine some issues in the history of the Iranian-Armenian dioceses, which refer to the XVIII century. in the second half.

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ

«ՆԵՐԿԱՅՈՒՄ ՀԱՆԳՐՎԱՆՈՂ ԱՆՅՅԱԼ»

(Պատմության շարունակականության ընկալումները
Արմեն Մարտիրոսյանի «Միջնադարի առավոտը»
բանաստեղծությունների շարքում)

ՆԻՆԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր - Միջնադար, անցյալ, ներկա, հանգրվան, առեղծված, միջնադարի շունչ, անցյալի դասեր:

Համաշխարհային գրականության փորձը ցույց է տալիս, որ գրողներն անցյալին անդրադառնում են ներկայում նրա շարունակականության բացահայտման նպատակով, որովհետև «ներկան նորի ծնունդն է՝ ծագող ժամանակով իրականացվող անցյալից եկող ինֆորմացիայի հիման վրա: Անցյալը գոյություն ունի լոկ այնքանով, որքանով նրա մեջ պահպանվել է ներկայի կառուցվածքային էներգիան»¹:

Հասարակական կյանքի անցումային շրջաններում, ինչպես ցույց է տալիս գրականության պատմության փորձը, գեղարվեստական միտքն ավելի հախուռն կերպով ծավալվում է «այն ուղղությամբ, որտեղ ճնշումն ավելի ուժեղ է եղել»², ու սկսվում է գրողների «ճակատային գրոհը» (Գ. Մահարի) հենց այդ ուղղությամբ:

Որոշումների նոր հանգրվանում Ա. Մարտիրոսյանը հայացքն ուղղում է դեպի միջնադար՝ ժողովրդի հարատևման առեղծվածը բացահայտելով ինչպես հերոսամարտերով, այնպես էլ հոգևոր մաքառումներով: 2002թ. տված հարցազրույցում գրող-գրականագետ Հ. Մարիբեկյանի հարցին, թե «Ձեր բանաստեղծություններում զգացվում է միջնադարի շունչը, ինչո՞վ է այն հոգեհարազատ Ձեզ», Ա. Մարտիրոսյանը պատասխանում է. «Դա իմ բանաստեղծության լարերից մեկն է: Միջնադարյան հոգևոր գանձերը ես ընկալում եմ իբրև մեր օրերում շարունակվող և ավազայում շարունակելի ընթացք, և այդ լարի ներկայությունն իմ ստեղ-

¹ Голубев В. С., Феномен времени и социоестественная история, История и современность, М., 2011, стр. 65:

² Թամրազյան Հր., Գրական դիմանկարներ, Եր., 1995, էջ 16:

ծագործություններում ձևական ոճավորում չէ, այլ ապրելու, մտածելու, ժառանգաբար որդեգրած շրջանառություն»:

Անցյալը բանաստեղծը ներկայացնում է միջնադարյան բանարվեստի գույներով ու նրբերանգներով: Միջնադարը նրա համար դառնում է ոգեշնչման անսպառ աղբյուր, թարմ լիցքեր է հաղորդում նրա բանաստեղծություններին, ինչն ակնառու կերպով դրսևորվեց «Միջնադարի առավուտը» շարքում, որտեղ պատմության մայրուղին անցնում է ժամանակի տարբեր չափումների գուգահեռներով և ամբողջացնում է «այս մի հատիկ երկրի», ուր «խաղաղությունը իսկական նշխար է», ընդհանրական կերպարը:

«Այս մի հատիկ երկրի» ամուր հենասյունը, որ չի ճկվել ու չի խարխլվել փոթորիկներից ու ակեղծումներից, լեզուն է, որի «պահապան վերմակի տակ» թագավոր, թե շինական, բոլորը զինվոր են, ու զինվոր են լինելու նաև նրանց զավակները.

- Եթե ես արու զավակ ունենամ,-ասում է շինականը,-
նա անպայման զինվոր կդառնա,
- Եթե ես արու զավակ ունենամ,-ասում է թագավորը,-
նա անպայման զինվոր կդառնա¹:

Այդ վերմակի տակ բոլորն ապրում են ապահով ու վստահ, որովհետև գիտեն, որ «տանիքից բարձր, աստղանկար հեռվում//բնակվում է մեկը, որ մշտապես արթուն է // և ամուր գոցում է դարպասը քաղաքի// և խարխուլ խրճիթի դռներն է փակում//հագար ու մի գողի ու հարամու առջև//»:

Միջնադարից ժամանակը հոսում է դեպի մեր օրերը: Բանաստեղծը շարքի խորհրդանշական բամբիռին «տեղափոխում է» մեր օրերը, նա դառն ու ճշմարիտ երգեր է երգում. Այդ ինչպե՞ս եղավ, որ երբեմնի շեն քաղաքների ու գյուղերի բնակիչները բռնում են «գաղթի, ինքնալքումի ու պանդխտության» ճանապարհը, այդ ինչպե՞ս եղավ, որ քաղաքի բնակիչները «քաղաքում որբեր են: Անհայրենիք և կորցրած հայրենիքով բարձել են սայլը գաղթի ու հիշողության»: Բամբիռահարը դարձել է ողբասաց. Ու՞մ մեղքով փակվեցին «Ավետյաց երկրի բաց թանգարանի դռները», ինչու՞ է այսպիսի մի փոքրիկ բեկորի վերածվել մեր երկիրը, ու՞ր մնացին մեր Վիշապաքաղը, «Թլու Դավիթը», ինչու՞ անհետացան «չարը շղթայող դարբինները», և ինչու՞ է «ազատության աղոտ ուրվագիծը մնում հավերժ շղթայված»:

«Փոքրիկ բեկորի» վերածված երկրին սպառնում է փշուր-փշուր հողմերի բերանն ընկնելու վտանգը: «Երկիրն ընկույզ էր,-ասում է բամբիռահարը», բայց «դարձավ գարեհատիկ».

¹ **Մարտիրոսյան Ա.**, Սիրո շղթա, Եր., 2003, էջ 111:
Այսուհետ շարադրանքում կնշվի միայն էջը:

-Պահպանեք,-ասում է,-
պահպանենք գոնե այս գարեհատիկը,
քանի որ վերջին,
այս է վերջին հանգրվանը

անվերջ շարունակվել մեր նահանջի (116):

Բամբիռահարի հիշողություններում զուգահեռվում են անցյալն ու ներկան. ահա Անին, որտեղ մրջյուններն ուսերին կրում են «ավերակների ողբերգությունը», ահա մեր գրիչների սառը խցերը, որտեղ հոգու լույս կա և «չգրված մագաղաթի չգրված էջեր», ահա մի ծեր գրիչ՝ «մումի նման հուղարկավոր, // որ բորբոքի կրակը հին // շեկ բառերով զմռսի օջախը թաց՝ սև անցյալի մոխիրներում վաղուց հանգած»:

Բանաստեղծը անցյալն ու ներկան փնտրում է «մեռած քաղաքի ավերակներում»: Նման են այդ անցյալն ու այս ներկան, անցյալում «ավերակների ողբերգությունն է», ներկան թիավարում է ողբերգության ու անհուսության սահմանագծին: Հիմա էլ, ինչպես անցյալում, քաղաքի վրա ճախրում են աղավնիները.

Փնտրիր քո անցյալը և քո դեմքը ներկա
մեռած քաղաքի ավերակներում,
ուր մրջյունները ուսերին կրում են
ավերակների ողբերգությունը:
այնտեղ ճախրում են աղավնիները,
և նրանց թևերի տակ արտասվում է

Մեռած քաղաքի պատկերը նախկին(26):

«Գիտե՞ք թե ինչից կործանվեց Անին,-հարցնում է բանաստեղծը- «Երկրաշարժից, թուրք-սելջուկների, նաև ուրիշ նվաճողների հաճախակի ասպատակություններից, հայերի համատարած գաղթից,-կասեք: Բայց չմոռանաք, հիշենք, որ Անին հոգեբանորեն արդեն կործանված էր՝ հավատի կորստի ու ծավալվող անբարոյականության պատճառով: Մտաբերեք թեկուզ միջնադարի նշանավոր բանաստեղծ ու գիտնական Հովհաննես Պլուզ Երզնկացու՝ անեցիներին զգաստություն մղելու կոչը, որը, ավա՞ղ, արձագանք չգտավ քաղաքի բազմազգ բնակիչների շրջանում, և եպիսկոպոսը ստիպված եղավ անիծելու իր հոտի՝ հավատից զրկված այդ շողշողուն ու ազնվական զանգվածին»¹:

Ճիշտ է, նման են անցյալն ու ներկան, բայց բանաստեղծը լավատեսությամբ է լցված և Երևանը չի տեսնում կործանման եզրին, որովհետև, չնայած ամեն ինչի, «մեր քաղաքն իրենց ուսերին ամուր պահող երևելի-

¹ Մարտիրոսյան Ա. Ներկայում հանգրվանող անցյալ, Եր., 2010, էջ169:

ներն ու արդարները բազում են, տասը չեն, հարյուր չեն, բյուր են, բայց էլի մի մտահոգվելու առիթ լուրջ է ու ծանրացող»¹:

Երգում է ծեր բամբուռահարը, և աչքերի առջև «թափվող ոսկու շեղջի վրայով» քայլում են երկրի նորօրյա տերերը՝ «ինչպես նորահարսին եկեղեցի տանող հարսունքավոր»:

Մեր նորօրյա տերերը համակվել են «արքա դառնալու» մարմաջով և «ոսկու ու փառքի» պատերազմ են մղում միամիտ ու աղքատ հոգիների դեմ, եկեղեցիներ են կառուցում, բարձրյալի թողությանն արժանանալու, մեղքերից մաքրվելու համար:

Բոլոր պատերազմներից ամենասարսափելին է այդ պատերազմը: Մենք պատերազմներ շատ ենք տեսել, շեն, բարգավաճ քաղաքներ են ավերվել, բայց հետո վերականգնվել են, իմացյալ մահով հերոսներ են նահատակվել, բայց հետո նոր քաջորդիներ են ծնվել ու փոխարինել նրանց, մագաղաթյա մատյաններ ու ձեռագրեր են հրի մատնվել, բայց հետո նորերն են գրվել ու ծաղկվել, նախշագարդվել որդան կարմիրով:

Իսկ հիմա չգիտես ո՞ւմ անեծքով տարաբանվեց մեր տեսականին, ու համաճարակի վերածվեց ոգու սովը: Միայն բանաստեղծն է անցյալի Խոր Վիրապում փակված թերթում «ձեռքին մաշված ափի գիրքը ու սպասում չարը խափանող դարբինների վերադարձին».

Ջարկեցեք, դարբիններ, կռանը սալին,
որ չար արքայի շղթայք ամրանան,
ով պոկեց արդյոք պտուղն արգելված,
եթե անգույն էր շարունակությունը,
և, ո՞վ գիտի, գուցե նաև վախճանը:
Ո՞վ պոկեց արդյոք պտուղն արգելված,

որ չարը խափանող դարբինները վերացան միանգամից:

Եվ Ավետյաց երկրի բաց թանգարանի դռները փակվեցին,

Ավետարանի դեղնած թերթիկներով (160):

Ցավով է երգում բամբուռահարը. «ազգովի կործանվում ենք, դարձել ենք թափառական գաղթի ճանապարհներին, մեր Ավետյաց երկիրը թողած՝ «բախտ ենք որոնում օտարի դռներին», դառնում հլու կամակատար, անում ինչ որ հրամայում են, ինչ որ երբեք չէինք անի մեր երկրում՝ մեր արժանապատվության բարձունքներից չիջնելով: Մեր սայլերը, բարձած այն ամենով «ինչ արարել են այրերը մեր միայնակ ու հանճարեղ, այրերը մեր թագավոր ու գորավար, այրերը դայրատան ու ճգնավոր», ճռում են օտար երկրների «փոշեկոլով ճամփաներին», գնում են դեպի անհայտություն:

¹ Նույն տեղում, էջ 170:

Ճակատագիր ր է սա, Աստծո անե՞ծք: Շատ բան չի փոխվել, անցյալը հանգրվանել է ներկայում, «մեղքը լողում է քաղաքի վրայով համատարած ու վարակիչ// և շուկաներում վաճառվում է իբրև հաց հանապազօրյա»:

Ցավ ու տառապանք կա բանաստեղծի տողերում, ցավ առ այն, որ «մարդկանց ոտնահետքերի հունով լողում է//համատարած գետը մեղաագործության».

Ո՞վ հասցրեց մեզ, տեր,
Այս Սողոմ-Գոմորին հավերժ ներկա,
Քաղաքը տնքում է համատարած մեղքի
և աճող աղոթատների առատությունից(108)

Այս ամենից դուրս գալու համար մեզ մի նոր Անահախտ աստվածուհի է պետք, մի նոր եղեգնուտ, «որտեղ ծնվեր նորից մանուկը Վիշապաքաղ» որպես «շիկակարմիր արյան շիկակարմիր բոցում, կորուստների մթնում որպես հերկվոր ու նավ»:

Մեզ մի նոր «Թլու Դավիթ» է պետք, մի նոր Թուր Կեծակի, որ այս «համատարած մոռացության ավերակից/կրակե լեզվակներ ելնեն նորից, մի նոր Խանդուր-Խաթուն, որ սիրով լցվի աշխարհը նորից, որ ոչ մեկը ցուրտ ավերակներում չխարխափի, չընկնի մթնում».

Ա՛խ, որտե՞ղ ես, ու՞ր ես Թլու Դավիթ,
Որ գաս քո ճկությունվ դիպես ավերակին իմ հոգնության,
և թիռ-թեթև բոցեր ելնեն ավերակից
և կրակե լեզվակ գանգրագիսակ,
ա՛խ, որտե՞ղ ես, ու՞ր ես, իմ Խանդուր-Խաթուն(114-115):

Պատմության շարունակականության խնդիրների մարտիրոսյանական ընկալումներն ավելի են խորանում «Շարակնոց» շարքում:

Нинель Саргсян, В настоящее время Гарно в прошлом - Среди стихотворений «Утро Средневековья» Армен Мартиросян объединяет разные измерения времени в единую цепочку. Он обращает свой взор к средневековью, представляя уроки прошлого как мощный маяк, очерчивающий путь в будущее.

Ninel Sargsyan, Currently, the Garneau in the past - Among the poems "Morning of the Middle Ages" Armen Martirosyan combines different measurements of time in a common chain. He turns his gaze to the Middle Ages, presenting the lessons of the past as a powerful beacon outlining the path to the future.

**ԲԱՅԱԿԱՆ ՀԻՄՆԱԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԻՍԿԱԿԱՆ
ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ**

ԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բանալի բառեր - իսկական բարդություն, սերող հիմք, բաղադրող հիմք, բայական հիմնաբաղադրիչ, շարահյուսական կապակցություն, շարահյուսական հարաբերություն, անվանական բաղադրիչ, պարագայական հարաբերություն:

Լեզվաբանական արդի մոտեցմամբ՝ իսկական բարդությունները բնորոշվում են բաղադրական երկու հիմքի պարտադիր առկայությամբ¹: Մրանք միմյանց հետ գտնվում են որոշակի քերականական հարաբերության մեջ, որով և բաղադրվում է բարդության ներքին ձևը: Այդ քերականական կապը չնայած ձևաբանորեն չի դրսևորվում, այսուհանդերձ բառակազմական հավելյալ քայլով տվյալ բարդությունը կարող ենք վերածել բառակապակցության:

Բարդության բաղադրիչների միջև կարելի է գտնել նախադասության անդամների միջև եղած գրեթե բոլոր շարահյուսական հարաբերությունները²: Մասնավորաբար բայական հիմնաբաղադրիչով իսկական բարդությունները շարահյուսական կապակցությունների վերածելիս արտահայտում են խնդրային, պարագայական և ստորոգումային հարաբերություններ:

Քննենք անուն խոսքի մաս+բայահիմք կաղապարով իսկական բարդությունները՝ ըստ բաղադրիչների պարագայական հարաբերության բնույթի: Ուսումնասիրությունը հենվում է 5-րդ դարից մեզ ավանդված մատենագրության բառապաշարի վրա՝ քաղված Նոր հայկազյան բառարանից:

Տեղի պարագայական հարաբերություն: Նման բարդություններում անվանական բաղադրիչը ցույց է տալիս, թե որտեղ է կատարվում (*աղբայտիտ*՝ պտտող եւ խնդրող իրս ինչ ի մէջ աղտեղութեան, *բանտարգել*՝ արգելեալն ի բանտի), ուր է ուղղված (*բանտամուտ*՝ մտեալն ի բանտ, *խաւարատյոց*՝ սուզեալ եւ ընկղմեալ ի խաւար), որտեղից է սկսվում (*աղենարուիս/աղենարուիս*՝ բղխեալ յաղինայ, *երկնանձրեւ*՝ յերկնից անձրեւեալ), որտեղով է ընթանում (*գետնագնաց*՝ որ գնայ ընդ գետին, *գահավէժ*՝ վի-

¹ Հարցի մանրամասն քննությունը տե՛ս Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984թ., էջեր 266-272:

² Տե՛ս Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Ե., 1987թ., էջ 150:

ժեպ ընդ գահս) բայահիմքով արտահայտված գործողությունը՝ պատասխանելով ու՝ ր, ո՞ր տեղ հարցերի:

Պետք է նկատել, որ բացարձակ գերակշռությամբ անվանական բաղադրիչն արտահայտված է գոյականով. մակբայով և բայահիմքով բաղադրված բարդությունները հիմնականում ձևի և ժամանակի պարագայական հարաբերություններ են արտահայտում: Բերենք օրինակներ իսկական բարդությունների, որոնցում լրացնող բաղադրիչն արտահայտված է տեղի մակբայով. *այդրէնածին*, *անդրադարձ*, *ներսագոյ*, *վերահայեաց*, *վայրաքարշ* և այլն: Բայահիմքին լրացնող անվանական բաղադրիչը, արտահայտված լինելով հանդերձ գոյականի ուղղական հոլովաձևով, տեղի պարագայական հարաբերությունն արտահայտում է՝ գործածվելով տարբեր հոլովաձևերի նշանակությամբ: Այսպես՝ տրական հոլովաձևի նշանակությամբ. *երեսագիր* (գրեալ յերես նամակի), *գլխարկ* (էարկ զգլխով), *խաչահան* (ի խաչ հանօղ զՔրիստոս), հայցական հոլովաձևի նշանակությամբ. *ծովամտոյց* (մտեալ ի խորս ծովու), *ծակամուտ* (որ մտանէ ի ծակս), *ծառագնաց* (որ գնայ ելանէ ի ծառ), բացառական հոլովաձևի նշանակությամբ. *հագագասփիւռ* (ընդ հագագն ի դուրս սփռեալ), *յորդանանարուղի* (բղխեալ ի Յորդանան գետոյ), *երկնաբեր* (յերկնից ի վայր բերեալ), գործիական հոլովաձևի նշանակությամբ. *գետնաստղ* (որ ստղի ընդ գետին), *եթերընթաց* (որ ընթանայ ընդ եթերս), *ծովաչու* (որ չուէ ընդ ծով), ներգոյության իմաստով. *դժոխակէզ* (կիզանօղ կամ կիզեալ ի դժոխս), *լեռնաբնակ* (բնակեալն ի լերինս), *աղաթաթաւ* (թաթաւեալ յաղտս), *ամրաբնակ* (բնակեալ յամուրս):

Ուրիշ խոսքով ասած՝ ինչ վերաբերում է անվանական բաղադրիչին, գործ ունենք բուն (տրական հոլովաձևի և ներգոյության իմաստ արտահայտող), ուղևորման ու ժամանման (հայցական հոլովաձևի իմաստ արտահայտող), ելման (բացառական հոլովաձևի իմաստ արտահայտող) և անցման (գործիական հոլովաձևի իմաստ արտահայտող) տեղի պարագաների հետ: Նկատենք, որ նվազող հաճախականությամբ հանդիպում են բուն և ուղևորման ու ժամանման տեղի պարագայական հարաբերությամբ բարդություններ:

Երբեմն տեղի հարաբերությունն արտահայտվում է նախդրավոր և նախադրություններով կառույցներով, որոնք արդի հայերենի փոխադրելիս ստացվում են կապական կառույցներ. քերականական իմաստը միայն հոլովաձևով արտահայտելը նման գործածություններում անհնար է: Այսպես. *դրացսպաս* (որ իբրեւ ապաշխարօղ սպասէ առ դուրս կամ արտաքոյ դրաց), *շուշանաբոյծ* (որ բուծանէ զհօտ իւր ի հովիտս շուշանաց), *ձիւնաթաղ* (թաղեալ ընդ ձեամբ) և այլն:

Ժամանակի պարագայական հարաբերություն: Նման բարդություններում անվանական բաղադրիչը ցույց է տալիս բայահիմքով արտահայտված գործողության կատարման ժամանակը, ինչպես՝ *անարատուն* (սնեալ յամարայնի), *առաւօտածին* (որ ընդ առաւօտս ծնանի), *գարնանաբոյս* (ի գարնան բուսեալ), *գիշերընթաց* (որ ընթանայ ի գիշերի), *ձմեռնատանջ* (որ ի ձմեռան տանջէ), *ստնահատոյց* (հատուցեալ ի ստենէ), *երեկածին* (իբրու երէկ ծնեալ): Հաճախական առաջնաբաղադրիչներ են՝ *գարուն* (գարնանաբուղիս, գարնանաշարժ), *գիշեր* (գիշերագնաց, գիշերայած), *ձմեռն* (ձմեռնաբոյս, ձմեռնատուն):

Այս կաղապարով կազմված բարդությունները ժամանակի պարագայական իմաստն արտահայտում են՝ գործածվելով *տրական* (ձմեռնատանջ), *հայցական* (առաւօտածագ), *գործիական* (գիշերաջան) հոլովածների նշանակություններով:

Սակավ դեպքերում անվանական բաղադրիչը շարահյուսական իմաստն արտահայտում է քերականական համապատասխան ձևավորմամբ, ինչպես՝ *գարնանաբեր*:

Ածական+բայահիմք կաղապարում ժամանակի պարագայի նշանակությամբ բառակազմական ակտիվ գործառույթ ունի «նոր» ածականը. *նորահաս* (նոր հասեալ), *նորածին* (նոր ծնեալ), *նորամուտ* (նոր մտեալն ի վիճակ ինչ), *նորիմաց* (նոր իմացեալ), *նորափոր* (նոր փորեալ), *նորուս* (նոր ուսեալ):

Չափի պարագայական հարաբերություն: Նման բարդություններում անվանական բաղադրիչը չափի, քանակի, աստիճանի, տևողության տեսանկյունից բնութագրում է բայահիմքով արտահայտված գործողությունը և պատասխանում ինչքա՞ն, ո՞րքան, քա՞նի անգամ հարցերին, ինչպես՝ *աշխարհադէզ* (դիզեալ ըստ չափոյ մեծութեան աշխարհի), *ծայրաթաց* (իսպառ թացեալ), *պարանոցաթաղ* (թաղեալ մինչև ցպարանոց), *կարեսէր* (կարի սիրօղ աւելորդաց), *յաճախարան* (որ յաճախ բանս ճառէ), *սպառազէն* (զինեալ ի սպառ), *կիսակտուր* (կտրեալ կիսով չափ), *բազմադէզ* (կարի շատ դիզեալ), *բազմածուփ* (ծփեալ յոյժ), *շատաշուրջ* (որ շատ շրջի), *սակաւերեւեաց* (որ սակաւ ուրեք երեւի), *երկայնակեաց/երկարակեաց* (որ յերկար կեայ), *նուագագիւտ* (սակաւագիւտ) և այլն: Համեմատաբար հաճախական առաջնաբաղադրիչներ են՝ «յաճախ»՝ *յաճախապատում*, *յաճախագութ*, «կէս»՝ *կիսաբաց*, *կիսակատար*, «սակաւ»՝ *սակաւակեաց*, *սակաւակեր* և այլն:

Ձևի պարագայական հարաբերություն: Նման բարդություններում անվանական բաղադրիչը ցույց է տալիս, թե ինչպես, ինչ եղանակով է կատարվում բայահիմքով արտահայտված գործողությունը. *աղերսահայց* (աղերսի հայցողական), *առակասաց* (առակաւ ասացեալ), *առասպելա-*

պատիր (որ պատրէ առասպելեօք), *աստուածաճաղիկ* (Աստուծով ծաղկեալ), *արիւնընծայ* (արեամբ հանդերձ ընծայեալ), *արուեստագիր* (արուեստի գրօղ), *արտասուագոչ* (արտասուօք գոչելով), *երկնակերտ* (կերտեալ նման երկնից), *խաչատարած* (տարածեալ ի ձեռ խաչի), *ծխաշունչ* (ծխոյ նման շնչօղ), *հրապարականէծ* (հրապարակաւ յամենեցունց անիծեալ), *դամբարանշող* (որ նշողէ իբր գղամբար), *որովայնագնաց* (որ գնայ ի վերայ լանջաց եւ որովայնի), *վարդափթիթ* (փթթեալ որպէս զվարդ):

Ձևի մակբայներից պարագայական հարաբերությամբ բարդություններ ձևավորելու տեսակետից նկատելիորեն կենսունակ են «դիր», ինչպէս՝ *դիրընկալ* (դիրաւ ընդունօղ), *դիրափուչ* (որ դիրաւ փչէ), *դիրատար* (դիրաւ տարեալ), *դիրահաս* (որ դիրաւ հասանէ), *դիրամեղ* (որ դիրաւ մեղանչէ), *դիրանց* (որ դիրաւ անցանէ), «արագ», ինչպէս՝ *արագախօս* (որ արագ արագ խօսի), *արագահաս* (որ արագ հասանէ), *արագալուր* (որ արագ լսէ), *արագասխալ* (որ արագ արագ սխալէ), *արագընթաց* (որ արագ ընթանայ), ավելի քիչ՝ «փոյթ» մակբայը՝ *փութամոռաց* (որ մոռանայ փութով), *փութաձեւ* (որ փոյթ ձեւի), *փութաշարժ* (որ փութով շարժի)....

Բարդությունների բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունը որոշելիս առաջնորդվելով մասնավորապէս սկզբնահիմքերի շարահյուսական գուգորդելիությամբ և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ բայի հետ գուգորդելի է մակբայը, բայց ոչ՝ ածականը, մակբայական կիրառությամբ ածականը հավասարեցվել է ածականին¹, ինչը նշանակում է, որ ձևի պարագայի նշանակությամբ առատորեն հանդես եկող որակական ածականները ևս քննվել են որպէս մակբայներ: Առհասարակ, ածական+բայահիմք մասնակաղապարում ածական լրացումը, որպէս կանոն, երկարժեք կիրառություն է ունենում՝ ածական-մակբայ և ածական-գոյական կաղապարներով: Առաջին դեպքում բայիմաստից կախված՝ մակբայաբար գործածված ածական լրացումը դրսևորում է պարագայական հարաբերություններ, երկրորդ դեպքում՝ խնդրային²: Բայական հիմնաբաղադրիչով իսկական բարդությունների շարահյուսական հարաբերությունների քննության արդյունքում հանգեցինք եզրակացության, որ ածականը՝ իբրև բայահիմքին լրացնող բաղադրական հիմք, հանդես է գալիս առավելապէս ձևի պարագայի շարահյուսական հարաբերությամբ: Բերենք համապատասխան օրինակներ. *առատահեղ* (հեղեալ առատապէս), *բազմադէզ* (կարի շատ դիզեալ), *դառնաշունչ* (որ դառն շնչէ), *դժուարադարձ* (որ դժուարաւ դառնայ), *լռակաց* (որ լուռ կայ), *խստավար* (որ

¹ Տե՛ս **Լ. Հովսեփյան**, նշվ. աշխ., էջեր 138-141:

² Տե՛ս **Ա. Մարտիրոսյան**, Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները, Ե., 2007թ., էջ 115:

խստութեամբ վարի), *ծանրաշարժ* (որ ծանր շարժի), *ճարտարագէտ* (որ ճարտար գիտէ), *մանրամաղ* (մանր մաղեալ), *յորդասահ* (յորդութեամբ սահեալ), *ուղղաշունչ* (որ ուղիղ շնչէ), *քաջեռաց* (քաջ եռացեալ կամ եռացուցեալ) և այլն:

Ձևի պարագայի նշանակությամբ բառակազմական ակտիվ գործառույթ ունի նաև «ինքն» դերանունը. *ինքնաբոյս* (ինքնին բուսեալ), *ինքնաբուղիս* (ինքնին բղիսեալ), *ինքնածին* (ինքնին ծնեալ), *ինքնածագ* (ինքնին ծագեալ), *ինքնեղ* (ինքնին եղեալ) և այլն:

Թվական+բայահիմք, բայ+բայահիմք կաղապարով կազմված բարդությունները ևս կարող են արտահայտել ձևի պարագայի շարահյուսական հարաբերություն, ինչպես՝ *քառաբաշխ* (ի չորս բաժանեալ), *հնգաշարժ* (հինգ օրինակաւ շարժօղ), *միաշար* (ի մի կարգ շարեալ), *թակարդապատիր* (թակարդելով պատրող), *պարուրափակ* (պարուրելով փակօղ) և այլն:

Նպատակի պարագայական հարաբերություն: Նման բարդություններում անվանական բաղադրիչը ցույց է տալիս բայահիմքով արտահայտված գործողության նպատակը: Այսպիսի բարդությունները նկատելիորեն սակավադեպ են: Բերենք մի քանի օրինակ. *հացկատակ*՝ կատակօղ ի հացկերոյթս. ծաղրածու, որ այլոյ հացի կերակրի, *հաւատադիր*՝ որ դնէ վկայութիւն վասն հաւատոյ իւրոյ և այլն: Պատճառի պարագայական հարաբերություն: Նման բարդություններում անվանական բաղադրիչը նշում է այն հանգամանքը, որը պատճառ է դառնում բայահիմքով արտահայտված գործողության կատարման համար. *անձրեւաթաց* (թացեալ յանձրեւոյ), *բքալլուկ* (լլկեալ յերեսաց բքոյ), *երաշտահար* (հարեալ յերաշտէ), *ժանգահար* (հարեալ ապականեալ ի ժանգոյ), *ձիննախեղդ* (խեղդեալ յերեսաց ձեան), *սովալլուկ* (լլկեալ ի սովէ), *ցրտասառոյց* (սառուցեալ ի ցրտոյ), *սոթախարշ* (խարշեալ ի սոթոյ), *ջերմակալ* (կալեալն ի ջերմանէ): Այս կաղապարով բարդություններն առավել հաճախ արտահայտում են մարդու հոգեկան գործունեությանը վերաբերող հատկանիշներ, ինչպես՝ *մեղսատագնապ* (տագնապեալ յերեսաց մեղաց իւրոց), *նախանձարեկ* (նախանձու բեկեալ մաշեալ), *վշտարեկ* (վշտօք բեկանօղ), *վշտահար* (հարեալ ի վշտաց) և այլն: Հարկ է նշել, որ պարագայական հարաբերությամբ մասնակաղապարները առավելաբար ածականի խոսքիմասային արժէք ունեն:

Որպես արդյունք ստացվող գոյականները, ինչպես՝ *գիշերամարտ* (մարտնչելն գիշերայն), խիստ սակավադեպ են:

Анна Варданын, Синтаксические связи составляющих сложных слов образованных при помощи глагольных основ в качестве обстоятельства - Согласно современному лингвистическому подходу, истинные словосло-

жения характеризуются обязательным наличием двух производящих основ. Эти основы находятся в определенном синтаксическом отношении друг с другом. Между составляющими сложного слова можно найти почти все синтаксические отношения, существующие между членами предложения. В частности, при преобразовании истинных словосложений с глагольными производящими основами в синтаксические сочетания, они выражают отношения предикативов, дополнений и обстоятельств.

Рассмотрены синтаксические связи составляющих сложных слов образованных при помощи глагольных основ в качестве обстоятельства.

Anna Vardanyan, The adverbial relations of the constituent stems of real complexities in grabar (classical armenian) - According to the modern approach of linguists, real complexities are marked by the obligatory existence of two constituent stems. These stems are in a certain syntactical relation with each other. We can find between the constituents of the complexities almost all syntactical relations typical of the members of a sentence. Particularly, in turning the real complexities with verbal stems into syntactical combinations they express objective, adverbial and predicative relations. In this article we have reverted to adverbial relations of the component stems in similar compounds.

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ԱՐԵՎԱՊԱՇՏ» ՆԿԱՐԻՉՆԵՐԸ

ԳԱԳԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Բանալի բառեր - Հայաստանի առաջին Հանրապետություն, «արևապաշտներ», ցուցահանդես, Մ. Սարյան, Ե. Քոչար, լուսավոր ապագա, խորհրդային մայրամուտ:

Սովի, աղքատության, մահաբեր հիվանդությունների ու նենգ թշնամիների ճիրաններում գտնվող Հայաստանի առաջին Հանրապետությունն իր կարճ ժամանակահատվածի գոյության ընթացքում (1918–1920 թթ.) զարկ էր տվել նաև հայ մշակույթի զարգացմանն ու տարածմանը: 1919 թվականի մայիսի 25-ին Երևանում բացվել էր Հայ արվեստագետների միության անդրանիկ պատկերահանդեսը՝ ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարարության հովանու ներքո: Միայն կառավարության հոգապահուստից շուրջ 100 000 ռուբլի էր տրամադրվել մի շարք գեղանկարներ գնելու և պետական թանգարանին տրամադրելու համար¹:

Այս ցուցահանդեսում առանձնահատուկ էին հատկապես «արևապաշտ» նկարիչների աշխատանքները, որոնց վառ երանգավորված կտավներում ուրույն հույս էր հաղորդված նորանկախ պետության պայծառ ապագայի տեսլականի հանդեպ: Ժամանակի այդպիսի «արևապաշտ» հայ նկարիչներից առանձնացնենք լավագույններին:

Հիրավի՝ առաջինը «արևապաշտների» շարքին չդասել Մարտիրոս Սարյանին իրապես սխալ կլիներ: Թեև նա հայտնի էր առավել խորհրդային շրջանում կատարած աշխատանքներով, սակայն մի առանձին աշխարհ էր նրա մինչհեղափոխական շրջանը, ժամանակ, երբ անգամ նա Հայաստանի նորանկախ հանրապետության համար պետական դրոշակի նախանկարներ էր կատարել: Այս ընթացքում առանձնապես հետաքրքիր էին նրա «Ցերեկը» և «Էտյուդ» աշխատանքները: Թեմայով մոտ այս կտավներն ինչ-որ նոր կողմ էին բացում նրա վաղուց ձևավորված մեծարվեստ ստեղծագործության մեջ. «Նկարչի այդ տարիների բնանկարները կամե-

¹ Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 375:

րային և լիբիկական բնույթ ունեն. դրանք մեծ չեն չափերով և ընդգրկմամբ. այգու մի անկյուն, ծաղկած խնձորենի և այլն»¹:

Մ. Մարյանն այն վարպետներից չէր, որ կանգ առներ մի բնագավառում: Եվ ահա նա իր ծաղիկներից ու պարսկական պատկերներից հետո տեսել էր խաղաղ մի փողոց, տնակ՝ բլրի ստորոտին, եզներ լծած սայլ, ոչ իրենց իսկությամբ, ինչպես այդ թեմաներին դիմում էր նա առաջ, այլ դրանց միաձույլ տեսքով: Արևը նրա գործերում դեղին թավշի պես սփռվում էր աշխարհի վրա: Տաք, սրտամոտ առարկաներ, առօրյա կենսակերպի ներդաշնակություն: Այս ամենը հիանալի էր արտացոլված: Նրա արվեստում արևելյան գույները սովորականի պես տպավորիչ էին ու երաժշտական:

Մ. Մարյանից հետո առանձնահատուկ էր շնորհատաղանդ նկարիչ Վահրամ Գայֆեճյանը, որի ազատ, ասես հանպատրաստից արված էտյուդները հասկանալու համար հարկավոր էր ամենից առաջ տեսնել իր գծանկարները: Փոքր չափերի մեջ հեղինակը մարմնավորում էր այնպիսի բարդ թեմաներ, ինչպիսիք էին՝ բազմությունը զբոսայգում, խմբված մարդիկ սրճարանում և այլն: Նկարիչը նյարդային բծերի քառսով կարողանում էր ձևեր հաղորդել: Շլացուցիչ էին արվեստի հենց այն գործերը, որոնց մեջ ձևն իր ողջ ամրությամբ ու արժեքավորությամբ հանդերձ, գրեթե անտեսանելի էր²:

Ռիթմի ահա այս ցանցը, որի ստեղծման գաղտնիքներին լավ էր տիրապետում Վ. Գայֆեճյանը, հիանալիորեն նշմարում էր ապագա անվանի նկարչի մասին: Փոքրիկ գծանկարներից մինչև խոշոր կտավները գրեթե տարածություն չկար, որովհետև հեղինակը լավ էր տիրապետում նկար կառուցելու գաղտնիքին: Եվ երբ գծանկարներից անցում էր կատարվում էտյուդներին՝ «Մայիսյան առավոտ», «Հարավային արև», «Էսքիզ», ապա իսկույն գնահատելի էին դառնում այդ գործերը, թեև առաջին հայացքից զարմանալիորեն պատկերներում լույսն առատ էր: Ինչպես գծանկարներում, այնպես էլ այստեղ՝ կարծես պատահական վրձնախազերը պահպանում էին աներևույթ ձևը, և բնօրինակի՝ սպիտակ շողերով տրոհված, խախտված կապակցությունը հառնում էր աչքի առաջ նկարչի կամքով և աշխարհը տարրալուծելով բծերի, նա իր ցանկությամբ նորից ի մի էր բերում այն մի նոր երանգով:

Մյուս «արևապաշտը»՝ Հովհաննես Տեր-Թադևոսյանն աշխատում էր լրիվ այլ ուղով: Նա չէր տրոհում օդն ու լույսը, այլ խտացնում, թանձրացնում էր այն: Վերջինիս չէր հետաքրքրում երկնքում հուրհրատող արևից մինչև կերպարներն ընկած ճանապարհը, որ հետաքրքրում էր Վ. Գայֆեճյանին: Նա տեսնում էր ճառագայթների լույսն առարկայի վրա և զարմանալիորեն որսում շողերի անկման հարթությունը: Նրա արևը Հայաս-

¹ Դրամբյան Ռ., Մարտիրոս Մարյան, Ե., 1960, էջ 44:

² «Գանթեղ», գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2008, № 1, էջ 184-189:

տանի հարավային հատվածի ու անգամ հեռավոր Սամարղանդի արևն էր¹: Թերևս վարպետի այդ շրջանի լավագույն գործը «Գնչուհին» էր, ուր այդ ծանր լույսը ճնշել էր ամեն ինչ, հարթել-հավասարեցրել, բայց չէր կարողացել խլացնել միայն կարմրադեղին գույնը աղջնակի գլխաշորի վրա:

Եվրոպական առաջադեմ նկարիչների ստեղծագործություններից տոգորված հրաշալի գործունեություն էր ծավալում մեծն վարպետ Երվանդ Քոչարը: Իր ողջ նորարարությամբ հանդերձ, այնուամենայնիվ նրա արվեստի հիմքում ընկած էր իրական աշխարհի հանդեպ առկա մանրակրկիտ վերաբերմունքը. արևն էր ճառագում նրա աշխատանքներում: 1919 թվականին ստեղծած նրա «Ի խորոց...» կտավը դուրս էր եկել ծրագրային ակադեմիական աշխատանքի շրջանակներից. «Սա մի յուրօրինակ ինքնակենսագրական մոտիվ է պատանի Քոչարի ստեղծագործության մեջ, որի կաշկանդված ուժը շուտով արընթաց հեղեղի պես պիտի դուրս հորդեր և ազդարարեր իր մասին»²: Այստեղ արդեն զգացնել էր տալիս հիրավի տաղանդավոր արվեստագետի ուրույն ոճն ու անեզր աշխարհայացքը:

Իսկական դասական «արևապաշտ» էր վարպետ Եղիշե Թադևոսյանը: Նրա ներկայացրած աշխատանքներից լավագույններից էր «Հայերի կյանքից» կտավը, ուր հեքիաթայինը դուրս էր պրծնում ողբերգությունից: Փախստականները մութ քարանձավից նայում էին դուրս՝ գմբուխտ բնությանը, որտեղից թերևս կործանման վտանգ էր սպառնում: Բնանկարներից հիշատակելի էին «Բոսֆորն առավոտյան», «Բեյրութ», «Սևանի վանքը» աշխատանքները: Շատ արժեքավոր էր նաև «Արարատը», ուր լավ էին մշակված լուսավոր մակերեսները: Այս ընթացքում հեղինակը ևս երկու աշխատանքներ էր արարել՝ «Հովիվն ու հոտը» և «Հովվերգություն», ուր ավելի շեշտվել էր նկարչի շրջադարձը դեպի իրականությունը³:

Նորանկախ հանրապետության գաղափարախոսությամբ տոգորված հաջորդ «արևապաշտը» Գրիգոր (Գրիգո) Շարբաբյանն էր: Իրիկնային արևն օգնել էր նրան լուծելու հին թիֆլիսյան քաղաքային պատկերների արտացոլման բարդ խնդիրները: Ալ-դեղնավուն արևով էր ողողել նա ամբոխը, թափորը, բնապատկերը, տներն ու եկեղեցին, որը ուրույն միասնություն էր հաղորդել նկարին: Այն երկար էր պահում իր վրա դիտողի հայացքը: Լավ տեսանելի էր հեռվից ու հետաքրքիր մանրամասերով: Լուսավորված ֆիգուրների մեկնաբանությամբ ազգագրության առումով շատ արժեքավոր էր նրա «Փեթղայինի տոնը» ոչ մեծ նկարը: Այստեղ արդեն

¹ Տե՛ս **Հովհաննես Տեր-Թադևոսյան (1889-1974):** Ստեղծագործությունների անհատական ցուցահանդես: Գեղանկար, գրաֆիկա, խեցեգործություն (Գ. Ամիրխանյանի, ՀԱՊ-ի և մասնավոր հավաքածուներից) / Կազմ. հեղ.՝ Գ. Ամիրխանյան, Ա. Խլղաթյան, Ե., 2010:

² **Ե. Կոչար,** Живопись, М., 1989.

³ **Դրամբյան Ռ.,** Եղիշե Թադևոսյան, Ե., 1955, էջ 67:

զգացնել էր տալիս հեղինակի մտավորական կերպարն ու պատահական չէ, որ տարիներ անց, հենց Գ. Շարբաբյանի նախաձեռնությամբ և մի քանի նվիրյալների օժանդակությամբ, Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատան քանդման ժամանակ հնարավոր էր դարձել իսպառ վերացումից փրկելու գերեզմանոցում հանգչող մի քանի տասնյակ հայ մտավորականների աճյունները¹:

Հակասական էր նորանկախ հանրապետության մյուս «արևապաշտի»՝ Սարգիս Խաչատրյանի անցած ուղին: Չափից դուրս շատ խնդիրներ էր նա առաջադրում ինքն իրեն ու անխոնջ որոնում սեփական «ես»-ը: Նրա ուշադրությունը գրավում էին թե՛ բնանկարը, թե՛ կենցաղը, թե՛ ազգագրությունը, սակայն բոլոր որոնումներում երևում էին բնածին տաղանդն ու չափազանց ճկուն վարպետությունը: Ջրանկարներում նա կյանքի ու բնության սիրավառ դիտող էր: «Սև ծովը փոթորկի պահին», «Փոքրիկ դատարկապորտները», «Առողջարանի ծառուղին», «Ջանասեր օրհորդը» գործերում մշուշաքողը, զբոսայգու բնանկարը, տիպարն՝ ամեն ինչ մտնում էր նրա տեսադաշտը: Նկարները բացահայտում էին նրա առաջադիր խնդիրները: Ահա գյուղական սրտառուչ մի հովվերգություն՝ «Հորթն են փնտրում» պար ու սիրով շարադրված հմայիչ մի ընթացք: Իսկ «Ձոհաբերություն հայոց վանքում» խոշոր աշխատանքում, ուր առաջադրանքների մի ամբողջ կծիկ կար, անհրաժեշտ էր ներքին մի դիմհար, որոշ ինքնասահմանափակում: Կարելի էր ուղղակի նշել, որ «բովանդակությունը» խանգարում էր Ս. Խաչատրյանի զուտ գունանկարչական զարգացմանը: Երբ նա պարզապես պատկերում էր «Սոճին իրիկնապահին» կտավի նման աշխատանքներ, նրա ստեղծագործական անհատականությունը շատ ավելի նկատելի էր, քան բարդ խնդիրներ կատարելիս: Գրոհն ու փոթորկը նրա մոտ չափազանց բուռն էր ընթանում: Ու ժամանակը ցույց էր տալու, որ նա այդ փոթորկից դուրս կգա իբրև կոփված արվեստագետ²:

Ութերորդ «արևապաշտը» Ստեփան Գաբանը, հատկանշական էր իր երկու զարմանալիորեն վառ պատկերներով՝ «Պարսկաստանը» և «Օրդուբադը»: Երկու նկարն էլ ողողված էին տաք, գրեթե շոշափելի շողերով: Եվ ինչպես պարսկական ջրավազանում, այնպես էլ Օրդուբադի լեռներում հեքիաթ կար, և այդ հեքիաթը, որ շատ հետաքրքիր էր, իրատեսի լեզվով էր պատմվում: Իրատեսական հակումը Ս. Գաբանին հնարավորություն էր տալիս պատերազմական պատկերներն անել այնպես, որ դրանք գեղարվեստական արժեք ունենային: Այս տարիներին Օրդուբադում ու ընդհանրապես ողջ Նախիջևանի տարածաշրջանում հայկական տարրը

¹ Տե՛ս Պանթեոն Մեծաց : Հայ գրողների և հասարակական գործիչների Հավլաբարի Պանթեոնի պատմությունից / խմբ. Բ. Սեյրանյան, Օ. Օքրոյան, Թբիլիսի, 1996:

² Տե՛ս **Olan D.**, *Indian Murals and Sarkis Katchadorian*, N. Y., 1942.

դեռևս զգալի դեր էր խաղում ու պարբերաբար զինված բախումներ էին արձանագրվում տեղի թուրք-թաթարների ու հայերի միջև¹:

Լիբիկական արևային էներգիա կար Հակոբ Գյուրջյանի ներգործուն, հոյակապ աշխատանքներում, հատկապես՝ «Կինը» կիսանդրում: Ի տարբերություն հեղինակի ավելի վաղ շրջանում կերտած քանդակների՝ այս ընթացքում դիմագծերն արվում էին ավելի հստակ ու որոշակի, իսկ մեծ ընդհանրացումների ձգտումը դեռևս հազվագյուտ էր նշմարվում²:

«Արևապաշտական» նկրտումներ կային նաև Սերգեյ Մարի և Վանո Խոջաբեկյանի տաքարյուն կտավներում: Փաստացի՝ վերոնշյալ նկարիչներով էլ բոլորվում էր այն արվեստագետների շրջանակը, ովքեր արևը պատկերել էին իբրև այդպիսին, անվիճելիորեն իշխելու նրա գործությամբ լծված նորաթուխ հանրապետության ապագայի վառ ու արևոտ տեսլականով:

Հետագայում այդպիսի մի շարք այլ ցուցահանդեսներ ևս կազմակերպվել էին թե երկրի ներսում, թե դրա սահմաններից դուրս՝ և հատկապես Ռուսաստանում: Իրապես՝ այս շրջանի հայ նկարիչների ստեղծագործության գաղափարական բովանդակակությունը նպատակասլացություն տալու առումով ուղենշային ներգործություն էր ունեցել նաև գրականության, թատրոնի ու երաժշտության վերելքը³:

Ցավոք, վառ ապագայի հանդեպ հավատով տոգորված արվեստագետները մի փոքր հատվածն էին կազմում միայն հայ մտավորականության մեծ աստղաբույլի տիեզերքում: Գուցե և անկախ պետականություն չունենալու դարավոր հիշողությունն ու ազատատենչական մտածմունքի անհնարինությունն էր պատճառը, որ հայ արվեստագետների, և ոչ միայն, մեծամասնությունն ակամայից հույսը դրել էր ոչ թե իր ազգայինի, այլ ռուսական մշակույթի վերադարձի վրա, ինչը և չէր ուշացել ու իր մոայլ և սահմանափակ ճիրաններում խեղդել էր անկախական ու ազատասեր «արևապաշտներին»:

Այս խնդրի շրջանակներում նաև կարծես թե ներկայումս խզված է կապը Հայաստանի առաջին և երրորդ հանրապետությունների մշակութային փոխներգործության համատեքստում: Ու մեկ դար առաջ ճառագած այն արևը, որ կար այն ժամանակաշրջանի հայ նկարիչների ստեղծագործություններում՝ այժմ մթագնված է խորհրդային հիշողության գորշ երանգով:

Ու ժամանակակից հայ նկարիչների ստեղծագործությունները մի խառնուրդ դարձան անցյալի ու ներկայի միջև: Ձգտելով եվրոպային՝ այնուամենայնիվ հիմնականում դեռևս արևելքն է արտացոլված մեր հեղինակների կտավներում: Զուգահեռ այս ամենին՝ ակնառու է նաև, որ

¹ Մարդարյան Կ., Պատմություն և իրականություն, Ե., 1991, էջ 25–52:

² Գյուրջյան Հ., Ալբոմ, Ե., 1960, էջ 10:

³ Մարտիկյան Ե., Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք Գ, Ե., 1987, էջ 5:

խորհրդային մտածողության և հնամուտության որոշ շորշոփներ են ցցված մեր վարպետների աշխատանքներում, որոնք անպատեհ են 21-րդ դարի անկախական սերնդի համար: Հայ նկարիչներին «սպանող» ահա այս հնացումն առանձնապես վնասակար է երիտասարդ ստեղծագործողների շրջանում (թեև շատերը հիմա էլ ազատ են այդ արատից), որոնց մի մեծ գանգվածի դեռ ճնշում է խորհրդային սոցիալիզմի ուրվականը:

Նոր որոնումների լրջության և հավասարակշռության պատկանելի գաղափարը, որով օժտված են մեր վարպետները, իր արդյունավետ զարգացման համար պահանջում է ոչ միայն հանդուրժողական, այլև ուշադիր վերաբերմունք ապագայի նկատմամբ հետևյալ տեսլականով. «Միայն առաջ նայելով կարելի է պահպանել անցյալը»:

Гагик Аветисян, “Солнцепоклонные” художники первой республики Армения - Более сто лет назад в различных художественных галереях Кавказа и в Эриванском государственном музее в произведениях армянских художников в первую очередь царило впечатление яркого света, которое символизировало светлое будущее новой независимой армянской республики. В картинах "солнцепоклонников" доминировало солнце во всем его тепле. Мартирос Сарьян, Ваграм Гайфеджян, Оганес Тер-Тадевосян, Ерванд Кочар, Егише Тадевосян, Гито Шарбабчян, Саргис Хачатрян и еще некоторые талантливые мастера были одними из пионеров художников "солнцепоклонников".

К сожалению, в годы советской оккупации таких выставок стало меньше, а самым тревожным было то, что со времени восстановления независимости Армении в 1990-х годах стало ясно, что настоящие “солнцепоклонники” ушли в закат.

Gagik Avetisyan, Artists “Sun-Worshippers” of the first republic of Armenia - Almost a century ago, in the various major art galleries of the Caucasus and at Yerevan State Museum, various works of art by Armenian artists were first and foremost an impression of sun and light among an art-loving society that symbolized the bright future of the newly independent Republic of Armenia. Among the various exhibitions were the creators whose work was dominated by the sun in all its warmth. Amongst the pioneers of sun worshipers were Martiros Saryan, Vahram Gayfejian, Hovhannes Ter-Tadevosian, Yervand Kochar, Grigor Sharbabchyan, Yeghishe Tadevosyan, Sargis Khachatryan and many other gifted artists of that time.

Unfortunately during Soviet occupation art exhibitions of sun worshipers started to decline year by year and by end of century it was obvious that it would not gain its popularity again .

COAL INDUSTRY DEVELOPMENT POTENTIAL
IN THE REPUBLIC OF ARTSAKH IN THE CONTEXT
OF ENERGY INTEGRATION WITH ARMENIA¹

VAHE DAVTYAN

Keywords - Artsakh, Armenia, coal, energy, security, thermal power plant, transport, logistics.

Introduction

The problems of sovereignty and institution-building are directly related to the problems of economic security of Republic of Artsakh and especially of its components, such as energy and energy transport communications, the integrated development of which is an important condition for the full and safe functioning of the state. These are key sectors of the economy that are of undeniable importance both for domestic development and for the formation of the prerequisites for international integration. Moreover, the degree of state sovereignty directly affects the effectiveness of its involvement in the system of logistics communications, which is especially evident in export-import operations or in attracting foreign loans and investments for the development of these industries.

At the same time, the communication limitations of Artsakh are reflected in ensuring the economic security of the state, and therefore negatively affects the functioning of state institutions and the national security system. This makes the state more vulnerable, preventing the full development of internal infrastructures in accordance with international standards and, as a result, ensuring an adequate level of security during their operation. In general, it can be stated that the level of sovereignty and the availability of effectively operated and safe strategic infrastructures are in many ways interrelated phenomena, and their convergent development can positively affect the level of not only economic, but also national security of the state, increasing its sovereignty. This approach fits well with our thesis that recognition of Artsakh's sovereignty by the international community in many respects should be a consequence of the

¹ This work was supported by the RA MESCS Science Committee, in the frames of the research project № 19YR-5F001

republic's internal institutional and economic development. Thus, the possibilities of becoming Artsakh as an energy-self-sufficient state (which, considering rich hydropower resources of the republic, seems possible), as well as the prospects for developing energy transport communications with Armenia, can become a locomotive for ensuring the economic security of Artsakh and.

This approach fits well with the theory of *neo-functionalism*, which advocates the position that interstate relations should be restructured in such a way that “vertical” territorial isolation is replaced by effective “horizontal” structures, the administration of which will regulate interstate cooperation in specific, in particular, economic areas. As P.A. Tsygankov writes, “the international environment will undergo global changes, due to which soldiers and diplomats will give way to administrators and technicians, relations between offices will be direct contacts between technical administrations, and the protection of sovereignty will be a pragmatic solution to specific issues”¹. In general, in the framework of the theory of neo-functionalism, it is postulated that the benefits of cooperation in one area inevitably become a motivator for ensuring integration in other ones, including politics. This approach can serve as a conceptual basis for ensuring the institutional development of the Artsakh Republic through the permanent deepening of economic cooperation with Armenia in the field of energy and transport communications.

Coal Industry of the World

The world currently consumes over 4050 Mt of coal. Coal is used by a variety of sectors – including power generation, iron and steel production, cement manufacturing and as a liquid fuel. The majority of coal is either utilized in power generation – steam coal or lignite – or iron and steel production – coking coal. Over 4030 Mt of coal is currently produced – a 38% increase over the past 20 years. Coal production has grown fastest in Asia, while Europe has actually seen a decline in production².

Coal makes up the bulk (87.5%) of the forecast resources of the Earth's fossil fuel. World proven coal reserves amount to more than 900 billion tons. Moreover, compared to oil and natural gas, global coal reserves are characterized by a more even distribution across regions of the world (Table 1.)

Table 1³

¹ Теория международных отношений: Хрестоматия / Сост., науч. ред. и коммент. П.А. Цыганков. – М.: Гардарики, 2003. - С. 317.

² The Coal Resource: A Comprehensive Overview of Coal / World Coal Institute // https://www.worldcoal.org/file_validate.php?file=coal_resource_overview_of_coal_report%252803_06_2009%2529.pdf

³ BP Statistical Review of World Energy // <https://www.bp.com/en/global/corporate/energy-economics/statistical-review-of-world-energy.html>

Proven coal reserves in the world, %

Europe	6,1
CIS	25
North America	28
Central And South America	2,2
Middle East	0,5
Africa	5,6
Asia	24
Australia and Oceania	8,7
Total	100

It is estimated that with current levels of coal mining, it will last about 165 years. At the same time, the United States is provided separately for 200 years, China - for 70 years, the CIS - for 500 years. The scope of coal is more limited than oil. This type of fuel remains key in the steel industry (70% of world steel production depends on coal) and in the electric power industry¹. Coal plays a vital role in power generation and this role is set to continue. Coal currently fuels 39% of the world's electricity and this proportion is expected to remain at similar levels over the next 30 years².

The leaders in coal consumption are the countries of Asia (56%), followed by the countries of North America (20%), Western, Central and Eastern Europe and the CIS countries.

The largest coal exporters are Australia, Indonesia, Russia, South Africa, China, Colombia and the USA. Among the largest importers are Japan, South Korea, Taiwan, India and China.

Until 2025, it is expected that the share of coal in global primary energy consumption will decrease to 22% and replace it with a more environmentally friendly source of energy - natural gas. Moreover, the decrease is mainly due to the EU energy policy aimed at reducing the specific gravity of coal and nuclear energy. In the key coal-consuming countries - China and India China and India, an increase in coal consumption is noticeable. It is expected that in these countries, by 2025, coal consumption will increase to 3370 million tons³.

The coal mining and power generation industry becomes global. Whereas international sea-borne hard coal trade accounted for only 7.5 % of world hard

¹ Олейнов А.Г. Топливо-энергетический комплекс мира. – М.: НАВОНА, 2008. – С. 60.

² The Coal Resource: A Comprehensive Overview of Coal / World Coal Institute // https://www.worldcoal.org/file_validate.php?file=coal_resource_overview_of_coal_report%252803_06_2009%2529.pdf

³ Олейнов А.Г. Топливо-энергетический комплекс мира. – М.: НАВОНА, 2008. – С. 61.

coal production in 1970, by 2000 already 16 % of production was internationally traded. At 637 mill t in 2000, international coal shipments are expected to grow to 1051 mill t in 2030, corresponding to 15 % of world coal production¹.

This means that, despite the development of renewable energy observed in the world and an increase in the share of natural gas, coal will continue to be one of the key energy resources over the next two decades.

As International Energy Agency (IEA), stated “Concern about energy security, the threat of climate change and the need to meet growing energy demand (particularly in the developing world) all pose major challenges to energy decision-makers...a portfolio of existing and new technologies will be needed to address these challenges”. Thus, the commercialization and deployment of the next generation of clean coal technologies, particularly higher efficiencies and carbon capture and storage (CCS), will be central components of this developing portfolio and enhance steady progress toward the final goal of near-zero emissions².

Coal Industry Potential of Artsakh

The average annual solar equivalent energy of Artsakh is 1.6 trillion kWh, 99.7% of this energy is consumed by flora and fauna, it reflects and heats the airspace. Taking into account the remaining 0.3% of solar energy, the average annual total alternative energy of Artsakh for possible development is 7.02 billion kWh. Of these, 68% - the sun, 22% - wind, 8% - hydropower, 2% - geothermal energy³.

Existing coal processing technologies are solid-phase and liquid-phase complete and incomplete combustion, underground and pyrolysis gasification, combustion of a water-coal mixture and ultrafine coal, and plasma processing. Of the above processes, the most acceptable for Magavuz conditions is liquid-bearing complete combustion of a crushed mixture of two coal grades in a melt reactor. At the same time, enrichment of the fine grinding of the mixture is not required, which excludes the construction of an enrichment and grinding factory and the generation of waste. In barbitol conditions, high speed and complete combustion of coal in the melt are ensured. Dust formation and ablation are absent. Associated valuable components and sublimates accumulated in the melt are used. The technology is virtually waste-free. So, burning 1.5 million

¹ **Brendow K.** World Coal Perspectives to 2030 / World Energy Council , Geneva/London // https://www.worldenergy.org/assets/downloads/PUB_Sustainable_Global_Energy_Development_The_Case_for_Coal_2004_Exec_summary_WEC.pdf

² The Global Value of Coal / International Energy Agency, Working Paper, 2012 // <https://www.oecd-ilibrary.org/docserver/5k9gshqcdshl-en.pdf?expires=1590130184&Id=id&accname=guest&checksum=CBBF3F57B6714A535315B3B44CDB1A2E>

³ **Grigoryan G.** Coal of Magavuz - cheap energy source of Artsakh (Karabakh) // <http://yerkramas.org/article/55810/ugol-magavuz---deshevyj-energoistchnik-arcaxa-karabaxa>

tons per year of the Magavuz coal mixture in a 1000 MW reactor with a melt can produce 6.1 billion kWh of electric and 9.4 trillion kJ of thermal energy, 0.6 million tons of highly profitable by-products with a total worth 300 billion drams, of which 62% is the cost of electricity, 30% is thermal energy and 8% is associated products. In addition, valuable metals with a total value of 190 billion drams are also recovered. Artsakh acquires 3300 jobs with an average monthly salary of 200 thousand drams¹.

As a result of the application of new technologies, in 2019, it was possible to obtain synthetic petroleum products from coal obtained as a result of the development of the Artsakh deposit Magavuz. The volumes obtained correspond to scientifically established standards. In particular, 50% of diesel fuel, 30% of gasoline and 20% of bitumen were obtained from the mass of about 12%. In the case of the development of the second stage of the mine, which will take 3-4 months, it will be possible to clearly determine the reserves of Magavuz coal, since this is probably more than the results of the Soviet period - 4 million tons. Note that the production of synthetic oil from coal has recently become widespread. Not so long ago, the production of synthetic oil from a mixture of 50% coal with high-pressure water with cavitation mechanical and electromagnetic treatment was successfully tested in Krasnoyarsk. In this case, instead of clean water, waste and oiled water can be used. The technology allows for the complete processing of coal (both brown and stone) including the production of a water-coal suspension with its further processing into synthetic oil. The use of it, as heating oil, does not require significant modernization of the boiler. This technology is also used for the extraction of non-ferrous metals from dumps of enterprises. The equipment does not have rotating, rubbing, or impact mechanical parts, as a result of which there is no abrasive wear of grinding equipment. At the exit, we get fuel with a dispersion of 1-5 microns (a drop of fuel oil when sprayed with a nozzle has 5-10 microns) in its characteristics close to oil².

Possibilities of Coal Import from Artsakh to Armenia

An important attempt to diversify the energy system of Armenia was the initiative of the Government of the Republic of Armenia to import thermal coal from the Republic of Artsakh as fuel for the third largest installed energy facility in the country - Yerevan Thermal Power Plant (TPP). In 2011-2012, in Armenia, prices for Russian natural gas were expected to increase from 180 to 189 US dollars per 1000 cubic meters. Before that, in 2008, the gas price for the Armenian market was 154 US dollars. Considering the economic risks generated in

¹ Ibid.

² It was possible to get synthetic oil products from coal obtained as a result of the development of the Karabakh deposit Magavuz // https://finport.am/full_news.php?id=38128&lang=2

the country's heat and power industry in the context of increasing natural gas tariffs, diversification of the industry through the supply of coal from Artsakh became a priority.

With modern technology, the production of electricity using water-carbon fuel is important for the economy, as its efficiency is higher than traditional coal combustion technologies. The old capacities of Yerevan TPP are not used due to low efficiency and high cost of electricity production. The application of new technologies for working with water and coal will allow continuing to use the production capacities of Artsakh with high efficiency.

According to the program aimed at the exploration of mineral resources approved in 2013 by the Government of the Artsakh Republic, it was planned to form the so-called geological fund, as well as the cadaster of mineral deposits¹.

Geological studies show that there are some types of solid fuel minerals and, in particular, coal in Artsakh. The reserves of the latter are estimated at 15 million tons (Magavuz group of deposits, Martakert region). Exploration is also carried out in the villages of Nareshat and Kolatak. As for liquid and gaseous fuels, a subsoil study is currently underway in the Martakert-Martuni-Gadrut region, as well as in the Hadrut-Kashatakh region². It was planned that both units of the Yerevan TPP will be operated on Magavuz coal, burning up to 2 thousand tons of coal daily. It was expected that the TPP found in the deposits would last for 5.5 years.

The main activity of the "Hasa Group" company established for the implementation of the project was the research and exploration of the mine in the village of Magavuz, Martakert region of Artsakh. As a result of it the company had to produce and process coal and sell recycled coal. The company planned to sell the recycled coal to Yerevan TPP, the necessary infrastructure works were carried out in the leased area of the power plant³.

To support the project, in February 2012, the Armenian government ordered to exempt "Ghana-Trans" transport company from value-added tax (VAT). In turn, the company committed to purchase 40 trucks with the purpose of supply of coal from Artsakh to the railway station Vardenis in Armenia. In October 2012, the first batch of Artsakh coal (26 railcars by 60 m) was delivered to the Yerevan TPP. It was assumed that by the end of 2012, up to 700 thousand

¹ NKR Government Program on Subsoil Research Activities in 2013 // <http://mnp.nkr.am/images/tsragrer/ynd.pdf>

² Ministry of Nature Protection and Minerals: Certificate of Minerals in the NKR // http://mnp.nkr.am/index.php?option=com_content&view=article&id=120&Itemid=120

³ "Հասա Գրուպ" ՍՊԸ համախմբված ֆինանսական հաշվետվություններ 2013 թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար // <file:///C:/Users/User/Downloads/32988.pdf>

tons of coal would be delivered to TPPs, and in 2013, this figure would reach 1.5 million tons. However, very soon this project, aimed, on the one hand, to diversify the Armenian heat power industry, on the other, to support the unrecognized Artsakh, was suspended. The conservation of the project was associated with two factors:

1. At the Yerevan TPP, electricity was never produced by using coal, and the water-coal technology for the station was new.

2. After the decision of the Armenian government to start the project, a stormy reaction of a number of civic institutions followed: they claimed that the use of coal at TPPs would double the carbon dioxide emissions into the atmosphere.

Both the first and second factors certainly influenced the conservation of the project. However, considering the issue in a geopolitical context, it should be noted that it was during the period when the Armenian authorities made a choice in favor of Eurasian integration, and in 2013 officially announced this. Armenia's membership in the EAEU has significantly reduced natural gas price for the Armenian market - from 189 to 150 US dollars¹.

Along with this, it is important to state that this membership opens up additional opportunities for Artsakh, as it allows to intensify trade and attract investors. Over the past three years, exports to Russia from Armenia, consisting mainly of agricultural products and the food industry, grew by 87%. The trade turnover between the two countries grew by more than 10%², which, of course, was ensured, among other things, due to the trading activity of Artsakh. As the Armenian economist T. Manaseryan writes, in the process of Eurasian integration "... the issue of Nagorno-Karabakh, which is de facto part of Armenia, is important, and with the latter's entry into the union, it will actually enter a new, huge market. It would be desirable that Nagorno-Karabakh also join the EAEU as an independent entity, which will also positively affect the resolution of the conflict with Azerbaijan, especially if the latter also joins this economic integration³.

Transport and Logistics Problems of Coal Supplies from Artsakh to Armenia

Despite the fact that the mentioned project was not implemented, Artsakh thermal coal should be considered as a potential and strategically important area of diversification of the energy system of Armenia. Of course, proper use of this potential requires appropriate transport infrastructures. Cur-

¹ The Republic of Armenia in the Eurasian Economic Union: First Results // http://www.eurasiancommission.org/ru/Documents/Armenia_eng.pdf

² Eurasian economic commission's official web-site // www.eurasiancommission.org

³ Манасерян Т. Присоединение Армении к ЕВРАЗЭС: мифы и реалии // http://www.soyuzinfo.am/rus/analytics/detail.php?ELEMENT_ID=216

rently, there is no railway connection between the Republic of Artsakh and Armenia, therefore, if necessary, coal should be delivered by road to the railway station of Vardenis in northern Armenia and from there by rail to the Yerevan TPP. For a long time, the road connecting Armenia with Artsakh (Vardenis-Martakert) was in poor condition, and the main road, connecting the two Armenian republics, passed through the Lachin corridor.

The level of its transport security, condition, density and configuration of the road network are important indicators of the socio-economic development of the territory. The only railway - Agdam-Stepanakert, operating in Nagorno-Karabakh during the Soviet period, having a length of 18 km, had a small share in the total volume of freight traffic. The main mode of transport was automobile. The main roads crossing the territory of Nagorno-Karabakh were Yevlakh-Lachin and Yevlakh-Kelbajar. They had Union-republican significance and were kept in a satisfactory condition. Local roads were in extremely poor condition: many villages did not have direct transport links with regional centers. The transport connection of Nagorno-Karabakh with the Armenia was artificially hampered, although they were separated by a 7 km wide corridor. In the extremely poor condition of this section of the road, motor vehicles from Nagorno-Karabakh to the Armenia and back were forced to drive hundreds of kilometers through the territory of the Azerbaijan SSR through Kazakh-Kirovabad-Yevlakh-Agdam¹.

As a result, Nagorno-Karabakh had extremely weak economic ties with other republics of the USSR and, especially, with the Armenian SSR. According to the Azerbaijani press, the share of turnover with the Georgia and Armenia in economic relations of Nagorno-Karabakh was only 2%. Armenia accounted for only 0.3% of the total cost of export from the region and 1.4% of import to the region. As was noted at a meeting of the Presidium of the Supreme Soviet of the USSR, the relations of Nagorno-Karabakh, even with the regions of Azerbaijan, are deformed and have no mutually beneficial character².

Thus, Karabakh Armenians could not fully use the existing transport infrastructure, especially with the aim of developing trade relations with Armenia. In particular, in order to transport goods or passengers from Nagorno-Karabakh to Armenia, instead of 10-15 km, it was necessary to travel more than 400-kilometer road running through the territory of Azerbaijan. Thus, the Lachin section of the road has not been repaired for years, while for the Arme-

¹ **Валесян Л.А., Мурадян Ю.А.** О некоторых итогах и проблемах экономического развития Нагорного Карабаха // Вестник общественных наук АН Армянской ССР // file:///C:/Users/Usset/Desktop/1989-5%25283%2529.pdf

² Ibid.

nians of Nagorno-Karabakh this road had both economic and moral-psychological significance.

Recognizing the strategic, political and economic importance of the Lachin corridor, after its liberation, Armenia implemented a policy of its early reconstruction and restoration of historical land communications between the two Armenian states. With the liberation of the Lachin corridor, the blockade of Karabakh was broken and a corridor to Armenia was formed, which opened up opportunities for military and humanitarian assistance. In October 1992, Azerbaijan launched a military operation to regain control of the corridor, which ended in complete failure¹.

Before the liberation of the Lachin region, Nagorno-Karabakh was in the condition of a severe economic blockade. The electricity and gas supply was cut off. The only and very dangerous way of transporting the necessary food products, medicines, etc. to Karabakh were air transportation using multipurpose Mi-8 helicopters and Yak-40 and AN-2 passenger aircraft adapted for cargo transportation.

The escalation of the Karabakh conflict in April 2016 emphasized the need to modernize the second road connecting the two Armenian states. As a result of the implementation of the decision of the Government of the Republic of Armenia adopted the day after the verbal agreement on a ceasefire with Azerbaijan, \$2 million was allocated for the repair of the Vardenis-Martakert road. Already in August 2017, the road was put into operation, which allowed to reduce the route from Armenia to Artsakh by more than 20 km. Due to the fact that the construction of the road was associated with the already ongoing program for the restoration of the Martuni-Vardenis-Sotk highway in Armenia within the framework of World Bank loans, the commissioning of the infrastructure became an important step in improving transport security not only in Artsakh, but also in Armenia².

CONCLUSIONS

The possibilities of becoming Artsakh as an energy-self-sufficient state, as well as the prospects for developing energy transportation communications with Armenia, can become a locomotive for ensuring the economic security of Artsakh and, therefore, form the necessary preconditions or its security and institutional development.

¹ **Жирохов М. А.** Семена распада: войны и конфликты на территории бывшего СССР. – СПб.: БХВ-Петербург, 2012. – С. 269.

² **Давтян В. С., Арутюнян А.Р., Самвелян Л.Э.** Внешнеторговые проблемы НКР в условиях транспортной блокады // 21-й век: Информационно-аналитический журнал. – Ереван, 2017. – 3 (44). – С. 80-91.

1. The conservation of the project of coal import to the Yerevan TPP was associated with two factors: a) at the Yerevan TPP, electricity was never produced by using coal, and the water-coal technology for the station was new; b) after the decision of the Armenian government to start the project, a stormy reaction of a number of civic institutions followed: they claimed that the use of coal at TPPs would double the carbon dioxide emissions into the atmosphere. Both the first and second factors certainly influenced the conservation of the project. However, considering the issue in a geopolitical context, it should be noted that it was during the period when the Armenian authorities made a choice in favor of Eurasian integration, and in 2013 officially announced this. Armenia's membership in the EAEU has significantly reduced natural gas price for the Armenian market - from 189 to 150 US dollars.

2. The diversification of the energy system of Armenia should also be considered in the context of building up the energy potential of the Republic of Artsakh. In the Republic of Artsakh, an excess of electricity is forecasted, which, in turn, can be considered as a potential export destination. If in the Soviet years the development of the energy transport infrastructure of Artsakh was blocked by the Azerbaijan SSR, today export problems are primarily associated with the status of Artsakh as an unrecognized state engaged in foreign trade through legal entities registered in Armenia. On the other hand, it is also necessary to take into account the availability of thermal coal reserves in Artsakh that can be resumed in the future when developing a new model for the development of Armenian-Artsakh "collective energy security".

REFERENCES

1. Теория международных отношений: Хрестоматия / Сост., науч. ред. и коммент. П.А. Цыганков. – М.: Гардарики, 2003. – 400 с.
2. The Coal Resource: A Comprehensive Overview of Coal / World Coal Institute // https://www.worldcoal.org/file_validate.php?file=coal_resource_overview_of_coal_report%252803_06_2009%2529.pdf
3. BP Statistical Review of World Energy // <https://www.bp.com/en/global/corporate/energy-economics/statistical-review-of-world-energy.html>
4. **Олейнов А.Г.** Топливо-энергетический комплекс мира. – М.: НАВОНА, 2008. – 472 с.
5. The Coal Resource: A Comprehensive Overview of Coal / World Coal Institute // https://www.worldcoal.org/file_validate.php?file=coal_resource_overview_of_coal_report%252803_06_2009%2529.pdf
6. **Brendow K.** World Coal Perspectives to 2030 / World Energy Council, Geneva/London // https://www.worldenergy.org/assets/downloads/PUB_Sustai

nable_Global_Energy_Development_The_Case_for_Coal_2004_Exec_summary_WEC.pdf

7. The Global Value of Coal/International Energy Agency, Working Paper, 2012 // [https://www.oecd-ilibrary.org/docserver/5k9gshqcdshl-en .pdf?expires=1590130184&id=id&accname=guest&checksum=CBBF3F57B6714A535315B3B44CDB1A2E](https://www.oecd-ilibrary.org/docserver/5k9gshqcdshl-en.pdf?expires=1590130184&id=id&accname=guest&checksum=CBBF3F57B6714A535315B3B44CDB1A2E)

8. **Grigoryan G.** Coal of Magavuz - cheap energy source of Artsakh (Karabakh) // <http://yerkramas.org/article/55810/ugol-magavuz---deshevyj-energoistochnik-arcaxa-karabaxa>

9. It was possible to get synthetic oil products from coal obtained as a result of the development of the Karabakh deposit Magavuz // https://finport.am/full_news.php?id=38128&lang=2

10. NKR Government Program on Subsoil Research Activities in 2013 // <http://mnp.nkr.am/images/tsragrer/ynd.pdf>

11. Ministry of Nature Protection and Minerals: Certificate of Minerals in the NKR // http://mnp.nkr.am/index.php?option=com_content&view=article&id=120&Itemid=120

12. “Հասա Գրուպ” ՍՊԸ համախմբված ֆինանսական հաշվետվություններ 2013 թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար // <file:///C:/Users/User/Downloads/32988.pdf>

13. The Republic of Armenia in the Eurasian Economic Union: First Results // http://www.eurasiancommission.org/ru/Documents/Armenia_eng.pdf

14. Eurasian economic commission's official web-site // www.eurasiancommission.org

15. **Манасерян Т.** Присоединение Армении к ЕВРАЗЭС: миф и реалии // http://www.soyuzinfo.am/rus/analitics/detail.php?ELEMENT_ID=216

16. **Валесян Л.А., Мурадян Ю.А.** О некоторых итогах и проблемах экономического развития Нагорного Карабаха // Вестник общественных наук АН Армянской ССР // <file:///C:/Users/uset/Desktop/1989-5%25283%2529.pdf>

17. **Жирохов М. А.** Семена распада: войны и конфликты на территории бывшего СССР. – СПб.: БХВ-Петербург, 2012. – 688 с.

18. **Давтян В.С., Арутюнян А.Р., Самвелян Л.Э.** Внешнеторговые проблемы НКР в условиях транспортной блокады // 21-й век: Информационно-аналитический журнал. - Ереван, 2017. – 3 (44). - С. 80-91.

Վահե Դավթյան, Արցախում ածխի արդյունաբերության զարգացման ներուժը Հայաստանի հետ էներգետիկ ինտեգրման համատեքստում - Ներկայացվել են Արցախի Հանրապետության էներգետիկ եւ էներգատ-

րանսպորտային զարգացման հայեցակարգային հիմքերը Հայաստանի Հանրապետության հետ տնտեսական համագործակցության շարունակական խորացման միջոցով: Որպես այդ մոտեցման հիմնավորման համար հիմք է ընտրվել նեոֆունկցիոնալիզմի տեսությունը: Դիտարկվել են Արցախի Հանրապետությունից Հայաստան էներգետիկ ածխի ներկրման հիմնական խնդիրները: Բացահայտվել են ներկրման իրականացման հիմնական տնտեսական և քաղաքական նախադրյալները: Ներկայացվել են 2013 թ. Երևանի ՋԷԿ իրականացված Արցախի ածխի մատակարարման նախագծի կասեցման հիմնական պատճառները: Վերլուծվել են մի շարք բնապահպանական կազմակերպությունների հայտարարությունները, համաձայն որոնց ՋԷԿ-ում ածուխի օգտագործումը կկրկնապատկի ածխաթթու զազի արտանետումները: Ուսումնասիրվել են արցախյան ածուխի մատակարարման հիմնական տրանսպորտային և լոգիստիկ խնդիրները:

Vage Davtyan, Потенциал развития угольной промышленности в республике Арцах в контексте энергетической интеграции с Арменией - Представлены концептуальные основы энергетического и энерготранспортного развития Республики Арцах посредством перманентного развития экономического сотрудничества с Республикой Армения. В качестве теоретической основы для обоснования данного подхода выбрана теория неофункционализма. Рассмотрены основные проблемы поставок энергетического угля из Республики Арцах в Армению. Выявлены основные экономические и политические предпосылки для реализации поставок. Определены ключевые факторы, помешавшие осуществлению поставок арцахского угля на Ереванскую ТЭС в 2013 г. Выявлено, что после решения правительства Армении приступить к реализации проекта последовала бурная реакция ряда гражданских институтов, утверждавших, что использование угля на ТЭС приведет к удвоению выбросов углекислого газа в атмосферу. Проанализированы основные транспортно-логистические проблемы осуществления поставок.

**ԻՆՉՈՒ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՀԱՅԿԱԿԱՆ
ՈՉ ԲՈՆԻ, ԹԱՎՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ**

ՀԱՍՄԻԿ ՇԱՓԱՂԱԹՅԱՆ

Բանալի բառեր - թավշյա հեղափոխություն, հեղաշրջում, քաղաքացիական շարժում, անհնազանդության փորձ, բանակցային գործընթաց, կառավարման համակարգի պարալիզացիա, համակարգային փոփոխություն:

Ի՞նչ է հեղափոխությունը.

Մինչ Հայկական Թավշյա հեղափոխության շարժառիթները վեր հանելը, հարկ եմ համարում անդրադարձ կատարել հեղափոխության գիտական մոտեցումներին, հատկապես, եթե հաշվի առնենք, որ ներկայումս հայաստանյան քաղաքական մտքում և պրակտիկայում բավական բուռն ընթանում են բանավեճեր կապած այն բանի հետ, թե արդյոք հեղափոխություն էր կատարվածը, թե ո՛չ:

Քաղաքագիտական տարբեր բառարաններում հեղափոխությունը բնութագրվում է որպես հասարակության մեջ տեղի ունեցող հիմնաքարային փոփոխություն, այսինքն հասարակական կյանքի արմատական և որակական փոփոխություն: Այլ կերպ, մեծ հաշվով հեղափոխությունը կարելի է համարել ավարտված, եթե արդյունքում տեղի է ունեցել հասարակարգի փոփոխություն: Ըստ Ս.Հանտինգտոնի, հեղափոխությունը նախկին ավանդական հասարակության վերափոխման և արդիականացման հիմնավոր ճանապարհներից մեկն է¹:

Հեղափոխություն եզրույթի պարզաբանման համատեքստում էականորեն նկատելի են քաղաքական ավանդական և ժամանակակից տեսությունների միջև գաղափարաբանական լուրջ տարաձայնություններ: Պարզաբանելու համար բավական է ուղղակի նշել, որ ավանդական մոտեցման համաձայն, ընդհանրական ձևով, հեղափոխությունը ժողովրդական շարժման առաջնորդների կողմից պետական իշխանության բռնազավթումն է: Այստեղ հավասարության նշան է դրվում հեղափոխության և հեղաշրջման, հեղափոխության և իշխանության բռնի զավթման միջև, ինչն, ըստ իս, հնացած մոտեցում է: Իսկ ժամանակակից տեսությունների համաձայն, հեղափոխություն են համարում լայնածավալ և խորքային որակական փոփոխությունները, որոնց իրականացման արդյունքում հիմնովին փոխվում են մարդկանց ապրելակերպը և նախկին համակարգը: Ժամանակակից տեսությունների պարագայում հեղափոխությունն ընկալ-

¹ Տե՛ս **Хантингтон С.**, «Политический порядок в меняющихся обществах», Москва, Прогресс, Традиция, 2004, с. 269.

վում է ժողովրդավարական անցման տրամաբանությամբ, ինչը բնական է, քանի որ այսօր ապրում ենք մի ժամանակաշրջան, երբ ժողովրդավարությունն այլևս դարձել է հրամայական և կենսակերպ:

Անցումային գործընթացների հիմնահարցը քաղաքական գիտության մեջ նոր երևույթ չէ: Նրանց հետազոտման սկիզբը ժամանակակից քաղաքագիտության մեջ դրել է Դ.Ռաստոուն: 1970 թ. "Comparative politics" ամսագրում լույս տեսած նրա հոդվածի կենտրոնական հիմնահարցը կայանում էր հետևյալում. "Ինչպե՞ս են երկրները մի հասարակարգից անցնում այլ հասարակարգի, և ինչու՞ որոշ ազատական ժողովրդավարներ տարանջատվում են, իսկ մյուսները շարունակում են իրենց կայուն գոյությունը": Ռաստոուն մերժեց այդ ժամանակ գոյություն ունեցող և իշխող մոտեցումները, որոնք բացատրում էին սոցիալ-տնտեսական զարգացման հետևանքով առաջացած անցումների պատճառները քաղաքական կուլտուրայի առանձնահատկություններով կամ հասարակության սոցիալական և քաղաքական կառուցվածքի միջոցով: Ըստ Ռաստոուի, այդ տեսությունները պատասխանում են այն հարցին, թե ինչու՞ որոշ երկրներ հանդիսանում են ազատական ժողովրդավարական, իսկ մյուսները՝ ոչ, բայց չեն պատասխանում այն հարցին, թե ինչու՞ ընդհանրապես երկրները դառնում կամ չեն դառնում ազատական ժողովրդավարական: Ռաստոուն ժխտում է, այսպես կոչված, ֆունկցիոնալ մոտեցումը, որը ենթադրում է քաղաքական համակարգերի գործունեության մեխանիզմի ընդօրինակում՝ առաջարկելով մի մոտեցում, որն անվանվել է "գենետիկ": Այդ մոտեցումը բացահայտում է այն գործոնները, որոնք ազդում են ժողովրդավարությանն անցման վրա: Որպես անհրաժեշտ նախնական պայմաններ, նա առանձնացնում է ազգային միասնությունը և ազգային նույնականությունը:

Ժողովրդավարությանն անցումը, ըստ Ռաստոուի, ներառում է 3 փուլ.

ա) նախապատրաստական փուլ, որի տարբերիչ գիծը հանդիսանում է ոչ թե պլուրալիզմը, այլ քաղաքական շահերի բևեռացումը

բ) որոշումների ընդունման փուլ, որի ժամանակ կնքվում են պայմանագրեր, մշակվում ու գիտակցաբար ընդունվում են ժողովրդավարական կանոններ

գ) ադապտացիայի փուլ, երբ տեղի է ունենում ժողովրդավարական արժեքների, ինչպես նաև քաղաքական ընթացակարգերի և ինստիտուտների ամրապնդում:

Լիովին համամիտ լինելով Ռաստոուի տեսակետի հետ՝ կարծում եմ, որ Հայաստանում 2018թ.-ին տեղի ունեցած լայնամասշտաբ խաղաղ գործողություններն ամբողջովին արտացոլում են հեղափոխության պատկերը՝ միտված ժողովրդավարական անցմանը: Ասել կուզեմ, որ վերը նշված առաջին երկու փուլերը՝ քաղաքական շահերի բևեռացման և քա-

ղաքական որոշումների ընդունման փուլերը, հիմնականում հաղթահարված են, իսկ ներկա ժամանակաշրջանը կարելի է բնութագրել որպես ադապտացիայի փուլ, որի ընթացքում քաղաքական օրակարգ են զալիս նորանոր ընթացակարգեր, որոնք տարաբնույթ օրենսդրական և ենթօրենսդրական ակտերով ամրապնդում են քաղաքական ինստիտուտները:

Անցումային մոդելներից շատերն ունեն էլիտար բնույթ, և դրանց հեղինակները ելնում են նրանից, որ ժողովրդավարացման հիմնական դերակատարները հանդիսանում են ամենից առաջ ընտրախավերը, և անցման հաջողությունը կամ անհաջողությունը կախված է առաջնորդության բնույթից, ուժերի դասավորությունից և ընտրախավի քայլերից¹:

Հեղափոխություններ գոյություն են ունեցել մարդկության պատմության ընթացքում բազմաթիվ անգամներ, որոնք հիմնականում տարբերվել են մեթոդներով, տևողությամբ, արդյունքներով և այլ առանձնահատկություններով: Ընդունված է ասել, որ հեղափոխության իրականացման ներքին նախադրյալները հիմնականում երկուսն են.

1. հասարակության մեջ առկա խնդիրներ և դրանց լուծման միտումների բացակայություն

2. կոնկրետ ոլորտներում արդյունավետ օրենքների և կանոնակարգերի բացակայություն

Վերը նշված գործոնների հետևանքով հեռացվում է իշխող վարչակազմը, չեղարկվում են գործող պետական ինստիտուտները, գործող օրենսդրությունը, օրենքներն ու ենթօրենսդրական ակտերը: Ստեղծվում են հեղափոխական մարմիններ, որոնք ապահովում են հասարակական հարաբերությունների կոնկրետ ոլորտների կենսագործունեությունը և ընդունում են կառավարման անհրաժեշտ որոշումներ: Մշակվում և ընդունվում է նոր սահմանադրություն, ձևավորվում են պետական կառավարման նոր մարմիններ:

Այնուամենայնիվ, հանուն ճշմարտության պետք է ասել, որ հեղափոխություններ տեղի են ունենում ոչ բոլոր երկրներում, քանի որ բոլոր հասարակությունները չէ, որ պատրաստ են դիմել ծայրահեղ քայլերի և փոխել իշխող վարչակազմը:

Ուստի հեղափոխությունը պիտի դառնա այն քաղաքական հենասյունը, որին պիտի ամուր հենվեն ժողովրդավարությունը և քաղաքացու անխափան իրացվող ազատություններն ու իրավունքները:

Հայկական թավջա հեղափոխություն: Ինչու և ինչպե՞ս.

Մինչ ինչու և ինչպե՞ս հարցերին անդրադառնալը, մի փոքր պատմական ակնարկ.

¹ Տես **Շափազարյան Հ. Ն.**, քաղաքական մասնակցության արդի հիմնախնդիրները, Ե., 2007, էջ 64:

Եվ այսպես, անհերքելի փաստ է, որ 1996 թվականից սկսած՝ Հայաստանում իշխանությունն ընտրությունների ճանապարհով չի փոխվել, եղել են հեղաշրջումներ, նույն թիմի անձերի վերադասավորումներ, բայց ոչ երբեք համակարգային փոփոխություն կամ փոփոխություն ընտրությունների ճանապարհով: Իշխանությունը միշտ <<հաղթել է>> բոլոր ընտրություններում, որոնք տեղի են ունեցել համատարած խախտումներով, այդ թվում՝ լցոնումներ, կրկնաքվեարկություններ, բռնություններ, ընտրակաշառքների համատարած բաժանում և այլն: Արդյունքում, հայաստանյան ընդդիմությունը միշտ հայտնվել է լուսանցքից այն կողմ՝ չընդունելով ընտրությունների և հանրաքվեների արդյունքները:

2008 թվականին տեղի ունեցած նախագահական ընտրություններն այս կեղծարարությունների մասշտաբով աննախադեպ էին: Հենց դրանց արդյունքում վարչապետ Սերժ Սարգսյանը դարձավ ՀՀ նախագահ: Արդյունքում ընտրություններին հաջորդեցին Հայաստանի համար աննախադեպ մարդաշատ ցույցեր և խաղաղ անհնազանդության փորձեր, որոնք ճնշվում էին ոստիկանության ուժերի կողմից՝ կիրառելով անհամաչափ ուժ: Այդ ամենն ի վերջո ավարտվեց 2008 թվականի ոստիկանության (ավելի ճիշտ՝ բանակի ու օլիգարխիական խմբավորումների) և ցուցարարների միջև մարտիմեկյան բախումներով, որոնց արդյունքում եղան մեկ տասնյակի հասնող զոհեր և հարյուրից ավելի վիրավորներ, ըստ պաշտոնական աղբյուրների:

2013 թվականի սեպտեմբերի 4-ին Սերժ Սարգսյանը հրամանագիր ստորագրեց ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով ստեղծելու մասին: 2014 թվականի ապրիլի 10-ին Սերժ Սարգսյանին ներկայացվեց սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագիծը, որով երկիրը պետք է անցում կատարի կառավարման խորհրդարանական ձևին, որի պայմաններում պետության ղեկավարը կլինի ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների կողմից ընտրված վարչապետը: Նույն օրը Սերժ Սարգսյանը պաշտոնապես հայտարարեց, որ այլևս չի առաջադրվի ՀՀ նախագահի կամ վարչապետի պաշտոնում: Նա մասնավորապես ասել է՝ «Ես ձեր առաջ, քննարկումների փուլն սկսելուց առաջ, պաշտոնապես հայտարարում եմ, որ ես՝ Սերժ Սարգսյանս, այլևս երբեք չեմ առաջադրվելու Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնի համար: Եթե վերջնական քննարկումների արդյունքում իմ ցանկությանը չհամապատասխանող ուղի ընտրվի, նկատի ունեմ պառլամենտական կառավարման մոդելը, ապա ես չեմ հավակնի նաև վարչապետի պաշտոնին: Վստահ եմ անգամ, որ մեկ մարդը

երկու անգամից ավել իր կյանքում չպետք է հավակնի ընդհանրապես երկրի կառավարման դեկին Հայաստանում»:¹

Այս հայտարարությունը եվ դրանից հետո դրան տրամաբանորեն հակառակ գործողությունները իրականության մեջ կերտեցին մի <<նոր Հայաստան>>, ուր արմատավորվեց տնտեսական բրգաձև կոռուպցիան՝ դառնալով պետական կյանքի առանցքային բաղադրիչը: Ներքաղաքական հարաբերություններում առանձնակի բացասական նշանակություն ունեցավ ընտրական գործընթացի անդառնալի խեղաթուրումը՝ արդյունքում ընտրական կոռուպցիան դարձնելով հանրայնորեն ընդունելի երևույթ: Բազմաթիվ քաղաքական գործիչներ դատապարտվեցին քրեական շինծու մեղադրանքներով: Ներքին խաղերը, <<կոշտ>> օրենքներն ու գաղտնի պայմանավորվածությունները քաղաքական ոլորտը վեր էին ածել մասնավոր ոլորտի:

Բնական է որ այդ հայտարարությունը հասարակության մեծ մասի կողմից խիստ բացասական ընդունվեց: Բանն այն է, որ իր կառավարման 10 տարիների ընթացքում երկրում խեղաթուրվել էին քաղաքական գործընթացները և ապաքաղաքականացվել, որոնց հետևանքով ընտրություններից մինչև նշանակումներ լուծվում էին ոչ թե քաղաքական, այլ տնտեսական, մշակութային, երբեմն էլ՝ անձնական դաշտում: Անգամ քաղաքական պահանջներ ու խնդիրներ դնող շարժումներն ինքնահեռացվել էին քաղաքականից:

Մյուս խնդիրն այն էր, որ մարտի 1-ի պայքարի պարտությունից և մի քանի անցումային ընդդիմադիր գործիչների անհաջող շարժումներից հետո հասարակությունը գտնվում էր խոր քաղաքական ապատիայի մեջ և բացարձակապես չէր հավատում սեփական ուժերին ու որևէ բան փոխելու հնարավորությանը: Նշվածի մեջ թերևս միակ բացառությունը երիտասարդական քաղաքացիական շարժումներն էին, որոնք իրենց առջև դնում էին խիստ նեղ, հաճախ կենցաղային խնդիրներ և չէին վերածվում քաղաքական գործընթացների:

Քաղաքագիտական դասական ճշմարտություն է, որ ռեալ լեգիտիմություն չունեցող համակարգը իրականությունից կտրվում է և դառնում ժամանակավրեպ: Այս պայմաններում մարդիկ երկար տարիներ վախեցել են պաշտպանել իրենց քաղաքական և քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները, ինչ-որ քայլեր անել, որովհետև, որպես կանոն, այդ քայլերը կհանգեցնեին շատերի համար տխուր հետևանքների, այդ թվում՝ զոհերի (2008 թվականի մարտի իրադարձությունների ժամանակ): Վերջին տարիներին մարդիկ սպասում էին բարեփոխումների, ի-

¹ [https://hy.wikipedia.org/wiki/Թավշյա_հեղափոխություն_\(Հայաստան\)/08.04.2018](https://hy.wikipedia.org/wiki/Թավշյա_հեղափոխություն_(Հայաստան)/08.04.2018)

րենց զգում էին անտեսված և անգործ՝ ինչ-որ բան փոխելու իրենց կյանքում. որն էլ ամենավտանգավորն էր:

Ահա այս բազմաթիվ խնդիրներն ու պրոբլեմները տարիների ընթացքում հավաքվել ու խտացել էին՝ սպասելով հարմար առիթի՝ ժայթքելու: Մարդիկ սպասում էին բարեփոխումների, բայց սա դեռ միակ պատճառը չէր: Այսինքն, սոցիալական ծանր պայմանները միշտ չէ, որ կարող են բերել հեղափոխական վիճակի, դրան գումարվում են նաև ոլորտային բացթողումները և անձնական հակակրանքի առկայությունը: Այս պարագայում բավական էր մարդուն տալ հնարավորություն՝ իր սպասելիքներն արդարացնելու և խնդիրները ներկայացնելու համար:

Փաստացի դա տեղի ունեցավ 2018թ.-ի մարտին, այսինքն այն ժամանակ, երբ ժողովուրդը դուրս էր եկել ոչ թե Նիկոլ Փաշինյանի ետևից, ինչպես սովորաբար լինում է հարիզմատիկ լիդերների պարագայում, այլ դուրս էր եկել իր խնդիրները բարձրաձայնելու:

Ինչպե՞ս դա տեղի ունեցավ.

Հայկական թավշյա հեղափոխությունը ոչ բռնի, խաղաղ գործողություններով, ցույցերի, երթերի, քաղաքացիական անհնազանդության գործողությունների ամբողջություն էր՝ ուղղված Սերժ Սարգսյանի վարչապետ դառնալու հավակնությունների դեմ, նրա վարած արտաքին և ներքին քաղաքականության դեմ, որը սկսվեց դեռևս մարտի 31-ին՝ քայլերով և ավարտվեց լրջագույն փոփոխություններով:

Շուրջ մեկ ամիս տևած գործադուլների, դասադուլների, երթերի, ցույցերի, բողոքների ժամանակ բացառվեց ամեն տեսակի բռնի գործողությունների իրականացումը՝ չնայած որ մասնակիցների թիվն անցնում էր 100,000-ներից:

Հայկական ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխության սկիզբը կարելի է համարել մարտի 31-ը, երբ Նիկոլ Փաշինյանը սկսեց իր շարժումը Գյումրիի Վարդանանց հրապարակից: Թավշյա, ոչ բռնի հեղափոխությունն, անշուշտ, միատարր պրոցես չէր, այն իրականություն դարձավ մի քանի փուլերով:

Առաջինը քայլարշավի փուլն էր, որն ընդգրկում էր մարտի 31 – ապրիլի 13-ը: Քայլերթի մասնակիցները քայլեցին 200 կմ ճանապարհ՝ այդ ընթացքում անցնելով Սպիտակ, Վանաձոր, Դիլիջան, Սևան, Հրազդան, Աբովյան քաղաքների միջով և անցկացնելով հանրահավաքներ, առցանց իրազեկումներ և զրույցներ քաղաքացիների հետ:

Հանուն արդարության պետք է նշել, որ նշված ժամանակահատվածում շատ քչերն էին հավատում և հույս կապում այդ երթի նպատակների հետ, սակայն հետո արդեն սա պիտի բնորոշվեր իբրև շարժման նախապատրաստական փուլ, որի մեկնարկը տրվեց բավական յուրօրինակ կեր-

պով: Շարժման իրագեկումն այնքան արդյունավետ էր, որ շարժումը փաստացի ստացվեց պահել մարդկանց ամենօրյա ուշադրության կենտրոնում՝ դրա համար քայլերթի մասնակիցների կողմից կիրառվում էին ավանդական համախմբման տեխնոլոգիաները /գործադուլ, դասադուլ, ճանապարհների և փողոցների փակում, բողոքի երթեր, հանրահավաքներ և այլն/:

Երկրորդ փուլը Ֆրանսիայի հրապարակի փուլն էր, որն ընդգրկում էր ապրիլի 13-ապրիլի 16-ը: Ապրիլի 13-ին քայլարշավի մասնակիցները հասան Երևան: Առաջին վայրը, ուր նրանք ներխուժեցին, ԵՊՀ-ն էր: Դա բացատրվում էր նրանով, որ խնդիր էր դրված առաջին հերթին հավաքագրել ուսանողությանը և, ըստ այդմ, ապահովել երիտասարդության հնարավորինս լայն ներգրավվածությունն այդ պրոցեսներում: Ու քանի որ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահը Սերժ Սարգսյանն էր, ուստի նաև նպատակ էր դրված այդ ներխուժմամբ ոտնահարել նրա հեղինակությունը և ինքնասիրությունը:

Երևանի կենտրոնը դարձավ բարիկադների թաղամաս, եղան առաջին ընդհարումները ոստիկանության հետ, սկսվեցին ցույցեր Վանաձորում: Օրվա կուլմինացիան Բաղրամյանի ընդհարումն էր: Ժամը 14:00-ից սկսած՝ ցուցարարները սկսեցին շարժվել Բաղրամյան պողոտայի ուղղությամբ՝ նպատակ ունենալով շրջափակել ԱԺ շենքը, որը հանգեցրեց ոստիկանական մեծաքանակ ուժերի հետ բախումների, և կիրառվեց անհամաչափ ուժ, հատուկ միջոցներ, տեխնիկա և փշալարեր ոստիկանության և հատուկ ստորաբաժանումների կողմից: Արդյունքում եղան տասնյակ տուժածներ որոնց թվում էր նաև ընդդիմության առաջնորդ Նիկոլ Փաշինյանը: Մի քանի ժամ անց Փաշինյանը միացավ ցուցարարներին և հայտարարեց, որ երկրում սկսվել է տոտալ թավշյա հեղափոխություն՝ դրանով իսկ ազդարարելով հեղափոխության նոր, անհամեմատ ավելի մասշտաբային փուլի մասին:

Հաջորդ փուլը **ապակենտրոնացված պայքարի փուլն է**, որն ընդգրկում է ապրիլի 17-ապրիլի 23-ը: Ապրիլի 17-ին ոստիկանության հսկայական ուժեր էին կենտրոնացվել ԱԺ-ի հատվածում, որտեղ պետք է տեղի ունենար վարչապետի ընտրությունը: Փաշինյանը փոխեց իր մարտավարությունը և այդ մասին տեղեկացրեց հանրահավաքի մասնակիցներին, այն է՝ ցուցարարները ցրվում են և բարիկադավորելով՝ փակում խաչմերուկներ ու փողոցներ, ինչպես նաև շրջափակում են պետական շինություններ ու կառավարական հաստատություններ՝ կաթվածահար անելով պետական կառավարման համակարգը: Իրավիճակն այլևս անվերահսկելի էր, որին հետևեց Սերժ Սարգսյանի հրաժարականը:

Երեկոյան տեղի է ունենում հաղթական հանրահավաք, որի ընթացքում Փաշինյանը անում է երկու կարևոր հայտարարություն՝ հեղափո-

խությունը հաղթել է, և երկրում իշխանության տերն այլևս ժողովուրդն է, ինչպես նաև վարչապետի ընտրությունները պետք է տեղի ունենան մոտակա մեկ շաբաթվա ընթացքում, և վարչապետ պետք է ընտրվի ժողովրդի թեկնածուն:

Այս շրջանում՝ հեղափոխության նյութականացման շրջանում, ավանդական տեխնոլոգիաներից զատ կիրառվում էին, այսպես կոչված, սնուցող տեխնոլոգիաներ¹, որոնց նպատակն էր հեղափոխական ալիքի բարձր տեմպի և համաժողովրդական համախմբվածության պահպանումը: Այս տեսանկյունից վարակիչ դեր խաղաց «Քայլ արա, մերժիր Սերժին» հեղափոխական վանկարկումը, «Դուխով» կարգախոսը, «Ոստիկանը մերն է» և այլն:

Նման գործողությունների արդյունավետության մասին խոսում էր պրոֆեսոր Շարփը: Նա այդ տեխնոլոգիաներն անվանում էր «խաղաղ զենքեր»: Ըստ նրա, խաղաղ պայքարը նպաստում է իշխանության և նրա բռնի ճնշումների հանդեպ մարդկանց ունեցած վախի զգացման վերացմանը, այն հասարակության վրա իշխողների ունեցած իշխանության չեզոքացման հիմնական միջոցն է²:

Վերջապես **Հաղթանակի փուլ**, որն ընդգրկում է ապրիլի 25 - մայիսի 9-ը:

Ապրիլի 24-ը կողմերի նախնական համաձայնությամբ հայտարարվեց լրության օր, սակայն թե՛ Փաշինյանը, թե՛ վարչապետի պարտականությունները ժամանակավորապես ստանձնած Կարեն Կարապետյանը այդ օրը հանդիպումներ ունեցան լրագրողների ու օտարերկրյա դեսպանների հետ: Չնայած սպասվելիք բախումներին՝ հեղափոխության ճամբարը տոնում էր հաղթանակ ու պահանջում էր իրեն հանձնել գործադիր իշխանությունը:

Դրան հաջորդում է մայիսի 7-ի հանրահավաքը, որին, Փաշինյանից բացի, ելույթ են ունեցան մշակույթի հայ աշխարհահռչակ գործիչներ: Մայիսի 8-ին Փաշինյանն ընտրվեց ՀՀ վարչապետ, ում ընտրությունը մեկ ժամվա ընթացքում հաստատեց հանրապետության նախագահը: Դրան հաջորդեց Փաշինյանի հայտարարությունը հրապարակում հեղափոխության հաղթանակի մասին, որն էլ պիտի շարունակվեր իր բնորոշմամբ ժամանակավոր կառավարության ձևավորմամբ մինչև արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացումը:

Այս շարժումը տարբերվում էր նրանով, որ հենց առաջին պահից բավականին շարժուն ու դինամիկ էր, այն իր առջև դնում էր կարճաժամկետ լուծում պահանջող խնդիրներ և արագ անցնում դրանց իրականաց-

¹ Տես **Բարսեղյան Գ.**, Հայկական հեղափոխության ֆենոմենը, Ե., 2019թ., էջ 102:

² Տես **Շարփ Զ.**, Բռնապետությունից դեպի ժողովրդավարություն, Ե., 2015թ., էջ 56:

մանը՝ ամեն հաջորդ րոպեին էլ ավելի շատ մարդկանց հավաքագրելով պրոցեսի մեջ:

Ընդհանուր առմամբ, երևանյան հանրահավաքների քրոնիկոնին անձամբ հետևելով և մասնակից լինելով՝ հստակ տեսանելի էր մի բան, որ ամեն անցնող օրվա հետ քաղաքացիացվում էր մարդը, շարժման հոչակած նպատակների ազդեցությամբ ինքն իրեն վերափոխում էր՝ աստիճանաբար դառնալով քաղաքական սուբյեկտ:

Եզրակացություն.

Պատմական-քաղաքական էքսկուրսի արդյունքում հստակ արձանագրում ենք, որ Հայաստանում 1996 թվականից ի վեր առաջին անգամ գործադիր իշխանությունը փոխվում է ոչ թե կուսակցական ինտրիգների միջոցով, այլ ժողովրդավարական ալիքի ճնշման տակ ու ժողովրդի մեծագույն մասի աջակցությամբ:

Հայաստանի Հանրապետությունում ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխությունն այլևս անշրջելի իրողություն է: Այս պատմական շարժման կայացումը պայմանավորված էր մի շարք պլանավորված և չպլանավորված գործողություններով, առանց որոնց հեղափոխությունը չէր լինի այնպիսին, ինչպիսին եղավ և միգուցե չունենար այն հաղթական ելքը, որն ունեցավ:

Ուստի կարևոր էմ համարում վերոնշյալ հանգամանքների հետ կապված՝ արձանագրել որոշակի հետևություններ.

- Հայկական թավշյա հեղափոխությունը համահայկական և համազգային երևույթ էր, որը դուրս եկավ Հայաստանից սահմաններից և տարածվեց սփյուռքի շրջանակներում, որը կարծես ավելի <<Դուխով>> էր դարձնում Հայաստանի քաղաքացուն:

- Հայկական ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխությունը հեղափոխություն էր՝ իրականացված Ժողովրդի կողմից, նրա միջից տարերայնորեն ձևավորված շարժումների և խմբերի կողմից, իհարկե՝ բնավ չնսեմացնելով առաջնորդի դերը:

- Հայկական հեղափոխությունը սկսվեց Սերժ Սարգսյանի հրաժարականի պահանջով՝ վերջնամասում ուղղված լինելով ողջ համակարգի դեմ:

- Հեղափոխությունը ցույց տվեց, որ Հայաստանում շատ ավելի արդյունավետ են գործում քաղաքացիական հասարակության ինստիտուտները, քան քաղաքական ընդդիմությունը: Դա ցայտուն դրսևորվեց երկրում համատարած անօրինությունների և իշխանության կողմից արվող չարահումների դեմ պայքարի ընթացքում:

- Հեղափոխության շարժիչ ուժ համարվող երիտասարդությունը ոչ այնքան քաղաքական, որքան քաղաքացիական կազմակերպվածություն

ուներ, որը լուրջ խթան կարող է լինել քաղաքացիական հասարակության և նրա ինստիտուտների զարգացման առումով:

- Հեղափոխությունն իրականացնելու նպատակով ընտրվեց բողոքի ապակենտրոն /ցանցային/ և համազգային եղանակը՝ ներառելով ողջ մայրաքաղաքը, մարզերը, քաղաքներն ու գյուղերը;

- Հատկանշական էր «սիրով գործելու» հնարքների կամ նոր տեխնոլոգիաների կիրառումը, ինչպիսիք էին, օրինակ՝ հեղափոխության հիմնի առաջ քաշումը, երեկոյան մոմավառությունները, որք համերգները, երաժշտական բաղադրիչի կիրառումը, մեքենաների ազդանշանները, թավաներով հարվածները և այլն:

- Թավշյա հեղափոխության ընթացքում, նրա իրականացման և վերջնական հաղթանակ գրանցելու պրոցեսում անուրանալի է հայ կանանց և աղջիկների դերը, ովքեր առանց միջոցների և ձևերի միջև խտրություն դնելու, աներկբա մասնակցում էին բոլոր տիպի բողոքի ակցիաներին:

- Ի վերջո, ակներև էր քաղաքական դաշտի ռեաբիլիտացիայի անհրաժեշտությունը. Մինչև հեղափոխությունը Հայաստանի քաղաքական դաշտն ընդհանրապես, իսկ ընդդիմադիր հատվածը մասնավորապես, ամբողջովին հեղինակազրկված էին: Չկար վստահություն գեթ մեկ քաղաքական ուժի նկատմամբ, փոխարենը կար տոտալ անվստահություն և հակակրանք այդ ուժերի նկատմամբ:

Այսպիսով, ամփոփելով նշեմ, որ այսօր հեղափոխության առաջնորդ, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն օժտված է աննախադեպ լեզվատիրության, սակայն, ինչպես Ա.Շոպենհաուերն է ասում, «լեզվատիրությունը դեռ հաջողության գրավական չէ: Որպեսզի կառավարությունն իր համար ապահովի հաջողություն, պետք է ինտելեկտուալ հարաբերություններ կառուցի իրեն ենթարկվողների հետ և երբեք ցածր չլինի համընդհանուր իրավական գիտակցությունից»¹: Իսկ դրա համար անհրաժեշտ է պետության և ժողովրդի միջև ամուր կապի առկայություն, հեղափոխության հռչակած թեզերի աստիճանական իրականացում, պետական կառավարման մարմինների գործունեության խիստ և անընդմեջ վերահսկողություն, որի նպատակը պետք է լինի վեր հանել տվյալ մարմինների թույլ կետերը և ռիսկային օղակները՝ ապահովելու ավելի արդյունավետ կառավարում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Хантингтон С., Политический порядок в меняющихся обществах, Москва, Прогресс, Традиция, 2004,

¹ Տե՛ս Шопенгауер А., О свободе воли, Книговек, 2015, с. 371.

2. Шопенгауер А., О свободе воли, Книговец, 2015
3. Բարսեղյան Գ., Հայկական հեղափոխության ֆենոմենը, Ե., 2019թ., էջ 102
4. Շափաղաբյան Հ.Ն., քաղաքական մասնակցության արդի հիմնախնդիրները, Ե., 2007
5. Շարփ Ջ., Բռնապետությունից դեպի ժողովրդավարություն, Ե., 2015թ
6. «Թավշյա հեղափոխության» հայկական մոդելը» 2018 URL: https://www.youtube.com/watch?v=n5QYXxDv8WY&fbclid=IwAR0QHHTLFNIcmt15UA-abU0FQOSsIxmMlwPsL4v3e6L3T6i2LDLkJ_sxta8M&app=desktop
7. [https://hy.wikipedia.org/wiki/Թավշյա_հեղափոխություն_\(Հայաստան\)/08.04.2018](https://hy.wikipedia.org/wiki/Թավշյա_հեղափոխություն_(Հայաստան)/08.04.2018)

Асмик Шапагатян , Почему и как произошла Армянская ненасильственная бархатная революция - В статье основное внимание уделяется факторам, которые привели к осуществлению армянской ненасильственной, "бархатной" революции, анализируя пробелы дореволюционного периода, которые и способствовали распространению революционной волны. В основном наша цель - обосновать идею о том, что прискорбная атмосфера в Армении и волна народного недовольства послужили основой для подъема и распространения революции. Произошедшие известные политические события, имеющие большую культурную составляющую, были направлены в первую очередь на устранение порочных явлений в стране, а также революцию в сознании людей. И если на сознательном уровне не будет революции, тогда революция в реальной жизни определенно будет искусственной.

Hasmik Shapaghatyan , Why and How it happened Armenian non-violent velvet revolution - The article mainly focuses on the factors that led to the implementation of the Armenian non-violent, "velvet" revolution. We analyze the gaps that existed in the period before the Velvet Revolution, which contributed to the spread of the revolutionary wave. Basically, our goal is to substantiate the idea that the deplorable atmosphere in Armenia and the wave of popular discontent served as the basis for the uplift and spread of the revolution.

The famous political events that have a large cultural component were aimed primarily at eliminating vicious phenomena in the country, as well as to conduct a revolution in the minds of people. And if there is no revolution at the conscious level, then the revolution in real life will definitely be artificial.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

ԿԱՐԵՆ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Բանալի բառեր - հաշվապահական հաշվառում, հանրային հատված, հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ, հաշվեգրման հիմունք, համախմբված ֆինանսական հաշվետվություններ

ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի զարգացման սկզբնական փուլ կարելի է դիտարկել ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի 393-Ն որոշմամբ ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի և գանձապետական համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումների ծրագրի հաստատումը:

Մինչ այդ, ՀՀ պետական կառավարման մարմիններում և պետական հիմնարկներում հաշվապահական հաշվառումը վարվում էր ԽՍՀՄ Ֆինանսների նախարարության 1987թ. մարտի 10-ի թիվ 61 հրամանով հաստատված «ԽՍՀՄ պետական բյուջեով պահվող հիմնարկներում ու կազմակերպություններում հաշվապահական հաշվառման վերաբերյալ հրահանգով» սահմանված ընթացակարգերի համաձայն¹:

ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի բարեփոխումները ենթադրում էին դեռևս խորհրդային ժամանակներից գործող հաշվապահական հաշվառման համակարգից անցում կատարել հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշներին համապատասխան համակարգի, որը համահունչ և համադրելի կլիներ Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից հաստատված՝ կառավարության ֆինանսական վիճակագրության 2001 թ. ձեռնարկի և ՀՀ

¹ Ա. Ս. Ջանջուղազյան, «Հայաստանի Հանրապետությունում պետական հիմնարկների հաշվապահական հաշվառման համակարգի հիմնական առանձնահատկությունները», Լրաբեր հասարակական գիտությունների, ՀՀ ԳԱԱ, Երևան 2003թ. էջ 114:

մասնավոր հատվածում ներդրված հաշվապահական հաշվառման ստանդարտներին¹:

Գանձապետական համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումները հիմնված էին 1996-2002 թթ. ընթացքում ՀՀ կառավարության կողմից իրականացված գանձապետական համակարգի առաջին սերնդի բարեփոխումների ամփոփված արդյունքների վրա և հանդիսանում էին պետական ծախսերի բնագավառում ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության իրագործման շարունակությունը:

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվողականության՝ այդ պահին գործող համակարգի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ պետական մարմիններում, ընդհանուր առմամբ չէր գործում հաշվապահական հաշվառման միասնական համակարգ: Դա վերաբերում է ինչպես հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ընդհանուր միասնական մեթոդաբանությանը, այնպես էլ հաշվապահական հաշվառման համար որպես «գործիք» հանդիսացող հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառությանը: Այդ ժամանակահատվածում պետական մարմիններում վարվող հաշվապահական հաշվառման հիմնական նպատակը, ըստ էության, բյուջետային դասակարգիչների (Դասակարգումների) կիրառմամբ եկամուտների և ծախսերի հաշվառումն է: Գործնականում Դասակարգումները լավագույն դեպքում կիրառվում են մասնակիորեն, այն էլ բացառապես գանձապետական համակարգի համար նախատեսված հաշվետվությունները պատրաստելու նպատակով: Այնուամենայնիվ, նույնիսկ գանձապետական համակարգի համար նախատեսված վերոհիշյալ հաշվետվությունները ամբողջովին չեն ստացվում գործող հաշվապահական հաշվառման համակարգից:

ՀՀ-ում ինչպես հանրային հատվածի կազմակերպությունների, այնպես էլ ամբողջ պետության մակարդակով բացակայում էր հաշվեգրման հիմունքով ֆինանսական հաշվետվությունների (այսպես կոչված՝ պետական հատվածի «հաշվեկշռ») պատրաստման և ներկայացման մշակույթը: Յուրաքանչյուր տարի պատրաստվում է պետական հատվածի «հոսքերի աղյուսակը», որը բյուջեն է, իսկ բյուջետային ծախսերը ինչ արժեքի են վերածվում հանրային հատվածում հայտնի չէ: Սա խեղում է նաև հանրային հատվածի ֆինանսական հաշվետվողականությունը և կարգապահությունը: Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի բարեփոխումները կոչված են ՀՀ-ում աստիճանաբար ներդնել

¹ «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի և գանձապետական համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի թիվ 393-Ն որոշում:

հաշվեգրման հիմունքով առանձին և համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման մշակույթը:

ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններին ըստ նրանց կողմից կիրառվող հաշվապահական հիմունքների, կարելի էր բնութագրել հետևյալ կերպ.

1. Պետական կառավարման մարմինները (նախարարություններ, գերատեսչություններ և այլն) հիմնականում պատրաստում են բյուջետային դասակարգումների վրա հիմնված տեղեկատվություն, որոնք ամփոփվում են գանձապետական համակարգի համար պատրաստվող հաշվետվություններում: Բացի այդ, ներկայացվում է նաև հաշվեգրման հիմունքի վրա հիմնված որոշ տեղեկատվություն, որոնց համար հստակ սահմանված կանոնակարգումներ առկա չեն.

2. Պետական ոչ առևտրային կազմակերպությունները հիմնականում աշխատում են մասնավոր կազմակերպությունների համար նախատեսված՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով:

Եթե փորձենք համառոտ ներկայացնել հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման նախորդ համակարգի թույլ կողմերը, որոնք ամփոփվել են Համաշխարհային բանկի ուսումնասիրությունների արդյունքում պատրաստված հաշվետվությունում, ապա դրանք կարելի է խմբավորել հետևյալ հիմնական ուղղություններով՝

- հաշվապահական գրանցումները կատարվում էին ձեռքով, համակարգչային հաշվապահական ծրագրերի փոխարեն օգտագործվում էին պարզեցված աղյուսակներ ու գրանցամատյաններ,

- ոչ բոլոր պետական մարմիններում է կիրառվել հաշվապահական հաշվառման կրկնակի գրանցման սկզբունքը,

- պետական մարմիններում միատեսակ հաշվապահական քաղաքականություն, հետևաբար նաև դրան համապատասխանության բացակայություն,

- պետական մարմինների շրջանում օգտագործվող տարբեր հաշվային պլաններ,

- հաշվապահների մասնագիտական ոչ բավարար կարողություններ և հմտություններ, որը զուգակցվում է համապատասխան որակավորումների կամ ուսուցողական դասընթացների պակասով:

Որպես վերոնշյալ համակարգային թերությունների հետևանք, ֆինանսական տեղեկությունների ընդհանուր հուսալիությունը և հակառակը՝ դրա օգտակարությունը կառավարիչների և կառավարության ղեկավար պաշտոնյաների համար գեկույցը հարցականի տակ էր դրվում¹:

¹ «Պետական ֆինանսների կառավարման բարեփոխումների առաջնահերթությունները» հաշվետվություն, Համաշխարհային բանկ, 2010թ., էջ 43-44:

Տարատեսակ ուսումնասիրությունների արդյունքները հիմնականում ամփոփվում էին պետական մարմիններում այնպիսի հաշվապահական հաշվառման համակարգ ներդնելու առաջարկությամբ, որը՝

- պետք է համապատասխանի ՀՀ-ում հանրային հատվածի հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության պահանջներին,

- պետք է ապահովի հաշվապահական հաշվառման միասնական մեթոդաբանություն, որը հնարավորություն կտա համախմբելու պետական մարմինների ֆինանսական հաշվետվությունները՝ պետության (ըստ առանձին ոլորտների կամ հանրնդհանուր) համախմբված ֆինանսական հաշվետվությունների ստացման նպատակով,

- պետք է ապահովի ղեկավարության կողմից որոշումների կայացման համար անհրաժեշտ կառավարչական տեղեկատվություն, որը պետք է լինի օպերատիվ և արժանահավատ:

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշներին համապատասխանող համակարգի ներդրումը հնարավորություն կընձեռի՝

- ստանալ հուսալի և արժանահավատ տեղեկատվություն պետական մարմինների ֆինանսական վիճակի, գործունեության ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի փոփոխությունների վերաբերյալ,

- պետական մարմինների ղեկավարներին, ինչպես նաև վերադաս պետական կառավարման մարմիններին՝ ստանալ անհրաժեշտ օպերատիվ և արժանահավատ տեղեկատվություն կառավարչական որոշումներ կայացնելու համար,

- իրականացնել արդյունավետ հսկողություն և վերահսկողություն պետական մարմինների գործունեության նկատմամբ,

- հաշվապահական հաշվառման միասնական մեթոդաբանության հիման վրա անհրաժեշտության դեպքում ստանալ համախմբված ֆինանսական հաշվետվություններ պետության ֆինանսական վիճակի, գործունեության ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի փոփոխությունների վերաբերյալ:

Մինչև «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի ընդունումը, ՀՀ-ում օրենսդրորեն սահմանված չեն եղել ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառում կազմակերպելու և վարելու, ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու և ներկայացնելու միասնական հիմունքներ: Դրանք ըստ էության կարգավորվել են մասնավոր հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հետ կապված հարաբերությունները կարգավորող «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով: Սակայն պետք է

նշել, որ հիշյալ օրենքի կիրառումը նպատակահարմար չէր հանրային հատվածի կազմակերպությունների համար, քանի որ տարբեր են հանրային ու մասնավոր կազմակերպությունների գործողության ոլորտները, սկզբունքորեն տարբեր են այդ ոլորտների հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները, հարկավոր է տարբերակել հանրային ու մասնավոր կազմակերպությունների հաշվապահական հաշվառման իրականացման կարգերը, տարբեր են ֆինանսական հաշվետվությունների կազմման, ներկայացման ու հրապարակման սկզբունքները և այլն:

2014թ. հուլիսին ընդունված «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ սահմանվեցին ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառում կազմակերպելու և վարելու, ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու և ներկայացնելու միասնական հիմունքները: Օրենքը կարգավորում է հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառմանը վերաբերող հիմնական և այլ հարաբերություններ, որը կիրառման տեսանկյունից ավելի դյուրին է և տարածվում է միայն ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների՝ ներառյալ նրանց ստեղծած հիմնարկների վրա:


«Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ իրավական հիմքեր ստեղծվեցին հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշներին համապատասխանող համակարգի ներդրման համար:

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման գործընթացը, ըստ փուլերի, ներկայացված է ներքոհիշյալ գծապատկերում:

Համակարգի ներդրման առաջին փուլի հիմնական նպատակը հանրային հատվածի կազմակերպություններում միջազգային չափանիշներին համահունչ առանձին ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու մշակույթ ձևավորելն էր: Ըստ նախապես հաստատված ժամանակացույցի, որն Օրենքի հիման վրա հաստատվել է ՀՀ ֆինանսների նախարարի կողմից, հանրային հատվածի կազմակերպությունները հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր համակարգին պետք է անցում կատարեին 3 տարվա ընթացքում՝ 2016-2018թթ.:

Գծապատկեր 1.

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման փուլերը¹



Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման երկրորդ փուլով նախատեսվում է նախարարությունների մակարդակով միջանկյալ համախմբման գործիքների և մեթոդաբանության մշակման աշխատանքների իրականացում, որը ենթադրում է իրավակարգավորման համապատասխան գործիքակազմի մշակում և հարակից օրենսդրության վերանայում:

Հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման երկրորդ փուլի արդյունավետ իրականացման նպատակով անհրաժեշտ է մշակել ֆինանսական հաշվետվությունների համախմբման մեթոդաբանություն և համախմբման գործիքներ՝ նախարարության մակարդակով համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար: Այդ նպատակով անհրաժեշտ է առաջանում մշակել կամ ձեռք բերել համապատասխան միասնական հաշվապահական ծրագիր, ինչպես նաև մշակել իրավական ակտեր, որոնց օգնությամբ հնարավոր կլինի իրականացնել ինչպես տարբեր վերահսկման մակարդակներում, այնպես էլ պետության մակարդակով ֆինանսական հաշվետվությունների համախմբումը:

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման վերջին՝ երրորդ փուլի իրականացումը (պետության՝


¹ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից:

որպես մեկ միավորի, համախմբված ֆինանսական հաշվետվությունների ստացման իրավակարգավորումների սահմանում և ընթացակարգերի ձևավորում) նախատեսվում է ազդարարել բարեփոխումների երկրորդ փուլի ավարտին:

Այսպիսով, ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգում տեղի ունեցած զարգացումները կարելի է ներկայացնել ժամանակագրական հետևյալ շղթայի միջոցով.

Գծապատկեր 2.

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի էվոլյուցիան¹




Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտում ՀՀ-ում տեղի ունեցող բարեփոխումներն ըստ էության համապատասխանում են նշված ոլորտում միջազգային զարգացումներին: Նշվածը հիմնավորելու նպատակով դիտարկենք ՀՄԴ կողմից 2018 թվականին 150 երկրների շրջանակում իրականացված ուսումնասիրության արդյունքները.

¹ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից:

Գծապատկեր 2.

Ֆինանսական հաշվետվողականության կիրառելի հիմունքները հանրային հատվածում 2017-2023թթ.-ին¹




Գծապատկերի ուսումնասիրությունից երևում է, որ, ըստ ՀՄԴ կանխատեսումների, հաշվեգրման հիմունքի վրա հիմնված ֆինանսական հաշվետվողականության հիմունքներ կիրառող երկրների թիվը, 2017թ. համեմատությամբ 2023թ. ավելի քան 50 տոկոսով ավելանալու է՝ կազմելով ընդհանուր երկրների շուրջ 65%-ը: Ընդ որում, եթե նշված ցուցանիշին ավելացնենք նաև հաշվեգրման հիմունքին անցելու գործընթացում գտնվողներին, ապա, ըստ էության, երկրների շուրջ 82%-ը կկիրառի հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքը: Վերը նշվածը վկայում է ՀՀ-ում իրականացվող բարեփոխումների՝ միջազգային միտումներին համահունչ լինելու մասին:

Ընդ որում, տարբեր երկրների կողմից կիրառվող ստանդարտները հիմնված են ինչպես ՀՀՀՄՍ-ների, այնպես էլ ՖՀՄՍ-ների վրա:

¹ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով <https://www.ifac.org/system/files/IFAC-CIPFA-Public-Sector-Index-2018-Status.pdf> հղմամբ ներկայացված հաշվետվության տվյալները:

Գծապատկեր 3.

Հաշվեգրման հիմունքի վրա հիմնված ֆինանսական հաշվետվողականության կիրառելի հիմունքները հանրային հատվածում 2017թ.¹



Այսպիսով, գծապատկերի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ ներկայումս երկրների ավելի քան 50 %-ը կիրառում են ՀՀՀՀՄՍ-ների վրա հիմնված ստանդարտներ, որոնց թվում է նաև Հայաստանը, որն էլ վկայում է նշված ոլորտում իրականացվող քաղաքականության՝ միջազգային զարգացումներին համապատասխանության մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2014թ. հունիսի 21-ին
2. «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի և գանձապետական համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի թիվ 393-Ն որոշում
2. Ա. Ս. Ջանջուղազյան, «Հայաստանի Հանրապետությունում պետական հիմնարկների հաշվապահական հաշվառման համակարգի հիմնական առանձնահատկությունները», Լրաբեր հասարակական գիտությունների, ՀՀ ԳԱԱ, Երևան 2003թ. 240 էջ

¹ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով <https://www.ifac.org/system/files/IFAC-CIPFA-Public-Sector-Index-2018-Status.pdf> հղմամբ ներկայացված հաշվետվության տվյալները:

3. «Պետական ֆինանսների կառավարման բարեփոխումների առաջնահերթությունները» հաշվետվություն, Համաշխարհային բանկ, 2010թ., 74 էջ

4. "International Public Sector Financial Accountability Index", IFAC, CIPFA, 2018, 5 pages

5. ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք՝ <https://www.minfin.am>

Карен Алавердян, Развития системы бухгалтерского учета общественного сектора Республики Армения - В настоящее время масштабные реформы осуществляются в области бухгалтерского учета общественного сектора Республики Армения, что предполагает переход от системы бухгалтерского учета советских времен к новой системе отчетности общественного сектора соответствующей международным критериям. Целью статьи является представление эволюцию системы бухгалтерского учета общественного сектора Республики Армения, необходимость перехода от существующей в прошлом системы учета к новой, а также современные тенденции бухгалтерского учета общественного сектора в международной практике.

Karen Alaverdyan, Developments of public sector accounting system of the Republic of Armenia - Currently, large-scale reforms are being carried out in the field of public sector accounting of the Republic of Armenia, which assumes the transition from the Soviet Union accounting system to the new system of public sector accounting in accordance with international criteria.

The objective of this article is to present the evolution of the Public sector accounting system of RA, the necessity to move from a previously existing accounting system to a new one, as well as the current trends in the field of Public sector accounting in international practice.

ՀԵՌԱՎԱՐ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ
ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒՐՑԱՆ, ՆՈՆՆԱ ԽԱԶԱՏՐՅԱՆ

*Պահանջվեց 38 տարի, որպեսզի ռադիոն դառանար
հասանելի երկրագնդի 50 մլն բնակչության համար,
13 տարի՝ որպեսզի հեռուստացույցից օգտվեին շուրջ 60 մլն
բնակչություն, և ընդամենը 4 տարի, որպեսզի համացացանցը
հասանելի լիներ արդեն 80 մլն մարդու։¹*

Բանալի բառեր - առցանց ուսուցում, հեռավար ուսումնառության արդյունաետություն, էլեկտրոնային մոդուլներ, հեռաուսուցման զարգացում:

Հեռավար ուսուցման պահանջը առաջացավ դեռևս երկու դար առաջ, երբ մասնագիտական կրթական ծառայությունները խիստ կենտրոնացած էին խոշոր քաղաքներում և երկրի ծայրամասերում բնակվող ազգաբնակչությանը մատուցվում էր դասավանդում՝ պարզապես օգտագործելով համընդհանուր թղթակցային փոստը: Այդքա Փիթմանը առաջինն էր, որ դեռևս 1840 թվականին կազմակերպեց թղթակցային հեռուսուցման դասընթաց, երբ ուսանողը փոստով առաջդրանք էր ստանում դասավանդողից, և այնուհետև, լուծելով այն՝ նորից փոստով հետ էր ուղարկում առաջադրանքի պատասխանը:² Բնականաբար, դասավանդման խմբային ձևաչափը այստեղ կիրառելի չէր, և գործում էր “ուսանող-դասավանդող” անհատական կապը:

Լոնդոնի թագավորական համալսարանը 1856 թվականին թույլ տվեց ուսանողներին էքստերն ճանապարհով, առանց լիարժեք դասերի հաճախելու, պաշտպանել ավարտական թեզեր: Սակայն, հաջողության հասնելու համար, ուսանողները պարբերաբար կարճաժամկետ դասընթացների էին մասնակցում, որը այնուհետև համակարգային բնույթ ստացավ մի շարք բուհերում: Այսպես, 1874 ԱՄՆ-ի Իլիանոյիսի համալսարանը առաջին անգամ կիրառեց մասնագիտական կրթության հեռակա և հեռավար ուսուցման համակցված տարբերակ, որը արագորեն իր զարգացումը գտավ մի շարք առաջավոր բուհերում:

¹ Учителя, педагогическая деятельность и новые технологии: Всемирный доклад по образованию. Париж: ЮНЕСКО, 1998. – 129 с.

² Baath J. Correspondence education in the light of a member of contemporary teaching models. – Malmo: Liber-Hermods, 1979; Holmberg B. The evolution

Հատկապես նշանավորվեց Բրիտարական բաց համալսարանը, որը մասնագիտացավ հեռավար ուսուցման համակարգում և ունեցավ այդ ժամանակների համար ուսանողների ամենամեծ թվաքանակը:¹ Համալսարանը 1877 թվականին արդեն թույլ էր տալիս բոլոր մասնագիտությունների գծով (բացի բժշկությունից) ուսանողներին հանձնելու ավարտական քննություններ, անգամ եթե նրանք ինքնաուսուցմամբ կամ հեռավար ուսուցմամբ էին գիտելիքներ ձեռք բերել: Սակայն, հեռաուսուցումը այս պարագայում լիովին հիմնված է փոստային հաղորդակցման վրա:

Այնուամենայնիվ, հեռաուսուցման շրջանակների ընդլայնմանը զուգահեռ, ակադեմիական միջավայրում սկսեցին շրջանառվել այնպիսի տերմիններ, ինչպիսիք էին.

- home study (տնային դասավանդում)
- external student (էքստերն ուսանող)
- independent study (անկախ ուսուցում)
- extension (հիմնական դասընթացի լրացուցիչ կուրսեր)

Արդեն, 1930-ական թվականներին որպես հեռաուսուցման գործիք, սկսեցին կիրառել ռադիոն, իսկ 1950-ական թվականներից՝ հեռուստատեսությունը: Ուիլյամսը իր հետազոտության արդյունքերով բացահայտեց, որ հեռուստադասընթացները որոշ մասնագիտությունների գծով առավել արդյունավետ են, քան ավանդական դասընթացները:² Սակայն նաև ընդգծվեց, որ անհրաժեշտ է կազմակերպել ոչ թե միակողմանի դասընթաց “դասախոսից դեպի ուսանող” ձևաչափով, այլ երկխոսության վրա հիմնված ուսուցում՝ կրթության շահառուների միջև:

Տեղեկատվական սարքերի զարգացմանը զուգընթաց, 20-րդ դարի վերջին քառորդում սկսեցին հիմնադրվել ոչ ավանդական համալսարաններ, որոնք հիմնականում ֆինանսավորվում էին հանրային միջոցներով և իրականացնում էին հեռաուսուցում: Բրիտանական բաց համալսարանի գործունեության մոդելով ոչ ավանդական համալսարաններ հիմնադրվեցին Իզրայելում, Գերմանիայում, Ավստրալիայում, Հնդկաստանում, Կանադայում, ԱՄՆ-ում: Միայն, 1970-1984 թվականների ընթացքում մոլորակի վրա սկսեցին գործել 187 ոչ ավանդական համալսարաններ, որոնց հիմնական մասը վերագրային կրթական ծառայություններ էին մատուցում:³

¹ **Овсянников В. И** Основные этапы развития дистанционного обучения и его теоретическое сопровождение // Дистанционное образование в России: Постановка проблемы и опыт организации. – М., 2001. – С. 7-11.

² **Reiser R. A.** Instructional technology: A history // Instructional technology: Foundations. Hillsdale: Lawrence Erlbaum, 1987.

³ **Овсянников В. И** Основные этапы развития дистанционного обучения и его теоретическое сопровождение // Дистанционное образование в России: Постановка проблемы и опыт организации. – М., 2001. – С. 10.

1969 թվականին Փարիզում կայացավ “Հեռավար ուսուցման միջազգային համաժողովը”, որտեղ տարբեր երկրներ ներկայացնելով իրենց փորձը, կարողացան ընդհանուր հայտարարի գալ հեռավար կրթության մեթոդների, չափանիշների, մեխանիզմների ընդունելի տարբերակների գծով:¹ Միաժամանակ արձանագրվեց, որ դեռևս դանդաղ էր գործում հետադարձ կապը ուսումնառողների ու դասավանդողների միջև, և դեռ չէին ձևավորվում լսարանային ու խմբային ուսումնառության ձևաչափերը, որոնք հանդիսանում էին հեռավար ուսուցման մեթոդաբանական չլուծված խնդիրներ:

Այդ խնդիրները լուծվեցին XX դարի վերջին տասնամյակում համացանցի (ինտերնետ) ձևավորման և ազգաբնակչության շրջանում համակարգիչների մատչելիության շնորհիվ: Ստացվեց այնպես, որ հեռաուսուցման ոլորտում համացանցի մուտքն ավելի բեկումնային եղավ, քան ռադիոյի և հեռուստատեսության պարագայում: Հնարավոր դարձավ հաղորդակցություն և հետադարձ կապ ապահովել յուրաքանչյուր սովորողի համար՝ անկախ նրա գտնվելու վայրից: ՅՈՒՆԵՍԿՕ-ի կանխատեսումների համաձայն՝ XXI դարում սովորողները լսարանում անցկացնելու են ուսումնառության համար հատկացված ժամանակի ընդամենը 30-40%-ը: Մյուս 40%-ը ծախսելու են հեռավար ուսուցման վրա՝ ժամանակակից հաղորդակցական միջոցների կիրառմամբ, իսկ մնացած ժամանակը տրամադրելու են ինքնակրթությանը: Դա նշանակում է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցների կիրառումը կմեծանա առցանց ուսուցման գործընթացում և՛ դպրոցական, և՛ համալսարանական, և՛ որակավորման բարձրացման ոլորտներում, այսինքն՝ անընդհատ ուսուցման բոլոր օղակներում:²

Նաև ակնառու դարձավ, որ առցանց ուսուցումը էականորեն տարբերվում է նախկինում գործող ավանդական հեռավար ուսուցումից մի շարք հատկանիշներով: Նախ, համացանցի միջոցով հեռավար ուսուցման դեպքում սովորողը՝

- ինքն է ընտրում իր համար ամենահարմար ուսուցման ժամանակը,
- կարող է սովորել «իր սեփական արագությամբ» և իրեն հարմար ռեժիմով,
- կարող է կենտրոնանալ ուսումնական նյութի որոշակի մասերի վրա,
- կարող է ավելի շատ համագործակցել դասախոսի հետ,
- կարող է ավելի արագ ստանալ անհրաժեշտ տեղեկություններ:

¹ The International Council on Correspondence Education.

² **Բեգիբջյան Խ., Խաչատրյան Վ., Հովհաննիսյան Գ., Բաբայան Ս.**, Հեռավար ուսուցման կազմակերպումը և իրականացումը կանոնակարգող փաստաթղթերի ժողովածու, // ՀՀ պետական կառավարման ակադեմիա, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, 2017, էջ 8

Բացի այդ, առցանց ուսուցումը սկզբունքորեն տարբերվում է ավանդական հեռավար (թղթակցային) ուսուցումից նրանով, որ ստեղծվում է նոր կրթական տեղեկատվական միջավայր, որտեղ սովորողը հասակ գիտակցում է, թե ինչպիսի գիտելիքներ, հմտություններ և ունակություններ են իրեն անհրաժեշտ: Սովորողները հնարավորություն են ունենում ինքնուրույն ստանալու անհրաժեշտ գիտելիքները, օգտվելու զարգացած տեղեկատվական ռեսուրսներից (տվյալների և գիտելիքների բազաներ, համակարգչային, այդ թվում՝ մուլտիմեդիա, ուսուցանող և ստուգիչ թեսթային համակարգեր, էլեկտրոնային վարժանքներ, տեսագրություններ, ձայնագրություններ, էլեկտրոնային գրադարաններ, ինչպես նաև էլեկտրոնային դասագրքեր ու մեթոդական ձեռնարկներ):

Առցանց ուսուցման և ավանդական հեռաուսուցման տարբերություններից մասնագիտական գրականությունում առանձնացվում են նաև մի շարք տիպիկ հոգեբանական մանկավարժական խնդիրներ, որոնք ստիպված են լուծել դասախոսներն ու ուսանողները: Դրանք են.

1) դժվարություններ՝ կապված ուսուցման գործընթացի մասնակիցների միջանձնային շփման հետ,

2) խնդիրներ՝ կապված արդյունավետ աշխատող փոքր ուսումնական խմբերի ձևավորման հետ՝ համագործակցված ուսուցում իրականացնելու համար,

3) խնդիրներ՝ կապված ունկնդիրների կողմից տեղեկատվության ընկալման անհատական առանձնահատկությունների ուսումնասիրության հետ՝ առավել արդյունավետ ուսումնական գործընթաց կազմակերպելու նպատակով,

4) դասախոսի համապատասխանությունը հեռավար ուսուցման համար ընտրված մեթոդիկային և մանկավարժական տեխնոլոգիաներին:¹

Սակայն, անկախ վերոնշյալ դժվարություններից, առցանց դասավանդումը տեսանելի ապագայում կրթական շուկայում գերիշխող դիրք է գրավելու և ունենալու կազմակերչական հեռանկարային առանձնահատկություններ.

Առաջին. WEB լսարանի նոր կոնցեպտի նախագծում, որը հնարավորինս կտեղափոխի ավանդական ուսուցման մոտեցումները էլեկտրոնային միջավայր: Այս դեպքում, հնարավոր կդառնա վիրտուալ միջավայրում կիրառելու ավանդական լսարանային ուսումնառությանը հատուկ դասախոսություններ, սեմինար-քննարկումներ, խմբային պրեզենտացիա-

¹ **Բեգիբջյան Խ., Խաչատրյան Վ., Հովհաննիսյան Գ., Բաբայան Ս.,** Հեռավար ուսուցման կազմակերպումը և իրականացումը կանոնակարգող փաստաթղթերի ժողովածու, //ՀՀ պետական կառավարման ակադեմիա, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, 2017, էջ 13

ներ, բանավեճային ակումբներ, կլոբ սեղաններ, որոնք հնարավոր կլինի կազմակերպել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով:

Երկրորդ, մանկավարժական նորամուծությունների ներմուծում, որոնք կապահովեն ակտիվ և սպառիչ հետադարձ կապը դասավանդողների և ուսանողների միջև, ինչպես նաև՝ ակադեմիական համագործակցությունը ուսանողական խմբերի միջև: Բացի այդ, մանկավարժական նորամուծությունները կթիրախավորվեն ուսանողակենտրոն ուսուցմանը, երբ ուսանողը ակտիվ մասնակցություն կունենա ինքնակրթության գործընթացին, էլեկտրոնային վարժանքերով կզարգացնի իր մասնագիտական կարողությունները, էլեկտրոնային թեստերով կանցնի ինքնազնահատման համակարգով:

Երրորդ, էլեկտրոնային վարչարարության ընդլայնում, երբ առցանց համակարգում ընդգրկված ուսանողի ակադեմիական վարքագիծը ամբողջովին իր թվայնացումը կունենա և կվերահսկվի էլեկտրոնային դեկանատի կողմից: Նման պարագայում, էսպես կբարձրանա դեկանատների, ամբիոնների վարչակառավարչական գործունեության արդյունավետությունը և հեռավար դասընթացների նպատակամետությունը՝ ուղղված կրթության շահառուների պահանջմունքերի բավարարմանը և առցանց կրթական ծառայությունների որակի բարձրացմանը:

Եվ եթե վերոնշյալ հիմնախնդիրները փոքր-ինչ դադաղ ընթացք էին հաղորդում առցանց ձևաչափով համալսարանական կրթությանը, ապա վրա հասած COVID-19 աշխարհավարկը պարզապես պարտադրեց բուհերին մեկ գիշերվա ընթացքում համատարած անցնել հեռավար ուսուցման, որն ի հայտ բերեց մի շարք մարտահրավերներ, որոնք ներկայացվում են հետևյալ խմբերով (տես գծապատկեր1):


Տեխնիկական. թե դասախոսները, թե ուսանողները և անգամ բուհերը հանկարծակի եկած համաճարակից, դեռևս լիարժեք տեխնիկական պատրաստվածություն չունեին առցանց ձևաչափով կրթության կազմակերպման: Անհրաժեշտություն ծագեց ձեռքբերելու լրացուցիչ համակարգիչներ, ուժեղացնելու տեղեկատվական տեխնոլոգիաների սերվերային հզորություններ, մշակելու էլեկտրոնային դեկանատների գործունեության ծրագրեր: Համաճարակը ստիպեց կրթության շահառուներին լրացուցիչ ներդրումներ անելու տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռքբերման ոլորտում:

Սոցիալ-հոգեբանական. համալսարանական կրթության շահառուները հոգեբանորեն պատրաստ չէին մեկ օրվա ընթացքում զանգվածաբար անցում կատարելու առցանց ուսուցման: Ավանդական լսարանից դուրս դասավանդումը կարծես բթացնում էր ուսումնառության զգայնականությունը և on-line լսարանը արեստածին, և երբեմն էլ տախտկալի էր դառնում թե դասախոսների, և թե ուսանողների համար: Ուսանողի սոցիալա-

կան մեկուսացումը համարվում է հեռաուսուցման էական թերություններից մեկը: Եթե ի սկզբանե, համակարգիչների օգտագործումը պարունակում էր անհատի առողջապահական խաթարման ռիսկեր (տեսողության վատթարացում, նյարդային լարվածություն, “էլեկտրոնային պրեսինգ”) և միայն խնդիր էր առաջանում պահպանելու համացանցից օգտվելու հիգիենա (համակարգից անընդմեջ օգտվելու ժամանակը ոչ ավելի, քան քառասուն րոպե, այնուհետև՝ մեկ ժամ աչքերին հանգիստ), ապա ներկայումս առավել “չարիք” է հանդիսանում առցանց համակարգում անհատի սոցիալական մեկուսացումը, որի դեմ պայքարելը հետզհետե դառնում է էլ ավելի դժվար:¹

Գծապատկեր 1

Արդյունավետ առցանց ուսուցման կազմակերպման միջավայրին նպաստող գործոնները:²



Ավանդաբար, համալսարանը ուսանողության կողմից ընդունվում է ոչ միայն գիտելիքների, մասնագիտական հմտությունների ընկալման միջավայր, այլև սոցիալական հարթակ, որտեղ ձևավորվում են ընկերային փոխհարաբերություններ, երիտասարդական ժամանցային, սպորտային միջոցառումներ, պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ անմիջա-

¹ **Warburton.** (2009). Second Life in higher education: Assessing the potential for and the barriers to deploying virtual worlds in learning and teaching. *British Journal of Educational Technology*, 40(3), p. 414-426.

² Կազմվել է հեղինակների կողմից:

կան շփումներ, որով ակադեմիական գործունեությունը դառնում է գրավիչ, իսկ ուսանողը հայտնվում է իրեն հարազատ սոցիալական խմբերում:

Առցանց ուսուցման պարագայում բացակայում է ավանդական ուսումնառության գրավիչ միջավայրը, ուսանողը հայտնվում է սոցիալական մեկուսացման ռիսկի առջև, որը ոչ միայն իր բացասական հետևանքներն է թողնում անհատի ակադեմիական գործելավորում, այլև նրա մոտ ձևավորում է սոցիալ-հոգեբանական շեղումներ:

Առողջապահական. ուսանողները պատրաստ չէին ժամերով գամվելու համակարգիչների էկրաններին և դասերին մասնակցելու, որն ի դեպ, նաև հակահիգենիկ էր աչքերի համար: Իսկ հայաստանյան բուհերի վարչակազմը ձգտում էր չխախտել գործող դասացուցակը և հեռաուսուցումը կազմակերպել հենց այդ ժամանակացույցով և ավանդական կրթության ժամաքանակով: Հիմա արդեն ժամանակն է ընկալել, որ առցանց ուսուցման դասերը պետք է կայանան ժամանակային ինտեղակներով այնպես, որ մի կողմից ուսանողը համակարգչի էկրանի առջև չզգա գերհոգնածություն, մուս կողմից, պահպանվի աչքերի հիգենայի կանոնները:

Մեթոդական. հեռավար ուսուցման պարագայում ներկայումս հիմնախնդիր է դառնում “համացանցային ուսանողական համայնքի” ձևավորումը, որը գալիս է որոշակիորեն փոխարինման ավանդական լսարանային ուսանողական խմբերին: Անկախ այն հանգամանքից, որ հեռավար ուսուցման համակարգում ընդգրկված անհատը կրթություն է ստանում “սուր տարբերակով”, միևնույնն է, նա հնարավորինս պետք է զգա ուսանողական իր խմբի ներկայությունը՝ թեկուզ և վիրտուալ աշխարհում:

Հետևաբար, համացանցային կրթական մոդուլները պետք է նախագծել այնպես, որ նրանցում գերադասելի լինեն online ֆորումները, բանավիճային ակումբները, խմբային աշխատանքները, որոնք կմեղմեն հեռավար ուսուցման ուսանողի սոցիալական մեկուսացման աստիճանը: Ի դեպ, MOODLE կրթական հարթակը, որն ինտենսիվորեն սկսվեց կիրառվել համավարակից հետո, հնարավորություն է ընձեռնում բազմակողմանի մոտեցում ցուցաբերել առցանց ուսուցմամբ մոդուլների նախագծմանը այնպես, որ ապահովվեն խմբային աշխատանքներ, ուսումնական գործընթացում ակտիվ հետադարձ կապ, բանավիճային քննարկումներ, WEB սեմինարներ, մասնագիտական ունակություններով ամրագրված էլեկտրոնային առաջադրանքներ: Այս առումով, MOODLE կրթական հարթակը անհրաժեշտ է կիրառել ոչ թե սուսկ հեռավար ձևաչափով ուսանողին նյութերի տրամադրման գործիք, այլ առցանց կրթության կազմակերպման արդյունավետ միջավայր:

Եզրակացություն. հեռավար ուսուցման արդյունավետ կազմակերպումը ուղեկցվում է մի շարք խնդիրներով, որոնք կրում են տեխնիկա-

կան, սոցիալ-հոգեբանական, առողջապահական, ինչպես նաև մեթոդական բնույթ; Ուստի, համաճարակով պայմանավորված առցանց ուսուցման այսօրվա ինտերվենցիան համալսարաններ, իր արդյունավետության առումով կարդարացվի միայն դեպքում, երբ համակողմանի հաշվի առնվեն և ներդաշնակեցվեն թվարկած գործոնները (տես գծապատկեր 1):

Армен Джугурян, Нонна Хачатрян, Историческое развитие дистанционное обучение и вызовы в условиях пандемии - Эффективная организация дистанционного обучения сопровождается рядом проблем, имеющих технический, социально-психологический, медицинский, а также методологический характер. Поэтому, в связи с эпидемией, сегодняшнее “интервенция” в университеты онлайн-обучение, с точки зрения ее эффективности, будет оправдана, только если вышеупомянутые факторы будут приняты во внимание и действовать гармонично. В статье рассматриваются проблемы, связанные с повышением эффективности университетского онлайн-образования.

Armen Jughuryan, Nonna Khachatryan, The historical development if distance learning and challenges in condition of pandemic - The effective organization of distance learning is accompanied by a number of problems, which are of technical, social-psychological, health, as well as methodological nature; Therefore, today's “intervention” in universities online learning, due to the epidemic, in terms of its effectiveness, will be justified only if the above-mentioned factors are taken into account and harmonized. The article presented the challenges associated with increasing the effectiveness of university online education.

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀԱՍՄԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ

Բանալի բառեր - ռիսկի կառավարում, ձեռնարկատիրական ռիսկ, ռիսկերի կառավարման մեթոդներ, ապահովագրություն, դիվերսիֆիկացիա:

Ռիսկերի կառավարումը զբոսաշրջության ոլորտում կառավարչական որոշումների ընդունման և կատարման գործընթաց է, որն ուղղված է անբարենպաստ արդյունքի առաջացման հավանականության և դրա իրականացման հետևանքով հնարավոր կորուստների նվազեցմանը:

Զբոսաշրջությունը Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման հիմնական գործոններից է, որը նպաստում է երկրի կայուն տնտեսական առաջընթացին, շրջակա միջավայրի պահպանությանը, համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, պատմամշակութային ժառանգության և ավանդույթների պահպանությանն ու մշակութային արժեքների արժևորմանը:

Զբոսաշրջության զարգացումը խթանում է տնտեսության այնպիսի ճյուղերի զարգացումը, ինչպիսիք են՝ տրանսպորտը, կապը, առևտուրը, շինարարությունը, գյուղատնտեսությունը, սպառողական ապրանքների արտադրությունը:

Ակտիվ պետական քաղաքականության իրագործումը ոլորտի զարգացման պարտադիր պայմանն է, որը թույլ է տալիս տնտեսապես ոչ շատ զարգացած, բայց հարուստ բնական և մշակութային ներուժ ունեցող պետություններին գրավել առաջատար տեղեր միջազգային զբոսաշրջության շուկայում: [1]

Վերջին տարիների ընթացքում ՀՀ զբոսաշրջության ոլորտը զգալի աճ է ունեցել ներգնա զբոսաշրջային այցելությունների թվի և ստացված եկամուտների առումով: Սակայն դրա հետ մեկտեղ շուկայական պայմաններում կառավարման բարդության պատճառ էն հանդիսացել շուկայա-

կան իրավիճակի անորոշությունը, ապրանքների և ծառայությունների պահանջարկի անկայունությունը, մրցակցությունը, ֆինանսական ռեսուրսների պակասը, ծախսերի աճը, արտադրողականության անկումը, ապրանքների և ծառայությունների որակի վատթարացումը: Նման պայմաններում ձեռնարկությունը չի կարող սահմանափակվել միայն իր գործունեության ընթացիկ պլանավորմամբ և օպերատիվ կառավարմամբ:

Մարքետինգային հետազոտությունների և տնտեսական պրակտիկայի մեջ ռիսկի խնդիրը առաջնային տեղ է զբաղեցնում: Կարելի է եզրակացնել, որ զբոսաշրջային ոլորտը ևս պարունակում է բացահայտ և թաքնված սպառնալիքների զգալի շարք, որը հավասարապես վտանգավոր է ինչպես զբոսաշրջիկների, այնպես էլ զբոսաշրջային ծառայություններ մատուցողների՝ հյուրանոցների, ռեստորանների, ավիաընկերությունների և այլ ձեռնարկությունների համար:

Ռիսկերի կառավարումը կառավարչական որոշումների ընդունման և կատարման գործընթաց է, որն ուղղված է անբարենպաստ արդյունքի առաջացման հավանականության և դրա իրականացման հետևանքով հնարավոր կորուստների նվազեցմանը: [2]

Ժամանակակից տնտեսագիտությունը ռիսկը ներկայացնում է որպես հավանական իրադարձություն, որի առաջացման արդյունքում կարող են տեղի ունենալ միայն չեզոք կամ բացասական հետևանքներ:

Հաշվի առնելով զբոսաշրջության ռիսկերի կառավարման խնդիրը առանձնացնում են.

1. ձեռնարկատիրական ռիսկեր, որոնք կարող են նվազագույնի հասցվել ձեռնարկության կառավարման արդյունավետ մեթոդների ընտրության դեպքում,

2. ճանապարհորդող զբոսաշրջիկներին վերաբերող ռիսկեր, որոնց նվազեցումը իրականացվում է ապահովագրության մեխանիզմի միջոցով:[5]

Զբոսաշրջությունում ապահովագրության առանձնահատկություններն են.

✓ ռիսկայնությունը,

✓ կարճաժամկետ (6 ամսից ոչ ավելի) լինելը,

✓ անորոշությունը (ապահովագրական պատահարի առաջացման ժամանակի հավանականությունը),

✓ հնարավոր վնասի մեծությունը:

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական պատահարի հավանականությունը կարող է մեծանալ զբոսաշրջիկների թիրախային խմբերից, եղանակային պայմաններից, երկրի սոցիալ-քաղաքական իրավիճակից և այլ գործոններից կախված: Ապահովագրական ընկերությունները պարբերաբար հետազոտում են երկրի իրավիճակը, վերլուծում

նախորդ ժամանակաշրջանների համար առկա վիճակագրական տեղեկատվությունը՝ ապահովագրական դեպքերի հնարավոր քանակը կանխատեսելու նպատակով, ինչպես նաև հնարավոր կորուստների չափը:

Այսպիսով, ժամանակակից պայմաններում ապահովադիրները կարող են պաշտպանել իրենց գրեթե բոլոր անկանխատեսելի իրավիճակներից:


Քանի որ օրենսդրորեն սահմանված է, որ ձեռնարկատիրական գործունեությունը ռիսկային է, այդ իսկ պատճառով յուրաքանչյուր զբոսաշրջային ընկերություն իր գործունեության մեջ առնչվում է տարբեր ռիսկերի հետ, այսինքն՝ առկա է ռեսուրսների կամ եկամուտների կորստի պոտենցիալ վտանգ:

Ռիսկերի կառավարման նպատակն է բարձրացնել տնտեսվարող սուբյեկտների մրցունակությունը մաքուր ռիսկերից պաշտպանվելու միջոցով: Գոյություն ունեն կառավարման գործառույթների դասակարգման տարբեր հատկանիշներ: Առավել արդյունավետ է այն տեսակետը, որ կառավարման գործառույթները բաժանվում են երկու խմբերի՝ [4]

❖ ընդհանուր


❖ հատուկ:

Ընդհանուր գործառույթները հաշվի չեն առնում կառավարման օբյեկտի բնույթը և առանձնահատկությունները և համապատասխանում են կառավարման գործառույթներին, իսկ *հատուկ* գործառույթները բխում են կառավարման ռեսուրսների գործառույթներից և վերաբերում են տնտեսական գործունեության տեսակներին: Այս իրավիճակում զբոսաշրջային ռիսկերի կառավարումը սահմանվում է որպես զբոսաշրջային ձեռնարկության կառավարման հատուկ գործառույթ: Այն ծառայում է որպես կապող օղակ իր կառուցվածքային տարրերի՝ զբոսաշրջային արտադրանքի մենեջմենթի և կազմակերպչական մենեջմենթի միջև, որը ներկայացված է ստորև բերված աղյուսակ 1 - ում: [4]



Գծապատկեր. 1
 Զբոսաշրջային գործունեության կառավարման տարրեր

Ռիսկերի կառավարման մեթոդները բավականին լավ են ուսումնասիրված տնտեսության տարբեր ոլորտներում, սակայն զրոսաշրջությանում արդյունավետ չեն կիրառվում: Ռիսկերի կառավարման մեթոդները կապված են տուրօպերատորների գործունեության հետ, որոնք հանդես են գալիս որպես առանցքային սուբյեկտ զրոսաշրջային ծառայությունների շուկայում: [5]



Գծապատկեր 2
Ռիսկերի կառավարման գործընթացը

Ռիսկերից նվազեցումը կամ կանխումը արդյունավետ է այն դեպքում, երբ ռիսկի մակարդակը տուրօպերատորի համար անընդունելի է համարվում: Հետևաբար, ավելի նախընտրելի է խուսափել նման գործունեության հետ կապված ռիսկերից, քան կառավարել դրանք: Դա ենթադրում է հրաժարվել որոշ գործընկերների հետ շփումներից և զբոսաշրջային ծրագրերի ներդրումներից, որոնց կատարելիությունը կասկածներ է առաջացնում:

Այս մեթոդն ուղղորդում է տուրօպերատորին աշխատել միայն իր հուսալիությունը հավաստող գործընկերների հետ: Նման մոտեցումը կիրառելի է նաև սպառողների համար, որոնք զբոսաշրջային արտադրանք են գնում տուրօպերատորներից և տուրգործակալներից: Եթե զբոսաշրջիկը հրաժարվում է վճարել ամրագրված տուրի դիմաց պահանջում է հետաձգել տուրը կամ ունի բացասական «զբոսաշրջային պատմություն», ապա տուրօպերատորը կարող է ներառել այդ սպառողին «սև ցուցակ» և հրաժարվել նրա հետ հետագա համագործակցությունից: Դրանով տուրօպերատորը կնվազեցնի ֆինանսական ռիսկերը և կհաստատի իր հեղինակությունը՝ որպես կայացած կազմակերպություն: Այս մեթոդի կիրառման հնարավորությունը ժամանակակից պայմաններում միանգամայն իրական է: [4]

Ռիսկերից նվազեցման մեթոդներից է նաև տուրերի չեղարկման թայմ-լիմիտների կիրառումը տուրօպերատորների կողմից: Այս մեթոդը ապահովում է տուգանքների վճարումը զբոսաշրջիկների կողմից տուրից հրաժարվելու դեպքում: Տվյալ ռիսկը տուրգործակալների համար իր մեջ պարունակում է ֆինանսական կորուստներ, քանի որ մեծ թվով ամրագրված տուրերի չեղարկումը կարող է հանգեցնել տուրի ձևավորման և վաճառքի ծախսերի փոխհատուցման բարդությունների: Այս դեպքում միակ միջոցը տուգանքների չափի որոշումն է կախված տուրից հրաժարվելու օրվանից մինչև տուրի սկիզբը մնացած ժամանակից: Տուգանքի մեծությունը կախված է նաև տուրարտադրանքի առանձնահատկություններից, տրանսպորտային ծառայությունների սակագներից, սեզոնից և այլն:

Ինքնապահովագրության մեթոդը տուրօպերատորի համար ներկայացնում է հետաքրքրություն՝ որպես ռիսկի աստիճանի նվազեցման միջոց: Այդ դեպքում ապահովադրի շահերից տարբերվող սեփական շահերով ապահովագրողը՝ որպես ինքնուրույն միավոր, բացակայում է: Իր ռիսկերը նվազեցնելու ցանկություն ունեցող տուրօպերատորը ներքին ռեսուրսների հաշվին (մասնավորապես, շահույթից մասհանումներից) ձևավորում է իր սեփական ապահովագրական (պահուստային) ֆոնդը, որի օգտագործումը թույլ է տալիս հաղթահարել ներքին ֆինանսատնտեսա-

կան գործունեության դժվարությունները: Միևնույն ժամանակ, պետք է հաշվի առնել, որ ինքնապահովագրությունը չի կարող ապահովել պաշտպանություն խոշոր ռիսկերից և սատեցնում է պաշտպանված ռեսուրսները:

Ռիսկի պահպանման մեթոդը - ռիսկի ընդունումը և օգտագործումը տուրօպերատորի կողմից հիմնականում կիրառվում է այնպիսի զբոսաշրջային ծրագրերի մշակման և ներդրման ժամանակ, որոնց հաջողությունը երաշխավորված չէ, բայց շահույթի ստացման հավանականությունը մեծ է, քանի որ պահանջարկ է վայելում զբոսաշրջիկների որոշակի խմբերի մոտ: Որպես կանոն, սրանք այն ծրագրերն են, որոնք դեռևս լայնորեն չեն փորձարկվել զբոսաշրջությանում, սակայն ունեն օգտագործման մեծ ներուժ: Խոսքը արագ զարգացող ակտիվ զբոսաշրջության տեսակների մասին է, որոնք հասու են ոչ բոլոր զբոսաշրջիկներին: Տվյալ դեպքում տեղի է ունենում ռիսկի մուլտիպլիկատիվ էֆեկտ. ինչպես զբոսաշրջիկներն իրենք են կրում այդ բարձր ռիսկը, այնպես էլ տուրօպերատորներն ու տուրգործակալները՝ որպես տուրերի արտադրողներ և վաճառողներ: Նրանց ռիսկերը կապված են յուրահատուկ զբոսաշրջային ծրագրերի բարդության և «անվտանգություն-շահութաբերություն» օպտիմալ հավասարակշռություն գտնելու հետ: [6]

Ռիսկի փոխանցումը - կառավարման մեկ սուբյեկտից (տուրօպերատորից) ռիսկի հանձնումը մյուսին (ապահովագրական ընկերությանը): Զբոսաշրջային շուկայում կիրառվում են անձնական և գույքային ապահովագրության տեսակները: Առաջին դեպքում ապահովագրության օբյեկտ են հանդիսանում զբոսաշրջիկների կյանքին և առողջությանը հնարավոր վնաս հասցնելու, նրանց բժշկական ծառայությունների մատուցման հետ կապված շահերը (դժբախտ պատահարներից ապահովագրություն, բժշկական ապահովագրություն): Երկրորդ դեպքում քաղաքացիական օրենսդրությունը կարգավորում է ապահովագրության երեք տեսակ՝ գույքի ապահովագրություն, քաղաքացիական պատասխանատվություն և ձեռնարկատիրական ռիսկեր: Ապահովագրության տեսակները կարելի է նույնացնել հետևյալ սկզբունքներով.

- Զբոսաշրջային՝ տուրերի պլանավորման և իրականացման ժամանակ զբոսաշրջիկների վրա ազդող,
- Տնտեսական՝ զբոսաշրջային ինդուստրիայի ձեռնարկությունների գործունեության վրա ազդող ռիսկերի:

Առաջին խումբը ներառում է հետևյալ տեսակները [7].

- զբոսաշրջիկների պարտադիր և կամավոր բժշկական ապահովագրություն,
- դժբախտ պատահարներից զբոսաշրջիկների ապահովագրություն,

➤ անձնական օգտագործման իրերի և զբոսաշրջային հանդերձանքի ապահովագրություն,

➤ զբոսաշրջիկների ծախսերի ապահովագրություն անկատար ուղևորության դեպքում,

➤ արտասահման ժամանակավոր մեկնող զբոսաշրջիկների քաղաքացիական պատասխանատվության ապահովագրություն

➤ ապահովագրության յուրահատուկ տեսակներ (ապահովագրություն "վատ եղանակի", չվերադառնալու, ծառայությունների առանձին տեսակների չտրամադրելու և այլն):

Ապահովագրության տեսակների երկրորդ խումբը ներառում է.

➤ տուրօպերատորի ֆինանսական պատասխանատվության պարտադիր ապահովագրություն՝ ստանձնած պարտավորությունները չկատարելու համար,

➤ տուրօպերատորի գույքի ապահովագրություն,

➤ տուրօպերատորական գործունեության ձեռնարկատիրական ռիսկերի ապահովագրություն,

➤ ապահովագրության հատուկ տեսակներ:

Դիսսիպացիոն մեթոդը ժամանակակից պայմաններում ներկայացնում է տուրօպերատորական ռիսկերի կառավարման հիմնական գործիքներից մեկը: Կազմակերպչական, ֆինանսական և տեխնոլոգիական ռիսկերի տարանջատումը այլ գործընկերների հետ, ինչպես նաև տարածաշրջանային կամ տարածքային բաշխումը թույլ է տալիս բաշխել ռիսկերը գործընկերների միջև: Գործնականում այս մեթոդը կարող է կիրառվել զբոսաշրջային շուկայի տարբեր մասնակիցների միավորման տեսքով, որոնք հետաքրքրված են ընդհանուր գործի հաջողությամբ: Արդյունքում՝ տուրօպերատորը նվազեցնում է սեփական ռիսկի մակարդակը, խնդիրների լուծմանը ներգրավելով տարատեսակ գործընկերների: Այդ նպատակով ստեղծվում են դաշինքներ հյուրանոցների և փոխադրողների հետ, տուրօպերատորները մտնում են տարբեր կոնսորցիումներ, ասոցիացիաներ և այլն: [16]

Դիսսիպացիոն մեկ այլ մեթոդ՝ **դիվերսիֆիկացիան**, զբոսաշրջության ոլորտում իրականացվում է երկու ուղղություններով:

1. Գործունեության տեսակների դիվերսիֆիկացիա, այսինքն մատուցվող զբոսաշրջային ծառայությունների ցանկի ընդլայնում, զբոսաշրջիկների տարբեր թիրախային խմբերին ուղղված առաջարկների ձևավորում և այլն: Տուրօպերատորներին ժամանակակից պայմաններում վտանգավոր է կենտրոնանալ մատուցվող ծառայությունների նեղ շրջանակի վրա: Դիվերսիֆիկացիայի այս տեսակը ենթադրում է ապրանքային քաղաքականություն իրականացնելու ճկունություն: [5]

2. Զբոսաշրջային գոտիների և սպառողների դիվերսիֆիկացիա, այսինքն՝ աշխատանք զբոսաշրջիկների տարբեր կատեգորիաների հետ ինչպես ներքին, այնպես էլ արտասահմանյան շուկայում: Դրա հետ մեկտեղ հարկ է հաշվի առնել նաև կոնկրետ տուրօպերատորի աշխատանքի առանձնահատկությունները, արդեն իսկ զբաղեցրած «շուկայական դիրքը», որը թույլ կտա նրան դուրս գալ այլ շուկաներ [8]:

Այսպիսով, ռիսկերի կառավարումը զբոսաշրջության ոլորտում կառավարչական որոշումների ընդունման և կատարման գործընթաց է, որն ուղղված է անբարենպաստ արդյունքի առաջացման հավանականության և դրա իրականացման հետևանքով հնարավոր կորուստների նվազեցմանը:

Զբոսաշրջային ձեռնարկության ռիսկերի կառավարման մեջ յուրաքանչյուր մեթոդ թույլ է տալիս օպտիմալացնել զբոսաշրջային ձեռնարկությունում առկա ռիսկերը և կանխատեսել հնարավորները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. <<Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը, ընդունված 17 դեկտեմբերի 2003թ

2. Գրիգորյան Ռ.Լ. Ռիսկի կառավարում. ԵՊՃՀ., 2010

3. Балдин К.В., Воробьева С.Н. Управление рисками / К.В. Балдин, С.Н. Воробьева. – М., 2005.

4. Иода Е.В. Управление предпринимательскими рисками / Е.В. Иода, Ю.В. Иода, Л.Л. Мешкова, Е.Н. Болотина. – Тамбов, 2005.

5. Каракич О.С. Анализ рисков туристической компании в современном мире. – М., 2009. Королько А.С. Семь нот менеджмента/ А.С. Королько // Журнал Эксперт. – 2006.

6. Овчаров А.О. Управление рисками в сфере туристских услуг // Вестник Санкт-Петербургского университета, 2008.

7. Подлобошникова Е.М. Управление рисками в туризме // Туризм, 2009.

Асмик Саядян, Необходимость управления рисками в туризме - Статья посвящена актуальной теме современности – развитию туристической сферы услуг. В Республике Армения определена экономическая задача государственной политики в сфере туристических услуг – превратить туризм в конкурентоспособный, инновационный, устойчивый и высокодоходный сектор национальной экономики. В статье рассматриваются методы управления рисками в туризме. В условиях воздействия разнообразных внешних и внутренних факторов риска в туроператорской деятельности могут использоваться различные способы

снижения риска. Оцениваются базовые методы управления рисками, в частности отказ от риска, снижение, передача и принятие риска.

Hasmik Sayadyan, The necessity for risk management in tourism - The article is devoted to the current topic of modern times - the development of the tourist sphere of services. The Republic of Armenia has defined the economic task of the state policy in the sphere of tourism services - to turn tourism into a competitive, innovative, sustainable and highly profitable sector of the national economy. The article discusses methods of risk management in tourism. In the context of various external and internal risk factors, various ways of reducing risk can be used in tour operators. Basic risk management methods, such as risk mitigation, reduction, transfer and acceptance, are assessed.


ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՐՈՍ ՄՈՎՍԷՍԻ ԹՈՎՄԱՍԵԱՆ, ՆԱՐԵԿԱՅ ՎԱՆՔԸ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՆ, ԵՐԵՒԱՆ, 2019, 223 էջ:

ՊԵՏՐՈՍ ՄՈՎՍԷՍ ԹՈՎՄԱՍԵԱՆ



ՆԱՐԵԿԱՅ ՎԱՆՔԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ՋԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՆ



Այս ամիս մեծագոյն ուրախութեամբ ստացանք եւ հոգեկան մեծ բա-
ւարարութեամբ վայելեցինք վերոնշեալ հատորին ընթերցումը, որուն հե-
ղինակն է մեր շատ սիրելի հայրենակից՝ իրաքահայ պատմաբան՝ Պետ-

րոս Մովսեսի Թովմասեան Հեղինակը մօտ 30 տարիէ աւելի մասնագիտութեամբ ճարտարագէտ է, բայց հետաքրքրութեամբ միշտ ալ սիրած եւ պրպտած է հայոց պատմութիւնը: Համալսարանական տարիքէն սկսեալ, ան հայոց պատմութեան դասընթացքներ կազմակերպած է Պաղտատի Հայր Երիտասարդաց Ակումբէն ներս, իսկ Ամերիկա տեղափոխուելով, հոս եւս նման դասընթացք մը կազմակերպեց Կլենտլիի Գալիֆորնիոյ Հայ Երիտասարդաց Միութեան Կեդրոնէն ներս, միշտ ալ արժանացած է ներկայ եղողներուն ամենաջերմ գնահատանքին:

223 էջնոց այս խիստ գիտական հատորը, հրատարակուած է Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի պատմութեան ինստիտուտի կողմէ, Երեւան Դեկտեմբեր 2019-ին:

Այսօր երբ հայ ժողովուրդը կը պատրաստուի Հայոց Ցեղասպանութեան Սրբադասուած նահատակներուն 105-րդ տարելիցը նշելու, մարդկային նահատակներու նման բազմահազար վանքերու, եկեղեցիներու, դպրոցաշէնքերու, մշակութային կոթողները, ամրոցները, բերդերը բոլորն ալ զոհ գացին ցեղասպան թուրքին ձեռքով: Այո այս վանքերը, եկեղեցիները, ամրոցները բազմաթիւ տարբեր պատերազմներու զոհ եղան, թալանչիներ տեսան իրենց երկհազարամեայ պատմութեան ընթացքին, բայց բոլոր անցեալի ներխուժողները թուրք չըլլալուն համար, այդ կոթողները կանգուն մնացին, կամ՝ մասամբ քանդումի ենթարկուեցան, բայց Օսմանեան ոհմակները ուր որ գացին, մէջը ըլլալով Հայաստանը, քարուքանդ ըրին այդ երկիրներու սրբատեղիները, մշակութային կոթողները եւ կրթարանները, ճիշդ ատոր համար է, որ երբ քարուքանդ տեսարան մը տեսնեն, մարդկութիւնը կըսէ. «Թուրքը հոսկէ անցած է»:

Պետրոս Թովմասեանի հինգերորդ հատորն է այս մէկը: Անցեալին ունեցած է նոյնքան արհեստավարժ բովանդակութեամբ եւ տպագրութեամբ չորս պատմական հատորներ:

1. Հայկական Լեռնաշխարհը եւ Միջագետքը
(հին ժամանակներէն մինչեւ 1 թ. Ք.Ե.) Երեւան Զանգակ, 2006
2. Արարատ-Ուրարտու Աստուածաշունչի ընդմեջէն
Երեւան, Զանգակ, 2012
3. Աբասեան Խալիֆայութեան Վերջին Պատմաշրջան եւ Հայութիւնը
(Հայկական ծագումով հայ Խալիֆաներ) Պատմութեան Ինստիտուտ,
Երեւան 2016
4. Վարազայ Վանքը Պատմութեան Քառուղիներուն
Պատմութեան Ինստիտուտ, Երեւան 2018

Պետրոս Թովմասեանի հինգերորդ հատորը եւս նախորդներուն պէս շատ արհեստավարժ գիտական եւ տպագրական որակով հրատարակու-

թին մըն է, որ արժանի է եւ կարելի է նկատել, որպէս գիտական բարձրագոյն վկայականի աւարտաճառ:

Գիրքը բաժնուած է վեց «գլուխներու», որոնք կը ներկայացնեն վանքի հազար տարիներու պատմական ժամանակաշրջանները:

Իւրաքանչիւր գլուխ բաժնուած է «բաժիններու», իւրաքանչիւրը կը ներկայացնէ վանքի կարելոր պատմական յատկանշական դէպք մը, կամ հանգրուան մը: Գիրքը ունի 75 բաժին եւ այդ բաժինները իրենց հերթին կ'ընդգրկեն «ցուցակ»ներ, որոնք պատրաստուած են նոյնինքն հեղինակին կողմէ, տուած տեղեկութիւնները աւելի հետաքրքիր դարձնելու համար: Գիրքի վերջաւորութեան տրուած են աղբիւրներու եւ անուններու ցանկերը:

Նարեկայ Վանքը կառուցուած է Փոքր Հայքէն Հայաստան ներգաղթած հայ կրօնաւորներուն կողմէ, որոնք Բիւզանդացիներու կողմէ հալածուած էին իրենց դաւանանքին պատճառաւ: Բիւզանդիոնի կողմէ կուզէր հայերը միացնել Բիւզանդական եկեղեցիին հետ, իսկ ներգաղթող կրօնականները եկան Հայաստան եւ հիմնեցին հայ առաքելական դաւանանքով եկեղեցիներ եւ վանքեր եւ Նարեկայ գիւղին մէջ ալ կը հիմնեն Նարեկայ Վանքը 946-950 թուականներուն:

Այսպէս, Նարեկայ Վանքը կառուցուած է Բագրատունեաց Աբաս Ա. իշխանի եւ Արծրունեաց Դերենիկ Արծրունի իշխանի եւ Էջմիածնի Անանիա Մոկացի Կաթողիկոսի գահակալութեան տարիներին:

Նարեկայ Վանքին մէջ գոյութիւն ունէր երկու եկեղեցի, Ս. Սանդուխտ եւ Ս. Աստուածածին եւ փոքր մատուռ մը Ս. Գրիգոր Մատուռ: Իսկ Նարեկայ Վանքին ենթակայ բազմաթիւ եկեղեցիները եւ հոգեւոր տուները գոյութիւն ունէին:

Ուխտանէս պատմիչի համաձայն, Նարեկայ Վանքը կոչուած է «Աստուծաշունչ Դրախտ» եւ այդ դրախտին մէջ ծնաւ Նարեկայ Վանքի «անմահ մշտնջենական պտուղը» Ս. Նարեկ Գիրքը:

Նարեկայ Վանքը կը հանդիսանայ միջնադարեան Հայաստանի նշանաւոր կրօնական եւ մշակութային կեդրոններէն մին, որ կը գտնուէր Վանայ լիճի հարաւր Նարեկ գիւղին մէջ:

Այս վանքը Հայաստանի եւ հայ ժողովուրդի անուանի վանքերէն է: Ան տասը երկար դարեր, բազմաթիւ դժուար եւ ծանր պայմաններ ունենալով հանդերձ կրցած է իր գոյութիւնը պահել եւ աշխոյժ գործունէութիւններ ծաւալել:

Այս վանքը դարեր շարունակ հանդիսացաւ հայ գրչութեան կեդրոն մը, ուր զարգացաւ գրչութիւնը, մանրանկարչութեան արուեստը, հայոյ ոգին միշտ վառ պահող կարելոր բերդ մը, գիտութեան եւ մշակոյթի լուսաշող փարոս մը:

Գրիգոր Նարեկացին ծնած է 951-ին Նարեկայ գիւղին մէջ, հեգեւորական եւ մտաւորական ընտանիքի մը յարկին մէջ:

Ծնողքը բախտաւորուած էին երեք որդիներով, Սահակ, Յովհաննէս եւ կրտսերը՝ Գրիգոր, հայրը Խոսրով Անձրեւացի, որ յայտնի եկեղեցական դէմք մըն էր, իր կինը կորսնցնելով, մուտք գործեց եկեղեցական կեանքին մէջ եւ հասաւ մինչեւ Արքեպիսկոպոսի աստիճան:

Գրիգորին եղբայրը Յովհաննէս եւս կղերական եղաւ Նարեկայ Վանքին մէջ, իսկ միւս եղբայրը Սահակը մասնագիտացաւ իր հօր երկասիրութեան մէջ:

Նարեկայ Վանքը իր հազարամեայ պատմութեան մէջ, Բիւզանդական, պարսկական եւ արաբական բազմաթիւ ներխուժումներ տեսած է, այդ մեծ պետութեանց պատերազմի դաշտ եղած է հայոց Բագրատունեաց եւ Արծրունեաց հարստութեանց սահմանները, այնուհանդերձ այս վանքը քաղաքական պայմաններու բերումով միշտ կրցաւ իր գոյութիւնը պահել եւ հայ հոգեւոր ու մշակութային գործերը շարունակել մինչեւ որ 1453-ին Օսմանցիները գրաւեցին Կ. Պոլիսը եւ վերջ տուին բիւզանդական երկարամեայ հարստութեան, այդ յաղթանակէն ետք Օսմանեան կայսրութիւնը ընդարձակուեցաւ եւ եղաւ մեծ կայսրութիւն մը: 1508-ին Պարսկաստանի մէջ Սեֆեւեանները կործանեցին Ակ-Կոյունլուներու պետութիւնը եւ ստեղծեցին Սեֆեւեան կայսրութիւնը: Այս անգամ մեծ պայքար մը սկսաւ երկու նոր հզօր կայսրութիւններու միջեւ թուրք-Օսմանեան եւ պարսիկ-Սեֆեւեաններու միջեւ:

Հայաստանը եւ իր Նարեկայ Վանքի ռազմավարական կարեւոր դիրք ունենալով, երկու կայսրութիւններ կուզէին իրենց սահմաններէն ներս, ունենալ Հայաստանը: Այդ պատերազմը տեւեց մօտ երկու տասնեակ տարիներ, Հայաստանի Շիրակ, Արեւմտեան դաշտը, Մինիք եւ Նախիջեւանը Օսմանցիներու կողմէ ենթարկուեցան կողոպուտի, քանդումի, հայկական աշխարհը քարուքանդ ընելով, իսկ միւս կողմէ պարսիկները գրաւեցին Բարձր Հայքը եւ Վասպուրականի շրջանը:

Մայիս 29, 1555-ին այս երկու տասնեակ տարիներ պատերազմող Օսմանեան եւ պարսկական կայսրութեանց պատերազմը վերջ գտաւ համաձայնութեամբ մը, եւ Հայաստան առաջին անգամ ըլլալով բաժնուեցաւ Թուրքիոյ եւ Պարսկաստանի միջեւ: Նարեկայ Վանքը եղաւ Օսմանեան կայսրութեան սահմաններէն ներս բացի անկէ այդ տարիներուն երկու մեծ երկրաշարժներ տեղի ունեցան Վասպուրականի շրջանի մէջ, ուր Նարեկայ Վանքը կը գտնուէր:

Պատմական, քաղաքական եւ մշակութային այս խոր ուսումնասիրութեամբ, հեղինակի ներկայացուցած է Նարեկայ Վանքի պատմաշրջա-

նը իր բոլոր երեսներով հաճելի ընթերցումով կը ծանօթացնէ մեր հոգեւոր կեանքի այս գլուխ գործոց վանքի գործունէութեան մասին:

Ինչպէս յիշեցինք, Նարեկայ Վանքի մեծագոյն եւ անմահագոյն գլուխ գործոց եղաւ ու կը մնայ վանքի Անմահ մշտնջենական պտուղը՝ «Մատենան Ողբերգութեան» աղօթամատեանը: Գրիգոր Նարեկացին այս մատենանը գրեց 1002 թուականին 55 տարեկան կեանքի փորձառութեամբ հասուն տարիքին մէջ:

Մատենանը կը բաղկանայ 95 գլուխներէ եւ ընդհանուր 366 ստորաբաժանումներէ, այնպէս որ այդ Մատենանը գրուած է որպէս տարուան իւրաքանչիւր օրուայ աղօթագիրք եւ աղաչանքագիրք մը:

Ս. Գիրքէն ետք հայ ժողովուրդի ամենէն շատ կարդացուած եւ սիրուած գիրքն է այս մատենանը, որ հազար տարիէ ի վեր եղած է հայ տուներուն պահապանը, ցաւերու եւ հիւանդներու բուժիչ, հոգիներու մխիթարիչ: Այս գիրքը մեր ժողովուրդին համար միայն «Նարեկ» բարով ծանօթ է:

Հայ եկեղեցիին մէջ Նարեկը Սուրբ Խորանին վրայ Ս. Աւետարանի կողքին, կը դրուի պատարագի ատեն: Այս «Մատենան»ին մասին բազմաթիւ հայ եւ օտար դէմքեր գրած են, որոնցմէ մին Ամենայն հայոց բանաստեղծ Յովհաննէս Թումանեանը այսպէս գրած է այս գիրքին մասին:

«Լեզուն չէ որ խօսում է, բերանը չէ, որ պատմում է, կրակուած սիրտն է, որ այրում է, տանջուած հոգին է, որ մոնչում է մինչեւ երկինք»: Այս մատենանը թարգմանուած է 30-է աւելի լեզուներու, գրական գլուխ գործոց մըն է, ուր կը համեմատուի Հոմերոս Կոմիտասի, Դանթէի, Շէքսպիրի եւ Կոթէի գործերուն հետ, կըսէ հեղինակը:

Գրիգոր Նարեկացիի բազմաբեղուն վաստակը, անոր հրաշագործութիւնները, ժողովուրդի կողմէ անոր հանդէպ ունեցած սէրը շատ գեղեցիկ եւ հաճելի ձեւով ներկայացուած են այս հատորին մէջ, որոնք ցոյց կու տան հեղինակին՝ Պետրոս Մովսէսի Թովմասեանի ճաշակը եւ գրելու գնահատելի ոճը:

Նարեկայ Վանքը, որ հայ ժողովուրդի ծոցէն ծնաւ եւ հազար տարի հայ հողին վրայ գործեց, եւ որպէս կենդանի վկայ տեսաւ մեր ժողովուրդին դաժան եւ լուսաւոր օրերը:

Դժբախտաբար 1895-ին Ապտուլ Համիտ հրէշ Սուլթանի կողմէ, հայ ժողովուրդը կենթարկուի մեծ ջարդի մը, զոր մանրամասնութեամբ կը կարդանք այս գիրքին մէջ Նարեկայ Վանքի եւս թուրք ջարդարարներու կողմէ այրուեցաւ, հայութեան եւ մարդկութեան լուսաշող այս աստղին լոյսը մարեցաւ, բայց անոր «Նարեկ» գիրքով վերածնաւ եւ մարդկութեան եւ հայութեան պատմութեան մէջ անմահ մնաց:

Այսօր Գրիգոր Նարեկացին աշխարհի բոլոր քրիստոնէաներուն մօտ ծանօթ անուն մըն է, իսկ Վատիկանի մէջ Ապրիլ 5, 2018 Արհիապա-

տիւ Ֆրանսիսքօ Պապի ներկայութեամբ Վատիկանի մէջ կանգնած է Գրիգոր Նարեկացիի արձանը, եւ Վատիկանի Հայրապետը հայ Սուրբին շնորհած է «Եկեղեցոյ Ուսուցիչ» կոչումը:

Յիշենք, թէ այս տիտղոսը Վատիկանի կողմէ հաստատուած է 1298-ին, եւ այդ թուականէն մինչեւ օրս միայն 36 «Եկեղեցոյ Ուսուցիչ» ունեցած է Վատիկան, որուն վերջինն էր հայազգի Գրիգոր Նարեկացին:

Այսօր երբ հայ ժողովուրդը կը պատրաստուի Ապրիլ 24, 2020 ոգեկոչելու համար մեր սրբադասուած նահատակներուն անմահ յիշատակը որքան տեղին եւ շահեկան վկայութիւն եւ գործ մըն է Նարեկայ Վանքին նուիրուած այս հատորը: Այս վանքին նման բազմաթիւ վանքեր, եկեղեցիներ, կալուածներ եւ ինչքեր կողոպտուեցան, քանդուեցան եւ այրուեցան թուրք եւ անոնց գործիչ դարձած քիւրտերու կողմէ: Բազմահազար հայեր կրօնափոխ եղան եւ այժմ կ'ապրին պատմական մեր հայրենի հողին վրայ:

Այո այս բոլորին հաշիւը անպայման պիտի պահանջուի թուրք իշխանութիւններէն եւ բանաստեղծներու իշխան Վահան Թէքէեան ըսածին պէս.

Թուրքին

«Պիտի զարնեն քեզ անոնք

որ քեզ յաճախ փրկեցին»

Մինչ այդ ձեռքի ամուր սեղմումով կը շնորհատրենք Պետրոս Մովսէսի Թովմասեանը հայրենասիրական այս խիստ շահեկան հատորին համար եւ մեզի տրուած անսպառ տեղեկութիւններուն համար, մաղթելով իրեն նորանոր հրատարակութիւններ:

ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅՈՑ ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՊԱՏՄԱԲԱՆ ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԽԻՎԻՑ¹

28/7 Թիֆլիս

Ք.Բ.Արման. N42, կ.11

Մոսկվա

Գործ 41, 49, 17/օ

Մոսկվա, Արտգործժողկոմատ Տեր-Գաբրիելյանին

Օրերս Թավրիզից ժամանած Սիրական Տիգրանյանը մայիսի 12-ին ոչ պաշտոնապես հաղորդում է, որ Չանգեզուրում տեղի է ունեցել դաշնակների գաղտնի խորհրդակցություն Անկարայի կառավարության ներկայացուցիչների՝ մուսավաթականների հետ: Խորհրդակցությանը մասնակցել է Վրացյանը, որը հատուկ ժամանել է այնտեղից՝ Թավրիզից: Խորհրդակցության որոշումները հայտնի չեն: Խորհրդակցությունից մի քանի օր հետո ցրվել է Նժդեհի Կառավարությունը, որը կոչվում էր Լեռնային Հայաստանի կառավարություն, և կազմակերպվել է նոր կառավարություն, որը կրում է «Միացյալ Հայաստանի Կառավարություն» անվանումը: Նոր կառավարության անվանման մեջ եղած «Միացյալ» բառը ցույց է տալիս Թուրքահայաստանի տարածքի մի մասի վերաբերյալ թուրքերի հետ դաշնակների համաձայնության կնքելու հնարավորությունը: Նոր կառավարության գլուխ կանգնած է Վրացյանը, կառավարության կազմի մեջ մտնում են Համո Օհանջանյանը, Նժդեհը, Ռուբեն Տեր-Մինասյանը: Չանգեզուրի ներկայացուցիչներ չկան: Կոստանդնուպոլսի հակադաշնակցական հայ մամուլը նույնպես հաղորդում է դաշնակների ու քեմալականների միջև տեղի ունեցող բանակցությունների մասին: Լրիվ տեղեկատվություն առայժ չկա: Մենք Չանգեզուրի հետ գտնվում ենք պատերազմի վիճակում: Բովանդակությունը խնդրում եմ հաղորդել ընկ. Չիչերինին: N 1988:

ՄՈՒԱՎՅԱՆ

Խորհրդ. Հայաստանի Ժողկոմխորհից.

19 հունիսի 1921 թվականի:

¹ Այս համարից նորից շարունակում ենք արխիվային վավերագրերի հրապարակումը պատմաբան, ակադեմիկոս Լենորուշ Խուրշուդյանի անձնական արխիվից, որոնք մեզ է տրամադրել նրա որդին Ռուբեն Խուրշուդյանը: Սույն վավերագրերն առնչվում են 1921 – 23թթ. իրադարձություններին և շօր նկատմամբ բոլշևիկների քաղաքականությանը:

**ՄՈՍԿՎԱ, ԱՐՏԳՈՐԾԺՈՂԿՈՄՍՏ, ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ**

ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Ստորև բերված գրությունը հասցեագրվում է Ձեզ և Ռ.Կ.Կ. Կոնտկոմին: Հ.Կ.Կ. Կենտկոմի և Հայաստանի ԽՍ. Հանրապետության Կառավարության անունից հայտարարում ենք, որ Դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչների 1921 թվականի մայիսի 26-ի դիմումը Վ. ՓԱՓԱՋՅԱՆԻ ստորագրությամբ պետք է թողնվի առանց պատասխանի, որի համար իբրև հիմնավորում կարող է ծառայել հետևյալը. Առաջին. Խորհրդային իշխանությունը և Կոմկուսակցությունը դաշնակների հետ պայմանագրային ոչ մի հարաբերության մեջ չեն եղել և չեն: Երկրորդ, ճիշտ չէ, որ Հայաստանի աշխատավորության շրջանում և ընդհանրապես հայերի մեջ դաշնակներն ունեն որևէ ազդեցություն, ընդհակառակը, այժմ չկա մի հայ, որ այդ կուսակցությանը չանիծի նրա արկածխնդրությունների, խարդախ գործերի, դավաճանության և անսահման հակահեղափոխության համար: Երրորդ, սույն մայիսի 16-ին դաշնակները նենգաբար հարձակվել են մեր գործերի վրա՝ չնայած Ջանգեզուրի գործը խաղաղ ճանապարհով վերացնելու մեր ջանքերին ու կատարած քայլերին: Խորհրդային Հայաստանը գտնվում է պատերազմի մեջ Ջանգեզուրի հետ, և դաշնակների կամքով Ջանգեզուրի հարցը այսուհետ կլուծվի պատերազմով: Բոլոր այս նկատառումներով, ավելի լավ կլիներ դաշնակցական մտավորականության մնացորդներին ուղարկել մեզ մոտ՝ Հայաստան, թող նրանք այստեղ զանգվածների առաջ ու բացահայտորեն հայտարարեն, թե ինչ են ուզում: Ռ.Ս.Ֆ.Խ.Հ.-ը կից Հայաստանի ներկայացուցիչը, մեր կարծիքով, չպետք է մասնակցություն ունենա բանակցություններին և եթե նա մեկնել է բանակցությունների համար, ապա պետք է հետ կանչվի: Ծայրահեղ դեպքում նա կարող է դաշնակների հետ խոսել մասնավոր կարգով՝ նստած լինելով Մոսկվայում: N 62/2

ՄՅԱՍՆԻԿՈՎ

ՀԵՌԱԳԻՐ

ՄՈՍԿՎԱ, ծածկագիր, ԳՔՎ. ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՍ

ԹԻՖԼԻՍ, 183/Ս 93 26 7 18 34

Հանձնել ՄԵՆՇԻՆՍԿՈՒՆ, պատճենը ՎՈԼԼԵՆԲԵՐԳԻՆ: Սերգոն առաջարկում է համաձայնության գալ Դրոյի հայտարարությանը՝ վերացնել բոլոր նստած դաշնակների, այդ թվում Ջանադովներին ազատ արձակելու գործը, որոնք պատրաստ են պրոցեսի: Սերգոյի խնդրանքով խնդրում եմ համաձայնեցնել Ստալինի հետ և շտապ ցուցումներ տալ ինձ:

Նո. 445/2 18 հուլիսի 1923թ. ԱնդրկՍՀ նախ. Մոզվսկի

Վերծանել է Յանսոնը 26/7-23 թ. 23-30, տպ. 2 օր.

Ճիշտ է ՊՔՎ-ի քար

տուղար Տաուրին

ՀԵՌԱԳԻՐ

Ծածկագիր

ՄՈՍԿՎԱ ՇԻՖՐ ՊՔՎ

ԹԻՖԼԻՍԻՑ 180/Ս 98 26 7 16 11

Հաղորդել ՄԵՆՇԻՆՍԿՈՒՆ: Անդրերկրկումի որոշմամբ որոշվել է չեղյալ համարել Ջեմալի գործով ձերբակալված դաշնակների գործերը, այդ թվում Դաշնակների ԿԿ-ի անդամներին՝ Դրոյի հայտարարության ստորագրման հիման վրա: Դրա համաձայն Վրացական Արտհանձն. կողմից այսօր դաշնակներն ազատ են արձակվել: Մենք պետք է նրանց առաջարկենք հեռանալ Անդրկովկասից: Խնդրում եմ նշել, ուր ուղարկենք նրանց:

Նո 459/Շ 26/7-23 թ. 20-45 թ. տպ. 1 օր.

ՃԻՇՏ Է

/ՏԱՌԻՐԻՆ/

ՀԵՌԱԳԻՐ: 2908/2
ծածկագիր
ՄՏԻՑ ՊՔՎ

Պատճեն
21/7 - 23թ.

ՄՈՍԿՎԱ ՇԻՖՌ ՔՊՎ
ԹԻՖԼԻՍԻՑ 105 Ս 89 18 7

Հաղորդել Մենժինսկուն: Սերգոյի կողմից առաջարկվում է համա-
ձայնվել ԴՐՈՅԻ հայտարարությանը՝ վերացնել բոլոր նստած դաշնակնե-
րի, այդ թվում Ջանողովների ազատ արձակման գործերը, որոնք պատ-
րաստել են կորստի պրոցեսը: Սերգոյի խնդրանքով, խնդրում եմ համա-
ձայնեցնել Ստալինի հետ: Խնդրում եմ շտապ ցուցումներ տալ ինձ. 18/ -
23թ. թիվ. 445/2

ԱնդրՍՀ նախ. Մոզիլսկի
Գրված է 1 օրինակ. Ծածկագիրը բացել է կուրմիտը
Ճիշտ է /ստորագրություն/

Հ. Շտապ Ընկ Նազարեթյանին

Ընկ. Նազարեթյանին
Ընկ. Յագոդայի կարգադրությամբ Ձեզ եմ ուղարկում ԶԱԿԶԿ-ի
ծածկագիրը թիվ 445/2
Քարտուղար ՊՔՎ գաղտնի բաժնի /ստորագրություն/ 23/ 1923թ.

ԽՄԲԱՊԵՏ ՂԱԶԱՐ ՔՈՉԱՐՅԱՆԻ¹ ՀՈՒՇԵՐԻՑ

ԿԱՄԱԻՈՐԱԿԱՆ Բ. ԶՕՐԱՄԱՍԻ ԿՈՒՒՆԵՐԸ²

Ռուս-գերման պատերազմը յայտարարագրուելու թուականն հազիւ մէկ քանի ամիսներ էին անցեր տակաւին, երբ դեռ կը շարունակէի կեանքս քարշ տալ հայրենիքէս հեռու, օտար հորիզոններու տակ գտնուող Քիշինէւ քաղաքին մէջ, ուր արքայազն էի (Հարաւային Ռուսիա), որ բանտէ կը աւելի անանելի էր դարձած ինձ համար:

Որքան աւելի թուրք-ռուս պատերազմի մը ծագելու շուկները ականջիս կը հասնէին այնքան աւելի անհամբեր կը դառնայի: Խնայած քանի մը ռուբլիներովս ստիպուած էի կերպ մը ապրիլ ու սրտի անօրինակ անհանգստութեամբ սպառել այն երանելի օրուան, երբ հայ եւ թուրք զինուորը ճակատ առ ճակատ պիտի դուրս գային իրարու դէմ:

Ռուս եւ գերման պատերազմի հետեւանքով, Ռուսիոյ ներքին քաղաքական կեանքին մէջ սկսած էր ծայր առնել քառասային վիճակ մը, որ պիտի կրկնապատկուէր, եթէ յաջորդէր նաեւ ռուս եւ թուրք պատերազմը: Օգտուելով առիթէն՝ կ'ուզէի խոյս տալ արքայազնութեան, երթալ միանալու համար գէնքի ընկերներուս, իմ բաժին պարտականութիւնը վարելու համար հայրենիքի սուրբ գործին:

Հոկտեմբերի սկզբներուն էր, եթէ չեմ սխալիր, վաճառականական գործով քաղաքս էր ժամանած քրոջս տղան ու իմ մոտ բնակութիւն հաստատած: Քիշինէւ էին ժամանած նաեւ կովկասցի մէկ քանի հայ եւ թուրք բարեկամներ: Անոնց մէջ էր Եուսուֆը, որ իմ փախուստս կազմակերպողներէն մին եղաւ:

Վաճառականական գործով կը զբաղէին նաեւ եղբարք Օգանեանները, որոնք բնիկ Շաբին Գարահիսարցի էին եւ ունէին իրենց սեփական խանութք: Թափառականի մը յատուկ, բնորոշ կեանք մը ունենալուս, ինձ վերաբերող բոլոր նամակներս անոնց հասնելով կը ստանայի:

Օր մը, երբ նստած օրուան դէպքերու ու տիրող կացութեան մասին կը խոսէինք, հետեւեալ նամակը ստացայ Երեւանէն՝ եղբորորդիէս.-

«Սիրելի Բիձայ,

¹ Խմբապետ Ղազար Քոչարյանը (1874-1964) 20-րդ դարակազմի հայ ազատագրական պայքարի և Հայաստանի Առաջին Հանրապետության նշանավոր ղեմներից է: Նրա հուշերից այս հատվածը կարևորագույն նշանակություն ունի Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայ կամավորական շարժման ձևավորման և ընթացքի մասին լիարժեք պատկերացում կազմելու տեսանկյունից:

² Խմբապետ Ղազարի հուշերը տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1934, թիվ 6, 1934, թիվ 7, 1934, թիվ 8, 1934, թիվ 14, 1934, թիվ 10, 1934, թիվ 11, 1934, թիվ 12, 1934, թիվ 1, 1934, թիվ 2, 1935, թիվ 3, 1935, թիվ 4, 1935, թիվ 5, 1935, թիվ 6, 1935, թիվ 8:

«Դրոն Երեւան գալով, ներկայացաւ կուբերնատորին (նահանգապետին) խնդրելու, որ իրեն իրաւունք տրուի կամաւորական խումբ կազմել: Եթէ այստեղ լինէիր, յարմար առիթ էր կ'ազատուէիր: Աւետ»:

Հակառակ որ ռուս եւ թուրք պաշտոնական պատերազմ յայտարարուած չէր տակաւին, բայց եւ այնպէս իւրաքանչիւր կողմ գաղտնի կերպով կը պատրաստուէր անխուսափելի բախումին, որ կ'ուշանար սակայն...

Նամակէս քանի մը օր յետոյ, ստացայ Դրոյի մէկ հեռագիրը, որով զիս անմիջապէս Կովկաս կը կանչէր: Ուրախութեանս չափ չկար: Գրպանս կոպէկ անգամ չէր մնացած, նոյնիսկ զրկուած էի շոգեկառքով ճամբորդելու հրահարութենէն:

Նստած մինակս, կը խորհէի Կովկաս թռչելու միջոցները գտնել: Թաղուած մտքերուս մէջ, բնաւ չեմ լսած Ամրիկի, Աղաբէկի ու թուրք Եուսուֆի սենեակէս ներս մտնելը:

Աթնալով կէս-քուն, կէս արթուն վիճակէս, ստացած հեռագիրս ցոյց տուի ընկերներուս ու անոնց կարծիքը ուզեցի: Անոնք միշտ ալ նեղ օրերուս լաւ բարեկամներս էին եղած եւ այս անգամ ալ օգնեցին ինձ նիւթապէս, թելադրելով որ անմիջապէս մեկնիմ Քիշինէն:

Հաւաքեցի իրերս, եւ պատրաստուեցայ նոյն գիշերն ինձ ճամբայ ելնել:

Որպէսզի որեւէ կասկածի տեղի չտամ, ներկայացայ տանտիրուհուս ու հետեւեալը ըսի.

- Տիկին, մէկ ամսով ստիպուած եմ մոտակայ գիւղը գնալ: Վերադարձիս կրկին այստեղ պիտի գամ: Տուածդ ջերմ խնամքին համար կը յայտնեմ իմ անվերջ շնորհակալութիւնները: Մնաք բարով:

Այս ըսելով, սեղմեցի տիկնոջ, ինչպէս նաեւ ընտանիքի մնացեալ անդամներուն ձեռքերը, եւ ընկերներուս հետ միասին ճամբայ ելայ դէպի կայարան:

Ճանապարհին պէտք էր Օգանեաններուն ալ հանդիպէի «մնաք բարով» ըսելու: Մեծ եղաւ զարմանքս, երբ խանութը փակ տեսայ: Յետոյ միայն թրքահպատակ ըլլալուն պատճառաւ բանտարկուած ըլլալը տեղեկացայ:

Այդ երկու ազնիւ հայերուն հետ չկարենալ տեսնելուս համար ցաւ զգացի:

* * *

Կայարանն ենք արդէն: Նստած սեղանի մը շուրջ, կը խոսակցեինք իրարու հետ, մերթ ընդ մերթ ակնարկներ դէպի դուռը ուղղելով, որտեղէն թուրք Եուսուֆի ժամանումը կը սպասէինք տեսնել:

Թուրք ընկերս, ինձ համար տոմսակ վերցնելու էր գացեր: Քիչ յետոյ, տոմսակը ձեռքին կը վերադառնայ մեզ մոտ:

Հնչեց երկրորդ զանգակը: Բոլորս միասին դեպի կայարանը մտնող շոգեկառքը փութացինք: Հետաքրքիր էր տեսնել, թե ինչպես իւրաքանչիւր ճամբորդ կը փութար իրեն համար տեղ գրաւել ու հանգիստ մը բազմիլ: Միայն ես էի, որ երկչոտութեամբ կը վերաբերէի ինձ հետ հաւասար իրաւունքներ ունեցող ճամփորդներու հետ: Ի՞նչ էր վախիս պատճառը: Գուցէ շատեր կարծեն, որ ես կրկին անգամ ձերբակալուելէ, բանտարկուելէ ու արքարուելէ կը վախնայի: Ոչ, այդ չէր պատճառը: Մահուան գնդակէն կամ կախադանի չուանէն չվախցող հայ ֆետային չպիտի վախնար հարկաւ արքարէն կամ բանտէն: Բայց հայ և թուրք պատերազմին մասնակից չդառնալու, ընկերներէս հեռու, մանաւանդ անգործ, ձեռքերս ծալլած նստելու՝ գտապարտելի ըլլալէ աւելի, մահ էր ինձ համար:

Հնչեց երրորդ զանգակը, եւ վերջին մնաք բարովը տուի թաշկինակի շարժումով ու արցունքոտ աչքերով:

Շոգեկառքը արագ-արագ դեպի հարաւ կը սուրար: Կայարանները, մէկը միւսի ետեւէն կը վազէին ու կը կորսուէին մեր աչքերէն:

Բաւական ճամբորդած էինք արդէն: Սկսած էի յոգնածութիւն զգալ, երբ դրան մոտ պարապ տեղ մը նշմարեցի: Հազիւ նստել էի, երբ շոգեկառքին մէջ իրարանցում մը ծայր առաւ: Ռուս վիրաւոր զինուորներ գերմանական ճակատէն իրենց բարկութիւնը հրէաներու դէմ կը թափէին, որովհետեւ երբ անոնք ներս մտան, հրէաները անտարբեր մնացին: Եւ որ դեռ նոր էի նստած, ոտքի ելայ՝ տեղ տալու ռուս վիրաւոր զինուորներուն: Իսկ հրէաները անոնց ներկայութիւնն անգամ չէին ուզեր նկատել: Քիչ յետոյ, շատ մը հրէաներ դուրս նետուեցան կառախումբէն:

Ինձ եւ միւս ճամփորդներու հանդէպ այդ վերաբերմունքը չունեցան սակայն: Մեզ հանգիստ ձգեցին: Բաւական տեղ բացուեցաւ, եւ ես հանգիստ ճամբորդեցի:

Հասանք Նովորոսիսկի կայարանը: Այստեղ երկու ժամ ստիպուած էինք մնալ: Վակոններուն մէջ ցուրտ ըլլալուն պատճառաւ, դուրս ելայ շրջագայելու: Ատկէց ալ շուտով ձանձրացած՝ կայարանին սպասասրահը մտայ՝ քիչ տաքնալու եւ հանգստանալու համար:

Բաւականին ահուդողի մատնուեցայ, երբ ժանտարմները սկսան փնտրտութիւններ կատարել, անցագիրներ ստուգել:

Այս փնտրտութիւնն ակամայ, զոհը չդառնալու համար, առանց պարիւնութիւնս կորցնելու, աննկատելի կերպով ռուս կնկան մը մոտը նստեցայ: Կինը, ինչպէս կ'երեւէր, առանձին էր ու առանձին ալ կը ճամփորդէր: Պահ մը, մտածեցի ամէն ինչ պատմեմ անոր ու աննպաստ պարագայի մը համար անոր օժանդակութիւնը խնդրեմ: Սակայն, ոչինչ ընելու պէտք եղաւ, քանի որ ժանտարմները, իրենց փնտրած մարդիկը չգտնելով, առանց մեզ մոտենալու, ձգեցին ու հեռացան սրահէն:

Կրկին վակոններու մէջ էինք, ու կը սպասէինք երրորդ զանգակին, որ կ'ուշանար: Քիչ յետոյ, կատարուեցաւ այն, ինչ որ մեր բոլորիս ալ փափաքն էր: Բաւական երկար ճամփորդութենէ մը յետոյ, երբ Խարքովի կայարանն էինք, առաջին անգամ լրագրավաճառներու բերանէն լսեցի ռուս-թրքական պատերազմի բացականչութիւնը:

Մեծ եղաւ հրճանքս: Չէի կրնար այլեւս հանգիստ տեղս մնալ: Կ'ուզէի ժամ առաջ ռազմաճակատ հասնիլ ու ընկերներուս միանալ:

Խարքովի մէջ էր որ առաջին անգամ հայ երիտասարդէ մը լսեցի, որ թուրք զրահաւորներ ոմբակոծած են Օդեսան: Խաղը բաւականին յաջող կերպով էին գլուխ բերած թուրքերը: Ռուսական դրոշմներ պարզելով եւ ռուս զինուորական իշխանութիւնները խաբելով՝ յաջողած էին քաղաքին մոտենալ ու ոմբակոծել զայն՝ մեծ խուճապի մատնելով քաղաքի ազգաբնակչութիւնը: Օգնութեան էին հասած ռուս զրահաւորները: Բայց թրքական երկու զրահաւորները՝ Կէօպէն եւ Պրեսլաւ իրենց արագաշարժ ըլլալու պատճառով, յաջողած էին խոյս տալ թշնամիի հետապնդումէն:

Չեմ յիշեր, քանի օր ճամփորդելէ յետոյ Թիֆլիսի կայարանը հասանք:

Այստեղ՝ հանդիպեցայ իմ բանակի ընկերներէս մէկուն՝ իգտիբցի Տիգրանին, որ նոյնպէս աքսորուած էր ինձմէ քանի մը օր առաջ: Երկար խոսակցելէ ու իրար հանդէպ ունեցած կարոտ առնելէ յետոյ, խորհուրդ տուաւ որ միանամ իրեն: Նպատակն էր, որ երկուսով Փոխարքային ներկայանանք ու ներման թուղթ խնդրենք: Մերժեցի, իսկ ան մնաց հաստատ իր որոշման մէջ:

Թիֆլիս երկար չմնացի: Գործերս կարգի դնելով, մեկնեցայ Ալեքսանդրապոլ, ու այնտեղէն ալ Էջմիածնի վրայով Իգտիբ:

Ճամբորդներէ լսեցի որ Դրոն ճակատ է մեկնած արդէն: Լուրը բաւական տխրեցուց զիս: Չէի ուզեր, որ անոնք՝ թշնամիին հետ չափուելու բարեբախտութիւնը ինձմէ առաջ ունենային:

Ներկայանալով պատասխանատու ընկերներուն, իմ ճակատ մեկնելու պատրաստակամութիւնը յայտնեցի: Մէկ քանի օր ստիպուած էի այստեղ մնալ, քանի որ կամաւորական փոքրիկ խմբակ կը կազմելու պաշտոնը յանձնուեցաւ ինձ:

Քաղաքի կամաւորական շարժման վարիչներն էին այդ ժամանակ Սարգիս Օհանջանեանը, Սահակ Մանդինեանը, Բենո Հայրապետեանը եւ կարգ մը ուրիշ ընկերներ:

Խումս կազմելու գործով էի զբաղած, երբ Դրոն վիրաւորուած Իգտիբ բերին: Գեաւրէ-Շամէի առաջին ճակատամարտին իսկ, վիրաւորուած էր կողքէն: Մէկ քանի օր տեղական հիւանդանոցին մէջ խնամելէ յետոյ, Թիֆլիս ուղարկեցին զայն՝ դարմանուելու: Իր բացկայութեան, փոխանորդ էր նշանակուած ողբացեալ Արմէն-Գարոն:

* * *

1914, հոկտ. 30-ին, 150 հոգիէ բաղկացեալ խումբիս գլուխը անցած՝ մեկնեցայ ճակատ:

Ձիւնի սպիտակ սաւանը ծածկած էր սար ու ձոր: Շատ տեղեր ճանապարհները ծածկուած էին ձիւնով, - պարագայ մը, որ շատ կը դժուարացնէր մեր ճանապարհորդութիւնը, մանաւանդ որ պիտոյքներով բեռնաւորուած ուղտեր ալ ունէինք հետներս:

Մեր բոլորիս ալ ամենամեծ վախը Դլրճկետուկէն էր, որ ձմեռուան այդ եղանակին միշտ վտանգաւոր էր ճամբորդներուն համար: Շնորհիւ սուրբ գործին, որ առաջ կը մղէր մեզ եռացնելով մեր արիւնը, մենք անայլալ դէպի յառաջ, միշտ յառաջ կը քայլէինք:

Ուշ երեկոյեան, առանց որեւէ միջադէպի, հասանց բանակատեղի ու միացանք մեր ընկերներուն:

Այսպիսով՝ այդ վայրկեանէն սկսեալ, մենք մոտ կազմեցինք հայկական երկրորդ գորաբաժնին:

* * *

Գիշերը բաւական հանգիստ անցուցինք: Յաջորդ օր վաղ առաւտտեան, բարձր զինուորական հրամանատարութեան հրամանի համաձայն, պէտք է յարձակողականի ձեռնակէինք: Այսպիսի գործողութեամբ մը հրամանատարութիւնը կ'ուզէր զինուորական ցոյց կազմակերպել՝ հասկանալու համար թշնամիին ուժը:

Կռիւր տեղի ունեցաւ Թանտուրէկ գիւղի շրջակայքը: Բացի մեր գունդէն, մեզ հետ կային նաեւ ռուս զինուորներ: Մինչեւ թշնամի դիրքերուն մոտենալը, պէտք էր բաւական քալէինք: Օդին մառախլապատ ըլլալը մեզ համար բաւական նպաստաւոր եղաւ, որովհետեւ այսպիսով կըրցանք աննշմարելի կերպով անոնց դիրքերուն մոտենալ:

Մէկ գրոհով մենք կըրցանք գրաւել Թանտուրէկը, մէկ քանի ուրիշ գիւղերու հետ միասին:

Քիչ յետոյ, նոր հրահանգի մը համաձայն, պարզեցինք մեր գրաւած գիւղերը եւ վերադարձանք Դերէկ՝ հետերնիս բերելով այն մէկ քանի վիրաւորները, որ ունեցած էինք կռուի մէջ:

Յաղթողի տրամադրութիւնը միշտ ալ բարձր կ'ըլլայ: Հակառակ ձիւնին ու ցուրտին, եւ օրուան յոգնածութեան, պէտք էր տեսնել թէ ինչպէս հայ զինուորները երգելով ու կատակներ ընելով բանակատեղի կը վերադառնային:

Այսպէս, բոլորովին տարբեր տրամադրութեան մը տակ, անցուցինք մէկ քանի օրեր: Սկսած էինք ձանձրանալ դիրքապահութենէ ու զինավար-

Ժութիւններէ, երբ ստացանք կրկին յարձակողականի անցնելու հրամանը: Զինուորները, պարելով ու երգելով դիմաւորեցին այդ հրամանը:

* * *

Դեկտեմբերի երկար ու լուսնակ գիշեր մըն էր:

Բոլոր գորախումբերը դուրս էին եկած զինուորական կարգով, եւ կազմ ու պատրաստ:

Ժամը ճիշտ 1-ին, յառաջ շարժուելու ազդանշանը տրուեցաւ: Շարժուեցաւ կամաւորական երկրորդ գունդը, ու անոր մաս առ մաս սկսած հետեւիլ ռուսական մնացեալ գորամասերը՝ ոտքերուն տակ կրճտացնելով սպիտակ ձիւնը:

Երկար քայլելէ յետոյ, հասանք թշնամի դիրքերուն: Ճակատի մեր գորամասերու ընդհանուր հրամանատարն էր ռուս գնդապետ մը, որուն հանդիպեցայ հետագային, Պուլկարիոյ Ֆիլիպէ քաղաքին մէջ:

Արշալոյսը բացուած էր արդէն, երբ հրամանատարական կողմը փոքրիկ խորհրդակցութիւն մը ընելէ եւ ուժերը դասաւորելէ յետոյ, հրաման արձակեց յարձակողականի անցնելու: Քանի մը վայրկեան յետոյ արդէն, տեղի կ'ունենար առաջին բախումը, Թանտուրէկի մոտերը:

Թանտուրէկը շրջապատուած է փոքրիկ բլուրներով ու ամուր դիրքերով: Ինձ արուած հրամանի համաձայն, պէտք էր ձորակի ուղղութեամբ դէպի գիւղ յառաջանայի: Աջ կողմի դիրքերը յանձնուած էին կողակներուն, որոնք քաջ կը կռուէին արդէն թշնամի ուժերուն հետ, իսկ ձախ կողմը մեր խումբերու շղթան էր, որ մինչեւ ռուս հետեւակներու գրաւած դիրքերը կ'երկարէր:

Արեւը քանի վեր կը բարձրանար, այնքան աւելի կը սաստկանար կռիւր: Թշնամին, թարմ ուժեր ստանալով, յամառորէն կը շարունակէր դիմադրել: Երկու կողմէն ալ մահաբեր գնդակներ կը սուրային անընդհատ՝ խլելով մարդկային թանկ կեանքեր: Հայ հրամանատարը, մեր սիրելի Արմէն Գարոն, նստած իր ոսկեգոյն նժոյգին վրայ, առանց ուշադրութիւն դարձնելու սուրացող գնդակներուն, դիրքէ դիրք շրջելով՝ կը խրախուսէր մարտնչող զինուորները:

Այս տողերը գրած վայրկեանիս իսկ աչքերուս առջեւ կը պատկերանայ անոր պարթիւ հասակն ու վայելուչ կազմուածքը՝ եւ դուրս կուգայ երկար ու խոր հառաչանք մը սրտէս:

Կէս օրուան մոտ էր: Գիւղը շղթայի մէջ էր առնուած: Տղերքը ոգեւորուած, անդուլ ու անդադար գնդակներ կ'արձակէին: Թշնամին շքմած՝ լքած իր դիրքերը, դուրս կուգայ դաշտ ու կը նահանջէ: Մերոնք ալ, դուրս գալով դիրքերէն, ոգեւորուած սկսան հետապնդել թշնամին:

Բաւականին մոտեցած ըլլալով գիւղին, կտեսնեմ անոր պարպուած ըլլալը: Սակայն, անակնկալի մը չհանդիպելու համար, ստիպուած եղայ

քիչ մը ետ շարունակեց կոհիւր: Քիչ յետոյ, հեռադիտակի օգնութեամբ, կը տեսնեմ, որ Սուրէնը իր տասնեակով կոչերու ուղղութեամբ դէպի գիւղ կը յառաջանա: Մարտիրոսն ալ իր կարգին, ձախ կողմէն սկսած կը յառաջանար: Տեսնելով տասնապետներու յառաջխաղացումը՝ ակամայ ես եւս ստիպուած էի յառաջանալ, երբ Արմէն Գարոն, որ այդ ժամին հասած էր քովս, ըսաւ.

- Ղազար, ռուսերու նահանջի պատճառաւ ստիպուած ենք մենք ալ նահանջել: Այդպէս է հրամացուած հրամատարութենէն: Խմբապետ Տիգրանին կարգադրեր եմ քո թիկունքը պաշտպանել, մինչեւ որ դուր յաջողիս ձորակէն դուրս գալ:

Քայլ առ քայլ նահանջելու հրամանը տւի, որ շատ զարմանալի երեւաց զենքի ընկերներու: Բոլորն ալ նոյն հարցը տուին.

- Քեռի, ինչո՞ւ նահանջել սկսանք, երբ յառաջանալ պէտք էր:

- Սյսպէս կը պահանջէ մեր գործերակերպը, - կը պատասխանէի իւրաքանչիւրին թութակի պէս գոց ըրրած դասս:

Յանկարծ, մեծ եղաւ զարմանքս, երբ մեր աջ կողմի բլուրը, որ մինչ այդ կողակներէն էր գրաւուած, ամայի տեսայ: Թշնամին կ'աշխատէր գրաւել այդ բարձունքը: Ուրիշ կերպ գործել ու մտածել անհնար էր այդ ժամին: Բլուրը անպայման պէտք էր գրաւէինք:

Անմիջապէս Ասլանը դէպի այդ դիրքերը ուղարկեցի՝ հրահանգելով, որ գրաւէ ու ապահովէ մեր նահանջի գիծը: Դրութիւնը շատ լուրջ էր: Ձախ թէն ալ իր կարգին սկսած էր նահանջել: Թշնամին երես առած մեր այսպիսի վարմունքէն՝ կրկնակի թափ ու եռանդ էր տուած իր յարձակումներուն: Ձորակի մէջն էր ինք տակաւին ու փճանալու ենթարկուած գուցէ, եթէ չըլլար Սուրէնի տասնեակը, որ շատ մեծ դեր ունեցաւ այդ կռուին: Գրաւած ձորակին գլուխը գտնուող դիրքերը՝ գնդակներ կը տեղացնէր, յառաջանալ աշխատող թշնամու գլխին:

Տիգրանը, որ մեր թիկունքը պաշտպանելու գործն էր ստանձնած, առանց որեւէ լուր տալու, հեռացած էր արդէն: Կէս շրջապատուած դրութեան մէջ կը գտնուէինք: Տեսնելով դրութեան փափկութիւնը, երկրորդ տասնեակ մըն ալ ուղարկեցի Ասլանին օգնելու, իսկ ես մնացեալներով կ'աշխատէի դուրս գալ անիծեալ ձորակէն:

Ճակատագրական այս նոյն վայրկեանին, ինձ օգնութեան հասաւ գնդացիային կիսաջոկատ մը երկու գնդացիներով: Շնորհիւ վերջիններուն միայն, մենք կրցանք դուրս գալ ձորակէն: Հազիւ դուրս էինք եկած, երբ Ասլանի, Նախիջեւանցի Մարոյի ու մէկ քանիներու ծանր վիրաւորուած ըլլալու լուրը ստացայ: Ռուս կողակներ, դրած զանոնք ձիերու վրայ, յաջողէր էին փախցնել ու Դերէկի հիւանդանոցը փոխադրել:

* * *

Հնս կ'ուզեմ քանի մը տողերով արձանագրել հայ բժիշկի մը անձնագոհ ծառայութիւնը:

Ջորամասի սանիտարական բաժնի ընդհանուր պետ էր հայազգի բժիշկ Տէրտէրեանը, որ յայտնի Դաշնակցական մըն էր: Այն վերաբերմունքը, զոր ան ցոյց կուտար դէպի վիրաւոր զինուորները առանց ազգի խարութեան, վեր է ամէն մէկ գնահատութենէ: Անոր ցոյց տուած հայրական վերաբերմունքը կը թեթեւցնէր վիրաւոր զորքի ցաւերը ու մոռցնէր կուտար անոր վերքերուն պատճառած կսկիծները: Մէկ խոսքով, մաքուր ու արժանիքներու տէր հայ մըն էր, որ ամէն մէկ գնահատանքի արժանի է:

* * *

Կանոնաւորուած էր գրեթէ մեր կէս - խուճապային նահանջը, երբ կրկին ստացանք հրամանատարի յարձակողականի անցնելու հրամանը:

Բայց սխալը ուղղերուն մէջ բաւական ուշացած էր արդէն: Նահանջը սուղի էր նստած մեզ: Այդ իսկ պատճառաւ մեր հրամանատարը օգնական ուժեր խնդրեց ու, ստանալէն յետոյ միայն, կրկին յարձակողականի անցնելու հրաման տուաւ:

Դարձեալ որոտացին հրացանները նախկինէն շատ աւելի ուժեղ թափով մը: Թշնամին ալ ոգեւորուած՝ շարունակեց կռուիլ, անհամար գոհեր տալով:

Գիշերը վրայ հասաւ: Խաւարը պատեց սար որ ձոր: Օգտուելով առիթէն՝ իւրաքանհիւր կողմ ետ նահանջեց, աւելի յարմար դիրքեր գրաւելու համար:

Յաջորդ օրը ստացանք Դութախի գրաման ու կրկին ետ վերադարձուելու լուրը: Գերիշխող դիրքերը թշնամի ուժերու ձեռք գտնուելուն պատճառաւ, մերոնք յարմար տեսեր էին պարպել Եփրատի եզրին գտնուող այդ փոքրիկ գիւղաքաղաքը ու ետ նահանջել:

Այսպիսով, Դութախ եւ Թանդուրէկ գրեթէ նոյն բախտին կ'արժանանային, մէկ քանի անգամներ ձեռքէ ձեռք անցնելէ յետոյ:

* * *

1914-ի շրջանին, Դերէկի եւ Թանտուրէկի մեր մէկ քանի յաջող կռիւներէն յետոյ, հրամայուեցաւ թողնել այդ ճակատը ու Խաստուր փոխադրուիլ, որ Ալաշկերտի շրջանին մէջ Կարին տանող ճանապարհի վրայ կը գտնուի: Ունի մոտ 150 տուն բնակչութիւն, զուտ հայերէ բաղկացած:

Որպէսզի թշնամին չնկատէ մեր ուժերու տեղափոխութիւնը, ստիպուած եղանք գիշերով ու այն ալ մաս առ մաս ճանապարհորդել: Առաջինը իմ խումբս էր որ ճամբայ ելաւ Ալաշկերտ անցնելու:

Յաջորդ օրը Չլկանի (Քառասուն Ալբիւր) էինք հասած արդէն, երբ հեռախոսով հետեւեալ բերանացի հրահանգը ստացայ Արմէն Գարոյէն:

«Նահանջելու ընդհանուր հրաման կայ: Յայտնեցէք գիւղացիներուն ու թելադրեցէք, որ ձեզ հետ անյապաղ գաղթեն: Քեզ կը յանձնեմ գաղթականութեան ճանապարհները ապահովելու գործը»:

Քիչ յետոյ պատահմամբ քովս եկաւ Եիւն-Թափեցի Տէր Արսէն քահանան, որ մեր խումբի զինուորագրեալ քահանան էր: Յայտնեցի հեռախոսի միջոցաւ ստացած հրամանս ու ինդրեցի, որ յայտնէ ժողովրդին, ու խոստացայ ամէն օժանդակութիւն:

Լուրը շտաբով ելաւ Երեւանէն արագութեամբ տարածուեցաւ ժողովուրդին մէջ: Սարսափելի էր պարզուած տեսարանը: Պատերու տակ, ճանապարհներու վրայ, ամենուրեք ուր մարդկային աչքը կարող է թափանցել, տեղի կ'ունենար զարհուրելի իրարանցում: Ուշակորոյս բազմութիւն մը, մարդկային հեղեղ մը, առանց երկար բարակ մտածելու, շարժման մէջ էր այդ ժամին: Ամէն մարդ, փոքրէն սկսեալ մինչեւ ամենածերը, իր կեանքը փրկելու մտահոգութեամբ թողած էր տունն ու տեղը, ճննդավայրն ու նախնիներու յիշատակներով սրբացած մայր երկիրը, կ'աճապարէր ժամ առաջ հեռանալ այն վայրէն, ուր անսովոր մահը կը սպասէր իրեն գրկաբաց, հայ կամաւորական ուժերու նահանջէն յետոյ:

Հայ գիւղացին, հայ շինականը շատ լաւ էր ճանչցած թուրքի հոգեբանութիւնը ու շատ լաւ գիտէր թէ ինչեր, ինչ բարբարոսութիւններ ընելու ընդունակ էր թուրք զինուորն ու պաշտպանութիւնը, մանաւանդ այսպիսի պարագայի մը, երբ ետ վերադառնալու ու ազատ-համարձակ գործելու առիթը կը տրուի կրկին իրեն:

Մայրը՝ գրկած իր ծծկեր երեխան, հայրը՝ շալակած անհրաժեշտ պիտոյքը, տղան բռնած պառաւ մամիկի ձեռքէն, հազարներով հեղեղի նման յորձանք տալով կը քալէին հա կը քալէին միշտ դէպի հարաւ, անդադար դէպի յառաջ, առանց պահ մը նոյնիկս հետ նայելու:

Անբախտութեան հայրենիքի այս դժբախտ զաւակները քանի քանի անգամներ միշտ այսպիսի դժբախտ օրեր ունեցան:

Կէս օրուան միջոցին, ամայացած էր գրեթէ բոլոր շրջանը: Մէկ քանի շալակաւորներ կը տեսնուէին միայն, որոնք արագ քայլերով կ'աճապարէին հեռանալ՝ իրենց սիրելիներուն միանալու համար:

Գաղթականութեան մեկնումէն յետոյ միայն, շարժուեցաւ նաեւ գործը:

Մինչեւ Ղարաբիլիսէ ինձ էր յանձնուած գաղթականութեան թիկունքը ապահովելու գործը: Ճանապարհին, մեծ աղէտներու կը հանդիպէր ժողովուրդը: Բնաւ պիտի չմոռնամ դէպք մը, որ մինչեւ այսօր ալ թարմ է մնացել յիշողութեանս մէջ:

Անգամ մը, երբ երեխաներով բեռցուած սայլերէն մէկը Եփրատը կ'անցնէր, ամբողջութեամբ կուլ գնաց ջուրի հոսանքին: Մտած գետը, տեղի տալով սայլին ծանրութեան, ճեղքուելով՝ իր ալիքներուն մէջ առաւ սայլը: Հոսանքը, իլելով փոքրիկները, քշեց զանոնք ու քիչ յետոյ ծածկեց սառոյցին տակ:

Քանի՛, քանի՛ այսպիսի դէպքեր տեղի ունեցան իմ եւ ընկերներուս աչքերուն առջեւ:

Երկու օր անընդհատ քալելէ յետոյ, հասանք Ղարաքիլիսէ:

Ամբողջ օր մը այստեղ մնալէ ու գաղթականներուն հանգիստ տալէ յետոյ, լուսաբացին ճամբայ ելանք դէպի Դիաղին, այնտեղէն Առծափի վրայով Իգդիբ եւ յետոյ Երեւան անցնելու համար:

Դէպի Դիաղին տանող ճանապարհը կ'անցնէր Կուպ, Մանկասար, Էվմալ, Գիւղաձոր եւ Դաղլիջայ գիւղերու մէջէն՝ ընթանալով հարաւ արեւելք ուղղութեամբ:

Դաղլիջայի մէջ գորքը կանգ առաւ: Այստեղէն մինչեւ Դիաղին երկարող ճանապարհը բաւական վտանգաւոր էր գաղթականութեան համար, քանի որ Ծաղկաձորի ստորոտը գտնուող քրտութիւնը անվնաս կը մնար իր տեղը՝ յաւատարմութիւն յայտնած ըլլալով մեզ: Կրնային գաղտնի յարձակումներով նեղել անոնց այն ալ արդէն հալումաշ եղած, անզէն գաղթականութիւնը: Չէ՞ որ այդպիսիներու հանդէպ քրտերն ու թուրքերը շատ քաջ էին:

Կոզակներու վաշտ մը, ինչպէս նաեւ մեր ձիաւորները ընկերակցեցան գաղթականութեան, ապահովելու համար անոր ճանապարհը:

Յաջորդ օրը, գաղթականութիւնն ու գորամասը հասած էին Դիաղին: Այստեղ՝ երկուրի բաժնուելով ուղղուեցանք սահման, մէկը Գորուն-Մոսունի եւ երկրորդն ալ Արծափի վրայով՝ Կովկաս անցնելու:

Մենք առաջինի հետ էինք: Երեկոյեան, երկար քայլելէն յետոյ, Մօսուն հասանք, - այն Մօսունը, որ տարիներ առաջ իմ առաջին անգամ ըլլալով թշնամի ուժերուն դէմ-յանդիման կռուելու վայրն էր եղած:

Քանի մը օր յետոյ, անցանք Իգդիբ: Գաղթականութեան մէկ մասը մնաց այդտեղ: Չմոռնամ յիշելու որ մեր նահանջէն յետոյ, ռուսական զորքը կը շարունակէր իր դիրքերուն վրայ մնալ:

Էնվեր փաշայի գլխաւորութեամբ, թուրքերու Կարս-Սարըղամիշ ուղղութեամբ բաւական յառաջանալն էր որ ստիպեց մեզ նահանջել: Այս դրութիւնը երկար չտեսեց սակայն: Վրայ հասաւ Ախուլկինսկի գունդը, որ լաւ դաս մը տալով թուրքերուն՝ յետ նետեց զանոնք մինչեւ Էրզրումի պատերուն տակ:

Այսպիսով փրկուեցաւ կովկասը իրեն սպառնացող առաջին վտանգէն:

* * *

Երկար չմնացինք Իգդիբ: Հարկ եղած պատրաստութիւնները տեսնելով, ճամբայ ելանք դէպի Երեւան, այնտեղէն ալ Քանաքեռ:

Քանի մը, օր յետոյ այդտեղ՝ մեզ միանալու եկան նաեւ կամաւորական միւս գունդերը:

Քանաքեռը հաւաքատեղի էր, զինուորական տեսակէտով մեծ յարմարութիւններ կը ներկայացնէր: Ունէր քարաշէն զորանոցներ ու զինուորական մարզանքներ ու զինավարժութիւններ կատարելու յարմար դիրքեր:

Սպանուածներու ու վիրաւորուածներու պակաս եղած տեղերը լրացնելէ յետոյ, սկսանք փորձերու:

Կամաւորական ուժերը բաժնուած էին չորս կարեւոր գունդերու:

Առաջինը Անդրանիկի հրամանատարութեան տակ, կը գործէր պարսկական սահմանէն դէպի Վան տանող ուղղութեամբ:

Երկրորդը, Դրոյի հրամանատարութեան տակ, Դութախէն - Հին Բայազէտ երկարող ճակատին վրայ:

Երրորդը՝ Քեռիի եւ չորրորդը Համազասպի հրամանատարութեան տակ, կը գործէին մեզմէ հիւսիս:

Այսպէս էին դասաւորուած հայկական ուժերը մեր առաջին նահանջէն առաջ:

Սակայն, այսպէս չմնացին յետոյ:

Բացի Անդրանիկի գունդէն, այդ միջոցին Քանաքեռ կը գտնուէին մնացեալ երեք կամաւորական գնդերն ալ:

Մեր ստացած տեղեկութիւններու համաձայն, Վարդանի եւ Գ. Նժդեհի նախաձեռնութեամբ կազմուած էր նաեւ հինգերորդ գունդ մը, որ վրայ հասած նահանջի պատճառաւ՝ ստիպուած էր Ալեքսանդրապոլ մնալ:

Երեւանի Ազգային Խորհուրդի եւ Դաշնակցութեան Կեդր. Կոմիտէին որոշումով, Արմէն-Գարոն եւ Դաշնակցական Խէչոն պաշտոնով Ալեքսանդրապոլ ուղարկուեցան: Վերոյիշեալ պատգամաւորութիւնը նպատակ ունէր Վարդանին ու Նժդեհին համոզելով՝ կազմուած խումբը մեզի միացնել:

Այս մեկնումէն քանի մը օր յետոյ, գործը յաջողութեամբ վերջացած ըլլալով, նորակազմ ուժերը չորս գունդերու վրայ կը բաժնուէին արդէն: Նժդեհը բանակը վերակազմելու պաշտոնով մեզ միացաւ:

Մեր Քանաքեռ եղած միջոցին, աչքառու փոփոխութիւններ կատարուեցան: Կամաւորական բանակը հետզհետէ դուրս կուգար իր նախկին ձեւէն: Խումբերը վաշտերու եւ խմբապետներն ալ վաշտապետներու կը վերածուէին: Այդ ժամանակ, Դրոյի հիւանդութեան ու Արմէն Գարոյի ալ բացակայութեան պատճառաւ, գունդը Խէչոյին էր յանձնուած:

Քանաքեռ կը գտնուէր նաու փոխ-գորավար Օզօլը, որ ընդհանուր հրամանատարութեան կողմէ մեզ մոտ ներկայացուցիչ էր նշանակուած:

Բաւական հայասէր էր: Մինչէւ Վանի գրաւումը, մեզմէ անբաժան մնաց: Անոր ներկայութեան ու ցուցմունքներով էր որ տեղի կ'ունենային կամաւորական բոլոր գունդերու զինավարժութիւններն ու ռազմական փորձերը:

Մոտ մէկուկէսէն երկու ամիս մենք մեր զինավարժութիւններով էինք զբաղած, երբ բոլորովին կազդուրուած մեզ մոտ եկաւ Դրոն ու վերստին ստանձնեց Բ. Գունդի հրամանատարութիւնը:

Մեր պարապ ժամերուն, ունէինք լաւ ժամանց: Առանձին նուիրատուներէ փոքրիկ տոպրակներու մէջ զետեղուած նուէրներ կը ստանայինք: Իւրաքանչիւր տոպրակ իր մէջ պահուած ունէր պատմութիւն մը:

Անգամ մը, երբ հրամանատարական կազմի ու շտապի անդամներու ներկայութեան զօրքը կրկին նոր նուէրներ կը ստանար, հետեւեալը պատահեցաւ. -

Ստանալով իմ բաժին նուէրը, բոլորի ներկայութեան բացի տոպրակը եւ կարդացի զետեղուած տոմսակը, ուր հետեւեալն էր գրուած.

«Քաչալը գնաց տանձի, վախենում եմ՝ գլուխը խանձի»:

Եւ որովհետեւ իմ ալ գլուխը քաչալ էր, եղած զուգադիպութիւնը բոլորի ծիծաղը շարժեց:

Ինչպէս որ ամէն ինչ վերջ ունի, այնպէս ալ մեր ծուլութեան վերջը եկաւ: Ընդհանուր հրամանատարութեան կողմէ քննիչ էր եկած ներկայ գտնուելու ռազմափորձերուն: Այնտեղ, ուր ժամանակ մը ցարական բանակները կը կոխկրտէին, այժմ հայկական զորագունդերու ռազմադաշտն էր դարձած:

Տրուած հրամանի մը վրայ, սկսան տեղի ունենալ ռազմափորձերը, որը զինուորական փայլուն տողանցքով մը վերջացաւ ու քննիչի հաւանութեան արժանացաւ: Արդիւնքը գոհացուցիչ էր:

Խմբապետ Վարդանին, որ խումբի բաժանուելուն պատճառաւ անպաշտօն էր մնացել յանձնուեցաւ ընդհանուր հրամանատարի պաշտօնը: Այսպէս էր Ազգային Խորհուրդի ու Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյի միջեւ գումարուած խառն ժողովի որոշումը, որ տեղի ունեցած էր Ռոստոմի նախագահութեամբ: Ներկայ էին եղած նաեւ զօրաբանակի կառուարական կցորդ Օզոյը, Համասփիւռը եւ ուրիշներ:

Տրուած էին նաեւ հետեւեալ որոշումները -

1. Երեք գումարտակները միացնել մէկ անուան տակ՝ կոչելով զայն «Արարատսկի օտրեատ (Արարատեան զորաբաժին)»:

2. Զինուորներու հրամանատար նշանակել Խէչոյին:

Նախքան մեկնելը, քաղաքացիք հիւրասիրեցին հրամանատարական կազմը «Օրիանտ» հյուրանոցի մէջ: Այստեղ՝ բաւական տաք մթնոլորտի մը մէջ, լաւ ժամանակ անցընելէ յետոյ, մեկնեցանք բանակատեղի:

Յաջորդ օրը, տրուած հրամանի վրայ, կամաւորական երեք գումար-տակները կազմ -պատրաստ ճամբայ ելան:

1915-ի ապրիլ 15-ն էր: Երեւանի Աստաֆեան փողոցի վերի ծայրէն մինչեւ Ջանգուի կամուրջը երկարող ճանապարհի վրայ երկու կողմերը խոնուած էր երկսեռ բազմութիւն մը, որ անհամբեր հայ գորքի անցքին կը սպասէր: Յուզիչ էր տեսարանը, երբ փողոցի ծայրին ի յայտ եկաւ հայկա-կան գորքի առաջին վաշտը: Ծաղկեփունջերու անձրեւ մըն էր որ կտեղար գորքերու գլխին: Բարեկամներ, մայրեր ու զաւակներ, խորունկ համբոյր-ներ կը դրոշմէին ճակատներու ու շրթունքներու վրայ: Հազարաւոր ձայ-ներ, անվերջ հուռաներով կը թնդացնէին մթնոլորտը: Փոքրիկ երեխաներ ու պատանհներ, գորքերու կողքէն քալելով, կ'երգէին հայկական ազգային երգեր: Լացն ու ծիծաղը իրարու ընկեր էին դարձած:

Երբ դուրս էինք եկած քաղաքէն, բոլորին ալ երազ թուաց կատարու-ածը: Գուցէ շատեր համոզուէին աստոր, եթէ ճանապարհի երկայնքին շա-րուած հայկական գիւղերու մեջէն անցնելու ժամանակ չկրկնուէր այս նոյն տեսարանը:

Երեւանէն-Էջմիածին երկարող ճանապարհի հայկական գիւղերէն գիւղացիք իրենց ամենալաւ ուտելիքներով ու ամենայարգի գինիով կը հիւ-րասիրէին մեզ: Օր մը մնալէ, Ամենայն Հայոց Հայրապետի բարի մաղթանք-ները լսելէ ու Արարատեան գորամասի դրոշի օրհնութիւնը կատարելէ յետոյ, յաջորդ լուսաբացին ճամբայ ելանք եւ երեկոյեան Իգդիր հասանք:

Այսքան երկար չէր ըլլալ ի հարկէ մեր ճամբորդութիւնը, եթէ չըլլար ժողովրդի հիւրասիրութեան միջոցին կորսնցուցած ժամանակը:

Քանի մը օր այդտեղ մնալէ յետոյ, լուր ստացանք, որ ռուսական զո-րաբանակի հրամանատարը իր երկու աղիւտանտներու ընկերակցու-թեամբ պիտի այցելէ բանակատեղի, որ քաղաքէն դուրս բաց դաշտի մը վրայ կը գտնուէր:

Հրամանատարը դիմաւորելու համար պատուոյ պահակ էինք ու-ղարկած, իսկ մենք՝ բոլոր վաշտապետներս վաշտերով միասին, կազմ եւ պատրաստ հրամանատարի գալուստին կը սպասէինք: Շատ չանցած, կառքով բանակատեղի ժամանեց գորավար Օկանովսկին, Դրոյի եւ աղիւ-տանտներու ընկերակցութեամբ: Պատուոյ առնելէ յետոյ, առանձին ու-շադրութեամբ սկսաւ քննել բոլոր վաշտերն ու վաշտապետները: Այստեղ էր որ առաջին անգամ ըլլալով՝ ուսադիրներ ստացանք վաշտապետներս: Չորքերը ունէին արդէն:

Իգդիր էինք, երբ ստացուեցաւ Վանի Արամի մէկ գրութիւնը, որով անմիջական օգնութիւն կը խնդրէր մեզմէ:

Այս լուրը ստանալէն անմիջապէս յետոյ, լրացնելով մեր զինուորական պետքերը, ճամբայ ելանք: Այստեղ ալ նոյն տեսարանը տեղի ունեցաւ, ինչ որ Երեւանի մէջ:

Գեղեցիկ օր մըն էր, երբ մենք բաւական քայլելէն յետոյ հասանք Օրգով: Այնտեղ գիշերելէ յետոյ առաւոտ կանուխ անցանք ու կրկին անգամ ըլլալով՝ ոտքերնիս մայր հողի վրա դրինք հրճուանքով:

Թափառիզներու մոտ միացանք ռուսական զորքին եւ հարաւարեւմուտք ուղղութեամբ սկսանք յառաջանալ:

Թափառիզները կը գտնուին պարսկական սահմանագլուխի մոտ եղած փոքրիկ լեռնաշղթայի մը ստորոտը, որ Հին-Բայազետը կը բաժնէ Աբաղայի դաշտէն:

Այստեղ գիշերելէ յետոյ, յաջորդ առաւոտ բոլոր զորամասերը առանձին ուղղութիւններ վերցնելով՝ սկսանք դէպի հարաւ շարժիլ: Մենք՝ Սոյուդ Սուի, իսկ 3-րդ եւ 4-րդ զորամասերը՝ Կէավրէ-Շամէի ուղղութեամբ սկսած էինք յառաջանալ: Զինուորական դասաւորումով, Համագասպը՝ կեդրոնը, Քեռին՝ ձախ ու մենք՝ աջ թեւն էինք գրաւած:

Այս ժանապարհը, որով կը յառաջանայինք, ձիաւորներու համար անյարմար էր. Դրօն, վերցնելով ձիաւոր ջոկատները իր հետ սկսաւ հարթ ճանապարհով ընթանալ:

Մենք՝ վեր, միշտ դէպի վեր կը մագլցէինք, հասնելու համար այն փոքրիկ բարձրութեան գագաթը, ուր որոշուած էր նախապէս առաջին հանգստի կայանն ընել:

Ուշ երեկոյեան հասանք կատարը: Այնտեղ գտնուող փոքրիկ տարածութեան մը վրայ, որ ձիւնով էր ծածկուած, մաքրելէ յետոյ, զետեղեցինք մեր վրանները: Ոչ ոքի մտքէն կանցնէր որ յաջորդ օրը, առաջին հանդիպումները պիտի ունենայինք արդէն թշնամի ուժերուն հետ:

Այդ օրուան հերթապահութեան կարգը Փոքր Տէլի Ղազարինն էր:

Կարծես չէր բաւել եղած ձիւնը, կէս գիշերին սկսաւ կրկին ձիւնել մինչեւ առաւոտ:

Յաջորդ օրը, հաւաքելով վրանները, ճամբայ ելնելու պատրաստութիւններ կը տեսնէինք: Մինչեւ ծունկերը բարձրացած ձեան մեջէն երկու ժամ անընդհատ յառաջանալէ յետոյ, սկսանք զառիվար դէպի դաշտ իջնել: Օրուան վար կ'իջնէինք, ձիւնը այնքան կը նօսրանար, այնպէս որ երբ դաշտ հասանք, ձիւնի ոչ մէկ հետք գտանք:

Յառաջապահութեան հերթը իմս էր այդ օրը: Բաւական երկար քայլելէ ու մանաւանդ դժուարանցանելու խորխորուտներ ու քարեր կտրելէ յետոյ միայն, դուրս եկանք ուղիղ ճանապարհը:

Արդէն Աբաղայի նշանաւոր դաշտն էինք մտած: Առաջին գիւղը, որուն հանդիպեցանք ճանապարհին, ամբողջութեամբ պարպուած ու ան-

մարդաբնակ էր: Այստեղ՝ քիչ մը հանգիստի նստելէ յետոյ, կրկին ճանապարհ ելանք աւելի հարաւ իջնելու:

Երկրորդ գիւղը նոյնպէս պարապ գտանք: Զարմանալի այն էր որ թշնամի ալ չկար:

Սակայն, այդպէս չմնաց մինչեւ վերջը: Երրորդ գիւղի մոտ, ստիպուած եղանք կանգ առնել ու դիրք գարուելով՝ թշնամու գնդակներուն պատասխանել, մինչեւ մեր գորքերը մեզ հասնելը:

Հրացաններու սակաւաթիւ որոտումներէն հասկացայ, որ թշնամին այնքան ալ մեծ կարելորութիւն տալու աստիճան ուժ կեդրոնացած չունէր այդտեղ: Կասկածս ստուգելէ յետոյ, հրամայեցի յարձակողականի անցնիլ: Թշնամին շուարումի մատնուեցաւ: Ան լքեց իր դիրքերը եւ խելակորույս փախուստի դիմեց:

Գիւղ մտնելով՝ տեսանք թշնամու ունեցած կորուստը: Վիրաւոր գորքերու բերնէն իմացայ, որ մեր դէմը կռուողները եղած էին Համիտիյէ քիւրտերը, շատ քիչ քանակութեամբ կանոնաւոր ջոկատներու հետ միասին:

Առաջին եւ երկրորդ գիւղերու մէջ մեր աչքերուն առջեւ պարզուած տեսարանը ստիպեց մեզ ձիաւորներ ուղարկել զանազան ուղղութիւններով՝ հասկանալու համար թէ Ապաղայի մնացեալ գիւղերուն մէջ որեւէ հայ մարդու կենդանի շունչ կարելի՞ է գտնել: Անոնց վերադարձէն յետոյ, տրուած զեկուցումէն հասկացանք, որ շրջաններու մէջ ալ կատարուած էր այն, ինչ որ կը սպասուէր արդէն:

Սարսափելի տեսարաններ կը պատկերանային մեր աչքերուն առջեւ, երբ ականատես գորքերը կը պատմէին տեսածները:

ԲԵՐԿՐԻ ՂԱԼԱՅԻ ԿՌԻԻԸ

Աբաղայի դաշտէն բխող աղբիւրներու ու ակերու առատ ջուրերը ի մի հաւաքուելով, կը կազմեն Բանդի-Մահու փոքրիկ գետակը, որը Բերկրիի կողերուն քսուելով, կ'երթայ ու Վանայ լիճը կը թափուի: Այս գետի հոսանքն ի վար, աջ եւ ձախ ավերտուն, հազարաւոր դիակներ կային դիզուած: Անկասկած որ հայու դիակներ էին ատոնք, քանի որ կոտորածը սարքողները թուրքերն էին եւ ոչ հայերը, հետեւաբար կատարուողը անգէն ժողովուրդն էր սարսափելի էր տեսարանը, նամանաւանդ մինչեւ շրջականներն իսկ տարածուած էր գարշահոտութիւնը: Հայր եւ մայր, տղայ եւ աղջիկ, երեխայ եւ պառաւ, անկենդան դիզուած էին այդտեղ իրար քով, թուրք ոճրագործ ձեռքը խորութիւն չէր գտած: Չէ՞ որ այսօրուան ծծկեր երեխան ու աշխոյժ պատանին, վաղուան հայ քաղաքացին պիտի դառնային, չէ՞ որ անոնք ալ իրենց նախնիքներու օրինակին պիտի հետեւէին, ուրեմն կը նշանակէր որ նոյն չափով յանցաւոր են ու ջարդերու արժանի: Կարծես բնութիւնն ալ, մարդկային ամէն մէկ արժանիք, ալ աւելի ճիշդը ա-

մեն մէկ չարիք փորձելու խաղերը խեղճ հայուն գլխին կը կատարէ: Ինչո՞վ էր յանցաւոր այդ ժողովուրդը: Աստուած, Ադամ եւ Եւան պատժելու համար զանոնք զրկեց դրախտէն, Բաբելոնի աշտարակի շինութեան ժամանակ, շփոթեց ազգերու լեզուն ու ջրհեղեղ սարքեց, իսկ հայ ժողովուրդի թշուառութիւնը մարմնացնելու համար, թոյնի ու լեղիի անհամար հեղեղներ թափեց, ու գազանային ջարդեր սարքեց: Այս բոլորը ըլլաւ անոր համար միայն որ հայը զէնքի փոխարէն խաչն էր գրկած ու անոր հլու քարոզիչը դարձած: Աստուած ալ կարծես մարդոց մէջ քօնտրաստ ունեցողները կը սիրէր:

Անողորմ փորձ էր կատարուածը, սակայն, ի՞նչ ընել, վերջացած գործողութիւն էր արդէն: Միսալ է ըսել, որ բորենիէն ու գայլէն աւելի վատ ու գիշատիչ գազան չկայ աշխարհի վրայ: Կա՛յ թուրք գազանը որ իր յօշոտելու նորաձեւ մեթոդով վաղուց է գերազանցած շատ մը ուրիշ գազաններ, որոնք եթէ խոսելու կարողութիւն ունենային, յուսահատութենէ մղուած բողոքելով պիտի հրաժարէին իրենց գազանութիւններէն, որովհետեւ երբեք չպիտի կարենային թուրքի մը նման, դիակներ յօշոտել, հազարաւոր կեանքեր խամրեցնել: Ի՞նչ մեծ է եղած տարբերութիւնը այստեղի եւ քիչ մը աւելի հարաւ գտնուած հայերու ճակատագրի մէջ: Առաջինը՝ վարած Աստծոյ խաչին, Յոյսին ու Հաւատքին, զոհ է դարձած թրքական բարբարոսութեան, իսկ միւսը՝ զէնքով, վառօդով ու ռումբով հրաշքներ կը գործէր, փրկելով հազարաւոր կենաքեր, յաղթանակներու նոր էջեր բանալով հայոց պատմութեան մէջ:

Թրքահայաստանի ամէն անկիւնէն ու շրջանէն անցած միջոցին, բացի այն մէկ քանի շրջանները, որոնց պիտի հասնիմ աւելի յետոյ իմ յուշերուս մէջ, տեսանք այն նոյն սահմոկեցուցիչ պատկերը, զոր առաջին անգամ գիւղին մէջ, իւրաքանչիւր զինուորի սրտին մէջ բնագոյաբար «վրէժ» լուծելու գաղափարը ծնունդ կ'առնէր:

Որքան կը յիշեմ, Բայազետ-Ազա գիւղէն դուրս եկանք ապրիլ 26-ին: Վերոյիշեալ գիւղէն մին է ու կը գտնուի Բանդի-Մահու գետակին աջ կողմը: Քիչ հեռու, արեւելքի ուղղութեամբ կը գտնուի Գրիշկ գիւղը, իսկ հարաւարեւելք յայտնի Խաչանը: Շղթայաձեւ դէպի հարաւ կ'իջնէինք: Բաւական մոտեցած էինք Բերկրի Ղարային, երբ վրայ հասած խաւարի պատճառաւ, ստիպուած եղանք կանգ առնել ու այդտեղ գիշերել: Անմիջապէս պահակներ ուղարկեցինք զանազան ուղղութիւններով, որոնք վերադառնալով, թշնամի ուժերուն բացակայութիւնը յայտնեցին: Կէս քուն, կէս արթուն գիշեր մը անցընելէ յետոյ, քառորոդ օր վաղ առաւօտեան ճամբայ ելանք: Այստեղէն, գետն ու ճամբան փոքրիկ ձորակի մը միջով, զուգընթաց մինչեւ Բերկրիի դուռը կ'ընթանան: Պէտք էր այստեղէն տակաւին, գետի ձախ ափը անցնիլ, քանի որ ճամբան այդ կողմով կ'ընթանայ ու նամանաւանդ՝ յարձակման ենթակայ եղող քաղաքը գետի այդ եզերքին կը գտնու-

ւեր: Կամուրջը, որ գետի երկու ափերը իրար կը միացնէր, քանդուած էր խորքերէն: Յարմար տեղ կը փնտրէի, երբ Մարտիրոսի վաշտէն 16-17 տարեկան երիտասարդ զինուորի մը՝ Ռուբէն Խաչատուրեանի¹⁾ գետն անցնելը տեսայ: Դրոյի մէկ հրամանին վրայ, նետուելով գետը, առանձին դուրս եկաւ դիմացի ափը ու իր այս յանդուգն քայլի համար, ստացաւ «Սրբ. Գեորգի» չորրորդ աստիճանի շքանշան մը: Երիտասարդ զինուորի այս քայլը վարակիչ դարձաւ բոլորի համար: Քիչ յետոյ, բոլորն ալ ջուրը մտած, կանցնէին դիմացի ափը: Դրոն, իր հետ վերցուցած ձիաւոր ջոկատները, անցաւ յառաջ: Քանի կը յառաջանայինք, այնքան նոր ու նոր ամայացած գիւղերու կը հանդիպէինք, իսկ թշնամիի հետք բնաւ չկար: Տեղ տեղ միայն գառնուկներու փոքրիկ հօտերու կը հանդիպէինք, որը մեր սեփականութիւնը կը դարձնէինք, մեր ազգակիցներուն մալը-միւլքը համարելով զանոնք, հալալ էր մեզի:

Դրոյի հեռանալէն մէկ քանի ժամ յետոյ, կը լսէինք հրացանի որոտումներ: Քիչ յետոյ ժամանող սուրհանդակը, կռիւր սկսած ըլլալուն լուրը կը բերէր մեզ: Արագացուցինք մեր քայլերը, հետաքրքիր էր տեսնել իւրաքանչիւր զինուորի մէջ պահուած, ժամ առաջ կռուի դաշտը հասնելու տենչը, անոր շտապ շտապ քայլերէն. քայլ չէր, այլ վագր: Քանի կը մոտենայինք, այնքան աւելի լաւ կը պարզուէր քաղաքի դիրքը:

Կռիւր տեղի կ'ունենար Բերկրիի ճանապարհէն բաժանուող ու դէպի Արճէշ ու Ականց տանող ճանապարհի վրայ: Ես իմ վաշտով միացայ Դրոյին, պահելու միաւորներու թիկունքը, իսկ մնացեալները սկսան դէպի քաղաք յառաջանալ: Կռիւր երկար չտեւեց, որովհետոյ թշնամին Արճէշ տանող ճանապարհով սկսաւ նահանջել: Քիչ յետոյ, բոլորս միասին Բերկրի կը մտնէինք: Թշնամին ամէն ինչ ձգած ու հեռացած էր քաղաքէն: Ուտեստեղէնի նեղութիւն բնաւ չէինք քաշէր: Մեզ չարչարող միտքը, Վանի ու շրջակայ ապստամբ ժողովուրդի վիճակն էր: Կ'ուզէինք օր առաջ, մեր եղբայրներուն օգնութեան ձեռք պարգել: Գուցէ վաղուց Վան մտած կ'ըլլայինք, եթէ չլար ռուս բարձր հրամանատարութեան դանդաղ շարժուելու հրամանը:

Այդ գիշեր Բերկրի մնալէ յետոյ, յաջորդ օր ճամբայ ելանք: Քանի կը յառաջանայինք, այնքան աւելի վատ ու գազանային արարքներու ականատես կ'ըլլայինք, այնքան աւելի շէն գիւղերու ողբացող ամայութիւնը կ'տեսնէինք: Գիշերը, ստիպուած եղանք քրտական գիւղի մը մէջ մնալ: Այդտեղի քանի մը քրտերէն իմացանք բաւականաչափ հայերու Լիմ կղզիի մէջ ապաստանած ըլլալու լուրը: Ո՞վ գիտէ որ մէկ նոր Մովսէսն էր զանոնք այդտեղ առաջնորդողը, բնութեան այդ մէկ անկիւնին մէջ գտնելու համար իրենց փրկութիւնը:

¹ Հետագային, Մոկսի կռիւներու ընթացքին սպանուելով, թաղուեցաւ տեղւոյն հայկական գերեզմանատան մէջ:

Ապրիլ 29-ին, մեր քայլերը դեպի ծովեզր ուղղելով, կէս օրուան միջոցներուն, հասանք Տիրամեր գիւղը. դիակներու գարշահոտութեան պատճառաւ, այդտեղ չմնացինք երկար: Մինչեւ իսկ գիւղի եկեղեցին լեցուած էր դիակներով: Այդտեղէն անցանք Փիրղարիբ, որտեղէն մաս մը զինուորներ Աշոտի առաջնորդութեամբ դեպի ծովափ յառաջացան: Այդտեղէն՝ իրենց հայ նշաններով հասկցնելով, կը յաջողին կողմի մէջ ապաստանած հայերու ուշադրութիւնը իրենց վրայ հրաւիրել: Քիչ յետոյ, փախստական ժողովուրդը, ստուգելով մեր հայ ըլլալը, մակոյկներով լեցուած ցամաք կ'իջնէին արդէն: Այստեղ միայն առաջին անգամ ըլլալով էր որ մենք կը լսէինք կատարածի ահռելի պատմութիւնը:

Զինուորներու հսկողութեան տակ, ժողովուրդը տեղաւորելէ յետոյ, ծովեզրով դեպի Վան սկսանք յառաջանալ: Բաւական մը յառաջացած էինք, երբ թնդանոթի ձայներ լսուեցան, ձայները հարաւէին կուգային ու շատ պարզ էր, որ թուրքերը կրկին Վանը ոմբակոծել էին սկսած: Ամբողջ գիշեր մենք լսեցինք թնդանոթի խուլ որոտները: Դրոն, իր հետ վերցուցած ձիաւոր ջոկատները, հարթ ճանապարհով, իսկ մենք՝ Գիւսնոցի եւ Աւերակի ուղղութեամբ սկսանք յառաջանալ: Եթէ չլլային ճանապարհի ընթացքին պատահած մէկ քանի փոքր ընդհարումները, որոնք բաւական ժամանակ խլեցին մեզմէ, գուցէ այդ օրը իսկ Վան մանէինք: Թշնամու փոքրիկ ու անկանոն ուժերու երբեմնի յայտնումները, ստիպեցին մեզ կանգ առնել ու ապահովելու համար մեր թիկունքը, որոշ հետախուզութիւններ կատարեցինք: Աւարտելով մեզ համար շատ անախորժ, սակայն անհրաժեշտ աշխատանքը, երկու օր յետոյ միայն Վան ուղղուեցանք: Ցերեկ էր արդէն, երբ քաղաքի պատերուն մոտ մեզ դիմաւորելու եկած քաղաքացիք Դրոյի ժամանումը եւ թշնամի ուժերու հեռացնալը մեզ կ'իմացնէին: Ի պատիւ մեզ, մեծ ընդունելութիւն էր կազմակերպուած, ժողովուրդի, աշակերտ-աշակերտուհիներու, ինչպէս նաեւ պաշտոնական անձնաւորութիւններու ընկերակցութեամբ, «ուռա»ներու անվերջ աղաղակներով, քաղաք կը մտնէինք: Այստեղ՝ իւրաքանչիւր փողոցի մէջէն անցած ժամանակ, պատուհաններէն ծաղիկներ կը նետուէին, փունջեր կը նուիրուէին, իսկ երդիքներէն ու փողոցներէն ազատութեան երգեր կ'երգուէին:

Անցնելով Խաչ-Փոխանով, ուղղուեցանք մեզ համար որոշուած բանակատեղին:

Մեր ժամանումէն մէկ երկու օր յետոյ, իրենց գորամասերով քաղաք մտան Համազասպն ու Քեռին, որոնք նոյնպէս մեծ պատիւներու ու ընդունելութեան արժանացան: Միայն Անդրանիկի գորաբանակն էր, որ 4-5 օր յետոյ Վան կը հասնէր. հակառակ վանեցիներու կողմէ եկած խնդրանքներուն, նա մերժեց միշտ քաղաքէն դուրս մնալով:

Քանի մը օր Վան մնալէ ու հանգստանալէ յետոյ, մայիս 5-ին մեկնեցանք դէպի Հայոց Ձոր: Երկու օր քալելէ ու Բերդակի, Աստուածաշէնի ու Հնդաստանի վրայով դէպի հարաւ իջնելէ յետոյ, Հայոց Ձորի շրջանի մէջ գտնուող նշանաւոր Հիրճ գիւղի մէջ բանակ դրինք: Այս գիւղի մէջ էր որ դաւադրութեամբ սպաննած էին Իշխանը իր մէկ քանի զինուորներով. ասոնք Շատախի ապստամբ հայ առիւծները խաղաղացնելու մտահոգութեամբ, թուրքերու հետ միասին որպէս պատուիրակութիւն հոն կ'երթային: Դիզուած հայերու դիակները փոսի մը մէջ թաղելով, Իշխանի ու իր թիկնապահներու՝ Պողոսի, Խրանի եւ Միհրանի դիակներն ալ Վան փոխադրել տուինք տեղոյն հայկական գերեզմանատան մէջ թաղելու համար:

Շատախ երթալու համար, պէտք էր Գէօրան դաշտով անցնելինք: Վերոյիշեալ դաշտը շրջապատուած է լեռներով եւ ունի մոտաւորապէս 20-30 գիւղեր, քրտական ազգաբնակչութիւնով: Ճանապարհը Հիրճէն դուրս գալով, կ'ընթանայ կիրճի մը միջով, որը այդ պահուն գրաւուած էր թշնամի ուժերէն: Անհնար էր այդտեղէն անցնիլ: Պէտք էր տարբեր միջոց գտնել: Կարճատեւ խորհրդակցութենէ մը յետոյ, Զեմլեակը, Եապոնը եւ Սոսրովը իրենց ձիաւոր ուժերով այդտեղ մնացին, իսկ մենք՝ վանեցի Տիգրանի առաջնորդութեամբ, սարերու վրայով անցանք թշնամու թիկունքը: Մեր այսօրինակ գործելակերպը տեսնելով, թշնամին խուճապահար փախուստի դիմեց, լքելով այնքան ուժեղ դիրքերը: Գրաւելով կիրճը, անցանք յառաջ ու մտանք Գէօրան դաշտ: Այդ դաշտի իւրաքայիւր գիւղը գրաւելու միջոցին, ստիպուած էինք առանձին կռիւ մղել: Եւ որքան կը փոքրանար թշնամու ձեռքը գտնուող գիւղերու թիւը, այնքան աւելի կը սաստկանար կռիւը:

Վաշտովս, արեւմուտք ինկած սարերու ստորոտը գտնուող գիւղերու ուղղութեամբ կը գործէի: Կռիւներու ընթացքին, ամենէն աւելի զորեղ ընդհարումը ունեցանք Աղվուտի մոտ, ուր թշնամին ուժեղ ընդդիմութիւն մը կազմակերպելու ջանք չէր խնայած: Սակայն, այստեղ ալ թշնամու բոլոր ջանքերը ամլութեան դատապարտուեցան: Գիւղը շրջապատուած էր արդէն: Քիչ յետոյ, ստանալով յարձակողականի անցնելու հրամանը, կարգադրեցի անմիջապէս գործի ձեռնարկել: Ուժեղ հրացանաձգութենէ մը յետոյ, «ուռա»ներով գիւղ լեցուեցանք շնչասպառ: Գիւղին մէջ փնտռութիւններ կատարելէ յետոյ, աղայի քեօշկէն դուրս արինք բաւական թիւով հայ կիներ, որ մինչ այդ բանտարկուած կը մնային այդտեղ: Կռուի յաջողութեան, ինչպէս նաեւ հայ կիներ գտնելու լուրը տեղեկացուցի Դրոյին:

Աղվուտի գրաւումով, ամբողջ Գէօրան դաշտի տէրն ու տիրականը կը դառնայինք: Թշնամի ուժերու ոչ մէկ հետք: Աղվուտի գրաւումով, մեր ձեռքը կ'անցնէր հարուստ աւար, եւ մօտ 5-6,000 գլուխ ոչխար: Գիշերը այդտեղ անցնելէ յետոյ, առաւտեան ճամբայ ելանք դէպի Շատախ: Ճանապարհին, մեզ դիմաւորելու էր եկած Փեսան Դաշտի հերոս Լեւոն Շա-

դոյեանը իր մէկ քանի ընկերներուն հետ միասին: Զինուորական կարգադրութեան մը հետեւանքով, Տէլի Ղազարը իր վաշտով միացաւ Լեւոնին, իսկ մենք՝ աջ ու ձախ գտնող լեռներու մէջէն անցնելով, մտանք Սեւտիկուն. Գէօրան դաշտէն հոսող ջուրերը հաւաքուելով կը կազմէն գետակ մը, որը Սեւտիկունէն ու Շատախէն անցնելով, կ'երթայ Տիգրիսին միանալու: Գիւղին ճիշդ մօտը, մեզ դիմաւորելու էր եկած գիւղի ժողովուրդը իր քահանայի առաջնորդութեամբ: Միասին դէպի գիւղ ուղեւորուեցանք, եւ հոն բանակ դրինք: Զանազան ուղղութիւններով պահակներ ուղարկեցինք, թշնամու հետքը գտնելու: Կռուի ծարաւ էինք ու թշնամուն հանդիպել կ'ուզէինք: Այդ գիշերն իսկ մշակուեցաւ յաջորդ օրուան գործունէութեան յատակագիծը, որով միւս օրն իսկ Շատախի վրայով յարձակուել կը յանձնարարուէր, տեղոյն հայ ազգաբնակչութիւնն ալ ժամ առաջ փրկելու համար:

Լուսաբաց է, դեռ ճանապարհի չենք ելած, երբ մեր լաւագոյն սուրհանդակներէն Տիգրան Բաղդասարեանի միջոցաւ, հետեւեալ լուրը կը ստանանք Շատախէն. -

«Թշնամին փախուստի դիմեց, լքելով իր յարմարագոյն դիրքերը - ազատ ենք»:

Այսպէտով ջուրը կ'իյնար մեր ծրագիրը: Հակառակ մեր ակնկալութեան, առանց կռուի երեք ժամ յետոյ Շատախ կը մտնէինք Հաշկանցի վրայէն անցնելով:

Մեր Շատախ հասնելէն երկու օր յետոյ, կարելոր գործով Դրոն Վան կը մեկնէր, իսկ վեց օր յետոյ, ճակատի ընդհանուր հրամանատար Նիքոլաւէն կը ստանայինք հետեւեալ հրամանագիրը, որ կը պահանջուէր անմիջապէս գործադրել:

«Ղասարի-Շիրիսի ուղղութեամբ լաւ եւ մանրակրկիտ հետախուզութիւն կատարելով, արդիւնքը ինձ տեղեկացնէք. հետախոյզներուս բերած տեղեկութիւններուն համաձայն, թշնամին այդտեղ կը կեդրոնացնէ իր ուժերը:

ՆԻՔՈՒԱՆԻ»

Տեղացի հայերէն քանի մը հոգի առաջնորդ վերցնելով, դեռ լոյսը չբացուած, Ղասարի-Շիրիսի ուղղութեամբ ճամբայ ելայ: Այդտեղ ստիպուած էինք գիշերել, ճանապարհին ձեռք ձգած մէկ քանի քիւրտերէն տեղեկացայ, որ թշնամին մաս առ մաս անորոշ ուղղութիւններով դէպի հարաւ է մեկնած: Յաջորդ օրը մինչեւ Փիրբաղասան յառաջանալով, ամենուրեք ամայութիւն տեսայ: Ուրեմն, որոշ չափով ճիշդ էր գերի մնացած քիւրտերու տուած տեղեկութիւնները, որ կասկածով ընդունեցինք նախապէս: Երկու օր վերջը կրկին Շատախ վերադարձանք:

Այստեղէն հիւսիս-արեւմուտք կը գտնուի Մոկսը: Տեղւոյն հայ ժողովուրդն ալ զէնք էր բարձրացուցած թշնամւոյն դէմ, իրեն առաջնորդ ունենալով Հին ֆետայի Լաթօն:

Նժդեհը, հետը առած Մեսրոպի եւ Մարտիրոսի վաշտերը, մեկնեցաւ դէպի Մոկս: Մինչ այդտեղ հասնելը, մերոնք կ'ունենան մէկ քանի կռիւներ, որոնցմէ ամենէն աւելի նշանակելին Սեօքան գիւղինն է: Վերոյիշեալ գիւղը կազմուած է 2-300 տուներէ: Բացի տեղացի ժողովուրդէն, այդտեղ հաւաքուած էին նաեւ շրջաններէն փախած բաւականաչափ զինուած թշնամի ուժեր: Մեսրոպը իր վաշտով Կախրի հասնելով, թշնամի ուժերու Սեօքանի մէջ կեդրոնացած ըլլալու լուրը կ'իմանայ գիւղացիներէն: Հաւաքելով գիւղին զէնք վերցնելու ընդունակ երիտասարդութիւնը, միացուցած իր վաշտին, աւելի մեծ ուժով դէպի Սեօքան յառաջանալով, գիշերով կը պաշարէ գիւղը: Լուսաբացին, թշնամին պաշարուած ըլլալը տեսնելով, կը սկսի յուսահատ կռուի: Մերոնք, կռուելով, քայլ առ քայլ կը սկսին դէպի գիւղ յառաջանալ: Կռիւր կը շարունակուի մինչեւ գիշեր: Օգտուելով խաւարէն, թշնամին լքելով իր դիրքերը, փախուստի կը դիմէ, բաւականաչափ սպանուած ու վիրաւոր թողնելով կռուի դաշտը: Մերոնց կորուստը եղած է երկու սպաննուած եւ հինգ վիրաւոր:

Մենք Շատախի էինք տակաւին, երբ հետեւեալ գրութիւնը ստացայ Նժդեհէն. –

«Սիրելի Ղազար,

«Մեսրոպը Կախրի շրջանն է: Սեօքանի կողմը ուժեղ կռիւներ տեղի կ'ունենան, թշնամին բաւական ուժ կեդրոնացուցած ըլլալով, ուժեղ դիմադրութիւն ցոյց կուտայ, գրութիւնս ստանալուդ անմիջապէս օգնութեան հասիր:

Բարեկերով՝ **ՆՃԴԵՀ**

Մոկս, 1 յունիս, 1915»

Դեռ լոյսը չբացուած, վաշտովս անմիջապէս ճամբայ ելայ: Բաւական ճամբայ կտրած էինք արդէն, երբ կը ստանամ երկրորդ գրութիւն մը, որով Սեօքանի թրքական ուժերու պարտութեան լուրը իմացնելով կրկին Շատախ վերադառնալ կը թելադրէր: Փոքրիկ հանգիստէ մը յետոյ, նոյն ճանապարհով Շատախ վերադարձանք: Մեզ հետ միասին, քաղաք ժամանեց Դրոն, իր հետ ունենալով մեր լաւագոյն տղաներէն Գագա Տէր Օհանեանը: Յաջորդ օրն իսկ, ձիաւորները հետը վերցուցած, Դրոն մեկնեցաւ Ախթամար: Հեծելագործի բացակայութեան պատճառաւ, պահակութեան գործը բաւական դժուարացաւ: Պէտք է ըսել սակայն, որ այս դրութիւնը երկար չտեւեց: Հեռախոսով, մենք ալ Ախթամար մեկնելու հրաման ստացանք: Նախ քան մեկնելը, մտտ կանչելով գիւղական առաջնորդները, մեր մեկնելու լուրը հաղորդելով, կրկին իրենց յանձնեցի գիւղին պաշտպանութիւնը:

Նոյն օրը ճանապարհ ելնելով ու գիշերը Փեսան Դաշտ կտրելով, յա-
ջորդ օրը հասանք Ախթամար:

Կամաւորական բոլոր գունդերը, ինչպէս նաեւ ռուսական գորամա-
սերը, հաւաքուած էին այստեղ: Քաղած տեղեկութիւններու համաձայն,
թշնամին այստեղէն ալ առանց կռիւի ձգած հեռացած էր: Մինչ մենք նոր
կեդրոնացումներ ու պատրաստութիւններ կ'ըննէինք, անդին՝ Մոկսի եի
Կառկառի շուրջ, մեր եւ թշնամի ուժերուն միջեւ լուրջ բախումներ տեղի
կ'ունենային: Ախթամար հասնելուս երկրորդ օրն իսկ, յառաջ շարժուելու
հրաման ստացանք: Մենք՝ ծովափով պետք էր յառաջանայինք: Որքան կ'ա-
ռաջանայինք, այնքան աւելի դժուար կը դառնար մարդկային կենդանի շունչ
գտնելը: Ամենուրեք դիակներ ու անհամար դիակներ: Ծովափը ամբողջու-
թեամբ դիակներով էր ծածկուած: Ծովը դուրս էր նետած զանոնք, կարծես
ինքն ալ դէմ ըլլար այդպիսի անմեղ գոհեր ընդունելու իր ծոցին մէջ:

Երեկոյեան հասանք Ռշտունեաց գաւառի Սորբ գիւղը ու բանակ
դրինք: Խումս ու Օրանց, երբեմնի այդ շէն հայկական գիւղերը, ամայի
գտանք: Թշնամի համախմբումները հասկանալու մտադրութեամբ, Սոր-
բէն հետախոյզներ ուղարկեցինք: Վերջիններու բերած տեղեկութիւններէն
հասկացանք, որ թշնամին այնքան ալ հեռու չէր գտնուէր: Հազիւ քիչ մը
հանգստացած էինք, երբ ստացանք կազմ ու պատրաստ գտնուելու առա-
ջին հրամանը: Նոյն գիշերուան ժամը 2-ին, կը ստանայինք երկրորդ հրա-
մանը, անմիջապէս յառաջ շարժուելու: Գիշերուան այդ ուշ ժամուն ճամ-
բայ ելնելով, մինչեւ լուսաբաց քայլեցինք հա քայլեցինք: Առաւօտեան,
թշնամին նկատելով մեր յառաջխաղացումը, թնդանոթային կրակ բացաւ
մեր դէմ: Մենք ընդունեցինք կռիւր: Անդրանիկը ծովափէն, Քեռին՝ ձախէն
ու մենք կեդրոնէն սկսանք գործել, մեր թիկունքն ունենալով Համագասպը:
Թշնամին հետզհետէ աւելի կուժեղացներ կրակը: Հետզհետէ հասան մեր
թնդանոթները ու սկսան գործել: Դաշտայինները՝ շովափէն ու լեռնային-
ները՝ ձախէն: Հակառակ յունիսեան տաքերուն, կռիւր կը շարունակէր
կատաղի թափով: Ժամը 4-ին մոտ է: Ոչ մէկ կողմ ընկրկելու նշան ցոյց
կուտար տակաւին: Թուրքերը, ամուր կառչած էին իրենց դիրքերուն: Թշ-
նամու ամենակարեւոր դիրքը որ կը գտնուէի Սորբ գիւղի ճիշդ դիմացը,
մեր թնդանոթաձիգներու ուշադրութեան առարկան էր դարձած: Մէկ ժամ
յետոյ, թշնամին չկարենալով դիմանալ թնդանոթի քանդիչ հարուածնե-
րուն, լքելով դիրքերը, փախուստի դիմեց: Հայ զինուորը խրախուսուած
թշնամու այս քայլէն, դէպի թշնամի դիրքերը յառաջ նետուեցաւ: Քիչ յե-
տոյ, թուրքերու տէրն ու տիրականն էինք: Այս կռուի ընթացքին մեր ձեռքը
մնաց ճոխ աւար, ինչպէս նաեւ երկու թնդանոթ եւ բազմաթիւ գերիներ: Թշ-
նամին ունեաւ բազմաթիւ սպանուածներ ու վիրաւորներ, իսկ մենք գոհ
տուինք 11 սպանուած ու 25 վիրաւոր:

Դիրքերու մէջ գիշերելէ յետոյ, յաջորդ յառաջխաղաման նոր հրաման ստացած ըլլալով, ճամբայ ելանք դէպի Դատուան:

* * *

Դատուանը փոքրիկ քաղաք է, ընկած Վանա լճի ափին, դէպի արեւմուտք: Այդտեղ կվերջանայ Վանա լիճը: Ունի նաւահանգիստ, որը բաժնուած է քաղաքէն: Բացի քաղաքէն, թշնամին գրաւած էր նաեւ քաղաքին ճիշդ դիմացը գտնուող անառիկ ու բարձր դիրքերը:

Թշնամու դիրքերը ուսումնասիրելէ ետք, մեր հրամանատարութիւնը որոշեց գրոհով գրաւել հակառակորդի դիրքերը: Այդ կարճատեւ կռուի մեր յատակագիծը հետեւեալն էր. Անդրանիկն ու Դաշնակցական Խէչոն ծովափով պիտի յառաջանային գրաւելու Դատուանն ու նաւահանգիստը, իսկ մենք՝ թշնամի դիրքերու ուղղութեամբ, Քեռին՝ Բաղէշ երկարող լեռնաշղթայի վրայով, պէտք էր հարուածէր ձախէն ու հարաւ արշաւէր: Յարձակողականը պիտի սկսէր արշալոյսը չբացուած:

Դեռ նոր էր լուսացած, երբ սկսաւ հրացանաձգութիւնը: Քիչ յետոյ, թշնամին կը պատասխանէր մեզ: Մերոնք դիրքէ դիրք անցնելով կը մոտենային թշնամու դիրքերուն: Այսպէս շարունակուեցաւ մինչեւ երեկոյ: Օգուելով խաւարէն, թշնամին սկսած էր ինչ որ նոր դասաւորութիւններ կատարել: Թուրքերու դիրքերուն ամենամոտը ըլլալով եւ նկատելով անոնց շարժումները, ուզեցի ստուգել կատարուածը ու տեղեկագրել հրամանատարին:

Մութին մէջ յառաջանալով, տեսայ անոնց նահանջի պատրաստութիւնները, պէտք էր օգտուիլ առիթէն ու գիշերով յարձակիլ թշնամու վրայ անոր նահանջը խուճապային դարձնելու համար: Տեղեկացնելով Դրոյին, յարձակումի հրաման խնդրեցի: Քիչ յետոյ սուրհանդակս կը բերէր պատասխանը, որով ինձ իրաւունք կը տրուէր, յարմար նկատած ձեւով գործի ձեռնարկել:

Ժամը գիշերուան 9-10-ն էր: Շրջելով բոլոր դիրքերը, հրահանգներ տուի զինուորներուն: Վաշտիս աչքի զարնող ութնեակներէն խումբ մը կազմելով, հետս առած ճամբայ ելայ դէպի թրքական դիրքերը: Մեր ճանապարհը բաւական տեղ անտառներու մէջով կ'անցնէր: Բաւական մոտեցած էինք արդէն, երբ անտառը վերջացաւ եւ բաց դաշտ ելանք: Դուրթախցի Մանուկին իր ութնեակով յառաջապահ էի նշանակած. հասնելով թշնամու առաջին գծի վրայ ինկած դիրքերուն, ամայի կը գտնեն, նոյնը եւ երկրորդին մէջ: Ապահով ըլլալու համար, կ'ուղղուին դէպի երրորդ գծի դիրքերը: Սողալով, կը յաջողին գաղտագողի դիրքերէն ներս սպրտիլ: Պահակը որ քնած է եղեր, տղոց ոտնաձայներէն արթննալով, կը սկսի կրակել: Կը սկսի գիրկընդիստն կռիւ: Պահակապետ թուրք տղան, սուրը քաշած կը յարձակի Մանուկի վրայ, վերջինս, գնդակի մէկ հարուածով

տեղն ու տեղը կը սպաննէ տղան: Մակայն, Մանուկի կեանքն ալ երկար չի տւեր, իրենց պետի մահը տեսնող թուրք զինուորները յարձակուելով Մանուկի վրայ, կը սպաննեն զայն: Այդ կռուին, գլխէն կը վիրաւորուի Մենօն: Մինչ կռիւր այս ձեւով կը զարգանար խրամներու մէջ, մենք կը հասնինք կռուի վայրը եւ «ուռա»ներով դիրքերէն ներս կը խուժենք: Զարհուրելի էր թշնամուն համար ստեղծուած դրոթիւնը, չկարենալով տոկալ հայ կտրիճներու յանդուգն յարձակումները, լքելով այդ դիրքը, թշնամին փախուստի դիմեց, փամփուշտի պակասութեան պատճառաւ ստիպուած եղանք ոչ միայն այդտեղ կանգ առնել, այլ նաեւ դէպի մեր նախկին դիրքերը նահանջել: Այս կռուի ընթացքին վիրաւորուեցաւ կարնեցի Խաչիկը:

Գիշեր է: Զբաղած ենք աւելի յարմար տեղերու վրայ դիրքեր պատրաստելու գործով: Հրացանաձգութիւնը կը շարունակուէր: Մենք մեր լուսարձակի օգնութեամբ տեղատարափ գնդակ կը թափենք թշնամու գլխին: Արշալոյսը մոտ էր. անհամբեր արեւի ծագելուն կը սպասենք. դեռ նոր էր բացուած արշալոյսը, երբ հետեւեալ հրամանը կը ստանամ Դրոյէն.

«Մեր ձիաւորները գրաւած են նաւահանգիստը, սիկ Անդրանիկը, յաջողած է մտնել Դատուան, մեծ կորուստներ պատճառելով թշնամուն»:

Մինչ մենք զբաղած թշնամու հետ, անդադար կռիւ կը մղէինք, ծովի հիւսիսային կողմէն մերթ ընդ մերթ լը լսուին թնդանոթի խուլ որոտներ: Մեր դիրքերը համեմատաբար բարձր ըլլալով միւս դիրքերէն, կէս օրուան մոտ հեռադիտակը ձեռքիս բարձրացայ մոտակայ բլուրին վրայ, ստուգելու համար կատարուածը: Հեռադիտակի օգնութեամբ, տեսայ այն կռիւր, որ տեղի կ'ունենար Խլաթի եւ Ալճաւազի ուղղութեամբ: Մէկ բան միայն պարզ էր: Ո՞վքեր էին կռուողները: Կը պատրաստուէի տեղեկագրել տեսածս, երբ ստացայ հրամանատարի (Դրոյի) գրաւոր տեղեկութիւնը.

«Սիրելի Ղազար.

«Զորավար Նազարբեգեանը իր գորամասով լճի հիւսիսակողմը կը գտնուի. գրաւած է Խլաթը. անցնելով կամուրջը, նրա յառաջապահները կռուի են բռնուած Սոխորդի վրայ:

Բարեւներով՝ ՌՌ»

Լուրը անիմջապէս վաշտիս հաղորդեցի: Մեծ էր մեր ոգեւորութիւնը: Տղաքը, քաջալերուած, սկսան երգել: Քիչ չանցած, թշնամին անօրինակ թափով սկսաւ կրակ տեղացնել: Չէինք գիտեր ինչպէս մեկնինք թշնամու այս քայլը: Մեծ եղաւ զարմանքս, երբ այս բուռն հրացանաձգութենէն յետոյ, թշնամին լքելով դիրքերը փախուստի դիմեց. ջոկատապետ Մեխակը, դուրս գալով առաջին դիրքերէն եւ թշնամու նահանջը տեսնելով, բարձրաձայն կանչեց. «Պրն. Վաշտապետ, թշնամին փախաւ»: Մենք ալ մեր կարգին, շղթայ բռնած հետեւեցանք առաջին դիրքի տղոց օրինակին. դիրքերը հետդիտել մեր ձեռքը կ'անցնէին: Սուրհանդակներու մեզ բերած

տեղեկություններն կ'իմանայինք, որ թշնամին ոչ միայն այստեղ, այլ եւ ամբողջ ճակատի վրայ փախուստի է դիմած, լքելով իր այնքան ուժեղ դիրքերը: Հայ բանակը «ուռա»ներով կ'ողջունէր իր այդ օրուան յաղթանակը:

Կարելի չէ ջիշել որ այդ օրուան բազմաթիւ զոհերու շարքին, ունեցանք նաեւ թանկագին զոհ մը յանձինս Դաշնակցական Խէչոյի: Խէչոն զինուորներով խրախուսուած թշնամու խուճապային փախուստէն, կը հետապնդէ զայն մինչեւ Գրգուռի ստորոտը: Թշնամին, որ ինչպէս կ'երեւի, նախօրոք դիրք էր գրաւած այդ սարի լանջերուն վրայ, գնդացիբային կրակ կը բանայ յառաջացող հայ մարտիկներու զլխին: Այդտեղ է որ ճակատէն ու կուրծքէն զարնուելով կ'իյնայ Խէչոն: Միսաքը, քանի մը ուրիշ զինուորներու օգնութեամբ, դիակը վերցնելով կը յաջողին նահանջել դէպի նախկին դիրքերը: Ստուգելով տարաբախտ ընկերոջ մահը, նաւով Վան կը փոխադրնէ, ուր զինուորական մեծ պատիւներով կը թաղուի եղբայրական գերեզմանոցի մէջ, իր այնքան սիրած զինուոր-ընկերներու կողքին:

Սարի գագաթը բարձրացած՝ կը փնտռէի Մանուկի դիակը: Չափազանց կը սիրէի այդ տղան յանդուգն ու քաջ: Գտնելով, թաղեցինք այնտեղ, ուր քաջաբար ինկած էր ինք, ապահովելով մեզ փայլուն յաղթանակ մը: Այդ օրուան փայլուն յաղթանակի առիթով, Դրոն կը շրջէր ամենուրեք, խրախուսելու ու շնորհաւորելու զինուորները:

Պայծառ գիշեր էր: Զինուորները սաստիկ յօգնած՝ սկսան երկարիլ գետնի վրայ: Գիշերը անցաւ խաղաղ, արանց որեւէ միջադէպի: Առաւօտեան, հետեւեալ հրահանգը կը ստանամ Դրոյէն, սուրհանդակի միջոցաւ.

«Ղազար, առանց ժամավաճառ ըլլալու, վաշտովդ միասին Դատուան անցիր, խաղաղութիւնը կատարեալ է: Դրո»:

Նախաճաշէն ետք, ճամբայ ելնելով, կէսօրուան մոտ հասանք Դատուան: Բոլոր զօրամասերը այդտեղ էին կեդրոնացեր: Ժամը 2-ի միջոցին, յառաջ շարժուելու հրաման մտտեցաւ: Անդրանիկի ու մեր գունդը, ռուսական զորամասի մը հետ միատեղ, շարժուեցանք Գրգուռ ու Ներքովդ լեռներու ուղղութեամբ, իսկ Քեռին եւ Համազասպը, ռուսական մէկ ուրիշ զորամասի հետ դէպի Բիթլիս: Երեկոյեան, հասնելով հայկական Ջրհոր գիւղը, բանակ դրինք: Այդտեղէն, գիշերուան մթութեան մէջ, յստակ կերպով կը տեսնէինք Բիթլիս յառաջացող բանակի վառած խառույկները: Առաւօտեան, տակաւին լոյսը չբացուած, երկուքի բաժնուած դէպի Մշոյ դաշտ ուղղուեցանք: Անդրանիկը պէտք էր Շամիրամով անցնէր, իսկ մենք հիւսիսով: Դէպի Մշոյ դաշտ առաջացող ուժերու ընդհանուր հրամանատար էր նշանակուած հայագգի զորավար Նազարեգեանը:

Նեղ ճանապարհէ մը անցնելէ յետոյ, երեկոյեան ժամը 5-ին հասանք Սերոբ Փաշայի գիւղը՝ Մոխորոյ, ուր եւ բանակ դրինք: Հազիւ նստած էինք հանգստանալու, երբ Դրոն կանչեց զիս: Այդ օր կրկին հերթապահ էի: Նա-

հանջի հրամանն ստացած ըլլալը ինձ հաղորդելով Դրոն, հրահանգեց կազմ ու պատրաստ լինել ու նահանջել կանոնաւոր կերպով:

Հրամանը ստանալէս հազիւ մէկ ժամ էր անցած, երբ մենք նահանջել սկսանք: Կը նահանջէինք բոլորովին տարբեր ուղղութեամբ: Նահանջի ճանապարհը ծովի հիւսիսակողմով կ'անցնէր, այսինքն՝ Խլաթ, Ալճաւազ, Ականց ուղղութեամբ: Լուսաբացին հասանք Խլաթ, այդ երբեմնի շէն քաղաքը որ այժմ դարձած էր ււերակ:

Մեր նահանջի գծին ձախ կողմը, ոչ այնքան հեռու կանգնած էր Սիփանը, որպէս կենդանի վկայ կատարուած վայրագութիւններու: Դէպի աջ, ծովն էր տարածուած, կապոյտ սաւանի նման: Անցնելով Արծկէն, երեկոյեան ուշ ատեն, հասանք Ատիլճեւազ: Տեսարանը այստեղ ալ նոյնն էր: Գիշերը քաղաքէն դուրս բանակ դնելէ ու հանգստանալէ յետոյ, յաջորդ առաւտտեան Արճէշի ուղղութեամբ շարունակեցինք նահանջել: Երեկոյեան հասանք Արճէշ: Այստեղ որոշուած էր աւելի երկար մնալ: Այստեղ մեզ միացան մոտ 100-150 Վարդէնիսցի հայ ընտանիքներ, որոնք Հասարթի առաջնորդութեամբ, խոյս տալով ջարդէն, յաջողէր էին նահանջել ռուս զորքին միանալ, որը Կոփի ու Մանազկերտի վրայով, կուգար մեզ միանալու: Չորս օրուան երկար հանգիստէ մը յետոյ, անցանք Բերկրի Ղալա:

Միւս զորամասերն ալ մեզ հետ միաժամանակ սկսած էին նահանջել լճի հարաւային ափով: Նժդեհը եւ Մեսրոպը, Մոկսի, Կառկառի, Գեօրան դաշտի, Շատախի եւ Վանի հայերը տեղահան ընելով, տեղական ուժերու հետ միասին կուգային մեզ միանալու, Բերկրի Ղալայի մէջ, մենք պատրաստուած էինք կանգ առնել, ապահովելու համար նահանջող գաղթականութեան ու զինուորական ուժերու նահանջի գիծը: Երկու օր զուր տեղը սպասելէն յետոյ, գաղթականութեան ուշանալուն պատճառաւ, ճամբայ ելանք դէպի Վան, ստուգելու յապաղման պատճառները: Ճանապարհին, Ջանիկ գիւղի մէջ, հանդիպեցանք խուճապով փախչող ժողովուրդի առաջին կարաւանին: Մեզ հետ առնելով այդ գաղթականութիւնը, վերադարձանք Բերկրի: Հետզհետէ հասան բոլորը: Կուգային ու փոքրիկ հանգիստէ մը յետոյ կը շարունակէին ճանապարհը: Այսպէս շարունակուեցաւ չորս օր անդադար, մինչեւ վերջին կարաւանին հետ միասին Բերկրի ժամանեց նաեւ Մեսրոպը իր վաշտով: Օր մը առաջ եկած էր նաեւ Նժդեհը, որ հիւանդացած էր տիֆոյով: Նախնական անհրաժեշտ օգնութիւնը հասցնելով իրեն, ճանապարհ դրինք դէպի Երեւան:

Բերկրիէն սկսեալ, ճանապարհը կ'անցնէր կիրճի մը մէջէն, որը Աբաղայի դաշտին մոտ կը վերջանար: Մինչ գաղթականութիւնը շտապով կը նահանջէր, լճի հիւսիսային կողմով ալ կը յառաջանար թրքական կանոնաւոր բանակը, նպատակ ունենալով գրաւել Բերկրիի կիրճը, այսպէսով կտրելու համար նահանջող զորքի ու ժողովուրդի ճանապարհը: Դրո-

յի կարգադրութեամբ, Մարտիրոսն ու ես մեր վաշտերով, Եսայոնի հրամանատարութեան տակ, բարձրացանք Սրբ. Տէր Յուսկայ որդու սարը, այդտեղէն արգիլելու համար թշնամու յառաջխաղացումը: Այստեղէն յստակ կերպով կը տեսնէինք թէ ինչպէս գաղթականութիւնը շարան-շարան, հեծեալ պահակներու մէջով կ'անցնէր անվերջ:

Եկաւ եւ մեր նահանջի հրամանը, միացած գաղթականութեան վերջին մնացորդներուն, ճամբայ ելանք գիշերով ու առաւոտեան հասանք Աբաղայի Բայազէտ-Աղա գիւղը:

Ամբողջութեամբ Աբրաղայի դաշտն էինք արդէն: Այլեւս վտանդ չկար: Կարելի էր գաղթականութիւնը առանձին ձգել: Զինուորները հաւաքելով, վաշտերը կանոնաւորեցինք ու ճամբայ ելանք: Այստեղ Մեսրոպէն տեղեկացանք որ Քեռին ու Համագասպը Պարսկաստան են անցեր, բաւականաչափ գաղթականութեան հետ միասին:

Յուլիսի վերջերուն էր, երբ գաղթականութեան հետ միասին Իգտիր հասանք: Ռուս բանակը որ Բերկրիէն-Բայազէտ-Աղա էր անցած, կրկին ետ վերադառնալու հրաման էր ստացած: Քանի մը օր այդտեղ մնալէ յետոյ, անցանք Երեւան: Ամիս մըն ալ Նորք մնալէ յետոյ, անցանք Քանաքեռ: Երեք ամիս այստեղ մնալէ յետոյ, ճակատ մեկնելու հրաման կը ստանայինք: Այստեղ ինձ փոխանորդ նշանակուեցան Տիգրանն ու Սէրգոն, իսկ Նժդեհին՝ գնդապետ Եգոր Տէր Աւետիքեանը, որ մինչեւ կամաւորներու ռուսական բանակին փոխանցումի շրջանը մնաց մեզ մօտ:

1915, նոյեմբերի 11

Երկար ու դժուարին ճանհապարհորդութենէ մը յետոյ, կրկին ճակատն ենք, այս անգամ սակայն բոլորովին տարբեր գծի վրայ: Նոր Բայազիտէն մեր ուժերը բաժնուեցան իրարմէ: Մեր մէկ զորամասը դէպի Վան գնաց, իսկ մենք՝ Բաթնու: Այսպիսով, նպատակ ունէինք խոշոր օղակի մը մէջ առնել Պուլանուխը, ուր բաւականաչափ ըմբոստ քիւրտ ցեղեր կային:

Այստեղ՝ Բաթնու շրջանի մէջ էր նաեւ գնդապետ Նասկովը իր զորաբաժինով:

Բաթնու եւ Խամուր, երկու տարբեր գաւառակներ են, Արճէշի գաւառին սահմանակից: Ճիշդ մոտն է Խամուրի փոքրիկ լեռնաշղթան, որ կանգնած է միայնակ այդ հարթ դաշտավայրին վրայ: Երկու շրջաններն ալ ամայացած էին: Աշխատող ձեռքերը չկային այլեւս:

Այստեղ հասնելուս երկրորդ օրը դեռ փոխ-վաշտապետներէս Տիգրանը հիւանդացաւ: Ուղարկեցինք Երեւան: Անոր յաջորդեց Նոր Բայազիտի Օթրաքլու գիւղացի Բաղալը:

Այստեղ, Բաթնուսի մէջ, մոտ 40-50 օր մնալէ յետոյ, Խնուս մեկնեցանք: Այս ժամանակամիջոցին կ'ունենայինք զինուորական վարժութիւն-

ներ ու պահակութեան պաշտոն, որ սաստիկ ցուրտի պատճառաւ մէկ ժամ կը տեւեր:

Մինչ հետեւակազորքը պահակութեամբ ու զինուորական վարժութիւններով կը զբաղէր, անդին՝ ձիաւորներն ալ տարբեր պարտականութիւններ ունէին: Հետախուզութեան գործն ալ անոնց էր յանձնուած:

Օր մը, մեր հետախուզներէն տեղեկացանք, որ թշնամի ուժերը մեզմէ 15-20 վերաստ հեռաւորութեան վրայ կը գտնուին: Դրոն, լուրը ստանալէն անմիջապէս յետոյ, հակառակորդի ուժը հասկնալու մտադրութեամբ՝ փոքրիկ յարձակում մը կազմակերպեց: Հետը վերցուցած մեր ամբողջ ձիաւորներն ու ռուս կողակներու ջոկատ մը, զիշերանց ճամբայ ելաւ ու, առատ կանուխ պաշարեց Կոփը, ուր կեդրոնացած էին թշնամի ոչ ստուար ուժերը: Վերջինը, յանկարծակիի եկած, լքեց քաղաքը եւ փախուստի դիմեց:

Յարձակումը ցոյցի բնոյթ ունենալուն պատճառաւ, մերոնք երկար չմնացին այդտեղ: Ձգելով Կոփը, հեռացան՝ կրկին դէպի Բաթնոս ուղղուելով:

Թշնամին, կարծելով որ մերոնք զբաղած կ'ըլլան, հաւաքական ուժերով գրոհ տուաւ քաղաքին վրայ: Սակայն, մեծ եղաւ անոր զարմանքը, երբ ներս խուժելով՝ զայն ամայի տեսաւ:

Դեկտ. 27

Հրամանատարի կարգադրութեամբ, Միփանի ուղղութեամբ հետախուզութիւն կատարելու համար, փոխ ջոկատապետ Յակոբը ամբողջ ջոկատով ճամբայ կ'ելնէ: Մոտ 20 վերաստ մը կը յառաջանայ: Երբ թշնամիի հետք չի գտներ, ետ կը վերադառնայ:

Սակայն, քրտական գիւղի մը մասով անցնելու պարագային, ուժեղ յարձակումի կ'ենթարկուի թշնամիէն, որ դիրքը գրաւած՝ կարկուտի նման գնդակներ կը տեղացնէ մերոնց գլխին:

Առաջին առթիւ, շփոթութիւնը ծայր կ'առնէ մեր շարքերու մէջ: Սակայն, տեսնելով վերահաս վտանգը, մերոնք կ'ինքնամփոփուին եւ կը սկսին պատասխանել թշնամու գնդակներուն: Փոքրիկ, բայց ուժեղ հրացանաձգութենէ մը յետոյ, երկու կողմերն ալ կը սկսին նահանջել:

Ոչ ոք կը նշմարէ փոխ վարչապետ Յակոբի բացակայութիւնը այդ վայրկենահին: Երբ բաւական հեռացած կը լինին ու ապահով կը զգան ինքզինքնին, կը տեսնեն Յակոբի ձիուն առանց տիրոջը լինելը:

Գիշերուան այդ մութին ետ վերադառնալը կրկին յոգնութիւն, մանաւանդ վտանգաւոր նկատելով, յարմար կը նկատեն շարունակել ճամբան: Ուշ գիշեր բանակատեղի հասնելով՝ կը պատմեն եղելութիւնը:

Դեկտ. 28

Վաղ առաւոտեան, վեր կենալով, շարունակեցինք մեր ճանապարհը հարաւ-արեւելեան ուղղութեամբ: Ժամը երկուքը անց էր, երբ մենք այն վայ-

րը հասանք, որտեղէն հեռադիտակի օգնութեամբ կարելի էր տեսնել Արճէշի դաշտը, ինչպէս նաեւ անոր միջով յառաջացող ռուսական զորամասը:

Մեր ներկայութիւնն ու քրիստոնէայ ըլլալը ցոյց տալու համար, թնդանոթի չորս հարուածներ խաչաձեւ արձակուեցան օդին մէջ: Ու բաւական մը յետոյ, երբ երկու բանակները դէմ առ դէմ էինք կանգնած՝ եղբայրական ձեռք պարզելով իրարու, «հուռա»ներու միահամուռ աղաղակ մը թնդացուց երկինքը:

Քանի մը ժամ իրարու ընկերակցութիւնը վայելելէ յետոյ, ջերն ողջերթներով բաժնուեցանք իրարմէ, անոնք՝ դէպի Արճէշ, իսկ մենք՝ Բաթնու:

Համաձայն երկու բանակներու հրամանատարական կազմի խորհրդակցութեան որոշումներուն, յարաբերական շղթան ամուր պահելու համար, նախապէս որոշուած կէտերու վրայ պահակախումբեր կը նշանակէինք:

Եթէ մէկ-մէկ հանգիստ ու անկախ կեանք վարող քաղաքացիներ ըլլայինք եւ կամ, եթէ իւրաքանիւր զինուոր իր ընտանեկան յարկին տակ գտնուէր այդ գիշեր, անտարակոյս աւելի ուրախ ու լաւ ժամանակ պիտի անցընէր: Չէ՞ որ դեկտեմբերի 31-ն էր:

Տրուած հրամանի վրայ, ընթրիքէն յետոյ բոլորս ալ երկարեցանք հանգստանալու, առանց նոյնիսկ պահ մը այդ գիշերուան նշանակութեան եւ ուրախութիւններու մասին մտածելու:

Այդ օր վեր կենալով՝ սկսանք շնորհաւորել միմեանց: Չէ՞ որ Նոր Տարի է: Հրամանատար, զինուոր, բոլորն ալ կը շնորհաւորեն իրար:

Որքա՞ն քաղցր են նման առիթները պատերազմի դաշտին վրայ: Հետու մտերիմներէդ ու ընտանիքէդ, ամենէն անձանօթը անգամ սրտիդ մոտ կը գտնես: Ի՞նչ է մեզ այդպէս իրար կապողը՝ մահը թէ սեւ կապարի կոյր բախտը:

Ժամը 10-ին ճամբայ ելնելով՝ երեկոյեան ուշ ատեն հասանք Բաթնու:

Այստեղ զինուորները ունին տարբեր ու շահաբեր պարապմունք մը. իւրաքանչիւր զինուոր պեղումներ կատարող է դարձած: Երբ ազատ են հերթապահութենէ կամ որեւէ ծառայութենէ, քաղաքը շրջելով փնտտոտուէներ կը կատարեն: Անկասկած որ հնութեանց պեղումներ չեն աստոնք, այլ ցորենի, գարիի եւ կարգ մը տարբեր արմտիքներու: Փախչող թէ կոտորուող ժողովուրդը, նախատեսելով վտանգը, իր մաքողջ հարստութիւնը թաղած է գետնափոր նկուղներու եւ կամ հորերու մէջ:

Հրամանատարութիւնը, քաջալերելու համար այս պեղումները, մէկ փութ գարիի կամ ցորենի համար, 25 կոպէկ կը վճարէ զինուորներուն: Այսպիսով, թէ՛ բանակը եւ թէ՛ զինուորները կ'օգտուին առիթէն:

Յունուար 6

Ծննդեան տոնի առիթով զորքը քէֆ ունի, իսկ մենք՝ վաշտապետներս ու փոխ վաշտապետներս հրաւիրուած ենք Դրոյի մոտ ճաշի: Այդտեղ է նաեւ ռուս սպայութիւնը:

Նոյն զիշերուան քէֆին ինձ սեղանի կառավարիչ ընտրեցին: Ռուս հիւրեր ունենալնուս պատճառաւ, անյարմար էր որ հայերէն խօսէինք: Ինքս ալ այնքան հմուտ չէի ռուսերէնին, այդ պատճառաւ ամէն անգամ, երբ ռեւէ մէկուն կենացը կը խմէինք, փոխանակ «գա վաշի թօսթ» ըսելու, միշտ ալ «գա վաշի թօսթ» կ'ըսէի, - բան մը, որ չափազանց կը ծիծաղեցնէր ներկաները:

Ջոպնացած՝ կ'ուզէի հրաժարիլ պաշտօնէս: Առանց գիտնալու սակայն, թէ ի՞նչ էր ծիծաղին առիթը: Դրոն քովս գալով՝ բացատրեց պատճառը, որմէ յետոյ ես ալ սկսայ ծիծաղիլ: Շարունակեցինք քէֆը մինչեւ ժամը 3-ը: Բաժնեցանք իրարմէ շատ լաւ տրամադրութեան տակ:

Ահա այսպէս անցուցինք 1916-ի Ծննդեան օրը:

Յունուար 7 եւ 8

Նոր վեր էինք կեցած, երբ յառաջ շարժուելու հրամանը ստացանք վերէն:

Անհրաժեշտ պատրաստութիւնները տեսնելէ յետոյ, յաջորդ առաւտտ տակաւին լոյսը չբացուած՝ զօրքը ճամբաւ ելաւ դէպի Խնուս:

Այնպէս էր կարգադրուած որ ես իմ վաշտով, ինչպէս նաեւ գորամասի տնտեսական մասը իր փոխ օգնականով այստեղ մնայինք: Վարիչը՝ Օհաննէս Գուրանեան գնաց Դրոյի հետ: Այստեղ՝ Բաթնոսի մէջ ինձ մոտ էր նաեւ վաշտիս գրագիրը, Ներսէս անունով Իգոտիբցի լաւ տղայ մը, որին չափազանց շատ կը սիրէի:

Այդ օր ստացայ հրաման մը, որով հետեւեալը կը հաղորդուէր.

«Ով կ'ուզէ, կարող է սպայից վարժարանը մտնել: Այդպիսիները ազատ արձակեցէք»:

Այս լուրը ստանալէն քիչ յետոյ, Ներսէսը ինձ ներկայացաւ, խնդրելով որ զինքը ազատ արձակեմ, որպէսզի կարենար զինուորական վարժարանը այցելել: Ուրախութեամբ ընդառաջ գացի այդ վառվռուն երիտասարդի խնդրանքին: «Երբ կ'աւարտես, կրկին ինձ մօտ կուգաս, հա՞, ասացի»:

Խօսք առաւ ու մեկնեցաւ, եւ այդ եղաւ մեր վերջին տեսակցութիւնը

Ներսէսի տեղը, վաշտիս գրագիր նշանակեցի Գողթանի Ագուլիս գիւղացի Մակար Մակարեանը:

Յունուար 15

Հեռախոսի միջոցով ստացայ Դրոյի հետեւեալ հրամանը,-

«Խնուսի շուրջ երկու օր յամառ կռիւներ ունենալէն յետոյ, թշնամին լքեց ու փախաւ: Քաղաքը մեր ձեռքն է: Օպօզն ու զորքը հաւաքելով, շուտով մեր մոտ եկուր: Այդտեղ գտնուող վիրաւորներ Ղարաքիլիսէ ուղարկէ»:

Նոյն օրն իսկ ճամբայ ելնելով՝ երեկոյեան հասանք Բուրնի-Պուլախ: Ստիպուած էինք գիշերել:

Այստեղ՝ հետեւեալ անախորժ դէպքը պատահեցաւ մեզ հետ. -

Ինձ յատկացուած փոքրիկ տնակի մը մէջ պետք էր գիշերելի: Ինձ հետ միասին էին նաեւ տնտեսական բաժնի օգնական Վարդանը (Զօկ) եւ վաշտիս գրագիր Մակարը: Տան առաստաղը, յատակը եւ պատերը ամբողջութեամբ եղեգէ խսիրով էին ծածկուած:

Վառարանի խողովակը առաստաղը ծածկող խսիրի մէջէն կ'անցնէր: Ծառայող ռուս զինուորին հրամայեցի, որ աւելի զգոյշ ըլլայ ու քիչ փայտ գետեղէ վառարանին մէջ, որպէսզի սեւէ անախորժ դէպք չպատահի յանկարծ:

Մենեակը բաւական տաքցած էր, երբ բոլորս ալ թուլցած տաքութենէն, երկարեցանք քնանալու: Կէս գիշերին, Մակարը վեր կը կենայ, վառարանը մինչեւ բերանը փայտով կը լեցնէ ու կ'երկարի քնանալու: Խողովակները նախ տաքնալով ու ապա կարմրելով՝ կը բռնկեցնեն եղեգէ խսիրը: Կրակը տարածուելով՝ աւելի մեծ համեմատութիւններ կը ստանայ:

Քունի մէջ կը լսեմ պահակներու «պաժար, պաժար» (հրդեհ) ձայները: Մակայն, երազ կարծելով՝ կը շարունակեմ քնանալ, միջեւ որ լսեցի Վարդանի զարհուրած ձայնը.

- Քեռի, քեռի, վեր կաց, հրդեհ կայ, շուտ արա:

Վեր ցատկեցի պառկած տեղէս, եւ ի՛նչ տեսնեմ՝ կրակի լեզուներ պաշարեր են մեզ: Մառուգերս, եւփունջիս ու փամփշտակալս առած, հագիւ կարողացանք դուրս նետուիլ պատուհանէն: Հագուստներս, ձիուս թամբը, ու մանաւանդ արխիւր հրոյ ճարակ դարձան: Մինչեւ այժմ ալ ցաւով կը յիշեմ արխիւիս կորուստը:

Փոխ վաշտապետներուս ու զինուորներուս ունեցած աւելորդ հագուստները վրաս յարմարցնելով՝ արեւածագին ճամբայ ելանք դէպի Խնուս:

Յունուար 16

Շատ հետաքրքրական է Խնուսի դիրքը: Շինուած է ժայռերու պատուածքի մը մէջ, ուրկից գետ մը կը հոսի սուրալով: Ունի քանի մը նորաշէն տուներ, որ կառուցուած են բուն լեռնադաշտակին վրայ:

Այս քաղաքը օդով, ջրով եւ հողով հարուստ քաղաք մըն է: Բոլորովին խոպան ու աւեր է այժմ: Չկան զայն շէնցնող ձեռքերը: Կանգնած կը մնայ եկեղեցի մը՝ Սր. Աստուածածին անունով: Տուները մեծ մասամբ քարաշէն են:

Մեր վաշտին մէջ գտնուող քանի մը խնուցի տղաներէն կ'եզրակացնէի որ հաստատակազմ, առոյգ ու գեղեցիկ բնակիչներ է ունեցած այս քաղաքը: Ափսո՜ս սակայն, որ ոչ մէկ հայ գտանք այդտեղ:

Քաղաքը լեցունեցաւ ռուս ու հայ զինուորներով: Ստիպուած եղանք 2-3 վերստ հեռաւորութեան վրայ գտնուող Ղարա-Չօպան գիւղին մէջ բանակ դնել:

Դրոն կրկին Երեւան մեկնեցաւ եւ մեր զորամասը ենթակուեցաւ գնդապետ Տէր Աւետիքեանին:

Յունուար 7-ին, այստեղ ժամանեց նաեւ գնդապետ Նասկովը իր զօրաբաժնով:

Քանի մը օրուան հանգիստէն յետոյ, հրաման ստացանք դէպի հարաւ-արեւմուտք շարժուելու:

Յունուար 21

Կամուրջի վրայով անցնելէ յետոյ Խնուսի գետը՝ դէպի Ֆոֆոնիկ յառաջանալ սկսանք: Մեզ հետ էր նաեւ ռուսական զօրամաս մը, որ Խնուսէն դուրս գալով՝ մեզ միացաւ:

Այդ օրուան մեր յառաջապահները լապիսակի կոզակներն էին:

Բիրականեան լեռներու կողերէն ծալը առնող գետակի մը եզերքէն հոսանքն ի վար կը յառաջանային անտրտունջ: Արեւածագէն բաւական մը յետոյ, երբ մէկ-երկու ժամուան ճամբայ կտրած էինք արդէն, հանդիպեցանք թշնամի ուժերուն եւ ստիպուած եղանք կռուի բռնուիլ:

Շղթայ կապած՝ մեր ժամանակաւոր դիրքերէն սկսանք կրակել: Տեխնիքական կարգ մը պատճառներով թնդանօթները միասին չէինք վերցուցած: Այդ իսկ պատճառաւ մեր գործը բաւական դժուարացաւ: Կռիւր մինչեւ ուշ գիշեր տեւեց: Վերջապէս մոտակայ գիւղը նահանջելով, այստեղ գիշերեցինք:

Գիշերը մերթ ընդ մերթ լսելի կը դառնային մեր եւ թշնամի պահակներուն միջեւ տեղի ունեցող փոքրիկ հրացանաձգութիւնները:

Յունուար 22

Վաղ առաւոտեան, վիրաւորները Խնուս ուղարկելով, յառաջ շարժուեցանք: Նախորդ օրուան թշնամու դիրքերը ամբողջութեամբ ամայի գտանք: Ինչպէս կ'երեւէր, թշնամին ալ իր կարգին մեզ նման նահանջած էր, հաւանաբար աւելի լաւ դիրքեր գրաւելու մտադրութեամբ:

Մեծ ուշադրութեամբ ու շղթայ բռնած՝ կը յառաջանայինք: Ժամը 10-ի ատեններն էր, երբ յանկարծ կրկին իրարու հանդիպեցանք: Կռիւր ծայր տուաւ: Տէլի Ղազարը առաջէն, ես՝ ձախէն ու Մարտիրոսը կէտրոնէն դիրք գրաւելով՝ սկսանք մեր յարձակումը: Ձախ կողմիս դիրքերը գրաւուած էին ռուսական զորքերէն: Տէլի անյարմարութեան պատճառաւ իրարմէ կտրուեցանք առաջին առթիւ:

Մոտ երկու ժամ տեւող կռիւէ մը յետոյ, հետեւեալ գրաւոր հրահանգը ստացայ հրամանատար Եգորէն.

«Մեծ¹ Ղազարին.

«Տելի Ղազարի ու Մարտիրոսի վաշտերը գրոհով գրաւեցին Դամրջի գիւղը: Թշնամին նահանջեց քու դիմացը գտնուող գիւղերը: Աշխատէ կապ հաստատել ձախ թելիդ վրայ գտնուող ռուս զորամասի հետ:

«Հրամանատար՝ Եգոր»:

Կէսօրը անցած էր, երբ իմ ու ռուսական ուժերը իրարու միացան:

Տեսնելու բան էր, թէ ինչպէս մեր զինուորները, արհամարհելով թշնամու արձակած գնդակները, դէպի թշնամի դիրքերը կը նետուէին: Երկար չտեւեց այդ, սակայն: Թշնամին, ժամանակ մը եւս շարունակելով դիմադրել մեր կտրիճներուն, նահանջի դիմեց, որուն յաջորդեց խուճապային խելակորոյս փախուստը:

Այս կռուի ընթացքին, երկու վիրաւորներ միայն ունեցանք: Թշնամին բաւական մը տարածութեան վրայ հալածելէ յետոյ, յաղթողի մը յատուկ ծիծաղը երեսնուս ու արհամարհանքը շրթներուս, վերադարձանք Դամրջի, ուր հաւաքուած էին մնացեալ բոլոր զորամասերը: Նախապէս վառուած խարովկներու շուրջը բոլորուելով՝ չորցուցինք մեր ձիւնէն թրջուած հագուստներնու գուլպաները:

Դամրջիի ու Ֆոֆոիկի երկու օր տեւող կռիւներու ընթացքին ունեցանք ընդամենը 10 վիրաւոր, որոնցմէ երկուքը ծանր: Վերջին երկուքը պատգարակով Խնուս ուղարկեցինք:

Յունուար 23

Ճամբայ ելնելով՝ սկսանք դէպի Չարպուհուր յառաջանալ: Մեզ հետ էր գնդապետ Նասկովը իր ուժերով:

Կրկին վերելք ունէինք: Ամէն կողմ ձիւնով հաւասարապէս ծածկուած էր: Երբեմն մինչեւ մէջքերնիս խրուելով ձիւնի մէջ, ու երբեմն ալ գլորուելով՝ անտրտունջ կը շարունակէինք մեր առաջխաղացումը: Ծիծաղելով ու բարձրաձայն աղաղակելով կ'երթայինք, կարծես հարսնիք ըլլար մեր գացած տեղը:

Այսպէս, երեք ժամ անընդհատ հոգեհան վերելքը շարունակելէ յետոյ, շրջեցանք անդիի երեսին ու սկսանք գառիվար իջնել: Կը յառաջանայինք ուրախ ու զուարթ: Ոչ ոք չէր ուզեր տեսնել իր գլխուն վրայ սաւառնող կենաքի անստուգութեան խտացած ամպերը: Ոչ ոք կը մտածէր իր ապագային վրայ: Հայրենի երկրին հիասքանչ տեսարանները հմայեր էին կարծես բոլորս: Բոլորս ալ գերմանացիին նման կը մտածէինք. «Մեռնելու պարագային ալ հոս կ'ուզեմ մեռնիլ»: Եվ ճիշդ որ այդպէս էր: Մեռնիլը անոյշ կ'երեւէր մեզ այս լեռներու ու ձորերու մէջ:

¹ Ձիս ու Տելի Ղազարը իրարմէ զանազանելու համար, զիս Մեծ Ղազար կը կոչէին, քանի որ տարիքով ալ մեծ էի անկէ:

Առաջին իսկ գիւղը կանգ առինք հանգստի համար: Հազիւ վառած էինք խարոյկները, երբ մահաբեր գնդակներ ֆշշալով մեր քովէն սուրալ սկսան: Ինչպէս կ'երեւէր, մոտերը գտնուող թշնամին էր, որ նկատելով մեր խարոյկները՝ մեզ վրայ գնդակներ կ'արձակէր:

Ամէն մէկ հաւանականութեան հանդէպ պատրաստ գտնուելու մտահոգութեամբ, բոլորս ալ գրեթէ ոտքի վրայ անցուցինք մինչեւ լուսաբաց:

Յունուար 24

Առաւոտեան շարունակեցինք դէպի հարաւ իջնել կրկին: Թշնամու ոչ մէկ հետք կար:

Այսպէս շարունակելով, առանց ոեւէ կարելոր ընդհարում ունենալու, երեք օր յետոյ Մուշ կը մտնէինք:

Ճանապարհին, բախտը ունեցանք տեսնելու Կուրաւուն, հպարտ Աղջակը, յայտնի Սուլուխն ու Մշոյի դաշտի կարգ մը այլ գիւղերը, որոնք ոսկէ տառերով արձանագրուած են հայոց նորագոյն պատմութեան մէջ: Ճանապարհին հետ զուգընթաց դէպի հարաւ կ'ընթանար Չարպուհուրայ ջուրը, որ կը բխի Պինկէտլէն, որ ճանչուած է շրջակայքի բնակիչներէն Մուրաստ Սու անունով:

Մշոյ դաշտի ընդարձակ հովիտը, շրջապատուած է բարձր լեռներով: Ո՛վ գիտէ, ի՞նչ մեծամեծ դէպքերու վկայ ու ականատես են եղած այդ դաշտն ու լեռները: Անոր չքնաղ պատկերը յուզիչ է հայ սրտերու: Որքա՞ն ճիշդ էին ու ի՞նչ անուշ կը հնչէր ժողովուրդի երգը. –

«Մշոյ սարեր մշուշ է,

Իր հողն ու ջուր անուշ է»...

Յունուար 27

Մուշ ենք: Քաղաքը կառուցուած է Տաւրոսեան լեռնաշղթայի տակ, լայնարձակ ձորաբերանի մը առջեւ: Ճիշդ մէջտեղը ունի բլուր մը, այժմ անբնակ ու աւերակ: Քաղաքի տուները կառուցուած են այս բլուրի կողերուն ու վարը գտնուող դաշտավայրերին մէջ: Լեռնէն վար կը հոսի փոքրիկ գետակ մը, որ կ'երթայ ու կը միանայ յայտնի Մեղրագետին կամ այլ անունով Գարա Սուին: Ունի հինգ քարաշէն եկեղեցիներ, երկու թէ երեք իջեւաններ ու բազմաթիւ ջրաղացքներ, փռուած գետի երկայնքին: Ունի փոքրիկ շուկայ մը, մոտ 300-400 կրպակներով, ամբողջութեամբ ամայի: Արեւմտեան կողմը կը գտնուին քաղաքին պտղաբեր պարտէզները:

Ո՞ր մէկ մշեցին ցառով չի յիշեր իր երկրի դամոնն ու շլորը, շաղգամն ու սպիտկուկը, սխտորուկն ու քմուկը: Մշեցիք շատ հիւրասէր ժողովուրդ են եղած անցեալին մէջ: Սակայն, ափսոս որ ոչ ոք կար մեզ հիւսասիրող, երբ հայ զօրքը Մուշ մտաւ:

Մշոյ դաշտի մոտ 70 հայկական գիւղերն ալ ամայի են: Քաղաքի մոտ 700 հայկական տուններէն եւ ոչ մէկը մարդաբնակ կրցանք գտնել: Մշուշը

ամառ ձմեռ անպակաս ըլլալուն պատճառաւ, կ'ըսէ աւանդութիւնը, այդ քաղաքը Մուշ է կոչուեր:

Մշոյ քաղաքէն ճիշդ հարաւ կը գտնուի Սասունը, որ բաժնուած է առաջինէն Տարրոսեան մեռնաշղթայով: Դեռ յաջորդ օրը, յունուար 28ին, սուրհանդակներ ուղարկեցինք Սասուն՝ ծանոթանալու համար այդ քաջասիրտ ու ըմբոստ ժողովուրդի ճակատագրին: Կ'ուզէինք իմանալ թէ արդո՞ք ժողովուրդ մնացեր է այդ անառիկ լեռներու մէջ:

Քանի մը օր յետոյ Սասուն ուղևորուած զինուորական զօրախումբը ետ վերադարձաւ իր հետ բերելով մոտ 300-400 հոգի սասունցիներ, որոնք մինչ այդ խոտով ու զանազան բոյսերով վայրենիներու նման կրցած էին իրենց կեանքը քարշ տալ բարձրաբերձ լեռներու ու անանցանելի կիրճերուն մէջ: Ատոնց հետ էին Չօլօն, Կարօն (Միրուքը), Մանուկը եւ կարգ մը ուրիշ հին ֆետայիներ:

Թողելով սասունցի գաղթականները Մուշի մէջ Գաղթականական Մարմնի խնամքին, շարժուեցինք դէպի արեւելք, Երիզակի ու Վարդենիսի ուղղութեամբ: Թշնամին եւս այդ գծով կը նահանջէր: Պէտք էր հետապնդէինք զայն, մանաւանդ որ բացի նահանջող թրքական կանտնաւոր ուժերէն, կային բազմաթիւ քիւրտեր, որոնք յաճախակի յարձակումներով կը նեղէին մեր հետախոյզներն ու փոխադրական գործով զինուորները:

Մեր առաջին յարձակումը այդ ուղղութեան վրայ տեղի ունեցաւ Մարնիկի, Զիրկէթի ու Նօկի մոտերը: Այս երեք գիւղերն ալ Մեղրագետի մոտերը կը գտնուին:

Այս շրջանի աշիրէթապետներն էին եղբայրներ Մուսա պէկ, Նհօ պէկ եւ Ղասըմ պէկ (Դաշնակցութեան երբեմնի բարեկամը): Ունէին քոյր մը՝ Կուլօ անունով, որ այրի էր մնացած: Վերոյիշեալ քրտուհին իր եղբայրներէն աւելի մեծ համակրանք կը վայելէր քիւրտ ազգաբնակչութեան մէջ ու ունէր առանձին աշիրէթ:

Փետրուար 5

Ռուսական զորամասի հետ միասին դուրս եկանք Մուշէն:

Օդը խոնաւ էր: Թանձր մշուշը պատած էր ամէն կողմ: Առանց մեզմէ քսան քայլ հեռուն տեսնելու՝ պոչ բռնած կը յառաջանայինք ձիւներու մէջէ:

Անցնելով Դերկեվանքէն, ուշ ատեն հասանք հայկական Խասգիւղ գիւղը: Գիշերը այդտեղ մնալէ յետոյ, առաւօտեան շարունակեցինք ճանապարհը:

Կէսօրը անցած կ'ըլլար, երբ մեր յառաջապահները մոտեցած ըլլալով Նօկ գիւղին, ուժեղ յարձակման կ'ենթարկուին: Մերոնք, անմիջապէս դիրք գրաւելով՝ կը սկսին պատասխանել արձակուած գնդակներուն:

Լսելով հրացանաձգութիւնը, դէպի Նօկ փութացինք, Իսկ ռուսական զօրամասը անջատուելով մեզմէ՝ դէպի Մարնիկ ուղղուեցաւ:

Երկու ժամ տեւող կռիւէ մը յետոյ, երկու գիւղերն ալ միասնաբար գրեթէ նոյն բախտին արժանացան: Թշնամին կը փախչէր, իսկ մենք տէր կը դառնայինք գիւղերուն: Հաւաքուած շրջակայ գիւղերուն մէջ, աննպատակ գնդակներ կ'արձակէին մեր գտնուած գիւղի ուղղութեամբ, առանց նկատի ունենալու որ խաւար է ու հետեւաբար անօգուտ: Այդպիսի դրութեան մը մէջ, չէինք կրնար հանգիստ նստիլ կամ քնանալ: Այսպէս հաւաքականօրէն, առանց զինուորին անհրաժեշտ քունը քաշելու, մնացինք մինչեւ առաւոտ:

Լուսաբացին վեր կենալով սկսանք դիրքերով ու այլ նախապատրաստական աշխատանքներով զբաղիլ: Այդ օրը հանգիստ կրնայինք առնել, քանի որ ապահոված էինք գիւղը ամէն յարձակումէ:

Փետրուար 7

Շարունակեցինք մեր յառաջխաղացումը դէպի հարաւ-արեւելք: Յետնապահ էի: Վաշտիս կէտը 'Նօկ ձգելով' միւս կէտով հետեւեցայ զորամասի յառաջխաղացումին: Սակայն, հազիւ Մարնիկ էինք հասած, երբ ուժեղ հրացանաձգութիւն մը լսեցի թիկունքէն, Պատճառը ինձ անձանօթ էր: Քիչ անցած, ստացայ փոխվաշտապետ Մերգոյի տեղեկագրութիւնը, որ հետեւեալն էր. –

«Պրն վաշտապետ.

«Թիւրտերը Ծիրգէղի ուղղութեամբ, մեծ ուժերով յարձակուելով մեր վրայ, գրաւեցին գիւղը: Կռիւը կը շարունակուի ուժեղ կերպով: Թշնամի ուժերը գերազանց են: Սպաննուած ու վիրաւորներ ունինք արդէն: Ժամ առաջ օգնութիւն ուղարկէ:

«Փ. վաշտապետ՝ Մերգո»

Ներկայանալով հրամանատարին՝ ցոյց տուի ստացած տեղեկագիրս: Մեր խոսակցութեան վերահասու եղաւ մեր լաւագոյն սպաներէն Տէր Օհանեանը, որ անձամբ ներկայ եղած ըլլալով կռուին՝ աւելի պարզօրէն կ'ընէր կռուի նկարագրութիւնը:

Մինչ մենք զբաղած էինք 'Նօկի մէջ կռուի բռնուած ուժերուն օգնութիւն ուղարկելու խնդրով, լսեցինք նաեւ տարբեր հրացանաձգութիւնը մը, որ յառաջացող զօրամասերու կողմէն կուգար: Հրացանաձգութեան ձայնին միացաւ գնդացիբային կրակը: Այլեւս կասկած չկար, որ թշնամին ամբողջ ճակատին վրայ յարձակողականի է անցած:

Մինչ կռուի դաշտը կը ժամանէինք, մերոնք արդէն գիւղը լքած՝ սկսած էին նահանջել: Տեսնելով մեր ներկայութիւնը՝ խրախուսուած եւ հակայարձակողականի անցան: Ուժերս երեքի բաժնած՝ օղակի մէջ առինք գիւղը:

Մէջ բերեմ հետաքրքիր դէպք մը, որ տեղի ունեցաւ այդ ժամանակ: Նահանջի միջոցին, երբ մենք տակաուին կռուի դաշտ չէինք ժամանած, զինուորներէն մէկը ծանր կերպով կը վիրաւորուի թշնամիի գնդակէն: Վի-

բաւորութիւն ընկերը, տեսնելով իր ընկերոջ վիրավորուած ըլլալը, գայն շակեցելով մտքը գտնուող խոտի դեզերէն մեկուն կը մոտենայ եւ ընկերն ու զինքը կը պահէ խոտի դեզին մէջ: Այսպէսով կը խուսափի թշնամու ակնարկէն ու մանաւանդ գալիք հաւանական խժոժութիւններէն: Երբ մենք միացեալ ուժերով սկսանք յառաջանալ, որ չէր խուսափած խոտի դեզին մէջ պահուած հայ զինուորի ուշադրութենէն, ան դուրս եկաւ իր թագստոցէն, եւ սկսաւ կրակել նահանջող թշնամու վրայ:

Երբ մենք յաջողած էինք քրտերը վանել գիւղէն, վերոյիջեալ զինուորը՝ շակեցած իր ընկերը՝ գիւղ եկաւ:

Այդ կռուին, ընդամենը 6 սպաննուած ու 10 վիրաւորներ ունեցանք:

Գիշերը պահակները նշանակելով՝ հանգստի երկարեցանք:

Կէս գիշերին, հրամանատար Եգորէն, հետեւեալ տեղեկութիւնը ստացայ, -

«Սիրելի Ղազար.

«Հրացանակիր 3-րդ եւ 4-րդ գունդերը, գնդապետ Եաղուպովի հրամանատարութեան ներքեւ, Մուշէն դուրս են եկած դէպի մեզ գալու: Այս գիշեր հաւանաբար Խասգիւղ մնան ու վաղը այդտեղ ժամանեն: Պատրաստ եղիր լաւ ւնդունելութիւն ցոյց տալու»:

Լուրը, անմիջապէս փոխ վաշտապետներուն իմացուցի: Լուսաբացին, Խասգիւղի ուղղութեամբ պահակներ ուղարկեցի:

Այդ օրը մշուշը բաւական մը վերցած էր: Մշոյ դաշտը մտնելէս յետոյ, առաջին անգամ ըլլալով էր որ այս տեսակ եղանակ կը տեսնէի:

Կէսօրուան մոտ, ստացայ գնդապետի՝ գիւղին մոտեցած ըլլալու լուրը: Ընդառաջ երթալով՝ գիւղ առաջնորդեցի ու կացութեան մասին զեկուցում տուի:

Թէյով հիւրասիրուելէ ու քիչ մը հանգստանալէ յետոյ, ճամբայ ելան դէպի Մարնիկ երթալու:

Այդ գիշեր մենք եւս ստիպուած եղանք այդ տեղ անցնելու:

Փետրուար 9

Մենք ճամբայ ելանք Զիրգէտ երթալու:

Երբ բաւական մը մոտեցած էինք գիւղին, թշնամին նկատելով մեր յառաջխաղացումը՝ սկսաւ կրակել: Դիրք գրաւելով՝ սկսանք պատասխանել արձակուած գնդակներուն: Մեզ հետ միասին ունէինք թնդանօթաձիգներու վաշտ մը երկու թնդանոթներով, որոնք անխնայօրէն կը ծեծէին թշնամի դիրքերը: Ամենէն աւելի ուշագրաւ էր գիւղին մէջ կառուցուած սպիտակ շէնքէն ցոյց տրուած թշնամու ընդդիմութիւնը: Այդտեղ հաւաքուած բաւականաչափ քիւրտերը, երեւի իրենց պարտութիւններէն գագանացած, յանդգնօրէն դէմ կը դնէին մեր կտրիճներու յարձակումին՝ արգիլելով անոնց յառաջխաղացումը:

Տեսնելով այս, թնդանօթածիզներուն հրամայող ռուս տղան՝ կարգադրեց այդ ուղղութեան վրայ կեդրոնացնել հարուածները: Սարսափելի էր գիւղին այդ սպիտակ շէնքին մէջ կեդրոնացած քիւրտերու դրութիւնը, թնդանօթի ռումբերու աւերիչ ուշադրութեան առարկան դառնալէն յետոյ:

Հրամանը արձակուելէն յետոյ, շատ չանցած՝ գիւղն ու մանաւանդ ճերմակ շէնքը, որ յամառօրէն մինչեւ վերջին բոպէին կանգնած կը մնար մեր ուժերուն դիմացը, հողին հաւասարեցան: Կարելի չէր այլեւս այդտեղ մնալ: Թշնամին փախուստի դիմած ըլլալով, «հուռա»ներով գիւղ մտանք:

Զիրգէտի գրաւումէն յետոյ, յաջորդաբար առանց կարելոր ընդհարումներու, մեր ձեռքն ինկան շրջակայքի բոլոր գիւղերը: Մեր դէմը կռուող քրտական ուժերը իրենց աշիրթապետուհու առաջնորդութեամբ Սարկանի վրայով դէպի հարաւ կը նահանջէին:

Այստեղ՝ Զիրգէտի մէջ պահակ ձգելով՝ վերադարձանք Նոք, իսկ ռուս տղան, որ մինչ այդ մեզ հետ էր եղած կռիւներու ընթացքին, նոր կարգադրութեան մը յետեւանքով Սարնիկ մեկնեցաւ:

Մինչ մենք զբաղած էինք շրջանները մաքրելու գործով, անգին՝ գնդապետ Եաղուպովը միացած Նասկովի ուժերուն, դէպի Բաղէշ կ'ուղուէր: Ատոնց հետ միասին էր նաեւ Տէլի Ղազարաբ իր կիսավաշտով:

Քաղաքէն հիւսիս գտնուող հարթ դաշտավայրին վրայ, միանալով Ախլաթի կողմէն եկող զորավար Աբացեի եւ Անդրանիկի զորամասերուն, հաւաքական ուժերով դէպի հարաւ կը շարժին: Երբ բաւական մտտեցած կ'ըլլան քաղաքին, Անդրանիկի կարգադրութեամբ, Տարոնցի Սմբատը, արեւելեան կողմը գտնուող լեռնաշղթայի վրայով առաւօտեան ժամը 3-4-ի միջոցներուն, քաղաք կը մտնի յանկարծ եւ մեծ իրարանցումի կը մատնէ թշնամին: Վերջինը, անել դրութիւնը տեսնելով ու ամէն ինչ վերջացած համարելով, «Ալլահ» կը կանչէ ու նետուելով ասպարեզ, գիրկընդխառն կռուի կը սկսի, որ մոտ մէկ ժամ կը տեւէ: Հայկական ու ռուսական համեմատաբար աւելի մեծ ուժերու ներս խուժումը տեսնելով, ամէն ինչ ձգած՝ կը լքէ քաղաքը եւ խուճապահար փախուստի կը դիմէ: Կը փախչէր Սղերդի ուղղութեամբ, Բաղէշի գետի եզերքով: Թշնամին սարսափած էր արդէն: Այդ իսկ պատճառաւ մերոնք կանգ կ'առնեն քաղաքի մէջ:

Այժմ քանի մը խոսքերով նկարագրենք այն քաղաքը, զոր աւանդութեան համաձայն՝ էշ մը պաղած ըլլալուն պատճառով, **Պաղ-էշ** են անուանած եւ որ հետզհետէ Բաղէշի է վերածուած ժողովրդի բերնին մէջ:

Քաղաքը ունի գեղեցիկ տեսք մը, մասամբ ձորերու եւ մասամբ ալ բլուրներու կողերուն վրայ կառուցուած ըլլալուն պատճառով:

Ճիշդ մէջտեղը, բարձր ու ապառաժոտ սարի մը վրայ դեռ կանգուն կը մնան բեկորները բերդի մը, որ ըստ հին աւանդութեանց, իբր թէ Ալեք-

սանդր Մեծի կողմէն կառուցուած է, երբ այս թագաւորը դէպի Պարսկաստան կ'արշաւէր՝ անցնելով Հայաստանի վրայէն:

Բաղէշ ունի հինգ նշանաւոր թաղեր՝ Աւետ կամ Հէրսան, Զէյտան, Գըզըլ-Մէսճիտ, Թաշ Մահալէ եւ Գոմս: Այս թաղամասերը, կապուած են իրար հետ քարաշէն կամուրջներով: Քաղաքը ունի չորս եկեղեցիներ, որոնցմէ ամենանշանաւոր ու հաստատունը Կարմրակ Սբ. Նշանի եկեղեցին է: Բացի ասկից, մնացեալ երեքը Ս. Գէորգ, Հինգ Խորան ու Սբ. Սարգիս, աղքատիկ ու բաւականին խարխուլ վիճակ մը ունին:

Բաղէշ ունի հարուստ քարահանքեր, ուրկից կը հայթայթուին շէնքերու յատուկ քարերը: Այդ իսկ պատճառաւ, շէնքերն ու փողոցները մեծ մասամբ քարաշէն են: Քաղաքացիները այս քարին Փուտ Քար անունը կուտան:

Երեք գետեր քաղաքը զանազան մասերու կը բաժնեն, ատոնցմէ մին Գոմաց ձորի միջով ու յետոյ Ամրտօլու մենաստանին առջեւէն կ'անցնի: Երկրորդը՝ Օպարքորու ու երրորդն ալ Ավէխու ձորերէն կուգայ: Խնդիրկատար մենաստանին առջեւ, անոնք իրար կը միանան, սրընթաց վազքով մը դէպի հարաւ կ'ուղղուին՝ կազմելով Բաղէշի գետը:

Բացի վանքերէն ու եկեղեցիներէն, Բաղէշի մէջ ազգային ոեւէ հնութեան մնացորդ չկայ:

Այստեղ չպիտի ուղեմ քաղաքի վաճառականական կամ ժողովրդի գիտակից ու ազգասէր ըլլալու կամ չըլլալու մասին խոսիլ, քանի որ այն պարագային երբ Բաղէշը մեր ուժերէն գրաւուեցաւ, բացի ամայի ու ողբացող շէնքերէն, հայու ոեւէ կենդանի շունչ չէր գտնուեր: **Պատմական Մայնոյ ձորի** բլուրներու ու ձորերու մէջ կառուցուած շէնքերն ու գիւղերը, վանքերն ու մենաստանները աւերակ են այժմ: Միայն գետերն են որ իշշալով կ'երթան թաւալզոր դէպի հարաւ, եւ ամպերու մէջ թաղուած լեռներն են որ կը մնան մէկ-մէկ կենդանի, սակայն անխոս ու խորհրդաւոր վկաները կատարուած ահաւոր ոճիրին:

* * *

Բիթլիզի գրաւումէն մէկ շաբաթ յետոյ, Բուլանըխի շրջանը անցնելու հրաման ստացանք:

Հրամայուած էր մանրակրկիտ հետախուզութիւն կատարել: Հրամանը ստանալուն յաջորդ օրն իսկ ճամբայ ելանք դէպի Բուլանիս, որ օղակի մէջ առած ըլլալով՝ չէինք այցելած տակուին:

Ապահովութեան տեսակէտով անհրաժեշտ էր այս արշաւանքը, որ մոտ 10-12 օր տեւեց:

Այդ միջոցին, քանի մը անկարեւոր կռիւներ ունեցանք, զոր հարկ չեմ զգար արձանագրելու: Ըսեմ միայն, որ այդ շրջագայութեան միջոցին, անցնելով Նազիկ լճի եզերքով, Բլէճանով, Կիզակ ու Տրօսքով, լաւ գործ կատարելէ յետոյ, Մուշ վերադարձանք:

Մարտ 10

Հազի քանի մը օր յետոյ, տրուած հրամանի մը վրայ, հայ եւ ռուս զորամասերը միասին զինուորական կարգով ճամբայ ելանք դէպի արեւմուտք:

Կ'անցնէինք հարթ դաշտով, որ ձմեռուան այդ եղանակին ծածկուած էր ձիւնով: Երեկոյեան հասանք Մշոյ դաշտի Ղըզըլաղաճ գիւղը: Ռուսական ու հայկական հետեւակ ուժերը մնացին այստեղ, իսկ կողակները շարունակեցին մինչեւ հայկական Մէյտան գիւղը, որ Եփրատի ճիշդ ափին կը գտնուի: Ղըզըլաղաճի մէջ մեր առաջին գործը եղաւ մեզ համար գիշերելու յարմար տեղ գտնել:

Գիշերը վրայ էր հասած արդէն ու լուսինը իր արծաթափայլ շողերով կ'ողողէր ամբողջ գիւղը: Ամենուրեք խաղաղ ու հանդարտ էր: Միայն գետերն էին որ հսկայ գոռումով իրար կը խառնուէին՝ խանգարելով գիւղի մեռելային լռութիւնը: Չորքը այնքան էր յոգնած, որ գետերու աղմուկը անոր «նանին» եղաւ ու ախորժելի քուն մը պարգեւեց զինուորին:

Մարտ 11

Արեւածագէն կանուխ վեր կենալով, շարունակեցինք յառաջխաղացումը դէպի Չանկոկ:

Օդը կրկին ցուրտ, մշուշ ու խոնաւ էր: Թանձր ձիւնի մեջէն փոխն ի փոխ ճամբայ բանալով, հասանք Տարոսեան լեռնաշղթայի ստորոտը, որուն փէշերուն վրայ տարածուած է Չանկոկը:

Հագար ու մէկ դժուարութիւններով, երկար ու հոգեատ վերելքէ մը յետոյ, վերջապէս գիւղ հասանք: Խարոյկները վառուեցան ու մենք հաւաքուած անոնց շուրջը՝ սկսանք տաքցնել մեր ոտքերն ու շորերը, որ ցուրտէն փայտ էին դարձած:

Քիչ յետոյ հասաւ եւ թէլէֆոնի ջոկատը անհրաժեշտ մասերով: Շատ էինք յոգնած, սակայն ի՞նչ ընել, տեղի վտանգաւոր ըլլալուն պատճառաւ, պէտք էր յարմարագոյն դիրքեր գրաւել՝ կանխելու համար թշնամու կողմէն ըլլալիք ամէն մէկ յարձակում: Երկար մագլցումներէ յետոյ, պահակներ նշանակելով վերադարձանք Չանկոկ:

Իմ վաշտովս այստեղ ձգեցին զիս, իսկ միւսները վերադարձան Ղըզըլաղաճ:

Մարտ 12

Առաւոտուն վեր կենալով, տեսանք ռուսերու դէպի արեւմուտք յառաջխաղացումը մեր աջէն: Անոնք ալ մեզ նման դժուարություններու կը հանդիպէին ձիւնի ու քամիի պատճառով: Երբ անոնք ալ իրենց կարգին հաստատուեցան մեր մոտերքը, անմիջապէս մարդ ուղարկեցինք ու կապ հաստատեցինք հետերնին:

Վաշտիս կէսը դիրքերը ձգեցի, իսկ միւս կէսով վերադարձայ Ղըզըլաղաճ: Երեք օր այստեղ մնալէ յետոյ, կրկին շարժուելու հրաման ստացանք:

Մարտ 15

Գնդապետ Նասկովի հրամանատարութեան տակ, ձիաւորներու 3 վաշտ, 6-րդ հրացանաձիգ գունդէն երկու վաշտ ու հետեւակ հայ ուժերը, հետերնին ունենալով լեռնային երկու թնդանոթ ու գնդացիրային ջոկատ մը երկու գնդացիրներով, գիշերուան ժամը 1-ին, Եփրատի ձախ ափով շարժուեցանք դէպի արեւմուտք, Գէնջի ուղղութեամբ:

Այստեղ է, որ կը վերջանայ Մշոյ ընդարձակ դաշտը արեւմուտքէն ու կը մտնէ Գէնջի լեռներուն մէջ, իսկ արծաթափայլ Եփրատը Գէնջի սարերուն զարնուելով՝ ահագին գոգոցով կը սուրայ նախ դէպի արեւմուտք ու յետոյ հարաւ:

Որքա՞ն գեղեցիկ էր շրջակայքը: Ճիշդ որ արժէ, որ մարդ ճշմարիտ սէր մը ունենայ իր այսքան գեղեցիկ հայրենիքին հանդէպ: Արդեօք մասամբ այս գեղեցկություններէն հմայուած չէ՞ր որ գրաւուած հայ սրտեր իրենց կեանքը նուիրեցին անոր՝ զայն ուրիշին չձգելու համար: Ափսո՛ս սակայն, որ ոչ միայն ուրիշին ձեռքը մնաց, այլ քարուքանդ եղաւ:

Հաւատացած եմ, որ այդ ժամուն բոլոր հայ զինուորներու սրտին մէջ դէպի իրենց հայրենիքը տածած բուռն սէրը աւելի արծարծուեցաւ:

Այս շրջանը հարուստ է վանքերով, տաճարներով, մենաստաններով ու մեր բարեպաշտութեան եւ նախնի ճարտարապետութեան շքեղ յիշատակներով: Չէ՞ որ այստեղ էր որ հայոց հին հաւատքը՝ կռապաշտութիւնը փոխուեցաւ ու նոր կյանքը տիրեց մեր աշխարհին: Սուրբ Լուսաւորիչի հրաշագործութիւնները առաջին ամօրէ այստեղ էին, որ կատարուեցան:

Մարտ 16

Մեր յառաջապահները, հանդիպելով քշնամի ուժերուն, կ'սկսին կռուիլ, որ կը շարունակուի մինչեւ գիշեր, երբ խաւարը ծածկելով ամէն ինչ՝ կը ստիպէ կռուող կողմերը կանգ առնել:

Յաջորդ օրը լուսաբացին, երկու կողմերն ալ վեր կենալով՝ կը շարունակեն կռիւր: Կրկին կը գոգոռան հրացանները, ու կը յաջորդէ ճարձատող գնդացիրային կրակը, որ կը տեւէ մինչեւ կեսօր: Թշնամին յամառորէն կը դիմադրէ մեր ուժերուն: Ժամը 3-4-ի միջոցներուն, թշնամին, չկարենալով դիմանալ յարձակման եւ մերթ ընդ մերթ կրակելով, կը սկսի նահանջել ու բաւականաչափ զոհ կուտայ: Մեր հետեւակները, մայրամուտէն առաջ Գէնջ կը մտնեն, իսկ ձիաւոր ուժերը, բաւական մը հալածելէ յետոյ թշնամին, ետ կը վերադառնան ու արեւմուտքէն քաղաք կը մտնեն: Այստեղ, տուններու մէջ խուզարկութիւններ կատարելէ յետոյ, դուրս կը բերեն բաւականաչափ հայ կիներ ու աղջիկներ, որոնք գեղեցիկ ըլլալուն առեւանգուած եւ բռնութեամբ քիւրտերու սեփականութիւնը դարձուած էին:

* * *

Մարտի վերջերն էր: Ձիւնը սկսած էր հետզհետէ հալիլ: Օդը այնքան տաք էր, որ նոյնիսկ գիւղին ճամբաները սկսած էին մաքրուիլ: Այդ օր դուրս էինք եկած դաշտ, փնտռտուքներ կատարելու:

Ամէն քայլափոխի, դիակներու կւ հանդիպէինք, որոնք երկար ժամանակ ձիւնին տակը մնացած ըլլալով՝ ոմանք կմախքացած, ոմանք ալ լուծուած էին: Ամենուրեք նոյն սոսկալի տեսարանը կը պարզուէր մեր աչքերուն առջեւ:

Իմ բնակած տանը ճիշդ դիմացը կար եւ ուրիշ տուն մը, որ բաւական վնասուած էր: Օր մը, երբ նստած պատուհանին առջեւ, թաղուած էի մտածումներու մէջ, յանկարծ, դիմացը գտնուող կիսաքանդ տանը պատերուն առջեւ, գլուխը ձեռքերուն մէջ առած, արտասուող մարդու մը ներկայութիւնը նշմարեցի: Հետաքրքրութեանս գոհացում տալու համար, դուրս եկայ սենեակէս եւ քայլերս դէպի այն կողմը ուղղեցի: Երբ մոտեցայ արտասուող մարդուն, հարցուցի.

- Ո՞վ ես, եղբայր, ի՞նչ մարդ ես: Ի՞նչ է պատահեր որ այդպէս կուլաս:

Մարդը, հայ ըլլալու հասկանալէ յետոյ, գլուխը վեր բարձրացնելով՝ ըսաւ.

- Ես չի լամ, հապա ո՞վ լայ, աղայ, քո ոտքերուն մատաղ: Լամ, այո՛, լամ, որպէսզի սիտս գովանայ: Կը տեսնե՞ս այս դիմացի շէնքը, այս խոշոր բակը, փլած գոմը, ախտոը, բոլորն ալ իմս էին: Նահապետական ընտանիք ունէի ու այժմ՝ այդ բազմամարդ ընտանիքէն միայնակ եմ մնացած ու այն ալ հրաշքով՝ դառնալու համար կենդանի վկայ այս գիւղի մէջ գործուած ոճիրին:

Ու կը շարունակէր արտասուել, երկու ձեռքերով միեւնոյն ժամանակ ծեծելով գլուխը:

Հետս առնելով՝ սենեակս տարի ու թէյով հիւրասիրեցի: Երբ քիչ մը հանգստացած էր, հարցուցի.

- Եղբայր, ի՞նչպէս է եղեր, որ ողջ ես: Պատմէ ինչ որ տեսեր ես աչքերովդ:

Երկար շունչ մը քաշելէ ու հառաչանք մըն ալ արձակելէ յետոյ, այսպէս սկսաւ –

«Մեր գիւղը՝ Դըզըլաղաճ, բաղկացած էր 5-600 տուներէ: Բաւական հարուստ ու աչքի զարնող գիւղ մըն էր: Այսօր երբ ես՝ թափառականս նստած այս պատմութիւնը կը պատմեմ, ոչ ոք ողջ է մնացած բացի ինձմէ ու հինգ ընկերներէս: Մնացեալները, ոմանք ջարդուեցան ու ուրիշներ ալ առեւանգուեցան քիւրտերէն: Ընկերներս, որոնք այժմ Մուշ կը գտնին, բախտի բերումով են ազատուած, իսկ ես հրաշքով: Չարդէն առաջ, այդ

հինգ հոգիները գործով Սասուն էին գացած: Երբ կը լսեն ջարդի լուրը, այդտեղ աւելի ապահով գտնելով՝ հոն կը մնան:

«Քիւրտերը, միացած թուրք ասկետարներու հետ, երկու անգամ շրջապատեցին մեր գիւղը, սակայն այդ երկու անգամին ալ, շնորհիւ քահանային ու ալ աւելի հաւաքուած դրամին, կաշառք վերցուցին ու հեռացան գիւղէն: Շատ չանցած, անօթի գայլերու նման կրկին երեւացան օր մը: Այս անգամ, կրկին նոյն միջոցին դիմեցինք, կարծելով որ այդպիսով պիտի յաջողինք ազատուիլ կոտորածէն: Սակայն, չարաչար խաբուած էինք:

«Չմոռնամ ըսելու որ այս անգամ, երկու հոսանք կար գիւղին մէջ: Մեծամասնութիւնը համաձայն էր դրամի ուժով կաշառել քիւրտերը, իսկ միւս մասը՝ երիտասարդութիւնը զինուած դիմադրութեան կողմնակից էր: Առաջինը յաղթող դուրս եկաւ: Սակայն, որքա՞ն լաւ ըրած պիտի ըլլայինք, եթէ երկրորդին հետեւէինք:

«Գիւղին տէրտերը, հաւաքելով մեր վերջին ունեցածը, տարաւ թուրքերուն յանձնելու: Վերջինները, դրամը վերցնելէն յետոյ միայն, ներս խուժեցին: Գիւղի ամենագեղեցիկ աղջիկներն ու կանայքը հաւաքելով, պահեցին իսկ մեզ՝ տղամարդիկս ու մնացեալ կիներն ու երէխաները հաւաքականոթէն, եգերու նման խումբ-խումբ դէպի սպանդանոց առաջորդեցին: Ու չեմ պատմեր այն զարհուրելի տեսարանը, որ պարզեցաւ այդ վայրկեանին աչքերուս առջեւ:

«Եկաւ եւ մեզ դուրս հանելու ու դէպի մարդկային սպանդանոցը առաջնորդելու մասը: Կը քայլէինք գլխիկոր ու յուսահատ: Մահուան հեռանկարը կանգնած էր մեր աչքերուն դիմաց: Ո՛հ, ինչ սարսափելի բոպենէր էին որ կ'անցնէինք: Բաւական մը յառաջացած էինք, երբ գլխուս մէջ ծնունդ առաւ փախուստի ծրագիրս: Յայտնեցի ընկերոջս ու խորհուրդ տուի ինձ միանալ: Ան չհամաձայնեցաւ: Ժամանակը կ'անցնէր, պէտք էր կամ առաջ գործի ձեռնարկէի՝ օգտագործելով հարմար առիթները:

«Անտառի մը մոտով կ'անցնէինք, երբ ես ընկերոջս «մնաք բարով» ըսելով փոխուստի դիմեցի: Ոստիկանը զիս հետապնդեց: Երբ բաւական մը մոտեցած էր, սկսաւ կրակել: Չեմ գիտեր ի՞նչ բերումով վար գլորեցայ յանկարծ: Ոստիկանը այս որ տեսաւ, զիս մեռած կարծելով «օխ, կէպէք» ըսաւ ու հեռացաւ:

«Երկար ժամանակ ուշաթափ մնալէ յետոյ, երբ ուշքի գալով բացի աչքերս, շուրջս միայն ամայութիւն ու երկնքի լողացող աստղերը տեսայ:

«Վեր կենալով, լեռնային ճանապարհներով, Սասուն անցայ: Այդտեղ բուժեցի վերքս, որ ստացած էի թուրքին գնդակէն՝ այս ըսելով, ցոյց տուաւ ուսին վրայ գտնուող սպին ու շարունակեց՝ Եթէ այս սպին չըլլար, ես ողջ չպիտի ըլլայի այսօր: Երբ դուք Մուշը գրաւելով զօրք ուղարկեցիք Սասուն, միացած այնտեղի ժողովուրդին, Մուշ եկայ: Այդտեղ, տեսնելով Գէնջի

գրաւումը, ճամբայ ելայ ու ծննդավայրս եկայ, վերջին անգամ ըլլալով տեսնելու անոր փլատակներն ու ողբալու համար անոր չարաբախտ ամայութիւնը: Ահա այսպէս եղաւ մեր գիւղի կոտորածն ու իմ կենդանի մնալս»:

Վերջացնելով իր պատմութիւնը՝ գիւղացին առած, ուղղուեցայ դէպի այն ձորը, որ հազարաւոր հայ դիակներ էր կուլ տուած: Լացինք միասին այն անթաղ ու անմեղ մեռելներու վրայ, որոնք զոհ էին դարձած թրքական վայրագ բարբարոսութեան:

Մարտ 24

Գիշերը, Կուրտիկ թաղէն յառաջացող թշնամիի հետախուզական մէկ վաշտը, օգուելով մթութիւնէն, կը մօտենայ մեր թիւ 1 դիրքին ու յանկարծ կը յարձակուի պահակներուն վրայ: Մերոնք շուարած, նախ իրար կ'անցնեն, սակայն շուտով ուշքի գալով կը սկսին դիմադրել, մինչեւ որ դիրքապահներէն օգնութիւն կը ստանան: Տակաւին Ղզըլաղաճ կը գտնուէի որ 8-10 վերստ հեռաւորութեան վրայ է դիրքերէն: Այստեղէն, յստակ կերպով կը լսուէր հրացաններու որոտը: Երկու ձիաւորներով փութացի կռուի դաշտը: Սակայն, նախ քան իմ այնտեղ ժամանելը, փոխ-վաշտապետ Պատալը իր կիսավաշտով Ջանկուէն հասած կ'ըլլայ արդէն: Երկու ժամ տեւող կռիւէ մը յետոյ, յետ նետեցինք թշնամին:

Դէպքէն քանի մը օր յետոյ, Մարտիրոսը իր վաշտով եկաւ ինձ փոխարինելու, իսկ ես վաշտովս Ղզըլաղաճ վերադարձայ հանգստանալու: Այդ անհրաժեշտ էր, որովհետեւ շուտով պէտք էր Սրբ. Յովհաննէս վանքին պահակութիւնը ստանձնէի:

* * *

Մուշէն 1 ժամ հեռաւորութեան վրայ, Տաւրոսեան լեռներու փէշերուն վրայ դէպի արեւմուտք, կառուցուած է Սրբ. Յովհաննէսի վանքը, որ այնքան ալ հոյակապ կառուցուածք չունի: Քովը գտնուող Սրբ. Ստեփաննոս եկեղեցին համեմատաբար շատ աւելի վայելուչ ու բարձր է, քան այս: Ներսը ամբողջութեամբ խաւար ու խոնաւ է:

Ղզըլաղաճէն ճամբայ ելնելով, երեք ժամ միշտ գառիվեր բարձրանալով՝ հասած էինք վանքը: Լաւ դիրք ունէր: Հիանալի էր օդն ու ջուրը, կարծես օդափոխութեան եկած ըլլայինք այդտեղ: Սակայն, օդափոխութեան եկողի մը համար չէ՞ որ անտարբերութիւնն ու անհոգութիւնը ամենամեծ պայմանն են: Ինչպէ՞ս կրնայինք հանգիստ ու անտարբեր ըլլալ, երբ այդ բարձրութենէն, շրջակայքի ամայութիւնն ու մեռելութիւնը կը տեսնէինք:

Մեզ հետ գտնուող փախստականներէն տեղեկացանք, որ այդ բոլորի գլխաւոր դերակատարներն են եղած Կուզմագետուկի շրջանի գիւղերու վայրագ քիւրտերը: Բոլորս ալ անխտիր վրէժով էինք լեցուած: Կուզէինք ժամ առաջ այնտեղ ըլլալ ու հողին հաւասարեցնել այդ շրջանը իր գիւղերով: Մեր վանք հասնելէն 3-4 օր յետոյ ստացայ հրամանատարի մէկ

հրահանգը, որով կը թելադրէր ինձ անյապաղ իր մոտ երթալ: Միացած ուժերով նպատակ ունէր դէպի Կուզմագետուկ յառաջանալ:

Լուրը անմիջապէս տարածուեցաւ զօրքերուն մէջ: Տեսնելու էր թէ ինչպէս զօրքը կ'ուրախանար եկած լուրէն: Նոյն գիշեր վանքին մէջ մեծ խնջույք էր: Մինչեւ առաւօտ երգելով ու պարելով անցուցինք: Առաւօտեան, կազմ ու պատրաստ վանքէն դուրս եկանք դէպի Ղըզըլաղաճ երթալու: Այս անգամ զառիվար ըլլալուն, աւելի դիւրին էր առաջ շարժելը:

Երբ գիւղ հասանք, ներկայացայ անձամբ հրամանատարին, եւ կացութեան մասին զեկուցում տուի:

Ապրիլ 13

Գարնանային պարզ գիշեր մըն էր ու հազարաւոր աստղեր կը պսպղային ջինջ երկնակամարին վրայ: Գիշերելէ յետոյ, վաղ առաւօտեան, բոլոր զորամասերը կազմ ու պատրաստ՝ հրամանի կը սպասէին: Հրամանատարի հետ ունեցած փոքրիկ խորհրդակցութենէ մը յետոյ, բոլոր վաշտապետներս մեր վաշտերուն մոտ վերադարձանք:

«Յառաջ», լսելի եղաւ մթութեան մէջէն հրամանատարի ձայն: Բոլորս ալ իրարու ետեւէ մեծ կարգապահութեամբ յառաջ շարժուեցանք:

Այդ օրուան յառաջապահը Տէլի Ղազարն էր իր վաշտով: Բաւական մը յառաջանալէ յետոյ, մոտեցանք թշնամի դիրքերուն: Հասած էր այն վայրկեանը, որուն օրեր շարունակ անհամբերութեամբ կը սպասէինք: Այստեղէն լեռնային բարձունքը կ'երկարէր մինչեւ Կուզմագետուկի ամենաբարձր գագաթը, ուր կը միանար Կուրտիկ թաղին: Անոր ճիշդ ետեւը, դէպի արեւմուտք, կանգնած էր Գէնջը, իր բարձր սարերով: Գրաւելով մեզ համար յարմար դիրքեր, շղթայ կապած սկսանք յառաջ շարժուիլ: Մեր ետեւին կուգար ձիաւորներու հարիւրեակը:

Թշնամիի դիրքերը համեմատաբար շատ բարձր ու բնութենէն առանձնապէս նպաստաւոր էին: Դէպի Եփրատ երկարող անոր դիրքերը, բաւական հեռու էին մեր դիրքերէն, իսկ ձախ կողմը գտնուողները թէեւ մոտ էին, սակայն բարձր: Իւրաքանչիւր վաշտ գրաւած էր իր համար նշանակուած տեղը: Զինուորական այսպիսի դասաւորումէ մը յետոյ, հրաման ստացանք քայլ առ քայլ յառաջ շարժուելու:

Մշուշը որ մեզ ծածկած էր թշնամիի ակնարկէն մինչ այդ, սկսաւ վերնալ հետզհետէ: Թշնամին նկատելով մեր յառաջխաղացումը, սկսաւ կրակել, որուն յաջորդեց գնդացիրային մահաբեր կրակը: Փոքրիկ լռութենէ մը յետոյ, ամբողջ ճակատի վրայ միահամուռ ուժով պատասխանեցինք թշնամիի արձակած գնդակներուն: Իմ վաշտիս ու թշնամիի դիրքերուն միջեւ եղած հեռաւորութիւնը հազիւ 1000 քայլ էր: Թշնամին ծածկուած էր նախօրոք պատրաստուած դիրքերուն մէջ, իսկ մենք այդպիսին չունենալնուս՝ եթէ բախտի բերումով ոեւէ ծառի բունի եւ կամ քարի հանդի-

պէինք, այդ կ'ըլլար մեր յարմարագոյն դիրքը: Քանի կը շարունակուէր, փոխանակ նուազելու, այնքան կը սաստկանար կռիւր:

Գարնանային արեւը բաւական բարձրացած էր հորիզոնի վրայ: Անուշահոտ ծաղիկներու բուրմունքին հետ միասին, վառօդի այնքան ախորժելի ծուխը կը խուժէր մեր քիթերէն ներս, իսկ մահաբեր գնդակներու հազարաւոր սուլոցի ձայները կը խլացնէին մեր ականջները: Ըսենք սակայն, որ ոչ կարկուտի արագութեամբ տեղացող գնդակներու տարափը, ոչ վառօդի հոտը, ոչ ալ ստեղծուած դժոխային դրութիւնը չէր վիատեցներ հայ կամաւորի վրէժով լեցուած սիրտը: Ան արծուի մը նման, դիրքէ դիրք ցատկելով, միշտ դէպի թշնամի դիրքերը կը յառաջանար:

Կէսօրին մոտ էր, երբ ստացայ հետեւեալ հրահանգը.

«Մեծ Ղազարին.

«Այսու կը հրամայեմ ժամը ճիշդ երկուքին զինուորական կարգապահութեամբ ետ նահանջել: Նոյն հրամանը տուած եմ նաեւ միւս վաշտերուն:

Հրամանատար Եգոր»

Ժամը 1-ն էր, ուրեմն դեռ մէկ ժամ ժամանակ ունէինք: Այդ ժամանակամիջոցին պէտք էր, որ անհրաժեշտ կարգադրութիւնները ըլլային: Վաշտիս աջ թելը, փոխ վաշտապետ Սերգոյի հրամանատարութեան տակ, բաւական յառաջացած ըլլալով՝ մեզմէ գրեթէ կտրուած էր: Բացի այդ, տեղն ալ բաւական վտանգաւոր էր, փոքր անզգուշութիւն մը կրնար բոլորն ալ լուրջ վտանգի ենթարկել տալ:

Լուր ուղարկեցի եւ հրամայեցի անմիջապէս ու կարելի եղածին չափ աննկատելի կերպով ետ նահանջեն՝ թիկունքը ապահովելու ամէն միջոց ձեռք առած ըլլալով: Շատ չանցած, կիսավաշտը առանց ոեւէ կորուստի մեզ միացաւ:

Մեր գտնուած դիրքերու մէջ փոքրիկ հանգիստ մը առնելէ յետոյ, քայլ առ քայլ, շատ կանոնաւոր կերպով ետ նահանջեցինք: Բաւական մը նահանջած էինք, երբ հեռադիտակով տեսայ նաեւ միւս վաշտերուն նահանջը:

Իրիկնամուտէն մէկ-երկու ժամ առաջ, բոլոր վաշտերը ի մի էին հաւաքուած Ղըզըլաղաճի մոտերը գտնուող անասուներէն միոյն մէջ: Կարճատեւ հանգիստէ մը յետոյ, շարունակեցինք մեր նահանջը դէպի Ղըզըլաղաճ: Քանի մը ժամ յետոյ, զիւղ կը մտնէինք անարգել:

Յաջորդ օրը ընդհանուր քննութիւն կատարելով՝ ստուգեցինք մեր կորուստի ընդհանուր քանակը:

Ա. Վաշտ՝ 5, վիրաւոր եւ 3 սպանուած, որոնց մէջն էր ենթասպայ Թաշկինաւեր:

Բ. Վաշտ՝ երկու սպաննուած եւ երեք վիրաւոր, որոնց մէջ Խնկոն:

Գ. Վաշտ՝ 3 վիրաւոր եւ մէկ անձ կորած-Նոր Բայազետցի Մկրտիչը:

Ձիաւորներու հարհրակէն սպաննուած էր թիֆլիսցի մեր լաւագոյն տղաներէն ջոկատապետ Քէօսէն եւ երկու վիրաւոր:

Սպաննուածները թաղեցինք Ղըզըլաղաճի եղբայրական գերեզանցցի մէջ, իսկ վիրաւորները փոխադրեցինք Մուշի զինուորական հիւանդանոցը:

Մինչեւ այժմ մղած մեր կռիւները կարծես չէին յօգնեցուցած հայ զինուորները: Այնպէս ուրախ էին որ, կարծես հարսանիքէ նոր վերադարձած ըլլային: Անհոգ էին ու անտրտունջ: Մոռցեր էին ամէն ինչ բացի իրենց ընկերներու վաղաժամ ու դառն կորուստը: Մահը ոչ մէկ արժէք ունէր այդ առիւծներու համար, քանի որ լաւ հաւատացած էին, որ այդ մահէն է որ ծնունդ պիտի առնէ հայուն ազատութիւնը:

Անցան օրեր: Մտանք Ջատկի Աւագ շաբաթը: Բոլորս ալ գրեթէ անհամբերութեամբ Ջատկը կը սպասէինք:

Սրբ. Յարութեան շաբաթ երեկոն էր:

Գիւղական փոքր եկեղեցին լեցուած էր զինուորներով, որոնք ջերմեռանդ սրտով կ'աղօթէին: Ոչ տէրտէր կար եւ ոչ դպիր, որ բուրվառ եւ ոչ ալ խունկ ու մոմ: Չանգակները կը դողանջէին, սակայն փոխանակ ժամկոչին, հայ զինուորն էր որ չուանը ձեռք առած՝ կը հնչեցնէր զանգակն ու կը կատարէր եկեղեցական արարողութիւն իր գիտցած ձեւով: Պատարագ չէր, այլ աղօթք, ժամերգութիւն չէր, այլ վրէժի երդում:

Աղօթքը վերջացավ: Բոլորս ալ կէս ուրախ տրամադրութեամբ տեղերնիս վերադարձանք: Կէս ուրախ էինք, որովհետեւ հեռու կը գտնուէինք մեր սիրելիներէն ու մտերիմներէն, իսկ այդտեղ՝ չունէինք մեր ազգակիցները, որոնց հետ կարենայինք Ջատկը եղբայրաբար տօնել:

Փիլլաւ, ձուկ ու պասկայ (ռուսական խմորեղէն) բաժնուեցաւ զորքերուն: Վաշտապետներս ու փոխ-վաշտապետները մէկ սեղանի շուրջ էին հաւաքուած: Գինի կը բացակայէր: Ջուրի գաւաթը ձեռիս, ոտքի կանգնելով, հետեւեալը ըսի:

«Ձինակից ընկերներ, ճիշդ է որ այս զիշերուան անհրաժեշտ զինին կը բացակայէ այս սեղանի վրայ, սակայն հոգ չէ: Թո՛ղ այս ճերմակ ու անարատ հեղուկը ծառայէ մեզ որպէս զինի, ճիշդ այնպէս, ինչպէս ծառայեց Քրիստոսին, երբ ան հաւաքուած հարսնուորներուն ջուրը զինիի վերածեց: Խմելով, ի սրտէ կը մաղթեմ որ Աստուած մեզ առողջ պահէ՝ մեր հայրենիքին արժանի ու պահապան գաւակները դարձնելով մեզ»:

Խոսքերուս յաջորդող «հուռա»ներէն յետոյ, միաձայն «Մեր հայրենիք»ը երգեցինք: Յետոյ հայկական ու ռուսական պարեր պարելով՝ շաբունակեցինք մեր քէֆը մինչեւ ուշ գիշեր:

Ճաշէն յետոյ, կրկին դաշտ դուրս եկանք: Ընթշամարտութեամբ փորձեցինք մեր ժամանակը անցընել: Ամենալաւ ընթշամարտողը երկրորդ վաշտի աւագ ենթասպայ բաշգեարնեցի Պատուականը դուրս եկաւ:

Այսպէս, բաւական ուրախ մթնոլորտի մէջ անցուցինք Ձատիկը:

Հազիւ գիւղ էինք վերադարձած, երբ լուր ստացանք, որ Դրոն կը վերադառնայ:

Յաջոր առաւօտ, վաշտապետներս հաւաքաբար գացինք զենքը դիմաւորելու: Շատ չէինք հեռացած գիւղէն, երբ իրար հանդիպելով՝ համբուրուեցանք մեր սիրելի հրամանատարին հետ: Ժամը 11-ին միջոցները գիւղ վերադարձանք:

* * *

Դրոյի ճակատ ժամանելէն մոտաւորապէս մէկ շաբաթ յետոյ, հրամայուեցաւ գրաւել Կուզմագետտուկի շրջանը:

Բոլորս ալ առանց բացառութեան գործի լծուեցանք, ժամ առաջ կռուի դաշտ կարենալ մեկնելու համար:

Այս գիւղի հանդէպ մեր վրէժխնդրական ոգին տակաւին գոհացում չէր ստացած: Կազմ ու պատրաստ հրամանի կը սպասէինք: Մեծ եղավ մեր զարմանքը, երբ մինչեւ ուշ գիշեր ոեւէ հրաման չստացանք:

Գարնանային մեղմ գիշեր մըն էր: Խաւարը պատած էր սար ու ձոր: Կէս գիշերուան մոտ հնչեց զինուորական փողի ձայնը, որուն իսկոյն եւ եթ յաջորդեց հրամանատարի գոռ ձայնը՝ «յառաջ»: Իրար ետեւէ սկսանք քայլել խաւարի մէջ:

Առաւօտը մոտ, սակայն ամենուրեք դեռ խաւար էր: Քիչ մըն ուշ ուժ ու թափ տալով մեր սրունքներուն՝ քիչ յետոյ կանգնած էինք արդէն Կուզմագետտուկի բարձունքներէն մեկուն վրայ:

Բոլորիս ակնկալած ժամը մոտեցած էր: Հրամանատարը, նշմարելով գորքի յոգնութիւնը, ու միւս կողմէ միչեւ լուսաբաց միջոց ունենալը, հանգստի նշան տուաւ: Բաւական մը հանգստացած էինք, երբ կրկին լսուեցաւ յառաջ շարժուելու հրամանը: Ժամբայ ելանք: Երբ բաւական մը յառաջացանք, թշնամին նշմարեց մեր յառաջխաղացումը եւ սկսաւ կրակել:

Մարտիրոսի վաշտը, որ այդ օր յառաջապահութեան պաշտօն ուներ, չափազանց մոտեցաւ թշնամու առաջին դիրքերուն եւ գրոհով մը ներս խուժելէ յետոյ՝ սկսաւ գիրկընդխառն կռուի: Դրոն, նկատելով այս, հրամայեց առաջ անցնիմ ու օգնութեան փութամ: Մինչ իմ այնտեղ հասնելը, կատաղի կռիւ կը մղուէր երկուստեք:

Մեր ժամանումը թուլցուց թշնամու կորովը, սակայն կը շարունակէինք կռուիլ վայրագաբար: Քիչ յետոյ վրայ հասաւ եւ Տէլի Ղազարը իր վաշտով: Թշնամին, նախատեսելով իր պարտութիւնը, լքեց կռուի ճակատը ու յետ նահանջեց:

Այս կռուի ընթացքին, որ տեւեց մոտ 3 ժամ, մեր ձեռքը գերի ինկան 40-50 –ի չափ թուրք զինուորներ, մէջն ըլլալով երկու չափուշ եւ մէկ պաշ չափուշ: Մերոնցմէ ծանր վիրաւորուեցաւ վաշտապետ Մարտիրոսը եւ մէկ քանիններ, ու զոհ՝ 4-րդ վաշտի ֆէդպէտէրը եւ երկու զինուորներ:

Թշնամին, պարտութեան մատնուած ամբողջ ճակատի վրայ, կը նահանջէր կանոնաւոր կերպով: Իմ ձախ թելի վրայ գտնուող ռուսական զորամասը մեծ քաջագործութիւններ ըլլաւ այդ կռուին միջին:

Տեղի տարածութիւնն ու դիրքերու անյարմարութիւնը, ինչպէս նաեւ կարգ մը այլ կարելու պատճառներ ստիպեցին մեզ, որ կանգ առնէք: Չնայած որ թշնամին պարտուած էր մեզմէ, վերոյիջեալ նկատառումներով, չշարունակեցինք մեր յառաջխաղացումը: Եւ ան, օգտուելով առիթէն, աւելի յարմար ու նպաստաւոր դիրքեր գրաւելով, շարունակեց դիմադրել մեր յարձակումներուն, մինչեւ թարմ ուժեր ստանալը:

Ժառ 2-ը մոտ էր, երբ թշնամին նոր ուժերով կրկին յարձակաման անցաւ: Մենք, բուն հրացանաձգութեամբ մը կ'արգիլէինք թշնամուն յառաջխաղացումը: Այստեղ՝ վիրաւորուեցաւ Մարտիրոսի փոխ վաշտապետ Մակեդոնը, որու հետեւանքով երրորդ վաշտի հրամանատարութիւնն ալ ինձ յանձնուեցաւ:

Կռիւր կը շարունակուէր ուժգին կերպով: Երկու կողմէն ալ մահաբեր գնդակներ գոհեր կը խլէին: Իմ ձախ կողմս գտնուող ռուսերը նոյնպէս հակայարձակման կ'ենթարկուին: Այդ միջոցին է որ կը սպաննուի գնդացի ռային ջոկատի պետը: Զորքը շփոթած փախուստի կը դիմէ: Շատ վատ հետեւանք պիտի ունենար ռուսերու այդ քայլը, եթէ չըլլար ենթասպաներէն մէկուն քաջ ընթացքը: Ատրճանակը ձեռքին, փախչող զօրքի դէմը կանգնած, կ'ստիպէ որ ետ վերադառնան ու դիմադրեն թշնամու յարձակումներուն: Այսպիսի ժեստով մը կը յաջողի զօրքի մէջ վերահաստատել կարգը, որ սակայն երկար չտեւեց:

Ճիշդ այս միջոցին էր, որ ռուս հրամանատարը օգնութիւն կը խնդրէր Դրոյէն: Վերջինը, թէպէտեւ ոչ մէկ հնարաւորութիւն չունէր օգնելու, բայց եւ այնպէս կիսավաշտ մը օգնութեան կ'ուղարկէ, այսպէսով քաջալերելու համար ռուս զորքը: Սակայն մինչ այդ, ռուսերը արդէն նահանջել սկսած էին: Այսպիսի դրութեան մը մէջ, մենք չէինք կրնար մեր դիրքերուն կառչած մնալ: Հրամանի մը վրայ, կատարեալ կարգապահութեամբ նահանջել սկսանք:

Թշնամին երես առած ռուսերու անկարգապահ ընթացքէն, քայլ առ քայլ կը հետեւէր մեզ: Հազար ու մէկ տեսակ դժուարութիւններով, մեծ մասամբ Դրոյի շնորհիւ, կարելի եղաւ կանգնեցնել ռուս զօրքը:

Դրութիւնը բաւական մը այսպէս պահելէ յետոյ, կրկին յառաջ անցնելու հրաման տրուեցաւ մեզ: Ճիշդ որ կը պատրաստուէինք յառաջ նետո-

լիլ, եւ ահա սկսաւ հեղեղանման անձրեւ մը տեղալ, որ ստիպեց երկուստեք կանգնեցնել կռիւր: Վերսկսիլը անհնարին ըլլալով, վերադարձանք Ղըզըլաղաձ:

Ունեցած էինք 15 մեռեալ, 35 վիրաւոր ու երկու անյայտ, մին բաշգեարնեցի ենթասպայ Մուկուշը:

Սանիտարական կառքերով վիրաւորները Մուշ ուղարկեցինք, իսկ մեռելները թաղեցինք եղբայրական գերեզմանոցի մէջ:

Մայիս 5

Հրաման սպասեցինք մեկնիլ Ղըզըլաղաձէն:

Մեր նահատակուած ընկերներուն վերջին մնաք բարով մը ըսելու պարտաւորութեամբ, խմբովին դէպի եղբայրական գերեզմանոցը ուղղուեցանք: Այդտեղ՝ արտասուքը աչքերնուս աղօթելէ յետոյ, հաւատացած եմ որ ներքնապէս հետեւեալ վրէժի երդուր կնքեցինք բոլորս առանձնապէս.

«Դուք ազնուօրէն կատարեցիք ձեր պարտականութիւնը ու հպարտօրէն ինկաք այդ ճամբուն վրայ: Դուք՝ խիզախօրէն դիմադրուեցիք դաժան մահը ու ձեր սեւ մահով փայլ տուիք մեր կեանքին: Հանգչեցէք ընկերներ, հանգիստ ձեր ոսկորներուն: Մեզ կը մնայ քայլել ձեր փշոտ ճամբայէն ու լուծել ձեր բոլորի արդար վրէժը»:

Մինչեւ մեր գիւղ վերադառնալը, զօրամասը կազմ ու պատրաստ, հրամանի կը սպասէր: Քիչ մըն ալ, եւ ահա հրամանատարի մէկ հրամանին վրայ ճամբայ ելանք դէպի Մուշ: Զինուորական նուազախումբը մեզ ընկերակցեցաւ մինչեւ գիւղին ծայրը: Այստեղ ան կանգ առաւ, իսկ մենք շարունակեցինք մեր ճանապարհը ու երեկոյան Մուշ հասանք:

Այստեղ՝ ստիպուած եղանք քանի մը օր սպասել:

Մայիս 10-ին ճամբայ ելանք Սրբ. Կարապետ վանքի վրայով դէպի Զիարէթ անցնելու:

Դրոն ու Եգորը Մուշ մնացին, այդ իսկ պատճառաւ բանակի ժամանակաւոր հրամանատարութիւնը Տէլի Ղազարին յանձնուեցաւ:

Նոյն ճանապարհին էր որ կրկին կ'անցնէինք, որտեղէն առաջին անգամ ըլլալով Մուշ էինք մտած: Իրիկնամուտի մոտերը, Եփրատը անցնելով, հայկական նշանաւոր Մուլուխի մէջ բանակ դրինք: Յայտնի հերոսներու ծննդավայրը եղած այդ գիւղը, այժմ գրեթէ աներակ էր եւ անմարդաբնակ: Չարագուշակ մեռելութիւնը տարածուած էր երբեմնի խաղաղ ու հարուստ երդիքներու տակ: Եթէ նոր Սերոբներ շատ ունենար այս գիւղը, ինչպէս նաեւ ամբողջ հայ աշխարհը, հաւատացած եմ որ այս տխուր ճակատագիրը չէր ունենար:

Այստեղէն ճանապարհը երկուքի կը բաժնուի, մին դէպի արեւմուտք, միւսը դէպի հիւսիս: Պէտք էր դէպի արեւմուտք ուղղուէինք, սակայն Դրո-

յի մէկ նոր հրահանգը եկաւ փոխելու մեր նախապէս գծուած ծրագիրը: Համաձայն նոր կարգադրութեան, կը հրամայուէր դէպի Կիւմկիւմ անցնիլ:

Մայիս 12

Երկու օր Սուլուխ կենալէ յետոյ, ճաքայ ելանք դէպի Չարպուհուր, այնտեղէն Կիւմկիւմ անցնելու:

Ճանապարհը Եփրատի եզերքով կ'անցնէր: Մենք կը յառաջանայինք լքուած խճուղիով մը, հիասքանչ ձորի մը մէջէն: Մեզ չէին հրապուրեր շուրջի դիւթիչ պատկերներնու բնական գեղեցկությունները, քանի որ մէկ հատ հայու շունչ չկար այդտեղ: Ո՛վ գիտէ թէ ի՞նչ ոճիրներու, յափշտակումներու, թալանի, կողոպուտի հանդիսատես եղած էր այդ ամբողջ ճամբան:

* * *

Կիւմկիւմ ենք: Անցած էր մոտ շաքաթ մը, երբ Եգոր Տէր Աւետիքեանը գալով տեղեկացուց որ շուտով նոր կարգադրութեան մը հետեւանքով կամաւորական գունդերը ռուսական պարտադիր ծառայութեան պիտի փոխանցուին: Այն կամաւորը, որի տարիքը դուրս չէր զինուորական ծառայութեան տարիքէն, պատրաստ էր մնալու ու ծառայելու, իսկ ան որ անց էր, ազատ էր հեռանալու կամ մնալու:

Այստեղ բաւական մը եւս մնալէ յետոյ, կարգադրուեալ, որ անցնինք Ղարղա Բագդարի ճակատը:

Մայիս 25

Առաւոտեան նախաճաշէն յետոյ, ճամբայ ելանք դէպի հիւսիս արեւմուտք:

Անցնելով ճանապարհին երկարող գետակը, պէտք էր Բիւրակնեան լեռնաշղթայի ստորոտով դէպի որոշուած վայրը յառաջանայինք: Ճանապարհը թէւ գեղեցիկ ու հաճելի էր, սակայն մեզ համար գոնէ այդպէս չէր, մանաւանդ որ ջորիներու նման բեռցուած կը քայլէինք նեղ ճամբաներէ, հազար ու մէկ տեսակ նեղութիւններու ու դժուարութիւններու հանդիպելով:

Բաւական մը յառաջանալէ յետոյ հեռուէն ողջունեցինք Բինգեօլը, այս բարձր ու աննման լեռը: Ամէն կողմ գեղեցիկ ծաղիկներով ու կանանչ խոտերով էր ծածկուած: Հազարաւոր թռչուններ կ'երգէին ճողովներով եւ պտոյտներ կը կատարէին օդին մէջ անհոգ ու անտարբեր ներքելը կատարուած ոճիրին հանդէպ:

Անցնելով շարք մը գիւղերու մէջէն, երեկոյեան ուշ ատեն հասանք Եգիտի գիւղ մը, ուր կանգ առինք հանգստանալու: Այստեղ ուշ ստիպուած եղանք քանի մը օր մնալ, մինչեւ նոր հրաման ստանալը:

Մայիս 20

Հրաման ստացանք յանձնել բանակը Եգորին, որ մեզ մոտ կուգար այս անգամ որպէս ռուսական բանակի սպայ, հետը ունենալով նաեւ մէկ քանի ուրիշ սպաներ:

Մէկ քանի օրուան ընթացքին, բանակի ամբողջական յանձնումը կատարելէ յետոյ պատրաստուեցանք Կովկաս անցնելու՝ չուզելով ռուս բանակի մէջ ծառայել:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Աշոտ Ներսիսյան - Պատմական գիտությունների դոկտոր, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր (ashot-nersisyan@mail.ru)

Ալեքսանդր Խաչատրյան - ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտ (Khachatryan.aleksandr@gmail.com)

Աննա Վարդանյան - Շիրակի Միքայել Նալբանդյանի անվան պետական համալսարանի ասպիրանտ (anneta.anna.vardanyan@mail.ru)

Արման Անդրիկյան - ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Կրոնի պատմության և տեսության ֆակուլտետի ասպիրանտ (armanandrikian@gmail.com)

Արմեն Ճուղուրյան - Տնտեսագիտության դոկտոր, ՀՊՏՀ պրոֆեսոր (Jarmen1@yandex.ru)

Գագիկ Ավետիսյան - ՀՊՄՀ կերպարվեստի ֆակուլտետի ասպիրանտ (avetisyangagik-5@aspu.am)

Խաչատուր Ստեփանյան - Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր, (kh.stepanyan@gmail.com)

Խաչիկ Ճանոյան – Լրագրող, հրապարակախոս, (mhbt2010@gmail.com)

Կարեն Ալավերդյան – Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Կառավարչական հաշվառում և աուդիտ» ամբիոնի ասիստենտ, հայցորդ (karenalaverdyan@yahoo.com)

Հասմիկ Շափաղաբյան - ԵՊՀ Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ, քաղ.գիտ.թեկնածու (Shahas73@mail.ru)

Հասմիկ Սայադյան – ԵՊՀ Սերվիսի ամբիոնի ասիստենտ (sayadyan.asmik@mail.ru)

Նոննա Խաչատրյան - Տնտեսագիտության թեկնածու, ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի դոցենտ (nonnakhachatryan@yahoo.com)

Նինել Սարգսյան – ՀՊՄՀ Հայ գրականության ամբիոնի հայցորդ
(ninarsargsyan@mail.ru)

Վահե Դավթյան – Քաղաքագիտության դոկտոր, Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարանի UNESCO-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության ու քաղաքագիտության ամբիոնի դոցենտ (vahe.davtian@gmail.com)

Վալերի Թունյան – Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
(tounyan@rambler.ru)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՆԴՈՆԻ ԵՎ
ԼՈԶԱՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ----- 3

ВАЛЕРИЙ ТУНЯН

АНТИТЕЗИСЫ ГЕНОЦИДА АРМЯН ----- 21

ԽԱԶԱՏՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

1921 Թ. ՓԵՏՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ ----- 32

ԱՍԻԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՉԺՀ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(XX-ԲԴ ԴԱՐԻ ՎԵՐՋ) ----- 43

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ

ԱՐՄԱՆ ԱՆԴՐԻԿՅԱՆ

ՂՈՒԿԱՍ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԻՐԱՆԱՀԱՅ ԹԵՄԵՐԻ ՀԵՏ ----- 56

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ

ՆԻՆԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ

«ՆԵՐԿԱՅՈՒՄ ՀԱՆԳՐՎԱՆՈՂ ԱՆՅՅԱԼ» (Պատմության
շարունակականության ընկալումները Արմեն Մարտիրոսյանի
«Միջնադարի առավոտը» բանաստեղծությունների շարքում) ----- 65

ԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԲԱՅԱԿԱՆ ՀԻՄՆԱԲԱՂԱԴՐԻԶՈՎ ԻՍԿԱԿԱՆ

ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ ----- 70

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ԳԱԳԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
«ԱՐԵՎԱՊԱՇՏ» ՆԿԱՐԻՉՆԵՐԸ ----- 76

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

VAHE DAVTYAN

COAL INDUSTRY DEVELOPMENT POTENTIAL
IN THE REPUBLIC OF ARTSAKH IN THE CONTEXT
OF ENERGY INTEGRATION WITH ARMENIA ----- 82

ՀԱՍՄԻԿ ՇԱՓԱՂԱԹՅԱՆ

ԻՆՉՈՒ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՀԱՅԿԱԿԱՆ
ՈՉ ԲՈՆԻ, ԹԱՎՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ----- 94

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՆ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ----- 105

ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒՐՅԱՆ, ՆՈՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԱՑՔԸ
ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ----- 115

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՍՄԻԿ ՍԱՅԱՂՅԱՆ

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ----- 123

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ----- 133

**ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅՈՑ ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ
ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

ՊԱՏՄԱԲԱՆ ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԽԻՎԻՑ -----	139
ԽՄԲԱՊԵՏ ՂԱԶԱՐ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԻՑ -----	143
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ -----	195

**Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆԴԵՍԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ**

«Պատմություն և քաղաքականություն» հանդեսում տպագրության ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ: Հոդվածները պետք է ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով: Հոդվածի շարվածքը պետք է լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 11, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A4: Հոդվածի սկզբում անհրաժեշտ է գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն և ազգանունը՝ մեծատառերով: Հղումները պետք է դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշելով աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը (էջերը): Հոդվածի բանալի բառերը, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը պարտադիր են: Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) տվյալները՝ կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցեն (e-mail): Հոդվածներն ուղարկել **generalsepuh@gmail.com** էլեկտրոնային հասցեներով: Հանդեսն ունի իր համացանցային կայքը (**www.generalnews.am**), ուր զետեղված են նրա էլեկտրոնային տարբերակները, հոդվածների վերաբերյալ կարծիքները, տեղեկություններ խմբագրական խորհրդի կազմի և էթիկայի կանոնների մասին:

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
ԹԻՎ 3(8)**

Հիմնադիր՝ « Զորավար Սեպուհ պատմաքաղաքական վերլուծական կենտրոն» ՀԿ

Գրանցման համար՝ 2111711003993, գրանցման ամսաթիվ՝ 02.02.2018

Հաշվառման հասցե՝ Երևան, Էրեբունի թաղամաս, Սարի թաղ 3 – ըդ շարք, բնակարան 39

Գործունեության հասցե՝ Երևան, Ե. Քոչար, 8/8, հեռ, 011-562519, 091-56-25-19, 077 – 67-20-87

Նյութերը գրախոսությունների հետ միասին ընդունվել և խմբագրական խորհրդի կողմից երաշխավորվել են տպագրության 2020թ. ապրիլ – մայիս ամիսների ընթացքում:

Համարի պատասխանատու՝ Թ. Սարգսյան
Ստորագրված է տպագրության՝ 11.06.2020

Թուղթը՝ օֆսեր: Չափսը՝ 70X100/16;
Ծավալը՝ 12 պայմ., տպ. մամուլ:
Տպագրության եղանակը՝ օֆսեր:
Տպաքանակը՝ 100

Տպագրվել է «Տիր» հրատարակչության տպագրատանը
Հասցեն՝ Երևան, Ա. Միկոյան փող., 2/2
Էլ. փոստ՝ tirpublishinghouse@gmail.com
Հեռ. (+374 94) 50 99 00

